

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2025
N 1 (60)

**Գիտական պարբերական
Հրատարակվում է 2008 թվականից**

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
դոկտոր, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 557660

Ֆաքս՝ 574453 էլ. կայք՝ www.ardaradatutyunjournal.com

Հրատարակված է 02.10.2025թ.

Տպագրությունը՝ էլեկտրոնային:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված է ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

EDITORIAL BOARD

Սրբուհի Գալյան – Արդարադատության նախարար, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, խմբագրական խորհրդի նախագահ:

Աշոտ Հայրապետյան – Բարձրագույն դատական խորհրդի անդամ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դեցեմտ, գլխավոր խմբագիր:

Արմեն Հարությունյան – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Աշոտ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախկին դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Արմեն Եսայան – Հայաստանի Հանրապետության արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ստեփան Ծաղիկյան – Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության հնստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Սերգեյ Առաքելյան – «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ռուզաննա Հակոբյան – «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Ժորա Ջհանգիրյան – «Գլաճոր» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ռուբեն Ավագյան – «Մանց» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Արփինե Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Աշխեն Սողոմոնյան - Իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ:

Ռաֆիկ Գրիգորյան - Իրավաբանական գիտությունների թեկնածու, «Սիզմա լո գրուպ» փաստաբանական գրասենյակի կառավարող գործընկեր:

Գևորգ Բաղդասարյան- Իրավաբանական գիտությունների թեկնածու:

Տիգրան Մարկոսյան - Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամ:

Մուշեղ Բարսյան- Իրավաբանական գիտությունների թեկնածու:

Անի Մուրաֆյան- Իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ:

Օտարերկրյա անդամներ

Հայկ Կուպեյանց – Իրավաբանական գիտությունների թեկնածու:

Անդրեյ Սկիրա – Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր:

Եվգենի Բարաշ – Ուկրաինայի ներքին գործերի ազգային ակադեմիայի քրեակատարողական ծառայության ինստիտուտի պետ, ներքին ծառայության գեներալ-մայոր, Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ:

Հենրիկ Լինդերբորգ – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր:

Նիկիտա Իվանով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Սերգեյ Չերնյավսկի – Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Վադիմ Վինոգրադով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 5 ԱՇԽԵՆ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ՄԻՇԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ**
Էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման առանձնահատկությունները
Հայաստանի Հանրապետությունում
- 22 ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
Գոմենային անվանումների պաշտպանության որոշ առանձնահատկություններ
- 33 ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ**
Քաղաքացիական իրավունքի սկզբունքների համակարգը
- 45 ԵՎԱ ՍԱԳՈՅԱՆ**
Զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելու պայմանագրի
էական պայմանների մեկնաբանման որոշ հիմնախնդիրներ
- 56 ՄՎԵՏԼԱՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**
Գենետիկական հաջորդականությունը և գենետիկական տեղեկատվությունը՝
որպես հանրային և մասնավոր իրավունքի օբյեկտ
- 68 ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՄԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ**
Ընդերքը որպես քաղաքացիական իրավունքների ինքնատիպ օբյեկտ
- 81 ԾՈՎԻՆԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
Ապատեղեկատվության ազդեցությունը հանրային կարծիքի
ձևավորման և իմիջի վրա
- 90 ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ**
Արժանապատվության՝ որպես իրավական երևույթի սահմանադրաիրավական
բովանդակության ընկալմանն առնչվող որոշ հիմնահարցեր
- 99 ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՐԱՆՏ ՄԻՍՈՆՅԱՆ**
Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի տեղը
քաղաքացիաիրավական պայմանագրերի համակարգում
- 110 ՌՈՒԲԻՆԱ ՄԵԻԹԱՐՅԱՆ**
Թվայնացումը քրեակատարողական հիմնարկներում.
ռիսկեր և հնարավորություններ

ԱՇԽԵՆ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ.

ՄԻՇԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի իրավաբանական վարչության վարչական վարույթների և դատական ներկայացուցչության բաժնի ավագ իրավաբան

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Էլեկտրոնային առևտուրը, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ողջ աշխարհում, դարձել է քաղաքացիական շրջանառության անքակտելի մասը: Սակայն ՀՀ-ում դրա օրենսդրական թերկարգավորվածությունը առաջացնում է մի շարք խնդիրներ էլեկտրոնային առևտուրը միջոդավորող շղթայի բոլոր օղակների, հատկապես սպառողների համար: Այս հոդվածի շրջանակներում փորձ է արվել ներկայացնել էլեկտրոնային առևտրի ծագումնաբանությունը, պատճառները և նպատակը հանգամանքները, բացահայտել Եվրոպական Միությունում, ինչպես նաև այլ երկրներում առկա մոտեցումները, իրավակարգավորումները, լավագույն փորձը, վերլուծության են ենթարկվել նաև դատական պրակտիկայում կարևոր և համակարգաստեղծ դիրքորոշումները: Այս ամենի լույսի ներքո փորձ է արվել նաև վեր հանել ՀՀ օրենսդրության մեջ առկա թերությունները, առկա իրավակարգավորումները ենթարկել համակողմանի վերլուծության: Արդյունքում բացահայտվել է էլեկտրոնային առևտրի էությունը, բանաձևվել է դրա հասկացությունը, ներկայացվել են հատկանիշները: Բացի այդ համակողմանիորեն անդրադարձ է կատարվել նաև էլեկտրոնային առևտրի շղթայում ներառված բոլոր սուբյեկտների, այդ թվում էլեկտրոնային թվային հարթակի իրավական կարգավիճակին և դրանց քաղաքացիաիրավական պատասխանատվության առանձնահատկություններին: Հոդվածի շրջանակներում վերլուծության են ենթարկվել նաև թվային ապրանքը՝ որպես էլեկտրոնային առևտրի կարևոր բաղկացուցիչ մասին:

Հիմնաբառեր: էլեկտրոնային առևտուր, թվային հարթակ, սահմանափակ պատասխանատվություն, թվային ապրանք, թվային հարթակ շահագործող:

Ներածություն

Ներկայիս արագ զարգացող թվային իրականության պայմաններում էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման և առցանց սպառողների իրավունքների պաշտպանության առնչությամբ ծագող տեսական ու գործնական խնդիրների ուսումնասիրությունը և դրանց լուծման ուղիների բանաձևումը ձեռք են բերել հրամայական նշանակություն: Այս խնդիրների լուծման հրատապությունը փաստվում է նաև այն հանգամանքով, որ Հայաստանում էլեկտրոնային առևտրի շրջանառությունը 2024 թվականի տվյալներով աճել է գրեթե 75%-ով: Այս մասին է վկայում ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրությունը¹: Համաշխարհային մակարդակով էլեկտրոնային առևտրի զարգացումը և դրա աճող տեմպերը կարելի է ասել պետությունների համար ստեղծել են նոր մարտահրավեր՝ ժամանակին և համակարգված լուծումներ առաջարկելու համատեքստում, քանի որ առաջացել է անիրաժեշտություն օրենսդրական մակարդակով արձագանք

բերելու նոր իրողություններին: Բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որը նույնիսկ հասպտում է այդ գործընթացում:

Հիմնական հետազոտություն

Էլեկտրոնային առևտրի կազմակերպման պատմությունը այդքան էլ վաղեմի չէ: Էլեկտրոնային առևտրի զարգացումը և դրա գլոբալ այցելությունը հնարավոր են դարձել հաղորդակցման տեխնոլոգիաների առաջընթացի և զարգացման շնորհիվ, որոնք հեղափոխել են տեղեկատվության փոխանակման և գործարքների կնքման եղանակները: Այս համատեքստում դեռևս 1960-ական թվականներին ի հայտ եկավ համացանցի գաղափարը՝ ARPANET-ը, որը սկզբնապես ստեղծվել էր էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանցման նպատակով²:

ARPANET-ի միջոցով չկարողանալով լուծել առաջադրված խնդիրները՝ 1993 թվականին ստեղծվեց Համաշխարհային սարդոստայնը (World Wide Web)³: Վերջինս էլեկտրոնային փաս-

www.ardaradutyjournal.com

տաթղթերի հավաքածու է, որոնք պահվում են համացանցին կցված տարբեր համակարգիչների հիշողության մեջ և միավորվում են հատուկ հիպերտեքստային փաստաթղթային լեզվի (HTML) օգտագործման միջոցով: Համաշխարհային սարդոստայնի ստեղծման արդյունքում այն աստիճանաբար սկսեց դիտարկվել որպես բիզնեսի վարման հարթակ: 1995 թվականից սկսած շատ ընկերություններ (Dell, Cisco և այլն) համացանցում բացեցին իրենց կայքերը և սկսեցին այն ակտիվորեն օգտագործել կոմերցիոն գործունեություն ծավալելու նպատակով:

Այս ինստիտուտը առաջինը տեսական մակարդակում ուսումնասիրել և վերլուծել է ամերիկացի տնտեսագետ Դեյվիդ Քոզին, ով փորձել է բացահայտել էլեկտրոնային առևտրի էությունը: Ըստ Քոզիի՝ էլեկտրոնային առևտրի հիմքն ավանդական առևտուրն է, որն էլեկտրոնային հաղորդակցության միջոցների օգտագործմամբ ավելի ճկուն է դառնում:

Էլեկտրոնային առևտրի վերաբերյալ առաջին կարգավորումները նախատեսվել են UNCITRAL-ի /Միավորված ազգերի կազմակերպության միջազգային առևտրային իրավունքի վերաբերյալ հանձնաժողով/ մոդելային օրենքով, որի համատեքստում էլեկտրոնային առևտուրը դիտարկվել է որպես առևտրային գործարքների իրականացում, այսինքն՝ տվյալների փոխանցում տարբեր էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով, այդ թվում՝ համակարգիչների ստանդարտացված ձևաչափով, տեխնոլ, ֆաքսով և այլն:

Ինչպես տեսնում ենք, UNCITRAL մոդելային օրենքում տրված հասկացության մեջ էլեկտրոնային առևտրի իրականացման գործիքների շարքում բացի համացանցից թվարկվել են այլ գործիքներ ևս:

Հատկանշական է Առևտրի համաշխարհային կազմակերպության մտտեցումը, որը թեպետ որևէ իրավական ակտով չի սահմանել էլեկտրոնային առևտրի հասկացությունը, սակայն 1998 թվականին այդ կառույցի շրջանակներում Առևտրի համաշխարհային կազմակերպության համաձայնագրերի և էլեկտրոնային առևտրի շուրջ փոխհարաբերությունների հստակեցման նպատակով ստեղծվել է աշխատանքային ծրագիր, որի շրջանակում էլեկտրոնային առևտուրը ձևակերպվել է որպես ապրանքների և ծառայությունների արտադրություն, տարածում, մարքեթինգ, վաճառք կամ մատակարարում էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով:

Եվրոպական հանձնաժողովը հարցին անդրադարձել է 1977 թվականի ապրիլի 18-ին «Էլեկտրոնային առևտրի ոլորտում կարգավորումների» եվրոպական նախաձեռնության շրջանակներում: Արդյունքում էլեկտրոնային առևտուր եզրույթը բա-

նաձևվել է որպես տվյալների էլեկտրոնային մշակման և փոխանցման վրա հիմնված առևտուր, որը ներառում է բազմաթիվ գործառնություններ, այդ թվում՝ ապրանքների և ծառայությունների էլեկտրոնային առևտուր, թվային բովանդակության առցանց առաքում, էլեկտրոնային դրամական փոխանցումներ, բաժնետոմսերի էլեկտրոնային առևտուր և այլն: Նշված գործառնությունները դասակարգվել են երկու կատեգորիայի՝

- անուղղակի էլեկտրոնային առևտուր՝ նյութական ապրանքների էլեկտրոնային պատվերներ, որոնք դեռ պետք է ֆիզիկապես առաքվեն և, հետևաբար, կախված են մի շարք արտաքին գործոններից, ինչպիսիք են տրանսպորտային համակարգի և փոստային ծառայությունների արդյունավետությունը,
- ուղղակի էլեկտրոնային առևտուր՝ ոչ նյութական ապրանքների և ծառայությունների /օրինակ՝ համակարգչային ծրագրեր և դրանց հետ կապված ծառայություններ/ առցանց ձեռքբերում, ներառյալ առցանց վճարում և փոխանցում:

Եվրոպական պառլամենտի կողմից տրված սահմանման համաձայն՝ էլեկտրոնային առևտուրը էլեկտրոնային եղանակով բիզնեսի իրականացման ձև է, որը հիմնված է տվյալների էլեկտրոնային մշակման և փոխանցման վրա, ընդգրկում է բազմաթիվ տարատեսակ գործողություններ՝ ներառյալ ապրանքների և ծառայությունների էլեկտրոնային առևտուրը, թվային բովանդակության առցանց առաքումը, բաժնետոմսերի էլեկտրոնային առևտուրը, առևտրային աճուրդները, պետական գնումները, մարքեթինգը, հետվաճառքային սպասարկումը և այլն:

Էլեկտրոնային առևտրի հասկացության ուսումնասիրությանը անդրադարձ է կատարվել նաև մասնագիտական գրականության մեջ: Այսպես, Յու.Բուլատեցկույի կողմից էլեկտրոնային առևտրին տրված հասկացության համաձայն՝ էլեկտրոնային առևտուրը ձեռնարկատիրական գործունեության այն տեսակներից մեկն է, որի ընթացքում իրավական հարաբերությունների մասնակիցները կնքում, փոփոխում և դադարեցնում են պայմանագրային պարտավորությունները՝ փոխանակելով էլեկտրոնային հաղորդագրություններ:

Այսպիսով, էլեկտրոնային առևտում, իրավական առումով հաղորդագրությունների փոխանակումը տեղի է ունենում ոչ միայն ինտերնետի միջոցով, ինչը այս հասկացությունն ավելի լայն է դարձնում:

Ն.Կ. Գավրիլովը գտնում է, որ էլեկտրոնային առևտուրն առաջին հերթին էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակում է¹⁰, իսկ Լ.Յու. Կիսելյովայի կարծիքով էլեկտրոնային առևտուրը (ինտերնետային առևտուր) առևտրային գործունեություն է, որը կապված է ապրանքների գնման և վաճառքի

www.aradaradatumjournal.com

հետ, որն իրականացվում է ինտերնետային տեղեկատվական և հեռահաղորդակցական ցանցի միջոցով :

Ինչպես նկատում ենք, էլեկտրոնային առևտրի բանաձևման շուրջ տարբեր տեսաբաններ տարբեր մոտեցումներ են ձևավորում, սակայն նշված բոլոր տեսակետների համար ընդհանուրն այն է, որ էլեկտրոնային առևտրի իրականացման գործիք են հանդիսանում էլեկտրոնային հաղորդակցության տարբեր միջոցներ, այդ թվում՝ համացանցը: Հաշվի առնելով՝ էլեկտրոնային առևտրի զարգացման տեմպերը՝ տարբեր պետություններ փորձում են օրենսդրական մակարդակում այս ինստիտուտը ենթարկել համակողմանի կարգավորման՝ հավասարակշռելով առցանց սպառողների և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների բիզնես շահերը: Այսպես՝ Ռուսաստանի Դաշնությունում վերջին տարիներին էլեկտրոնային առևտրի ոլորտի համակարգմանն ուղղված մի շարք քայլեր են կատարվել, որոնց արդյունքում ընդունվել է նաև «էլեկտրոնային առևտրի մասին» ՌԴ օրենքը, որի 3-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային առևտուր է համարվում ՌԴ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հետևյալ գործարքների (բայց չսահմանափակվելով դրանցով) առուվաճառք, մատակարարում, ծառայությունների մատուցում, փոխադրում, փոխառություն և փոխանակություն, դրամական պահանջի զիջում, բանկային ավանդ, բանկային հաշիվ, հաշվարկներ, պահեստավորում, ապահովագրություն, հանձնարարություն, կոմիսիա, գործակալություն, հավատարմագրային կառավարում, կոնցեսիա, գործընկերություն, պարզևի հրապարակային խոստում, հրապարակային մրցույթ)՝ էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակմամբ իրականացումը, ինչպես նաև էլեկտրոնային միջոցներով այլ իրավունքների և պարտականությունների ձեռքբերումը և իրականացումը՝ ձեռնարկատիրական գործունեության ոլորտում:

Սակայն, վերոգրյալ օրենքով սահմանվում է բացառություն. գործարքները, որոնք ՌԴ օրենսդրությամբ պետք է վավերացվեն նոտարի կողմից կամ պետք է պետական գրանցում ստանան, չեն կարող էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակմամբ կատարվել, իսկ նշված պահանջի խախտմամբ կնքված գործարքն առչինչ է¹² :

Առավել ընդհանրական է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում ընդունված իրավակարգավորումը: Մասնավորապես՝ «էլեկտրոնային առևտրի մասին» Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով էլեկտրոնային առևտուրը ներկայացվում է որպես բիզնես գործունեություն, որն ուղղված է համացանցի կամ որևէ այլ տեղեկատվական ցանցի միջոցով ապրանքների վաճառքին կամ ծառայությունների

մատուցմանը¹³ :

Հատկանշական է հիշատակել նաև Դրոգուտանի Հանրապետության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված «էլեկտրոնային առևտրի մասին» օրենքը¹⁴, որով կարգավորվում է տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող էլեկտրոնային առևտրի ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև հասարակական հարաբերությունները, սահմանում է էլեկտրոնային առևտրում գործունեության իրավական հիմքերը, ինչպես նաև սահմանում է ապրանքների և (կամ) աշխատանքների և (կամ) ծառայությունների վաճառքի, գնման և փոխանակման էլեկտրոնային գործարքների ձևակերպման և կատարման պահանջները, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ բացառիկ իրավունքները:

Դրոգուտանի Հանրապետության «էլեկտրոնային առևտրի մասին» օրենքը սահմանում է էլեկտրոնային առևտրին առնչվող մի քանի հիմնական հասկացություններ, մասնավորապես՝ էլեկտրոնային առևտուր, էլեկտրոնային հարթակ, համացանց-խանութ, համացանց-համաշխարհային ցանց, համացանց-ռեսուրս, առևտրային հարթակի օպերատոր, էլեկտրոնային առևտրի միջնորդ և այլն:

էլեկտրոնային առևտուրը սահմանվում է որպես ապրանքների և (կամ) աշխատանքների և (կամ) ծառայությունների վաճառքի, գնման և փոխանակման տնտեսական գործունեություն, ներառյալ՝ էլեկտրոնային գործարքների հիման վրա մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքի փոխանցումը:

ՀՀ-ում «էլեկտրոնային առևտուր» եզրույթն առաջին անգամ հիշատակվել է ՀՀ կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 37 արձանագրային որոշմամբ, որի համաձայն՝ «էլեկտրոնային առևտուր» հասկացությունը բնութագրվում է որպես համացանցի միջոցով իրականացվող ձեռնարկատիրական գործունեություն կամ ցանկացած գործարք, որն իրականացվում է էլեկտրոնային եղանակով տվյալների փոխանակմամբ և հանգեցնում է ապրանքների կամ ծառայությունների սեփականության իրավունքի ամբողջական կամ մասնակի փոխանցմանը¹⁵ :

ՀՀ հարկային օրենսգրքի¹⁶ 4-րդ հոդվածի 1-ին մասի 75-րդ կետի համաձայն՝ *ապրանքների էլեկտրոնային առևտուրը ինտերնետ տեղեկատվական համակարգերի կիրառմամբ՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից առևտրի էլեկտրոնային հարթակի միջոցով ապրանքների իրացումն է Հայաստանի Հանրապե-*

www.artadaradatyunjurnal.com

տուրյան տարածքում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց՝ հետևյալ պայմանների միաժամանակյա պահպանմամբ.

ա. ապրանքների իրացման գործարքների էլեկտրոնային եղանակով ձևակերպում,

բ. ապրանքների ձեռքբերման համար անկանխիկ եղանակով վճարման կատարում,

գ. ապրանքների առաքման ծառայության ապահովում կամ ապրանքների փոխադրման համար սուրհանդակային և (կամ) փոստային գործունեության ծառայություններ մատուցող անձանց միջոցով ապրանքների առաքման ապահովում:

Վերոգրյալ կարգավորումից բխում է, որ էլեկտրոնային առևտուրը ինտերնետ տեղեկատվական համակարգի կիրառմամբ էլեկտրոնային հարթակի միջոցով ապրանքների իրացումն է ՀՀ տարածքում, իսկ էլեկտրոնային առևտրի պարտադիր հատկանիշներ են դիտարկվում գործարքի՝ էլեկտրոնային եղանակով ձևակերպումը, անկանխիկ եղանակով վճարումը, ապրանքի առաքման ծառայության կամ դրա փոխադրման համար սուրհանդակային և (կամ) փոստային գործունեության ծառայություններ մատուցող անձանց միջոցով դրանց առաքման ապահովումը: Այսինքն, նշված հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում գործող հարկային օրենսդրությունը գործարքը չի դիտում որպես էլեկտրոնային առևտրի շրջանակում իրականացված: Ավելին, ՀՀ հարկային օրենսգրքի կարգավորման տրամադրություններից հետևում է, որ էլեկտրոնային առևտրի սուբյեկտներ դիտարկվում են Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը, այսինքն՝ տվյալ կարգավորման շրջանակում բացառվում է ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կողմից էլեկտրոնային առևտրային հարթակի օգտագործման միջոցով կատարվող առևտրի դիտարկումը՝ որպես էլեկտրոնային առևտուր:

Սակայն հաշվի առնելով էլեկտրոնային առևտրի կարգավորման միջազգային փորձը՝ պետք է նշել, որ էլեկտրոնային առևտրին բնորոշ վերը թվարկված հատկանիշները սպառիչ չեն և ամբողջապես չեն արտահայտում էլեկտրոնային առևտրի իրավական բնույթը:

Այսպես, մեր գնահատմամբ, էլեկտրոնային առևտրի հիմնական հատկանիշը, որն ինչ-որ կերպ արտացոլված է վերը հիշատակված բոլոր բնորոշումներում, գործարքի կնքման գործընթացում էլեկտրոնային հաղորդակցության կապի որևէ միջոցի օգտագործումն է:

Ընդ որում հարկ է նկատել, որ բնորոշումներում մեծամասամբ շեշտված է էլեկտրոնային հաղորդակցության միջոցի առավել հանդիպող տա-

րատեսակը՝ համացանցը, որն ընկալվում է որպես էլեկտրոնային առևտրի իրականացման հիմնական հաղորդակցության միջոց, որպիսի հատկանիշ սահմանված է նաև ՀՀ հարկային օրենսգրքով:

Այս համատեքստում ուշագրավ է, որ տեսաբանները, քննարկելով ֆաքսերի, տելեքսների և հեռաֆաքսերի՝ որպես էլեկտրոնային առևտրի իրականացման միջոցի դիտարկման հարց, գտնում են, որ վերջիններս չնայած դրանցում առկա էլեկտրոնային բաղադրիչին, ժամանակակից իրողություններում դժվար է ընդունել որպես էլեկտրոնային առևտրի իրականացման միջոց, քանի որ դրանցից շատերը այլևս չեն օգտագործվում, իսկ օգտագործման պարագայում էլ առկա են մի շարք թերություններ, որպիսի պայմաններում վերջիններիս օգտագործումը դառնում է անարդյունավետ¹⁷:

Ավելին, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձինք էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով, որպես ձեռնարկատիրական գործունեություն, ապրանքների վաճառք կարող են իրականացնել միայն որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված լինելու և էլեկտրոնային եղանակով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի առկայության դեպքում: Այն դեպքում, երբ ֆիզիկական անձինք էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով վաճառում են անձնական գույքն ու իրերը, ապա էլեկտրոնային առևտրային հարթակում նախատեսվում է առանձին բաժին (ենթաբաժին)՝ անձնական գույքին վերաբերող գործարքները տարբերակելու համար:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը ֆիզիկական անձի կողմից էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը նախատեսել է երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, այն է՝ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված լինելը և էլեկտրոնային եղանակով դուրս գրված հաշվարկային փաստաթղթի առկայությունը: Բացառություն է նախատեսված միայն էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով ֆիզիկական անձանց կողմից անձնական գույքի և իրերի վաճառքի դեպքում:

Հաջորդ հատկանիշը, որն արտացոլված է վերը հիշատակված բնորոշումներում, այն է, որ էլեկտրոնային առևտրի ներքո ընկալվում է ոչ թե էլեկտրոնային եղանակով կնքվող ցանկացած գործարք, այլ միայն այն գործարքները, որոնք իրականացվում են առնվազն մեկ կողմի առևտրային գործունեության շրջանակներում Այսինքն, «էլեկտրոնային առևտուր» հասկացության ներքո ընկալվում են այն գործարքները, որոնցով գործարքի առնվազն մեկ կողմը՝ համացանցի օգտագործման միջոցով մտնելով քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ հետապնդում է շահույթ ստանա-

www.aradaradatumjournal.com

լու նպատակ:

Մեկ այլ կարևոր հատկանիշ, որը բնորոշ է էլեկտրոնային առևտրին, այն է, որ *գործարքն, ըստ էության, կնքվում է /ապրանքի և զննի պայմանի վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվում/ սպառողի անմիջական /ֆիզիկական, օրինակ՝ չի կարող շոշափել ձեռք բերվող ապրանքը/ մասնակցության բացակայության պայմաններում:*

Այս համատեքստում քննարկման է արժանի Եվրոպական հանձնաժողովի 1977 թվականի ապրիլի 18-ի «Էլեկտրոնային առևտրի ոլորտում կարգավորումների» եվրոպական նախաձեռնության շրջանակում էլեկտրոնային առևտրի դասակարգումը՝ անուղղակի և ուղղակի:

Ինչպես վերը նշել ենք, ուղղակի էլեկտրոնային առևտրի շրջանակում ձեռք բերվող ապրանքը ոչ նյութական բնույթի է և ֆիզիկական առաքում չի պահանջում, օրինակ՝ համակարգչային ծրագիր, մինչդեռ անուղղակի էլեկտրոնային առևտրի շրջանակում ձեռք են բերվում նյութական ապրանքներ, որոնք դեռևս ֆիզիկապես պետք է առաքվեն, օրինակ՝ հագուստ:

Վերը նշված դասակարգումն ունի գործնական նշանակություն և ինքնին առաջացնում է հետևյալ հարցադրումը. *արդյո՞ք էլեկտրոնային առևտուր պետք է համարվի նաև այն գործարքը, որի շրջանակում ապրանքի և զննի պայմանի վերաբերյալ համաձայնությունը ձեռք է բերվում էլեկտրոնային եղանակով, սակայն վճարումը կատարվում է կանխիկ եղանակով՝ ապրանքի առաքման ժամանակ: Այս մոտեցման գոյությունը բացառվում է ՀՀ հարկային օրենսգրքում տեղ գտած հասկացության պարագայում:*

Չնայած այն հանգամանքին, որ էլեկտրոնային առևտրի բնորոշ գծերից է գործարքի՝ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով կնքումը, իսկ կանխիկ վճարման դեպքում այն կարող է ընկալվել որպես «ավանդական առևտրի» եղանակով կատարվող, սակայն գտնում ենք, որ անկախ վճարման եղանակից *էլեկտրոնային հարթակի կամ հաղորդակցության այլ միջոցի օգնությամբ գործարքի կնքումը /գործարքի էական պայմանների վերաբերյալ համաձայնության ձեռք բերումը/ արդեն իսկ բավարար է գործարքը որպես էլեկտրոնային առևտրի դրսևորում դիտելու համար:*

Վերոգրյալ դատողությունը բխում է այն հանգամանքից, որ էլեկտրոնային առևտուրը հիմնականում վերաբերում է էլեկտրոնային համակարգերի, հարթակների կամ կապի ցանցերի օգտագործման միջոցով գործարքներ կնքելու շուրջ բանակցելուն ու կնքելուն և նույնիսկ այն դեպքում, երբ առկա է կանխիկ վճարում, որը բնորոշ է «ավանդական առևտրին», այնուամենայնիվ առցանց ապրանք պատվիրելը և առաքման ժամանակ կանխիկ վճարելը ևս բնորոշ է էլեկտրոնային առևտրին, քանզի

դրա շրջանակներում կատարվող գործողությունները (որոնում, ընտրություն, գործարքի կնքում) իրականացվում են հարթակի օգտագործմամբ:

Վերոգրյալից հետևում է, որ առցանց առևտրի հիմնական առանձնահատկությունն այն է, որ զնման և վաճառքի գործարքները կատարվում են հեռակա կարգով՝ ինտերնետի, բջջային ցանցերի և այլ հեռահաղորդակցության միջոցների միջոցով¹⁸:

Անդրադառնալով էլեկտրոնային առևտրի իրականացման միջոցներին, այսինքն՝ այն գործիքներին, որոնց օգնությամբ էլեկտրոնային առևտուրը դառնում է քաղաքացիական շրջանառության անխուսափելի մասը, կարող ենք առանձնացնել դրանցից ամենատարածվածը՝ էլեկտրոնային առևտրային հարթակը:

Էլեկտրոնային հարթակը բարդ տեղեկատվական ծրագիր է, որի միջոցով ապահովվում է համացանցի մասնակիցների միջև գործունեությունը, որոնք բաց են հաճախորդների, գործընկերների, հավելված մշակողների, ծառայություններ մատուցողների և այլ գործակալների համար: Ըստ էության, էլեկտրոնային հարթակի միջոցով է գործարկվում և կարգավորվում տնտեսավարող սուբյեկտներին պատկանող մարքեթփլեյսերը, խանութները և այլն: Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը վկայում է, որ այսօր թվային հարթակները ոչ միայն էլեկտրոնային տեղեկատվական համակարգերն են, այլև այդ տերմինը ենթադրում է թվային հարթակի մասնակիցների կազմը, ապարատային և ծրագրային համալիրը, կազմակերպությունը և նույնիսկ պարզապես բիզնես մոդելը¹⁹:

Հարկ է նկատել, որ «էլեկտրոնային առևտուր» և «էլեկտրոնային առևտրային հարթակ» հասկացությունները նույնական չեն: Էլեկտրոնային առևտուրը համացանցի միջոցով ապրանքների առուվաճառքը, ծառայությունների մատուցումն է սպառողներին, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտներին, մինչդեռ էլեկտրոնային հարթակը ծրագրային ապահովման միջոց է, որի միջոցով իրականացվում են այդ գործարքները՝ տրամադրելով վիրտուալ տարածք, որի միջոցով տնտեսավարող սուբյեկտները առաջարկում են իրենց ապրանքները կամ ծառայությունները, իսկ սպառողները, ընտրություն կատարելով ցուցադրված տեսականուց, ընտրում են ծառայությունը կամ ապրանքը: Էլեկտրոնային առևտրի և հարթակի միջև կապը ներքին է, քանի որ էլեկտրոնային հարթակը էլեկտրոնային առևտրին ուղղված գործողություններ կատարելու միջոց է:

Միջազգային պրակտիկայում, հատկապես ԵՄ տարածքում էլեկտրոնային հարթակների և առհասարակ էլեկտրոնային առևտրի վերաբերյալ իրավակարգավորումները շատ համակարգված են, բացի այդ կան նաև Եվրոպական դատարանի

www.artadaradutyjournal.com

կողմից ընդունված դատական ատեր, որոնք ևս հստակություն են մտցնում օնլայն հարթակների գործունեության իրավակարգավորման մեջ: Այս առնչությամբ հայտնի են հատկապես երկու դատական ակտեր, որոնք մի դեպքում օնլայն հարթակի գործունեությունը դիտարկել են էլեկտրոնային առևտուր, հետևաբար դրա նկատմամբ կիրառելի են համարել ԵՄ համապատասխան դիրեկտիվները, իսկ մյուս դեպքում՝ ոչ:

Այսպես, Uber Technologies Inc- ի գործով Եվրոպական դատարանը 2017 թվականին գտել է, որ Uber-ի գործունեությունը պետք է դիտարկվի ոչ թե որպես օնլայն հարթակի գործունեություն, որում ներգրավված են ոչ պրոֆեսիանալ վարորդներ, այլ այն պետք է դիտարկվի որպես մի ընկերություն որը մատուցում է քաղաքային տաքսու տրանսպորտային ծառայություններ: Դատարանը նաև ընդգծել է, որ Uber-ի կողմից մատուցված ծառայությունը չի կարող կարգավորվել «Ներքին շուկայում մատուցված ծառայությունների մասին» և «Էլեկտրոնային առևտրի մասին» համապատասխան դիրեկտիվներով, հետևաբար դրա նկատմամբ տարածվում են ոչ թե ծառայությունների մատուցման ազատությունները ամբողջության մեջ, այլ ընդհանուր տրանսպորտային քաղաքականությունը²⁰:

Իսկ մեկ այլ գործով, որը վերաբերում է Airbnb ընկերության գործունեությանը, Եվրոպական դատարանն իր առաջին վճռով 2019 թվականին հանգել է այն եզրակացության, որ այն օնլայն հարթակ է և ոչ թե անշարժ գույքի գործակալություն, որպիսի մոտեցումը վերջինիս ազատել է անշարժ գույքի գործակալությունների նկատմամբ կիրառելի խստացված պահանջները կատարելու պարտականությունից, որոնք Ֆրանսիայում հայտնի են «Հոգետի օրենք» անվանումով: Դատարանը վճռի հիմնավորումներում նշել է, որ նման մոտեցման հիմքում ընկած է այն հազամանքը, որ նշված ընկերությունը չի որոշում վարձավճարի չափը և թույլ է տալիս, որ հաճախորդն ինքն ընտրի, թե որ բնակարանը վարձակալի: Դրան հակառակ, Uber-ը ինքն է սահմանում երթուղու արժեքը և ինքն է կատարում վարորդի ընտրությունը:

Անդրադառնալով էլեկտրոնային հարթակների առնչությամբ ներպետական կարգավորումներին՝ նկատում ենք, որ այս եզրույթը հիշատակվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում²¹ (այսուհետ նաև՝ Օրենսգրքը), որի 416.2 հոդվածով նախատեսված է էլեկտրոնային առևտրային հարթակ շահագործողի պատասխանատվության հիմքերը և հարթակի տրամադրման ծառայությունների առանձնահատկությունները:

Նշված կարգավորման համաձայն՝ երրորդ անձանց համար պայմանագրեր կնքելու կամ կատարելու հարթակ ծառայող ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի շահագործողը

(էլեկտրոնային առևտրային հարթակի շահագործողը) երրորդ անձանց միջև կնքված պայմանագրերից ծագող պարտավորությունների համար պատասխանատվություն չի կրում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, էլեկտրոնային առևտրային հարթակ շահագործողի ու երրորդ անձի միջև կնքված պայմանագրով:

ՀՀ օրենսդրությամբ մինչև վերջերս սահմանված չէր, թե ինչ պետք է հասկանալ էլեկտրոնային առևտրային հարթակի ներքո: Դրա սահմանումը տրվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում, և դրա 1-ին հոդվածի 35-րդ ենթակետով նախատեսվել է, որ էլեկտրոնային առևտրային հարթակը ծրագրային ապահովում է, այդ թվում՝ կայքէջ կամ դրա մաս, էլեկտրոնային հավելված, որը շահագործվում է վաճառողի կողմից կամ վաճառողի անունից և հնարավորություն է տալիս սպառողներին էլեկտրոնային եղանակով կնքելու պայմանագրեր տնտեսավարող սուբյեկտների կամ այլ անձանց հետ:

Սակայն բաց է մնացել այն հարցը, թե ով է համարվում էլեկտրոնային հարթակի շահագործողը, ինչ այլ սուբյեկտներ են ներգրավված այդ հարաբերություններում, և որն է նրանց կարգավիճակը կամ ինչ պատասխանատվություն են կրում էլեկտրոնային հարթակի շրջանակում իրականացվող գործողությունների առնչությամբ:

Այնուամենայնիվ, վերլուծելով ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգավորումը՝ կարող ենք արձանագրել, որ օրենսդրի կողմից էլեկտրոնային առևտրային հարթակ է դիտվել երրորդ անձանց համար պայմանագրեր կնքելու կամ կատարելու հարթակ ծառայող ինտերնետային կայքը կամ էլեկտրոնային հավելվածը:

Հաշվի առնելով էլեկտրոնային առևտրի առանձնահատկությունները՝ *այս համատեքստում հիմնական իրավական հարցադրումը վերաբերում է էլեկտրոնային հարթակում ստեղծված, հրապարակված, գեներացված բովանդակության համար պատասխանատվության բաշխմանը*: Որպեսզի կարողանանք տվյալ հարցադրմանը պատասխանել, նախ հարկավոր է առանձնացնել տվյալ իրավահարաբերության սուբյեկտային կազմը:

Էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով իրականացվող էլեկտրոնային առևտրի մասնակից են հանդիսանում հետևյալ սուբյեկտները՝ *էլեկտրոնային առևտրային հարթակի օպերատորը, միջնորդը, վաճառողը և սպառողը/օգտատերը*:

Գրղզստանի Հանրապետության «Էլեկտրոնային առևտրի մասին» օրենքով **առևտրային հարթակի օպերատոր** է դիտարկվում էլեկտրոնային գործարքի մասնակիցների փոխգործակցությունն ապահովող կազմակերպչական, տեղեկատվական և տեխնիկական լուծումներ տրամադրող անձը: Այ-

սինքն, առևտրային հարթակի օպերատորը այն անձն է, ով պատասխանատու է հարթակի կազմակերպչական, տեղեկատվական և տեխնիկական գործակցության համար, որի միջոցով սպառողները հնարավորություն են ստանում ձեռք բերել ապրանք, ծառայություն և այլն:

Վաճառողը այն տնտեսավարող սուբյեկտն է, որն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով:

Այս համատեքստում պետք է նկատել, որ մի շարք դեպքերում առևտրային հարթակի օպերատորը կարող է նույնանալ վաճառողի հետ: Օրինակ՝ «Ինտերնետ լուծումներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հանդիսանում է www.am.ozon.com առևտրային հարթակի օպերատոր և կայքում վաճառում է իր ապրանքները:

Իսկ սպառողը/օգտատերը այն անձն է, ով օգտվում է էլեկտրոնային առևտրային հարթակի հնարավորություններից՝ ակնկալելով դրա միջոցով ձեռք բերել ապրանք և /կամ/ ծառայություն:

«Թվային ծառայությունների մասին» 2022/2065 հրահանգի²² 3-րդ հոդվածի համաձայն՝ որպես էլեկտրոնային առևտրային հարթակի միջնորդ են հանդես գալիս *համացանցում հարթակի տրամադրման ծառայություն մատուցող իրավաբանական անձը (hosting provider), տեղեկատվական ցանցի միջոցով տեղեկատվության փոխանցում կամ կապի ցանց մուտքի տրամադրումն ապահովող իրավաբանական անձը (mere conduit), տեղեկատվական ցանցի միջոցով ստացված տեղեկատվության ավտոմատ, միջանկյալ և ժամանակավոր պահպանմամբ գրառվող իրավաբանական անձը (caching):*

Գրողստանի Հանրապետության «Էլեկտրոնային առևտրի մասին» օրենքով միջնորդ է նաև լոգիստիկ ծառայությունների օպերատորը և (կամ) մատակարարը, փոստային կապի օպերատորները, հեռահաղորդակցության, այդ թվում նաև՝ բջջային կապի օպերատորները, բանկերը, վճարային կազմակերպությունները և դրանց գործակալները, տեղեկատվական համակարգերի կազմակերպման և կառավարման ծառայություններ մատուցող իրավաբանական անձինք:

Այսպիսով, էլեկտրոնային առևտրային հարթակում միջնորդներն այն անձինք են, որոնք առանձին ծառայություններ են մատուցում էլեկտրոնային առևտրային հարթակի օպերատորին, ով էլ այդ ծառայությունների փոխգործակցության կազմակերպման արդյունքում հնարավորություն է ունենում ապահովել էլեկտրոնային առևտրային հարթակի ծառայություն՝ մի դեպքում այն օգտագործելով իր համար՝ հանդես գալով նաև որպես հարթակի միջոցով վաճառող, մյուս դեպքում՝ վա-

ճառողների համար՝ վերջիններիս որոշակի պայմաններով տրամադրելով հարթակի հնարավորությունները:

Այս համատեքստում անդրադառնալով ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգավորումներին՝ պետք է նշել, որ էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով իրականացվող էլեկտրոնային առևտրի մասնակից հանդիսացող սուբյեկտային կազմի տարանջատում և այդ կազմի մեջ մտնող սուբյեկտների եզրութաբանական սահմանում առկա չէ:

Ներպետական օրենսդրության կարգավորումները հանգում են միայն հետևյալին.

Օրենսգրքի 416.1-րդ հոդվածը սահմանում է, որ էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցողը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից իր տեղեկատվական համակարգի միջոցով փոխանցված էլեկտրոնային փաստաթղթի բովանդակության, ինչպես նաև այն փոխանցելու միջոցով երրորդ անձանց միջև ծագած պարտավորությունների համար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ ծառայություն մատուցողի հետ կնքված պայմանագրով:

Օրենսգրքի 416.2-րդ հոդվածը սահմանում է, որ երրորդ անձանց համար պայմանագրեր կնքելու կամ կատարելու հարթակ ծառայող ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի շահագործողը (էլեկտրոնային առևտրային հարթակի շահագործողը) երրորդ անձանց միջև կնքված պայմանագրերից ծագող պարտավորությունների համար պատասխանատվություն չի կրում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, էլեկտրոնային առևտրային հարթակի շահագործողի ու երրորդ անձի միջև կնքված պայմանագրով:

Անդրադառնալով վերոնշյալ իրավական բացթողումներին՝ պետք է նշել ՀՀ օրենսդրությամբ սուբյեկտների կազմը չհատկորոշելու պայմաններում (մասնավորապես, **Օրենսգրքով առկա չէ առանձին սահմանում, թե ովքեր են հանդիսանում էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցողը և էլեկտրոնային առևտրային հարթակի շահագործողը**) նրանց պատասխանատվությունից ազատելը մեր կարծիքով ճիշտ լուծում չէ:

«Էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցող» և «էլեկտրոնային հարթակի շահագործող» եզրութներն առանձին դիտարկելով կարող ենք նշել, որ խնդիրն առավել պարզ է էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցողի դեպքում: Այս համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով «էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն» հասկացությանը, ըստ որի՝ *վերջինս որպես կանոն, մատուցվում է հատուցման դիմաց, և ամբողջությամբ կամ մասամբ բաղկացած է էլեկտ-*

www.artadaradutyjournal.com

րոնային հաղորդակցության ցանցերով ազդակների հաղորդումից, իսկ համապատասխան դեպքերում՝ ազդակների ուղղորդումից, սակայն չի ներառում էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով հաղորդվող բովանդակության նկատմամբ խմբագրական հսկողություն տրամադրող կամ իրականացնող ծառայությունները:

Տառացի մեկնաբանությունը թույլ է տալիս եզրահանգել, որ դա հանդիսանում է այն անձը, ով հնարավորություն է տալիս քաղաքացիական շրջանառության մասնակիցներին հաղորդակցվել էլեկտրոնային եղանակով և հենց այդ հնարավորության տրամադրումն է հանդիսանում վերջինիս կողմից մատուցվող ծառայությունը:

Մեր գնահատմամբ, էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցող անձինք, ըստ էության, չեն հանդիսանում էլեկտրոնային առևտրային հարթակ կազմակերպող-օպերատոր և վերջիններիս գործունեությունը կայանում է միայն հաղորդակցությունը էլեկտրոնային եղանակով իրականացնելու հնարավորությունը ապահովելու մեջ, քանի որ վերջիններիս գործունեության հիմնական առանցքը տեղեկատվության փոխանակումն է և դրա փոխանակման ապահովում, որի մեջ ներառվում է նաև տեղեկատվության փոխանակումը էլեկտրոնային հաղորդակցության միջոցի օգնությամբ առևտուր իրականացնելու համար:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 416.2-րդ և 780.1-րդ հոդվածներում ընկած տրամաբանությանը, ապա դրանցից հետևում է, որ էլեկտրոնային առևտրային հարթակ շահագործողը, ընդհանուր կանոնի համաձայն, պարտավոր չէ հսկել հարթակի օգտատերերի կողմից ներկայացվող բովանդակության օրինականությունը և համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ինչպես նաև պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց միջև կնքված պայմանագրերից ծագող պարտավորությունների համար:

Նշված կարգավորումները ողջամիտ են, եթե դրանք գնահատում ենք այն տեսանկյունից, որ վերաբերում են սոցիալական ցանցերին կամ այնպիսի էլեկտրոնային հարթակների ինչպիսին, օրինակ՝ list.am-ն է կամ avito.ru-ն, այսինքն այն հարթակներին, որոնց կողմից մատուցվող ծառայությունը վերաբերում է առավելապես էլեկտրոնային հաղորդակցության ապահովմանը, իսկ վերջիններիս ձեռնարկատիրական գործունեությունը իրականացվում է նույն հարթակի միջոցով գովազդային ծառայությունների մատուցմամբ:

Այնուամենայնիվ, վերոգրյալ կարգավորումների վերլուծությունը ենթադրում է, որ օրենսդիրը, հաշվի առնելով նաև օրենսդրական կարգավորումների ընդունման ժամանակահատվածը /2016թ./ և այդ ժամանակահատվածում էլեկտրոնային

առևտրային հարթակ հասկացության ներքո ընկալվող ծառայությունների տարածվածության մակարդակը ՀՀ-ում, չի կարգավորել ներկայիս ընկալումներով էլեկտրոնային առևտրային հարթակների, դրանց օպերատորների գործունեությունն ու այդ գործունեությունից բխող պատասխանատվությունը:

Իրավահարաբերության սուբյեկտային կազմը բացահայտելուց հետո՝ հարկ ենք համարում քննարկել պատասխանատվության ընդհանուր քաղաքացիաիրավական կարգավորումները, որպեսզի կարողանանք որոշել, թե էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով իրականացվող էլեկտրոնային առևտրի մասնակիցները ինչպիսի պատասխանատվություն են կրում հարթակում տեղադրված բովանդակության համար:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, սպրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ 1. Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

2. Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

(...)

Վճռաբեկ դատարանը 2009 թվականի ապրիլի 17-ի թիվ ԵԶԳ/0595/04/08 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը:

Վճռաբեկ դատարանը 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ԵԷԳ/0888/02/14 քաղաքացիական գործով կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ մեղքի՝ որպես պատասխանատվության պարտադիր պայմանի առկայության մասին կանոնը կրում է դիսպոզիտիվ բնույթ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածում օրենսդիրը բացառություն է նախատեսել այն դեպքերի համար, երբ քաղաքացիաիրավական պատասխանատվությունը կարող է վրա հասնել անկախ մեղքի առկայությունից, դրանք են՝ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Վերոգրյալից բխում է, որ պարտավորության խախտում է համարվում դրա չկատարումը կամ անպատշաճ կատարումը, ինչի համար պատասխանը պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում պատասխանատվությունը վրա է հասնում անկախ մեղքի առկայությունից:

Հաշվի առնելով Օրենսգրքի 416.1-րդ հոդվածի բովանդակությունը, կարող ենք փաստել, որ բացառվում է էլեկտրոնային հաղորդակցության ծառայության մատուցողի պատասխանատվությունը երրորդ անձանց կողմից իր տեղեկատվական համակարգի միջոցով փոխանցված էլեկտրոնային փաստաթղթի բովանդակության, ինչպես նաև այդ փաստաթղթի փոխանցման արդյունքում ծագած պարտավորությունների համար: Սակայն, էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցողը պատասխանատու է այլ անձի անունից էլեկտրոնային փաստաթղթի փոխանցման, այլ անձի անունից էլեկտրոնային փաստաթղթի փոխանցման, այլ անձի անունից էլեկտրոնային փաստաթղթի ընտրության համար, եթե նմանատիպ վարքագիծը դրսևորվել է առանց լիազորության կամ լիազորությունների սահմանազանցմամբ:

Օրենսգրքի 416.2-րդ և 780.1-րդ հոդվածներով նախատեսված իրավական կարգավորումներին արդեն իսկ անդրադարձ է կատարվել, և նշվել է, որ պատասխանատվության սահմանափակումը էլեկտրոնային առևտրային հարթակ շահագործողի դեպքում ողջամիտ է այն տրամաբանությամբ, եթե այդ հասկացության ներքո ընկալվում են սոցիալական ցանցերը կամ այնպիսի էլեկտրոնային հարթակները ինչպիսին, օրինակ՝ list.am-ն է կամ avito.ru-ն, այսինքն՝ այն հարթակները, որոնց կողմից մատուցվող ծառայությունը վերաբերում է առավելապես էլեկտրոնային հաղորդակցության ապահովմանը, իսկ վերջիններիս ձեռնարկատիրական գործունեությունը իրականացվում է նույն հարթակի միջոցով գովազդային ծառայությունների մատուցմամբ:

Վերոգրյալի առնչությամբ էական է ԱՄՆ «Հաղորդակցության մասին» օրենքի 1996 թվականի փոփոխությամբ ավելացված 230-րդ հոդվածը, ըստ որի՝ հարթակի օպերատորը և օգտատերը չպետք է դիտարկվեն որպես տեղեկատվական բովանդակության ստեղծողի տեղեկատվության հրապարակող: Այսինքն, օրինակ՝ Facebook-ը պատասխանատու չէ օգտատիրոջ կողմից գեներացրած բովանդակության համար: Սակայն, 2024 թվականին Tiktok-ի ալգորիթմի միջոցով 10-ամյա Նիլահ Անդերսոնի մոտ մեկ այլ օգտատիրոջ կողմից տեղադրված «մարտահրավերի» (challenge) բովանդակության պատճառով վերջինիս մահվանից հե-

տո պրակտիկան փոխվեց: Աղջկա մայրը, դատի տալով TikTok-ին և ByteDance Inc.-ին պնդել է, որ ընկերությունները տեղյակ են մարտահրավերների մասին, թույլ են տվել տեղադրել նման տեսանյութեր և իրենց ալգորիթմի միջոցով գովազդել են դրանք անչափահասներին: 2024 թվականին ԱՄՆ 3-րդ շրջանի վերաքննիչ դատարանի կողմից քննելով Anderson v. TikTok Inc, No. 22-3061²³ գործը եկել է այն եզրահանգմանոր տվյալ բովանդակությունը հենց հարթակի կողմից գեներացված չի եղել, TikTok-ն օգտագործում է որոշակի ալգորիթմներ տեղադրված բովանդակությունը առաջխաղացելու նպատակով, ինչի արդյունքում TikTok-ը հանդես է գալիս որպես խոսող, ինչը նշանակում է, որ հարթակը պետք է պատասխանատվություն կրի իր կողմից առաջխաղացված /գովազդված/ բովանդակության համար:

Ինչ վերաբերում է էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցողի՝ Օրենսգրքի 416.1 հոդվածով սահմանված սահմանափակ պատասխանատվության առնչությամբ առկա միջազգային փորձին կարող ենք նշել, որ օրինակ ըստ ԵՄ «Էլեկտրոնային առևտրի մասին» հրահանգի՝ հոսթինգի մատակարարը պատասխանատվություն չի կրում հոսթինգ ծառայություններ մատուցելիս տեղադրված տեղեկատվության համար, եթե տեղեկացված չի եղել դրա անօրինական բնույթի, ինչպես նաև այնպիսի փաստերի կամ հանգամանքների վերաբերյալ, որոնցից ակնհայտ է դրանց անօրինական լինելը, իսկ համապատասխան տեղեկատվությունն ստանալուց հետո անհապաղ ջնջել է ապօրինի տեղեկատվությունը կամ դադարեցրել է դրա հրապարակումը: ԵՄ «Էլեկտրոնային առևտրի մասին» հրահանգը նախատեսում է «safe harbour» պաշտպանության մեխանիզմը՝ հարթակների միջնորդների համար: Միջնորդները (օրինակ՝ սոցիալական տեղեկատվական հարթակները) պատասխանատվություն չեն կրում օգտատերերի կողմից ստեղծված բովանդակության համար, եթե դրանք համապատասխանում են որոշակի պահանջներին:

Չնայած որ, միջնորդները օգտվում են «safe harbour» պաշտպանությունից, այնուամենայնիվ պետք է որոշակի զսպվածություն ցուցաբերեն հարթակում որոշակի բովանդակությամբ տեղեկատվություն տարածելիս: Միջնորդները տեխնիկական աջակցություն են ցուցաբերում, ապահովում են կայքի անխափան աշխատանքը և հիմնականում չեն տիրապետում հարթակում տեղադրված նյութի բովանդակությանը: Սակայն, մյուս կողմից միջնորդն ապահովում է կայքում տեղեկատվության հրապարակումը և տեխնիկական հնարավորություն ունի արգելափակել կայքում տեղադրվող նյութի բովանդակությունը: Վերոգրյալից բխում է, որ էլեկտրոնային հաղորդակցության ծա-

www.artadaradutyjournal.com

ռալություն մատուցողը, ըստ էության, էլեկտրոնային հարթակին միջնորդ ծառայություն մատուցող իրավաբանական անձն է, քանզի վերջինս ապահովում է հարթակի այլ մասնակիցների միջև փաստաթղթաշրջանառությունը:

Ըստ «Թվային ծառայությունների մասին» կանոնակարգի՝ այն պարագայում, երբ տրամադրվում է տեղեկատվական ծառայություն, որը բաղկացած է ծառայություն ստացողի կողմից տրամադրված տեղեկատվության հաղորդակցման ցանցում փոխանցումից կամ կապի ցանցին հասանելիության ապահովումից, ապա ծառայություններ մատուցողը պատասխանատվություն չի կրում փոխանցված կամ հասանելի տեղեկատվության համար, պայմանով, որ մատակարարը.

- ա) չի նախաձեռնում փոխանցումը,
- բ) չի ընտրում փոխանցման ստացողին,
- գ) չի ընտրում կամ փոփոխում հաղորդման մեջ պարունակվող տեղեկատվությունը:

Վերոգրյալ իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել, որ էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցողի սահմանափակ պատասխանատվության վերաբերյալ ներպետական օրենսդրությամբ նախատեսված կարգավորումը համահունչ է առկա միջազգային փորձին:

Էլեկտրոնային առևտրի մյուս մասնակիցների՝ էլեկտրոնային առևտրային հարթակի օպերատորի և վաճառողի պատասխանատվությունը առշուրջ կարևոր է անդրադառնալ «Սպառողների իրավունքների մասին» հրահանգով (CRD)²⁴ նախատեսված իրավակարգավորումներին: Այսպես, այդ իրավական ակտով ամրագրված է տնտեսավարող սուբյեկտի կողմից էլեկտրոնային եղանակով գործարք կնքելիս սպառողներին նախապես տեղեկատվության լայն շրջանակ բացահայտելու պարտականություն: Այդպիսին է նաև վաճառողի ինքնության վերաբերյալ տեղեկատվությունը: Սպառողը պատշաճ կերպով տեղեկացվում է վաճառողի ինքնության մասին՝ նրա կողմից հարթակում տեղադրված տեղեկատվության միջոցով: Սակայն փաստացի վաճառողի ինքնության մասին տեղեկացված չլինելը սպառողների մոտ կարող է տպավորություն ստեղծել, որ շուկայի սեփականատերն է հենց վաճառողը, ինչը կարող է հանգեցնել վաճառողի պարտավորությունների համար «շուկայի» սեփականատիրոջ պատասխանատվություն կրելուն կամ առնվազն սպառողի մոտ այդպիսի ընկալմանը: Վերոգրյալի հաշվառմամբ, 2019/2161 հրահանգով²⁵ կատարված փոփոխությունների համաձայն՝ «Անարդար առևտրային գործելակերպի մասին» հրահանգում ավելացել է նոր կարգավորում, որով սահմանվել է գնման հրավերի դեպքում սպառողին պարտադիր տրամադրվող տեղեկատվությունը, մասնավորապես՝ վաճա-

ռողի ինքնության վերաբերյալ: Այս պահանջի սահմանման նպատակը վաճառողի վերաբերյալ սպառողների տեղեկացվածության ապահովումն է, ինչպես նաև պատասխանատվության ճիշտ բաշխումը:

Վերոգրյալի համատեքստում ԵՄ արդարադատության դատարանը *Sabrina Wathelet v Garage Bietheres & Fils SPRL* գործով²⁶ անդրադարձել է՝ վաճառողի ինքնության անհայտ լինելու դեպքում պատասխանատվության բաշխմանը: Ըստ դատարանի վաճառող հասկացությանը տրված մեկնաբանության՝ այլ անձի անունից որպես վաճառող հանդես եկող անձը, (տվյալ դեպքում հանդես է գալիս որպես միջնորդ) պարտավոր է տեղեկացնել սպառողին իր ինքնության վերաբերյալ, այլապես նման գործելակերպի արդյունքում, սպառողը կմոլորվի: Սակայն, դատարանն արձանագրել է, որ նախքան մոլորվելու հանգամանքը հաստատված համարելը, հարկավոր է հաշվի առնել միջնորդի մասնակցության աստիճանը, գործադրած ջանքերը, սպառողին սպրանքը ներկայացնելու եղանակը, որից հետո էլ ըստ դրա կորոշվի միջնորդի պատասխանատվությունը: Չնայած այն հանգամանքին, որ դատարանի տվյալ եզրակացությունը կապված է «ավանդական» առևտրի պարագայում միջնորդի պատասխանատվության հետ, սակայն վերոնշյալը կարելի է կիրառել նաև էլեկտրոնային առևտրային հարթակների օպերատորների նկատմամբ: Մասնավորապես, էլեկտրոնային առևտրային հարթակի օպերատորը կարող է պատասխանատվություն կրել վաճառողի պարտավորությունների համար՝ նախքան պայմանագիրը կնքելը տրամադրված տեղեկատվության համար, եթե սպառողի տեսանկյունից ակնհայտ չէ, որ էլեկտրոնային առևտրային հարթակն իրական վաճառողը չէ:

Loomis V. Amazon.com գործով²⁷ դատարանը բարձրացրել է հետևյալ հարցադրումը. արդյո՞ք Amazon-ը կարող է պատասխանատվություն կրել իր հարթակում երրորդ կողմ-վաճառողի տեղադրված ոչ պատշաճ որակի ապրանքների համար: Դատարանն ուսումնասիրելով Amazon-ի դերը ապրանքի մատակարարման շղթայում՝ գտել է, որ այն ոչ թե չեզոք միջնորդ է, այլ՝ ակտիվ մասնակից, քանի որ նպաստում է վաճառքին՝ կայքում ցուցադրելով ապրանքը, մշակելով վճարումները և ապահովելով սպառողների հետ փոխգործակցությունը: Կալիֆոռնիայի վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ Amazon-ը կարող է պատասխանատվություն կրել՝ ընդգծելով նրա դերը մատակարարման շղթայում: Չնայած այն հանգամանքին, որ Amazon-ը ուղղակիորեն չի զբաղվել արտադրանքի վաճառքով, այն ներգրավված է եղել գործարքի կարևոր ասպեկտներում, ներառյալ՝ գովազդի, վճարումների մշակման և հաղորդակցության

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ապահովման մեջ: Քանի որ Amazon-ը վերահսկում է երրորդ կողմ-վաճառողներին, օրինակ՝ արգելում է գնորդների հետ անմիջական շփումը և թելադրում է վաճառքի պայմանները, չնայած այն հանգամանքին, որ ապրանքը չի տեղադրվել պահեստում, Amazon-ը ևս գործարքում ունեցել է իր մասնակցությունը (գնի որոշակի մասը պետք է փոխանցվեր վերջինիս), ուստի ապրանքի պատշաճ որակի և անվտանգության պահանջը վերաբերում է նաև վերջինիս:

Վերոգրյալ գործն էական է էլեկտրոնային առևտրային հարթակի օպերատորի և վաճառողի պատասխանատվության բաշխման համատեքստում: Ինչպես տեսնում ենք, Դատարանը էլեկտրոնային առևտրային հարթակի օպերատոր հանդիսացող Amazon ընկերությանը չի ազատել քաղաքացիաիրավական պատասխանատվությունից և վերջինիս ևս դիտել է որպես պատասխանատու սուբյեկտ իր հարթակի միջոցով կնքվող պայմանագրերով փոխանցվող ապրանքների անպատշաճ որակի լինելու համար՝ հիմքում դնելով այն, որ վերջինս ևս այդ վաճառքի արդյունքում ստացվող շահույթից մասնաբաժին է ստանում և փաստացի վաճառքը վերաբերում է ոչ միայն վաճառողի ձեռնարկատիրական գործունեությանը, այլ նաև՝ նրա գործունեությանը:

Ամփոփելով վերոգրյալ վերլուծությունը պետք է փաստել, որ ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի շրջանակում ապրանքներ վաճառելիս էլեկտրոնային առևտրային հարթակի օպերատորի և վաճառողի միջև պատասխանատվության բաշխման վերաբերյալ առանձին օրենսդրական կարգավորումներ առկա չեն:

Վեր հանելով էլեկտրոնային առևտրի և էլեկտրոնային առևտրային հարթակի հասկացությունը, դրանց առնչվող օրենսդրական կարգավորումների շրջանակի բացակայությունը և իրավական խնդիրները՝ անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրության առարկա դարձնել ևս մեկ կարևոր խնդիր էլեկտրոնային առևտրի ոլորտում՝ թվային ապրանքները և դրա իրավական կարգավորումները:

Թվային դարաշրջանում այլևս պարտադիր չէ, որ ապրանքները լինեն միայն շոշափելի, դրանք կարող են լինել նաև թվային: Թվային ապրանքները, ինչպիսիք են էլեկտրոնային գրքերը, ծրագրային ապահովումը, տեսախաղերը, երաժշտությունը, և այլն, շրջանառվում են էլեկտրոնային առևտրի միջոցով: Այս ապրանքները հեշտությամբ բաշխվում են, ծախսարդյունավետ են և անսահմանափակ, սակայն, դրանց ոչ շոշափելի լինելու բնույթը առաջացնում է յուրահատուկ իրավական մարտահրավերներ:

Ըստ էության, թվային ապրանքը դիտարկվում է որպես ընդհանուր տերմին, որն օգտագործվում է էլեկտրոնային եղանակով պահվող, առաքվող և

օգտագործվող ցանկացած ապրանք նկարագրելու համար: Թվային ապրանքի առանձնահատկությունն այն է, որ վերջինս ամբողջությամբ գտնվում է թվային տիրույթում՝:

«Սպառողների իրավունքների մասին» 2011/83/ԵՄ հրահանգը օգտագործում է «թվային բովանդակություն» եզրույթը, որը դիտարկվում է որպես տվյալներ, որոնք արտադրվում և մատակարարվում են թվային ձևաչափով: Որպես այդպիսին տվյալ հրահանգի նախաբանում դիտարկվում են համակարգչային ծրագիրը, երաժշտությունը, տեսանյութը և այլն՝ անկախ դրանց ներբեռնման կամ հեռարձակման, կրիչով կամ ցանկացած այլ միջոցով այցելությունից՝: Այսինքն, ապրանքի՝ թվային տիրույթում վաճառքի իրականացման հնարավորությունը դեռևս բավարար չէ այն որպես թվային ապրանք դիտարկելու համար, հնարավոր է իրավիճակ, երբ, օրինակ, թվային տիրույթում վաճառքի դրված գրքին սպառողը այցելություն ստանա՝ ֆիզիկական գրքի իրեն առաքման կամ այլ կերպ ձեռքբերելու պարագայում: Մինչդեռ, թվային ապրանքի դեպքում սպառողը այցելություն է ստանում այդ ապրանքի՝ թվային ձևաչափով արտադրվելու և մատակարարվելու պարագայում:

Ի տարբերություն ֆիզիկական ապրանքի՝ թվային ապրանքի նկատմամբ հաճախ ոչ թե սեփականության իրավունք է ծագում, այլ դրա օգտագործման իրավունք: Ուստի, տվյալ պարագայում ապրանքը ձեռքբերողը՝ սպառողը, սովորաբար, իրավունք է ստանում օգտագործել ապրանքը որոշակի պայմաններով, այսինքն՝ թվային ապրանքների դեպքում սեփականության իրավունքի փոխանցում տեղի չի ունենում՝:

Հատկանշական է, որ թվային ապրանքի դեպքում ապրանքի ֆիզիկական առաքում տեղի չի ունենում՝ միայն մուտք կամ ներբեռնում: Օրինակ՝ երբ սպառողը ձեռք է բերում գիրք Amazon Kindle կայքից, վերջինս չի համարվում ներբեռնված ֆայլի սեփականատերը: Amazon Kindle կայքը իրավունք ունի հեռացնել կամ որևէ այլ կերպ սահմանափակել այցելությունը ներբեռնված ֆայլին՝:

Apple-ի լիցենզավորման պայմանագրի համաձայն App Store-ի միջոցով հասանելի հավելվածները ոչ թե վաճառված են, այլ՝ լիցենզավորված: Այսպես, լիցենզավորողը, App Store-ի միջոցով ապրանքին հասանելիություն ապահովելիս, տրամադրում է չփոխանցվող լիցենզիա՝ հնարավորություն տալով օգտագործել հավելվածը՝:

Ողջ վերոգրյալից եզրակացնում ենք, որ օգտատերերը հազվադեպ են ձեռք բերում թվային ապրանքի նկատմամբ սեփականության իրավունք: Փոխարենը, նրանք տվյալ թվային ապրանքի նկատմամբ ստանում են սահմանափակ իրավունքներ:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ

www.artadaratutyunjournal.com

Էլեկտրոնային առևտրային հարթակը հնարավորություն ունի հեռացնելու արդեն իսկ ներբեռնված ֆայլը, ինչից բխում է, որ թվային ապրանքի նկատմամբ օգտատերը երբեք սեփականության իրավունք ձեռք չի բերում, քանի որ չի տնօրինում թվային բովանդակությունը:

«Թվային բովանդակության և թվային ծառայությունների մատակարարման պայմանագրերի որոշ ասպեկտների վերաբերյալ» ԵՄ/2019/770 հրահանգով (այսուհետ նաև՝ ԵՄ/2019/770 հրահանգ) կիրառվում է «թվային բովանդակություն» հասկացությունը, որպես տվյալների արտադրանք և մատակարարում թվային ձևով, այսինքն՝ թվային բովանդակությունը նույնանում է թվային ապրանքի հետ:

Հարկ է նկատել, որ ԵՄ/2019/770 հրահանգի կարգավորման շրջանակը որպես թվային բովանդակություն և թվային ծառայություն, ի թիվս այլնի, դիտարկվում է նաև համակարգչային ծրագրերը, հավելվածները, տեսաֆայլերը, աուդիոֆայլերը, երաժշտական ֆայլերը, թվային խաղերը, էլեկտրոնային գրքերը, որոնք ստեղծվում, մշակվում, մուտք են գործում կամ պահպանում են տվյալները թվային ձևով: Որպես թվային բովանդակության կամ թվային ծառայության մատակարարման եղանակներ՝ ԵՄ/2019/770 հրահանգը դիտարկում է նյութական կրիչի վրա փոխանցումը, սպառողների կողմից դրանց ներբեռնումը որևէ սարքավորման վրա:

Ավելին, ԱՄՆ-ի Առևտրի դաշնային հանձնաժողովը ևս անդրադարձել է, թվային ապրանքին և դրա կարգավիճակին՝ նշելով, որ ֆիզիկական ապրանք գնելիս դրա նկատմամբ սեփականության իրավունք է ձեռք բերվում: Սակայն, իրավիճակը փոխվում է թվային ապրանքի դեպքում, քանի որ «գնել» կոճակը սեղմելուց հետո դրան այցելություն ստանում են միայն այն ժամանակ, երբ օգտատերը ունի ակտիվ հաշիվ այն հարթակում կամ կայքում, որտեղից ձեռք է բերել թվային ապրանքը³³:

Ողջ վերոգրյալից հետևում է, որ թվային ապրանքը առանց ֆիզիկական կրիչի, չնյութականացված և թվային եղանակով մատակարարվող ապրանքն է, օրինակ՝ երբ սպառողը թվային ապրանքը ներբեռնում է մատակարարի կայքէջից կամ նույնիսկ որոշակի պայմանավորվածություն ունի թվային արտադրանքի մատակարարի հետ, որը թույլ է տալիս նրան մուտք գործել մատակարարի սերվեր և օգտագործել այնտեղ աշխատող ծրագիրը՝ առանց այն ներբեռնելու, մասնավորապես՝ էլեկտրոնային գիրք:

Թվային ապրանքի դեպքում, հատկապես հեղինակային իրավունքի օբյեկտի դեպքում, կնքվում են լիցենզային պայմանագրեր, քանի որ սպառողին փոխանցվում է ոչ թե ապրանքը, այլ՝ տվյալ օբյեկտի օգտագործման իրավունքը: Տվյալ պարագայում ապրանք արտադրողի և սպառողի միջև կնք-

վում է բաժանորդագրության լիցենզային պայմանագիր: Դրանցով հաճախ սահմանվում է ապրանքի օգտագործման, ենթալիցենզիայի պայմանագիր կնքելու կարգը:

Այս համատեքստում թվային ապրանքների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների կողմից սպառողներին ներկայացված տեղեկատվությունը կարող է մոլորեցնող լինել. վաճառողները կարող են չափազանցնել ապրանքի հնարավորությունները, հասանելիության տևողությունը և այլն: Օրինակ, թվային ապրանքների՝ որպես «հավերժ հասանելի» գովազդելու պայմաններում՝ դրա օգտագործումը կարող է սահմանափակվել էլեկտրոնային հարթակի կողմից՝ քաղաքականության փոփոխությունների կամ լիցենզային ժամկետի ավարտի պատճառով: Բացի այդ, սպառողները սովորաբար ենթադրում են, որ թվային ապրանքը գործառնությանին առումով համարժեք է ֆիզիկական ապրանքին: Սակայն, շատ դեպքերում, թվային ապրանքները չեն փոխանցվում, իսկ դրանց վերավաճառքը կամ արգելված է կամ տեխնոլոգիապես անհնար:

ԵՄ/2019/770 հրահանգի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է ապահովել թվային ապրանքի թարմեցում, եթե այդպիսին հնարավոր է, միևնույն ժամանակ սպառողը պարտավոր չէ կատարել թվային ապրանքի թարմեցումը, սակայն դրա արդյունքում առաջացած անհամապատասխանության համար տնտեսավարող սուբյեկտը պատասխանատվություն չի կրում՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից թվային ապրանքի կամ ծառայության թարմեցված տարբերակի առկայության մասին օգտատիրոջը տեղեկացնելու պարագայում: Ուստի, էական է, որ սպառողները ստանան բավարար և հստակ տեղեկատվություն տեխնիկական պաշտպանության միջոցառումների կիրառման և այն փաստի վերաբերյալ, որ այդ միջոցառումները կարող են խոչընդոտել թվային արտադրանքի աշխատանքը որոշակի սարքավորումների վրա, որոնք «էական» են, ինչպես նաև տեղեկատվություն այն մասին, թե ինչպես կարող է տվյալ ապրանքը փոխանցվել³⁴: Թվային ապրանքի ներկայացվածին չհամապատասխանելու դեպքում՝ սպառողն իրավունք ունի պահանջել դրանց համապատասխանեցում փոխարինման միջոցով, գնի նվազեցում կամ պայմանագրի դադարեցում:

Ներպետական օրենսդրությամբ բացակայում է թվային ապրանքի հստակ սահմանումը և դրա վերաբերյալ իրավակարգավորումները: Կարծում ենք, որ հատկապես անհրաժեշտ է սահմանել այն դեպքերը, թե երբ էլեկտրոնային առևտրային հարթակը իրավունք ունի հեռացնել թվային ապրանքը օգտատիրոջ ծրագրային համակարգից, ինչպես նաև արդյո՞ք օգտատերը ստանալու է փոխհատուցում, երբ էլեկտրոնային առևտրային հարթակը հեռացնում է իր կողմից ձեռքբերված թվային ապ-

րանքը:

Ուստի, առաջարկում ենք ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանել թվային ապրանքի հասկացությունը (օրինակ, մենք գտնում ենք, որ այն առանց ֆիզիկական կրիչի, չնյութականացված և թվային եղանակով մատակարարվող ապրանքն է), դրանկատմամբ կիրառելի կարգավորումների շրջանակը, ինչպես նաև առաջարկում ենք սահմանել սպառողին փոխանցվող իրավունքների հստակ շրջանակ:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ ժամանակակից թվային աշխարհում ավանդական առևտրին զուգահեռ էլեկտրոնային առևտրի մեծ արագությամբ աճող տեմպերը ստիպում են բոլոր

երկրներին, ինչպես նաև երկրներին տնտեսական միություններին սահմանել որոշակի կանոններ, կարգավորումներ, ընդունել օրենքներ, որոնք համալիր կերպով կանոնակարգում են այդ շրջային մեջ ներառված բոլոր սուբյեկտների գործելաձևը, ամրագրում նրանց իրավունքներն ու պարտականությունները, սահմանազատում պատասխանատվությունը՝ առանցքային համարելով առցանց սպառողների իրավունքների պաշտպանությունը, քանի որ թվային տիրույթում դրանց խախտումը առավել անվերահսկելի է: Հետևաբար, Հայաստանի Հանրապետությունը չի կարող անտեսել այդ միտումները և պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ, այս ոլորտը համալիր իրավակարգավորման ենթարկելու համար:

¹ Այս վիճակագրական տվյալները առավել մանրամասն ներկայացված են <https://168.am/2025/03/07/2179036.html> կայքում, հրապարակման ամսաթիվը՝ 2025թ. մարտի 7, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 22-ին:

² Տե՛ս, Bacchetta Marc et al. Electronic commerce and the role of the WTO // World Trade Organisation Special Studies, Geneva, 1998, No. 2 ISBN 9287011982, էջ 10-11:

³ Տե՛ս, նույն տեղում:

⁴ Տե՛ս, Савельев А. И. Электронная коммерция в России и за рубежом: правовое регулирование// «Статут», 2016, էջ 29-30:

⁵ Տե՛ս, Козье Д. Электронная коммерция // Перевод с английского. М.: Издательско-торговый дом «Русская редакция», 1999, էջ 2:

⁶ Տե՛ս, UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment 1996 with additional article 5 bis as adopted in 1998. հասանելի է https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/19-04970_ebook.pdf, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 11:

⁷ Տե՛ս, Work Programme on E-Commerce, https://www.wto.org/english/tratop_e/ecom_e/ecom_work_programme_e.htm#what, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 13:

⁸ Տե՛ս, European initiative on electronic commerce <https://eur-lex.europa.eu/EN/legal-content/summary/european-initiative-on-electronic-commerce.html>, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 13:

⁹ Տե՛ս, Булатенкий Ю.Е. Рассолов И.М. Торговое (коммерческое) право. Учебник для бакалавров. М.: Юрайт; 2020, էջեր 416-448: ISBN 978-5-9916-1947-9., <https://urait.ru/bcode/382549>, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 15:

¹⁰ Տե՛ս, Гаврилов Н. Нормативно-правовая база электронной торговли в России, Право и политика, 2009, N 1, էջ 120:

¹¹ Տե՛ս, Киселева Л.Ю. Интернет-торговля и особенности ее правового регулирования, Вопросы правоприменения / Law enforcement issues, УД 347.451(045), Научные записки молодых исследователей թիվ 3, 2021, էջ 24, <https://cyberleninka.ru/article/n/internet-torgovlya-i-osobennosti-ee-pravovogo-regulirovaniya>, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 18:

¹² Տե՛ս, РФ, Федеральный закон N 11081-3 Об электронной торговле <https://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=PRJ&n=6910-K3NyB4UIH0mEVnN1>, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 23:

¹³ Տե՛ս, E-Commerce Law of the People's Republic of China, <https://faolex.fao.org/docs/pdf/chn215050.pdf>, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 25:

¹⁴ Закон Кыргызской Республики Об электронной торговле, <https://cbd.minjust.gov.kg/112333/edition/1263145/ru>, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 30:

¹⁵ Տե՛ս, Կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի նիստի N 37 արձանագրային որոշման Հավելված թիվ 1 «Հայաստանի Հանրապետություն էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագիր»:

¹⁶ Ընդունման ամսաթիվ՝ 04.10.2016թ.: Ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 01.01.2018թ.: Տե՛ս ՀՀ ՊՏ 2016.11.04/79(1259) Հոդ.1038:

¹⁷ Տե՛ս, Правовое регулирование электронной коммерции. Актуальные проблемы гражданского права: сб. статей. Вып.

4 / под ред. М.И. Брагинского. М., 2002. էջ 157:

¹⁸ Տե՛ս, Сизякин В.С. Электронная торговля: общие характеристики и гражданско-правовое регулирование.

Волгоградский государственный университет, Международный журнал гуманитарных и естественных наук, 2020, էջ 5:

¹⁹ Տե՛ս, Баранков Е.В., Чувашлова М.В. Цифровые платформы: сущность и виды. Экономика и управление,

<https://s.siteapi.org/db33f211b11f03/docs/5кya65vjlrkswks0c0sg8kgsoc0c04>, վերջին այցելություն՝ 2025թ. հունիսի 24:

²⁰ Տե՛ս, PRESS RELEASE No 136/17 Luxembourg, 20 December 2017 Judgment in Case C-434/15 Asociaciyn

Profesional Elite Taxi v Uber Systems Spain SL <https://curia.europa.eu/jcms/upload/docs/application/pdf/2017-12/cp170136en.pdf>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 20:

²¹ Ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.? Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

²² Տե՛ս, Regulation (EU) 2022/2065 of the European Parliament and of the Council of 19 October 2022 on a Single Market for Digital Services and amending Directive 2000/31/EC (Digital Services Act):

²³ Տե՛ս, Anderson v. TikTok Inc, No. 22-3061 (3d Cir. 2024) <https://law.justia.com/cases/federal/appellate-courts/ca3/22-3061/22-3061-2024-08-27.html>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 2:

²⁴ Տե՛ս, Directive 2011/83/EU of the european parliament and of the council of 25 october 2011 On consumer rights, amending council directive 93/13/eec and directive 1999/44/ec of the european parliament and of the council and repealing council directive 85/577/eec and directive 97/7/ec of the european parliament and of the council, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A02011L0083-20220528&qid=1731588693752>, վերջին այցելություն՝ 2025թ.օգոստոսի 11:

²⁵ Տե՛ս, Directive 2019/2161 of the European Parliament and of the Council of 27 November 2019 amending Council Directive 93/13/EEC and Directives 98/6/EC, 2005/29/EC and 2011/83/EU of the European Parliament and of the Council as regards the better enforcement and modernisation of Union consumer protection rules <https://eur-lex.europa.eu/eli/dir/2019/2161/oj>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 12:

²⁶ Տե՛ս, Case C-149/15 Sabrina Wathelet v Garage Bietheres & Fils SPRL <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A62015CJ0149>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 13:

²⁷ Տե՛ս, Loomis v. Amazon.com LLC, California Court of Appeal 63 Cal. App. 5th 466, 277 Cal.Rptr.3d 769 (2021) <https://www.quimbee.com/cases/loomis-v-amazon-com-llc>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 13:

²⁸ Տե՛ս, Webopedia, Digital goods, <https://www.webopedia.com/definitions/digital-goods/>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 17:

²⁹ Տե՛ս, Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council of 25 October 2011 on consumer rights, OJ L 304, 22.11.2011, էջ 64-88:

³⁰ Տե՛ս, Janja Hojnik, Technology neutral EU law: Digital goods within the traditional goods/services distinction / International Journal of Law and Information Technology 25 (1), March 2017, էջեր 63-84:

³¹ Տե՛ս, Amazon Kindle Refund Policy. (2023). <https://www.amazon.com>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 24:

³² Տե՛ս, Licensed application end user license agreement <https://www.apple.com/legal/internet-services/itunes/dev/stdeula/>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 24:

³³ Տե՛ս, Amy Hebert, Do you really own the digital items you paid for ? <https://consumer.ftc.gov/consumer-alerts/2024/04/do-you-really-own-digital-items-you-paid>, հրատարակման ամսաթիվ՝ 2024. ապրիլի 17, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 27:

³⁴ Տե՛ս, Digital products, how to include them in the proposal for a consumer rights directive, BEUC position paper, ?? 10, <https://www.beuc.eu/sites/default/files/publications/2010-00506-01-e.pdf>, վերջին այցելություն՝ 07.07.2025թ. սեպտեմբերի 3:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի նիստի N 37 արձանագրային որոշման Հավելված թիվ 1 «Հայաստանի. Հանրապետություն էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագիր»: (Annex No. 1 to the Protocol Decision No. 37 of the Government Session of September 19, 2013 “Program on the Development of Electronic Commerce, Network Readiness and Technical Equipment of the Republic of Armenia)
2. ՀՀ հարկային օրենսգիրք, (04.10.1016), (01?012018), ՀՀՊՏ 2016.11.04/79(1259) Հոդ.1038? (Tax Code of the Republic of Armenia)
3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, (05.05.1998), (01.01.1999), ՀՀՊՏ 1998.08.10/17(50): (Civil Code of the Republic of Armenia)
4. РФ, Федеральный закон N 11081-3 Об электронной торговле <https://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=PRJ&n=6910 - K3NyB4UIH0mEVnN1>, վերջին այցելություն՝ 2025թ. հունիսի 23:
5. Закон Кыргызской Республики Об электронной торговле, <https://cbd.minjust.gov.kg/112333/edition/1263145/ru>, վերջին այցելություն՝ 2025թ. հունիսի 30:
6. UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment 1996 with additional article 5 bis as adopt-

- ed in 1998. հասանելի է? https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/19-04970_ebook.pdf, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 11:
7. E-Commerce Law of the People's Republic of China, <https://faolex.fao.org/docs/pdf/chn215050.pdf>, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 25:
8. Regulation (EU) 2022/2065 of the European Parliament and of the Council of 19 October 2022 on a Single Market for Digital Services and amending Directive 2000/31/EC (Digital Services Act):
9. Directive 2011/83/EU of the european parliament and of the council of 25 october 2011 On consumer rights, amending council directive 93/13/eec and directive 1999/44/ec of the european parliament and of the council and repealing council directive 85/577/eec and directive 97/7/ec of the european parliament and of the council, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A02011L0083-20220528&qid=1731588693752>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 11:
10. Directive 2019/2161 of the European Parliament and of the Council of 27 November 2019 amending Council Directive 93/13/EEC and Directives 98/6/EC, 2005/29/EC and 2011/83/EU of the European Parliament and of the Council as regards the better enforcement and modernisation of Union consumer protection rules <https://eur-lex.europa.eu/eli/dir/2019/2161/oj>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 12:
11. Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council of 25 October 2011 on consumer rights, OJ L 304, 22.11.2011, էջ 64-88:
12. Баранков Е.В., Чувашова М. В. Цифровые платформы: сущность и виды. Экономика и управление, <https://s.siteapi.org/db33f211b111f03/docs/5кya65vjlrkswks0c0sg8kgsoc0c04>, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 24:
13. Булатецкий Ю.Е., Рассолов И.М. Торговое (коммерческое) право. Учебник для бакалавров. М.: Юрайт; 2020, էջեր 416-448: ISBN 978-5-9916-1947-9., <https://urait.ru/bcode/382549>, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 15:
14. Гаврилов Н. . Нормативно-правовая база электронной торговли В России, Право и политика, 2009, N 1, էջ 120:
15. Киселева Л.Ю. Интернет-торговля и особенности ее правового регулирования, Вопросы правоприменения / Law enforcement issues, УДК 347.451(045), Научные записки молодых исследователей թիվ 3, 2021, էջ 24, <https://cyberleninka.ru/article/n/internet-torgovlya-i-osobennosti-ee-pravovogo-regulirovaniya>, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 18:
16. Козье Д. Электронная коммерция // Перевод с английского. М.: Издательско-торговый дом «Русская редакция», 1999, էջ 2:
17. Правовое регулирование электронной коммерции. Актуальные проблемы гражданского права: сб. статей. Вып. 4 / под ред. М.И. Брагинского. М., 2002. էջ 157:
18. Савельев А. И. Электронная коммерция в России и за рубежом: правовое регулирование// «Статут», 2016, էջ 29-30:
19. Сизякин В.С. Электронная торговля: общие характеристики и гражданско-правовое регулирование. Волгоградский государственный университет, Международный журнал гуманитарных и естественных наук, 2020, էջ 5:
20. Amy Hebert, Do you really own the digital items you paid for ? <https://consumer.ftc.gov/consumer-alerts/2024/04/do-you-really-own-digital-items-you-paid>, հրատարակման ամսաթիվ? 2024. ապրիլի 17, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 27:
21. Bacchetta Marc et al. Electronic commerce and the role of the WTO // World Trade Organisation Special Studies, Geneva, 1998, No. 2 ISBN 9287011982, էջ 10-11:
22. Janja Hojnik, Technology neutral EU law: Digital goods within the traditional goods/services distinction / International Journal of Law and Information Technology 25 (1), March 2017, էջեր 63-84:
23. Amazon Kindle Refund Policy. (2023). <https://www.amazon.com>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 24:
24. European initiative on electronic commerce <https://eur-lex.europa.eu/EN/legal-content/summary/european-initiative-on-electronic-commerce.html>, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 13:
25. Digital products, how to include them in the proposal for a consumer rights directive, BEUC position paper, էջ 10, <https://www.beuc.eu/sites/default/files/publications/2010-00506-01-e.pdf>, վերջին այցելություն՝ 07.07.2025թ. սեպտեմբերի 3:
26. Licensed application end user license agreement <https://www.apple.com/legal/internet-services/itunes/dev/stdeula/>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 24:
27. PRESS RELEASE No 136/17 Luxembourg, 20 December 2017 Judgment in Case C-434/15 Asociacion Profesional Elite Taxi v Uber Systems Spain SL <https://curia.europa.eu/jcms/upload/docs/application/pdf/2017-12/cp170136en.pdf>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 20:
28. Webopedia, Digital goods, <https://www.webopedia.com/definitions/digital-goods/>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 17:
29. Work Programme on E-Commerce, https://www.wto.org/english/tratop_e/ecom_e/ecom_work_programme_e.htm#what, վերջին այցելություն՝ 2025թ. հուլիսի 13:
30. Case C-149/15 Sabrina Wathelet v Garage Bietheres & Fils SPRL <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A62015CJ0149>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 13:

31. Loomis v. Amazon.com LLC, California Court of Appeal 63 Cal. App. 5th 466, 277 Cal.Rptr.3d 769 (2021) <https://www.quimbee.com/cases/loomis-v-amazon-com-llc>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 13:
32. Anderson v. TikTok Inc, No. 22-3061 (3d Cir. 2024) <https://law.justia.com/cases/federal/appellate-courts/ca3/22-3061/22-3061-2024-08-27.html>, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 2:

Ափսեն Տոգոմոյան

Доцент кафедры гражданского права юридического факультета Ереванского государственного университета
Кандидат юридических наук,

Միսել Գալսթյան

Старший юрист отдела административных производств и судебного представительства юридического управления
Комиссии по защите конкуренции и интересов потребителей

ՔԵԶԻՕՄԵ

Особенности правового регулирования электронной торговли в Республике Армения

Электронная коммерция стала неотъемлемой частью гражданского оборота как в Армении, так и в мире в целом. Однако в Республике Армения несовершенство законодательного регулирования создает ряд проблем, влияющих на все звенья цепочки электронной коммерции, особенно на потребителей. В статье представлен генезис электронной коммерции, факторы развития и условия, способствовавшие ее распространению. Проанализированы подходы и правовое регулирование в Европейском Союзе и других странах, уделено внимание передовой практике и ключевым судебным позициям, формирующим систему. На основе анализа выявлены недостатки армянского законодательства и проведен их всесторонний разбор. В результате уточнена сущность электронной коммерции, сформулировано ее определение и выделены основные характеристики. Также рассмотрены все участники цепочки электронной коммерции, включая правовой статус цифровых платформ и особенности их гражданско-правовой ответственности. Особое внимание уделено цифровым продуктам как важной составляющей электронной коммерции, оценена их правовая регламентация и рыночное значение.

Ключевые слова: электронная торговля, цифровая платформа, ограниченная ответственность, цифровой товар, оператор цифровой платформы.

Ashkhen Soghomonyan

Ph.D. in Law, Associate Professor at
the Chair of Civil Law, Faculty of Law,
Yerevan State University

Mishel Galstyan

Senior Lawyer at the Division of Administrative
Proceedings and Judicial Representation,
Legal Department, Competition Protection Commission

SUMMARY

Specific features of legal regulation of electronic commerce in the Republic of Armenia

E-commerce has become an integral component of civil circulation both in Armenia and globally. However, in the Republic of Armenia, the imperfect legislative regulation creates a number of issues affecting all links of the e-commerce chain, particularly consumers. This article presents the origin, development factors, and conditions that have contributed to the spread of e-commerce. Approaches and legal regulations in the European Union, as well as in other countries, have been analyzed, with comparative attention to best practices and significant judicial positions that shape the system. Based on this analysis, shortcomings in Armenian legislation have been identified and comprehensively examined. As a result, the essence of e-commerce has been clarified, its concept formulated, and its main characteristics outlined. The study also considers all participants in the e-commerce chain, including the legal status of digital platforms and the specifics of their civil liability. Special attention is given to digital products as an important component of e-commerce, evaluating their legal regulation and market significance.

Key words: electronic commerce, digital platform, limited liability, digital good, digital platform operator.

Բնագիրը ներկայացվել է 10.08.2025թ.

Ընդունվել է տպագրության 25.09.25թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) ԵՊՀ
քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական
գիտությունների դոկտոր Վ. Ավետիսյանը

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԴՈՍԵՆԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդվածը ուսումնասիրում է դոմենային անվանումների իրավական կարգավորումն ու պաշտպանության մեխանիզմները՝ համադրելով միջազգային (ICANN, WIPO/UDRP, ACPA, ԵՄ Դատարանի պրակտիկա) և ազգային (.am և .հայ տիրույթներ, ՀՀ օրենսդրություն) մոտեցումները: Վերլուծվում են կիբերսքուոթինգի և թայփոսքուոթինգի խնդիրները, ապրանքային նշանի և դոմենային անվան կապը, ինչպես նաև վեճերի լուծման մեխանիզմների արդյունավետությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում WIPO-ի դերին, որի վարչարարական գործընթացները համարվում են արագ, արդյունավետ և միջազգային մակարդակով ճանաչված, իսկ Հայաստանի դեպքում առանձնացվում է «.am» տիրույթի ինտեգրումը UDRP համակարգին:

Հիմնաբառեր- դոմենային անվանումներ, դոմեյն, ապրանքային նշան, կիբերսքուոթինգ, թայփոսքուոթինգ, UDRP, WIPO, ICANN, վեճերի լուծում, «.am», «.հայ»

Դոմենային կամ տիրույթային անվանումը մարդու կողմից ընկալելի համացանցային հասցեի ձև է, որը հեշտ է նույնականացնել և հիշել, օրինակ google.com, yahoo.com և այլն: Ըստ Ս. Նեստերովիչի՝ տիրույթը (տիրույթային անվանումը) պայմանական նշանների համակցություն է, որի նպատակը Ինտերնետ համակարգչային ցանցում ինֆորմացիոն ռեսուրսների անհատականացումն է: Համացանցի, թվային տեխնոլոգիաների տարածման համատեքստում դոմենային անվանումները դարձել են բիզնեսի անհատականացման կարևորագույն միջոցներ, ներկայումս դժվար թե գտնվի մեկը, որին ծանոթ չլինեն Facebook.com, Amazon.com դոմենային անվանումները: Ավելին՝ հաջող ընտրված դոմենային անվանումը կարող է հաջող բիզնեսի գրավականը լինել: Այդ իսկ պատճառով դոմենների պաշտպանությունը ստանում է կարևոր նշանակություն: Սակայն մինչ պաշտպանության առանձնահատկություններին անցնելը կարևոր է անդրադառնալ որոշակի փաստերի:

Դոմենային անվանումները կառավարվում և համակարգվում են դոմենային IP հասցեների և դոմենային անվանումների կառավարման կորպորացիայի կողմից, այսուհետ՝ ICANN կողմից: ICANN-ը վերահսկողություն է իրականացնում յուրահատուկ IP հասցեների և դոմենային անվանումների բաշխման նկատմամբ, սակայն իրականում դոմենային անվանումների գրանցումը իրականացվում է դոմենային անվանումների բազմաթիվ ռեգիստրարների կողմից, որոնք հաստատված են տարբեր երկրներում³:

Դոմենային անունները գործում են որոշակի աստիճանակարգության հիման վրա՝ ջններիկ վերին մակարդակի դոմեններ (gTLDs) և երկրի կոդի բարձր մակարդակի դոմեններ (ccTLDs): Ջեններիկ

վերին մակարդակի դոմեններ են .com, .net, .org և հարաբերականորեն վերջերս ներկայացված .aero, .biz, .coop, .info, .museum, .name, .and, .pro, դոմենները, որոնք կառավարվում են ICANN-ի կողմից, իրենց հերթին էլ երկրի բարձր մակարդակի դոմենային անվանումները կառավարվում են գրանցման ազգային մարմինների կողմից⁴: Ներկայումս կա մոտ 240 երկրի մակարդակի բարձր կոդեր, որոնք բաղկացած են երկու տառանոց երկրի կոդից, օրինակ .am Հայաստանի համար, jr.՝ Ճայպոնիայի, .fr՝ Ֆրանսիայի և այլն: Հարկ է նշել, որ այս աստիճանակարգումը և կառավարման առանձնահատկությունը ունեն կարևոր նշանակություն հատկապես վեճերի առաջացման պարագայում, ինչին էլ կանդրադառնանք առաջիկայում:

Քիչ չեն դեպքերը, երբ դոմենային անվանման գրանցումը առաջացնում է մի շարք խնդիրներ, ու հենց դոմենային անվանման ապօրինի գրանցման հետ են կապված այնպիսի երևույթներ ինչպիսին են կիբերսքուոթինգը, թայփոսքուոթինգը և այլն:

Կիբերսքուոթինգ (cybersquatting)-ը իր մեջ ներառում է ապրանքային նշանների՝ որպես դոմենային անվանումների գրանցում այն անձանց կողմից, ովքեր ապրանքային նշանի իրավատերը չեն: Կիբերսքուոթինգի հիմնական նպատակը հետագայում իրավատիրոջը ապրանքային նշանի հետ համընկնող դոմենային անվանման վաճառքն է ապրանքային նշանի իրավատիրոջը: Սա առաջացնում է լուրջ վեճեր ապրանքային նշանի իրավատերերի և դոմեններ գրանցած անձանց միջև, որոնց լուծումը սովորական դատական համակարգերի համար առաջացնում են մեծ բարդություններ⁵: Կիբերսքուոթինգի մեկ այլ դրսևորում է այսպես կոչված թայփոսքուոթինգը (typosquatting): Սա այն իրավիճակն է, երբ գրանցվում է ապրանքային

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նշանին շատ նման դոմենային անվանում, սակայն դրանում դիտավորյալ կերպով լինում են տառա-խալկներ, որոնք առաջացնում են շփոթություն ապրանքային նշանի հետ: Հարկ է նշել, որ թայփոսթու-թինգի դեպքերը բազմաթիվ են: Միայն Մայքրո-սոֆթ ընկերությունը այս հիմքով տարբեր ժամա-նակներում ներկայացրել է մոտ երեք հարյուր հայ-տեր :

Կիրքսքոութինգի դեպքերը բազմաթիվ են ամ-բողջ աշխարհում և առնչվում են ուղղակի հայտնի անձանցից մինչև համաշխարհային աստղերին և քաղաքական գործիչներին:

Կիրքսքոութինգի հայտնի դեպքերից է Microsoft v. MikeRoweSoft գործը, որը ծագել էր Մայքրոսոֆտի և կանադացի դպրոցական Մայք Ռոուլի միջև, որը գրանցել էր MikeRoweSoft.com դո-մենային անվանումը: Մայքրոսոֆտը պնդում էր, որ դրանով դպրոցականը խախտել էր ապրանքային նշանի նկատմամբ իր իրավունքները, քանի որ ֆո-նետիկ առումով կային նմանություններ «Microsoft» և «MikeRoweSoft» միջև: Այս գործը ստացավ շատ մեծ հասարակական հնչեղություն, սակայն ի վերջո լուծվեց հաշտությամբ: Գպրոցա-կանը հրաժարվեց իր դոմենից՝ որոշակի հատուց-ման և Xbox-ի դիմաց: Բավական հետաքրքիր է նաև Madonna vs. Paris, որը քննվում էր Մտավոր սե-փականության համաշխարհային կազմակերպու-թյան կողմից: Գործով դիմումատուն հայտնի երգ-չուհի Մադոննան էր, ով դիմում էր ներկայացրել նյույորքցի ծրագրավորողի դեմ՝ madonna.com դո-մենային անվանումը օգտագործելու համար: Մտավոր սեփականության համաշխարհային կազ-մակերպության պահանջը գտավ, որ տեղի է ունեցել երգչուհու իրավունքների խախտում, և madonna.com դոմենային անվանումը օգտագործ-վում է ոչ իրավաչափորեն:

Կիրքսքոութինգի էությունը հասկանալու հա-մար նախ պետք է հասկանալ՝ ինչ է իրենից ներկա-յացնում ապրանքային նշանը, և վերհանել ապ-րանքային նշանի ու դոմենների առանձնահատկու-թյունները: Ապրանքային նշանը միշտ է, որն օգտա-գործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառա-յություններն այլ անձի ապրանքներից և (կամ) ծա-ռայություններից տարբերելու համար :

Ապրանքային նշանի առանձնահատկություն-ները հետևյալն են՝

- Ապրանքային նշանը անհատականացնում է արտադրանքը, աշխատանքը և ծառայություննե-րը.
- Ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքները առաջանում են պետական գրանց-ման պահից.
- Ապրանքային նշանը պետք է լինի նոր՝ Նիցցայի դասակարգչի որևէ դասի նկատմամբ
- Նույնանման ապրանքային նշանները

տարբեր երկրներում կարող են գրանցել տարբեր դասերով

- Ապրանքային նշանը կարող է լինել ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ՝ պատկանելով մի քանի անհատների կամ կազմակերպություննե-րի, որոնք միավորվել են միատեսակ որակական հատկանիշներով ապրանք թողարկելու համար:

- Ապրանքային նշան կարող են լինել բառե-րը, բառակապակցությունները, անունները կամ կարգախոսները, տառերը կամ թվերը, նկարները, պատկերները կամ խորհրդանշանները, եռաչափ պատկերները, մասնավորապես ապրանքի կամ դրա փաթեթավորման (տարայի) արտաքին տես-քը, հոլոգրամները, գույները, գույների համակցու-թյունները կամ կոմպոզիցիաները, ձայնային ազ-դանշանները, թվարկված բոլոր միջերի ցանկացած համակցություն

- Ապրանքային նշանը պետք է օգտագործվի իրավասիրոջ կողմից: Չօգտագործվելու դեպքում դրանց նկատմամբ իրավունքները կարող են դա-դարեցվել:

Իր հերթին դոմենային անվանումները ունեն հետևյալ հատկանիշները՝

- Դոմենային անվանումը անհատականաց-նում է համացանցային կայքը
- Դոմենային անվանման նկատմամբ պաշ-տոնական գրանցման պահանջ չի ներկայացվում
- Դոմենային անվանումը պետք է լինի բա-ցառապես նոր, քանի որ համացանցում անթույ-լատրելի է լիովին նույնական երկու դոմենային ան-վանումների առկայությունը
- Դոմենային անվանումը պատկանում է մի-այն մեկ սուբյեկտի
- Դոմենային անվանումը իրենից ներկայաց-նում է բառային նշան
- Դոմենային անվանման պարտադիր օգ-տագործում անհրաժեշտ չէ՝ :

Ապրանքային նշանի և դոմենային անվանում-ների միջև կան բազմաթիվ տարբերություններ, սա-կայն դրանց համընկնումը շատ դեպքերում ակն-հայտ է, օրինակ CHANEL-ն ինքնին ապրանքային նշան է, իսկ chanel.com՝ դոմենային անվանում: Այդ է պատճառը, որ մի շարք երկրների, այդ թվում՝ նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է, որ ապ-րանքային նշանի օգտագործման ձև է նաև միշի օգտագործումն ինտերնետային կամ հեռահաղոր-դակցության համաշխարհային համակարգչային այլ ցանցերում, մասնավորապես՝ հասցեագրման ցանկացած միջոցներով, այդ թվում՝ ինտերնետա-յին դոմեն անվանումներում՝ :

Թվում է, թե բավական բարդ է գտնել պաշտ-պանության միջոցներ այն դեպքերում, երբ անձայ-րածիր համացանցային տարածքում ինչ-որ մեկը գրանցում է այլոց ապրանքային նշանը, կամ ինչ-որ հայտնի անձի անունը, սակայն իրականությու-

www.artadaradutyjournal.com

նը այլ է: Ու եթե համացանցային տիրույթում մի շարք խնդիրների համար դժվար է գտնել իրավական լուծումներ, ապա դոմենային անվանումների պարագայում արդեն իսկ կան որոշակի լուծումներ: Ազգային դատական համակարգերը չեն կարող համապարփակ լուծումներ առաջարկել այն պարագայում, երբ վեճը առաջացել է գլոբալ հարթությունում, ավելին՝ շատ հաճախ դատավարությունները ծախսատար և ժամանակատար են, այդ իսկ պատճառով, հիմք ընդունելով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության խորհրդատվությունը, ICANN-ը ընդունեց հատուկ որոշում դոմենային անվանումների հետ կապված վեճերի լուծման համար (այսուհետ՝ Կանոններ): Այս որոշումը ընդունվել է 1999 թվականին, սակայն պարբերաբար ենթարկվել է թարմացումների¹³: Ավելին՝ Կանոնները կյանքի կոչելու համար ICANN-ի¹⁴ կողմից հավատարմագրված են մի շարք մարմիններ, որոնք արդեն մոտ քսան տարի հաջողությամբ լուծում են դոմենների հետ կապված վեճերը: ICANN-ի¹⁵ կողմից հավատարմագրված մարմիններ են Դոմենային անվանումների հետ կապված վեճերի արաբական կենտրոնը¹⁶, Դոմենային անվանումների հետ կապված վեճերի ասիական կենտրոնը¹⁷, Միջազգային համացանցային վեճերի լուծման կանադական կենտրոնը¹⁸, Չեխական արբիտրաժային դատարանի համացանցային վեճերի արբիտրաժային կենտրոնը¹⁹, Ազգային արբիտրաժային ֆորումը²⁰, Մտավոր Սեփականության համաշխարհային կազմակերպությունը²¹: ICANN-ի Կանոնները մասնավոր, միջազգային, ոչ ծախսատար, արագ, հիմնականում առցանց տիրույթում վեճերի լուծման կարևոր մեխանիզմ է, ընդ որում այս մեխանիզմի լավագույն հատկանիշներից մեկը այն է, որ այն վեր է տարածքային ընդդատության խնդրից, ինչը շատ բնորոշ է ազգային դատարաններին²²:

Կանոնների համաձայն դոմենային անվանումների հետ կապված վեճերը կարող են քննարկման առարկա դառնալ հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝

- Ա) Վիճելի դոմենային անվանումը նույնական է կամ շփոթության աստիճան նման է դիմումատուի ապրանքային կամ սպասարկման նշանին
- Բ) Գրանցողը չունի իրավունք կամ լեգիտիմ շահ դոմենային անվան նկատմամբ
- Գ) Դոմենային անվանումը գրանցվել է օգտագործվել է անբարեխղճորեն²³:

Միևնույն ժամանակ Կանոնները մատնանշում են որոշակի կողմնորոշիչներ, որոնց կարող է հղում տալ գրանցողը դոմենային անվան նկատմամբ իր իրավունքները և օրինական շահերը մատնանշելու համար: Դրանք կարող են լինել հետևյալ իրավիճակները՝

- Նա օգտագործել է դոմենային անվանումը՝ առաջարկելով ապրանքներ և ծառայություններ մինչև վեճի վերաբերյալ ծանուցում ստանալը

- Նա իր դոմենային անվանումով ուներ ճանաչում որպես անհատ բիզնես կամ կազմակերպություն, եթե նույնիսկ նա չի գրանցել որևէ ապրանքային նշան կամ սպասարկման նշան:

- Դոմենային անվանումը օգտագործվել է ոչ առևտրային նպատակներով կամ ազատ օգտագործման կանոններով առանց շահույթ ստանալու կամ սպառողներին մոլորեցնելու որևէ մտադրության, կամ նպատակ չի հետապնդում ստվերել այլ ապրանքային նշան կամ ծառայության նշանը: Սա իհարկե վերջնական ցանկ չէ²⁴ կարող են հաշվի առնվել այլ հանգամանքներ ևս:

Միևնույն ժամանակ սահմանվում են նաև որոշակի չափանիշներ, որոնք թույլ են տալիս գնահատել դոմենային անվանման գրանցման անբարեխղճությունը:

Միևնույն ժամանակ սահմանվում են նաև որոշակի չափանիշներ, որոնք թույլ են տալիս գնահատել դոմենային անվանման գրանցման անբարեխղճությունը:

- Հանգամանքներ, որոնք վկայում են, որ գրանցողը գրանցել է կամ ստացել դոմենային անունը բացառապես այն վաճառելու, վարձակալելու կամ այլ կերպ դիմումատուին փոխանցելու համար, երբ դիմումատուն ապրանքային կամ սպասարկման նշանի իրավատերն է կամ դիմումատուի մրցակիցը

- Երբ գրանցողը գրանցել է դոմենային անվանումը, որպեսզի կանխի ապրանքային նշանի կամ սպասարկման նշանի իրավատիրոջ կողմից ապրանքային նշանը կամ սպասարկման նշանը համապատասխան դոմենի մեջ ընդգրկելը:

- Գրանցողը գրանցել է դոմենային անվանումը բացառապես մրցակցի համար խոչընդոտներ ստեղծելու համար

- Գրանցելով դոմենային անվանումը՝ գրանցողը դիտավորյալ կերպով փորձել է ստանալ շահույթ, համացանցային օգտատերերին ուղղորդել դեպի իր կայք՝ շփոթություն ստեղծելով դիմումատուի ապրանքային նշանի հետ:

Ինչ են այս բոլոր կանոնները նշանակում: Սա նշանակում է, որ եթե ինչ-որ մեկը գրանցել է իր դոմենային անվանումները հետևյալ՝ .aero, .asia, .biz, .cat, .com, .coop, .info, .jobs, .mobi, .museum, .name, .net, .org, .pro, .tel and .travel ջեներիկ, վերին մակարդակի դոմեններում, ապա ապրանքային նշանի իրավատերը կարող է դիմել ICANN-ի կողմից հավատարմագրված կազմակերպություններ, օրինակ՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն և արագորեն ստանալ իրավունքների պաշտպանություն՝ առանց դիմելու ազգային դատարաններ, առանց ժամանակ վատնելու, փնտրելու և գտնելու այն բոլոր անձանց, ովքեր կանգնած են դոմենի հետևում:

Ինչ վերաբերում է ազգային օրենսդրություններին, ապա հետաքրքրական է, որ կիբերսպորտինգի դեմ առաջին համապարփակ օրենսդրական

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ակտը ԱՄՆ կոնգրեսի կողմից ընդունված «Կիրքերսրոթինգի դեմ սպառողների պաշտպանության մասին» ակտն էր, որն ընդունվել էր դեռևս 1999 թվականին: Օրենսդրական կարգավորումը ավելացնում էր դրույթներ սպրանքային նշանների պաշտպանությանը նվիրված հանրահայտ Լանհամ Ակտին: Ակտը սահմանում է կարգավորումներ, որոնք թույլ են տալիս քաղաքացիական հայցներ կայացնել այն անձի դեմ, ով անբարեխղճորեն գրանցում է, տրաֆիկի է ենթարկում կամ այլ կերպ օգտագործում է այն դոմենային անվանումը, որը համապատասխանում է սպրանքային նշանին՝ շահույթ ստանալու նպատակով: Միևույն ժամանակ, անձնական անունը նույնպես ընդգրկվում է սպրանքային նշանի կոնցեպտի ներքո՝:

Ինչպես Կանոններում, այնպես էլ ակտում սահմանված են որոշակի չափանիշներ, որոնք կարող են վկայել գրանցման անբարեխղճության մասին: Այդ գործոնների օրինակները հետևյալն են՝

- Անձի մտադրությունը սպառողներին սպրանքային նշանի իրավատիրոջ կայքից ուղորդել դեպի այլ կայք, որը նպատակ է հետապնդում վնաս հասցնել նշանի համբավին կամ ստանալ շահույթ կամ շփոթություն առաջացնել ճիշտ հետ՝ շփոթություն ստեղծելով կայքի աղբյուրի, հովանավորության, կայքի հետ:

- Անձի մտադրությունը՝ վաճառել կամ որևէ այլ կերպով փոխանցել դոմենային անվանումը սպրանքային նշանի իրավատիրոջը կամ որևէ երրորդ անձի՝ շահույթ ստանալու նպատակով՝ գրանցելով դոմենային նշանը առանց օգտագործման մտադրության կամ չօգտագործելով դոմենային անվանումը:

- Անձի կողմից սխալ կամ մոլորեցնող տեղեկատվության տրամադրումը դոմենային անվանման գրանցման ժամանակ կամ ընթացքում սխալ տեղեկատվության տրամադրումը:

- Անձի կողմից մի քանի դոմենային անվանումների գրանցումը կամ մի քանի դոմենային անվանումների նկատմամբ իրավունքների ձեռքբերումը, երբ անձը գիտի, որ դրանք նույնական են կամ շփոթության աստիճան նման են այլ անձանց պատկանող այն նշաններին, որոնք ունեն տարբերակիչ հատկանիշներ կամ հանրահայտ են՝ անկախ նրանից, թե ինչպիսի ծառայությունների են վերաբերում:

Միևույն ժամանակ, ակտը սահմանում է մի շարք չափանիշներ, որոնք վերաբերում են բարեխղճությանը: Մասնավորապես՝ հաշվի է առնվում՝

- Ասպրանքային նշանի կամ մտավոր սեփականության այլ իրավունքների առկայությունը դոմենային անվանման գրանցման ժամանակ

- Ինչ ծավալով է դոմենային անվանումը ընդգրկում գրանցող անձի անունը

- Անձի կողմից ծառայությունների և սպրանքների հետ կապված դոմենային անվանումների օգտագործումը նախորդիվ

- Անձի կողմից դոմենային անվան օգտագործումը ազատ օգտագործման կամ շահույթ չստանալու նպատակով:

Պետք է նշել, որ անձնական անունները լրացուցիչ պաշտպանություն են ստանում Ակտի § 1129(1)(A) դրույթի համաձայն, որով նշվում է, որ եթե անձը, ով գրանցել է այնպիսի դոմենային անվանում, որը պարունակում է այլ ողջ անձի անուն կամ էականորեն կամ շփոթության աստիճան նման է այդ անձի անունին՝ առանց տվյալ անձի համաձայնության, դոմենային անվանումը տվյալ անձին կամ երրորդ անձին վաճառելով շահույթ ստանալու հատուկ նպատակով ենթակա է քաղաքացիական պատասխանատվության²⁶:

Բավական հետաքրքիր է նաև սահմանված տուգանքների չափը, որոնք յուրաքանչյուր դոմենային անվանման համար կարող են լինել 100-100,000 դոլարի միջակայքում²⁷:

Միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ կիրքերսրոթինգի դեպքում հիմնականում գործի է դրվում սպրանքային նշանների կամ անբարեխղճ մրցակցության վերաբերյալ օրենսդրությունը, սակայն այս առումով բավական հետաքրքրական է նաև ԵՄ Արդարադատության դատարանի դիրքորոշումը:

2013 թվականին Եվրոպական միության արդարադատության դատարանը կայացրեց բավական հետաքրքիր որոշում Belgian Electronic Sorting Technology NV (BEST NV) v Bert Peelaers, Visys NV գործով: Այս գործով սահմանվեց, որ դոմենային անվանումները կարող են համարվել անբարեխղճ գովազդի ձև, եթե դրանք ընդգրկում են այլոց սպրանքային նշանի անվանումը և/ կամ արտադրանքի անվանումը, քանի որ սպառողների մոտ կարող են առաջացնել ոչ ճիշտ պատկերացում կայքի իրավատիրոջ գործունեության վերաբերյալ: Հետևաբար, եթե ձեռներեցը ինչ-որ պատճառներով չի կարող իր իրավունքները պաշտպանել՝ ելնելով մտավոր սեփականության իրավունքի դրույթներից, սպա կարող է հենվել գովազդի վերաբերյալ օրենսդրության վրա:

Այս գործով վեճը ծագել էր երկու բելգիական ընկերությունների միջև, որոնք մրցակցային գործունեություն էին ծավալում միևնույն արտադրանքի արտադրության և մատակարարման ոլորտում: Առաջին ընկերությունը մեղադրում էր երկրորդին իր արտադրանքի անվանման անբարեխղճ օգտագործման մեջ: Պատասխանողը իր դոմենի մեջ ընդգրկել էր պատասխանողի անվանման հապավումը՝ «www.bestlasersorter.com»: Այս գործով Արդարադատության Եվրոպական դատարանը կատարեց հետևյալ պարզաբանումները՝ հիմք ընդու-

www.artaradutyjournal.com

ներով EC 84/450/EEC և 2006/114/EC դիրեկտիվների կարգավորումները:

Այդ դիրեկտիվների կարգավորումների հիման վրա գովազդը ներկայացուցչություն է («representation»), այսինքն ցանկացած ձևով հաղորդում, որը նպատակ է հետապնդում պատկերացում ձևավորել առևտրի, քիզնեսի, մասնագիտության վերաբերյալ, ապրանքների և ծառայությունների առաջխաղացման նպատակով՝ ներառյալ անշարժ գույքը, իրավունքները և պարտականությունները:

Ըստ Դատարանի՝ դոմենային անվանման հասարակ գրանցումը ոչինչ չի ասում դրա իրավատիրոջ մտադրության մասին ստեղծել այդ անվանման ներքո կայք կամ որ այն հայտնի կլինի օգտատերերին, ուստի ըստ դատարանի նման ֆորմալ գործողությունը չի համարվի «representation», որևէ կերպ չի ազդի սպառողների վարքագծի վրա և չի խախտի գովազդի վերաբերյալ օրենսդրությունը: Դատարանը սահմանեց, որ նման գրանցումը չի կարող համարվել ավելին, քան մրցակցի տեղեկատվությունը սպառողներին հասցնելու հաղորդակցման հնարավորությունների սահմանափակում:

Այս պարագայում պատասխանատվությունը կարող է վրա հասնել այլ օրենսդրության շրջանակներում:

Մինևույն ժամանակ, դատարանը գտավ, որ դոմենային անվանման օգտագործումը իրավիճակից ելնելով՝ կարող է համարվել «representation»՝ սպառողների վրա ազդեցության եղանակ: Դատարանը ընդգծեց, որ գնորդների ուշադրությունը կարելի է գրավել ոչ միայն կայքի կառավարման միջոցով, այլ նաև մանրակրկիտ ձևով ընտրված դոմենային անվանման միջոցով, որը նպատակ է հետապնդում առավել մեծ քանակությամբ օգտատերերի մոտ կայք այցելելու մղում առաջացնել և հետաքրքրություն ստեղծել առաջարկի նկատմամբ: Պատասխանողը ստեղծել էր վիճելի անունով կայք, որը պարունակում էր իր ընկերության և ապրանքների վերաբերյալ տեղեկատվություն, ուստի Դատարանը գտավ, որ այս պարագայում կարելի է խոսել ԵՄ դիրեկտիվների իմաստով գովազդի մասին²⁸:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետությունում դոմենային անվանումների հետ կապված զարգացումներին՝ պետք է նշել, որ մինչև AM սեփական դոմենային տիրույթի հայտնվելը առաջին հայկական դոմենները գրանցվել են (.COM) վերին դոմենային մակարդակում, ինչը պայմանավորված էր AM դոմենային տիրույթի բացակայությամբ²⁹ և առաջին անգամ .AM դոմենային տիրույթը հայտնվեց 1996 թվականին: AM դոմենի կառավարման իրավունքը ստանալուն պես՝ վերջինիս կառավարումը Հայաստանում հանձնվեց հայկա-

կան տեղեկատվական ցանցի կենտրոնին (AMNIC. www.amnic.net), որը ստեղծվեց ու աշխատում էր ԱՐՄԻՆԿՈՅԻ դեկլարացիայի ներքո: Ներկայումս AMNIC-ը գործում է Ինտերնետ Հանրության կազմում, ունի սեփական առանձին համակարգ ու ուղղակիորեն իրականացնում է աշխատանքները հայկական դոմենների կառավարման գործընթացում: 2000 թվականից Ինտերնետ Հանրությունը վերին մակարդակի ազգային դոմենների եվրոպական ռեգիստրարների միության անդամ է (Council of European National Top Level Domain Registries, CENTR):

2008թ-ին Հայաստանի Ինտերնետ հանրությունը ընդգրկվել է ccNSO-ի անդամակցության մեջ, որն իրենից ներկայացնում է ազգային դոմենների կառավարիչների համախմբող ICANN-ի ստորաբաժանում:

Այսօր Հայաստանում գրանցված են ավելի քան 21 հազար դոմենային անուններ (www.amnic.net): Ներկայումս Հայաստանում .AM դոմենային տիրույթում, գործում են 78 ռեգիստրարներ: Գործնականորեն Հայաստանի գրեթե բոլոր առաջատար ինտերնետ ծառայություն տրամադրողները AM դոմենային տիրույթում ունեն ռեգիստրարի կարգավիճակ:

Դոմենային անվանումը տրամադրվում է ռեգիստրարի հետ հիմնականում ծառայությունների մատուցման պայմանագրով ու կողմերի հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով և «Ինտերնետ Հանրություն» ՀԿ-ի (այսուհետ՝ ԻՀ ՀԿ) կողմից սահմանված կանոնների հիման վրա: (այսուհետ՝ Քաղաքականություն), ուստի հատկապես կարևոր է դառնում կանոնների Քաղաքականության իմացությունը:

Ըստ Քաղաքականության ռեգիստրի՝ տվյալների շտեմարանում գրանցվում են (վերագրանցվում են) «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթների երկրորդ մակարդակի դոմենային անունները և «.com.am», «.co.am», «.org.am», «.net.am», «.commune.am», «.համայնք.հայ» երրորդ մակարդակի դոմենային անունները³⁰:

Ռեգիստրի տվյալների շտեմարանում ռեգիստրարների կամ ռեգիստրարների անունից հանդես եկող անձանց կողմից դոմենային անունների գրանցում իրականացնելու համար պարտադիր նախապայման է տվյալ դոմենային անվան գրանցողը դառնալու ցանկություն ունեցող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտի հետ կնքված՝ «.am» կամ «.հայ» դոմենային անունների տիրույթում դոմենային անունների գրանցման ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի առկայությունը:

Դոմենային անվան մուտքագրման հետ միաժամանակ, դոմենային անվան աշխատունակու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյունն ապահովելու համար, ռեզիստրի տվյալների շտեմարանում մուտքագրվում են հետևյալ տեղեկությունները՝

1) տվյալ դոմենային անվան գրանցողը դառնալու ցանկություն ունեցող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հաշվառման կամ բնակության վայրը (հասցեն), փոստային ինդեքսը,

2) տվյալ դոմենային անվան գրանցողը դառնալու ցանկություն ունեցող ֆիզիկական անձ չհանդիսացող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտի անվանումը, գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն), փոստային ինդեքսը, իրավաբանական անձ հանդիսանալու դեպքում՝ կազմակերպական-իրավական ձևը, այլ սուբյեկտ հանդիսանալու դեպքում՝ իրավական կարգավիճակը,

3) տվյալ դոմենային անվան գրանցողը դառնալու ցանկություն ունեցող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտի վարչական, տեխնիկական և ֆինանսական կոնտակտների տվյալները (անուն, ազգանուն, էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոսահամար): Ընդ որում, տվյալ դոմենային անվան գրանցողը դառնալու ցանկություն ունեցող ֆիզիկական անձի դեպքում մուտքագրվում են այդ ֆիզիկական անձի տվյալները, եթե վերջինս օրենքով սահմանված կարգով չի լիազորել այլ անձի (անձանց) հանդես գալու որպես իր վարչական, տեխնիկական և ֆինանսական կոնտակտ,

4) դոմենային անվան համակարգի սերվերի՝ մվազագույնը երկու, առավելագույնը՝ վեց անուն,

5) դոմենային անվան օգտագործման ժամկետը, որը չի կարող մուտքագրվել մեկ տարուց պակաս ժամկետով՝

Ընդ որում, դոմենային անունը չի կարող օգտագործվել՝

1) պռոնոգրաֆիկ նյութերի տարածման նպատակով,

2) Հայաստանի Հանրապետության պետական սահմանների պաշտպանությանը, ներքին կայունությանը, ազգային անվտանգությանը վնասող և (կամ) Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված նյութերի տարածման նպատակով,

3) հանցագործության կատարման կոչեր պարունակող նյութերի տարածման նպատակով,

4) սպամի (spam) տարածման նպատակով,

5) այնպիսի ապրանքների և ծառայությունների վաճառքի նպատակով, որոնց շրջանառությունը կամ ազատ շրջանառությունն արգելված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (բացառությամբ այն դեպքերի, երբ գրանցողն ունի նման ապրանքների վաճառքի կամ ծառայությունների մատուցման թույլտվություն),

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված նյութերի տարածման նպատակով,

տակով,

7) թրաֆիքինգի իրականացման կամ դրա իրականացմանն որևէ կերպ աջակցելու նպատակով:

Իր հերթին նշվում է, որ դոմենային անվան գրանցումը (վերագրանցումը) ենթակա է չեղյալ ճանաչման ռեզիստրի կողմից՝

1) եթե պարզվում է, որ դոմենային անվան գրանցման (վերագրանցման) նպատակով գրանցողի կողմից ներկայացված տեղեկությունները (կամ դրանց մի մասը) կեղծ են,

2) եթե տվյալ դոմենային անվան գրանցման (վերագրանցման) նպատակով գրանցողի կողմից ներկայացված տեղեկությունները թերի են, և գրանցողը, ի պատասխան այդ դոմենային անվան գրանցումն (վերագրանցումն) իրականացրած ռեզիստրարի կամ ռեզիստրի կողմից պատշաճ կարգով կատարված հարցմանը, երկու ամսվա ընթացքում համապատասխանաբար դոմենային անվան գրանցումն (վերագրանցումն) իրականացրած ռեզիստրարին կամ ռեզիստրին չի տրամադրում անհրաժեշտ լրացուցիչ տեղեկությունները,

3) եթե տվյալ դոմենային անվան գրանցողը երկու ամսվա ընթացքում չի պատասխանել այդ դոմենային անվան գրանցումն (վերագրանցումն) իրականացրած ռեզիստրարի կողմից գրանցողի նույնականացման վերաբերյալ պատշաճ կարգով կատարված հարցմանը,

4) եթե տվյալ դոմենային անվան գրանցողը ռեզիստրից պահանջել է ռեզիստրի տվյալների շտեմարանից հանել դոմենային անվան աշխատունակությունն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկությունները,

5) եթե տվյալ դոմենային անվան գրանցողի վարչական, ֆինանսական և տեխնիկական կոնտակտներից առնվազն մեկը պահանջել է ռեզիստրի տվյալների շտեմարանից հանել իր անձնական տվյալները, իսկ գրանցողը, այդ դոմենային անվան գրանցումն (վերագրանցումն) իրականացրած ռեզիստրարի կամ ռեզիստրի կողմից պատշաճ կարգով կատարված հարցմանը ի պատասխան, երկու ամսվա ընթացքում չի ներկայացրել իր նոր համապատասխան կոնտակտ(ներ)ի տվյալները,

6) բացառիկ դեպքերում՝ Քաղաքականության խախտման համար:

Բացի դրանից հետաքրքրական է, որ Քաղաքականության (այդ թվում՝ դոմենային անվան գրանցման, վերագրանցման, գրանցողի նախաձեռնությամբ գրանցողի փոփոխություն կատարելու նպատակով դոմենային անվան նոր գրանցման, դոմենային անվան գրանցման մերժման, դոմենային անվան գրանցումը (վերագրանցումը) չեղյալ ճանաչելու, ռեզիստրի, ռեզիստրարների և գրանցողների իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության, քաղաքականության

www.ardaradutyjournal.com

կետերի մեկնաբանման, խախտման, անվավերության և այլնի) հետ կապված ցանկացած վեճ պետք է վերջնականորեն լուծվի արբիտրաժի միջոցով՝ «Դոմենային անունների վեճերի լուծման արբիտրաժ» հիմնադրամի կողմից՝ համաձայն «Դոմենային անունների վեճերի լուծման արբիտրաժի կանոններ»-ի (այսուհետ՝ Կանոններ): Ռեգիստրը, ռեգիստրարները, գրանցողները և Քաղաքականությանն առնչվող այլ անձինք պարտավորվում են ենթարկվել Կանոններին: Արբիտրաժի կազմը և արբիտրների քանակը որոշվում է՝ համաձայն Կանոնների: Կանոնների համաձայն իրականացված արբիտրաժի վճիռը վերջնական է, պարտադիր և կիրառման ենթակա ռեգիստրի, ռեգիստրարների, գրանցողների և սույն քաղաքականությանն առնչվող այլ անձանց կողմից և, կամավոր չկատարվելու դեպքում, պարտադիր կատարման համար կարող է հանձնվել ցանկացած իրավասու դատարան³²:

Քաղաքականությունը որևէ կարգավորումներ հատուկ չի նախատեսում ապրանքային նշանների հետ կապված: Անվանումների հետ կապված հատուկ կարգավորումը վերաբերում է միայն պետական մարմիններին, այսպես՝ ռեգիստրը սահմանում է դոմենային անունների ցանկ, որում ներառված դոմենային անունների գրանցողներ կարող են հանդիսանալ միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված պետական մարմինները (այսուհետ՝ Կառավարական դոմենային անունների ցանկ): Բացի դրանից սահմանվում է, Կառավարական դոմենային անունների ցանկը, ի թիվս այլ անունների, ներառում է «armenia.am», «armenia.com.am», «armenian.com.am», «armenia.co.am», «armenian.co.am», «armenia.org.am», «armenian.org.am», «armenia.net.am», «armenian.net.am», «հայաստան.հայ», «հայ.հայ», «հայկական.հայ» դոմենային անունները³³:

Սակայն քաղաքականության կարևորագույն շեշտադրումներից մեկը այն է, որ գրանցողի վերաբերյալ տեղեկատվությունը պարտադիր նշվում է գրանցման ժամանակ, բացի դրանից գոյություն ունի վեճերի լուծման արբիտրաժային համակարգ, ինչը նշանակում է, որ թեև կիբերսպուսիսի վերաբերյալ հատուկ կարգավորումներ չկան, սակայն ամեն դեպքում կան վեճերի լուծման համակարգեր և գրանցողին նույնականացնելու ընթացակարգեր:

Ինչ վերաբերում է բուն ՀՀ օրենսդրությանը, ապա դոմենների վերաբերյալ կարգավորումները շատ չեն: Այսպես՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է, որ ապրանքային նշանի իրավատերը իրավունք ունի արգելել միջի օգտագործումն ինտերնետային կամ հեռահաղորդակցության համաշխարհային համակարգչային այլ ցանցերում, մասնավորապես՝ հասցեագրման ցանկացած միջոցներով, այդ թվում՝ ին-

տերնետային դոմեն անվանումներում: Բացի դրանից պետք է նշել՝ թեև ուղղակիորեն օրենքով դա նախատեսված չէ, սակայն դոմենային անվանման պաշտպանության միջոց կարող է լինել նաև դրանց գրանցումը, որպես ապրանքային նշան: Սա միջազգային պրակտիկայում բավական տարածված միջոց է, ինչը կնշանակի, որ այդ պարագայում անձը հնարավորություն կստանա պաշտպանել իր իրավունքները՝ հենվելով ապրանքային նշանների պաշտպանության մասին օրենսդրության վրա:

Դոմենային անունների օգտագործումը, հատկապես համացանցի գլոբալ բնույթի պայմաններում, հաճախ բերում է վեճերի առաջացման, որոնց ծագման հանգամանքները արդեն իսկ քննարկվել են սույն աշխատանքի շրջանակներում: Քանի որ նման իրավիճակները կարող են խոչընդոտել բիզնեսի բնականոն գործունեությանը, արատավորել ապրանքանիշի հեղինակությունը կամ ստեղծել շփոթություն շուկայում, առաջանում է վեճերի արագ և արդյունավետ լուծման անհրաժեշտություն: Ազգային դատարաններում նման վեճերի քննությունը, որպես կանոն, երկարատև և ծախսատար է, մինչդեռ համացանցային դաշտի միջազգային բնույթը պահանջում է ավելի արագ, միասնական և արդյունավետ մեխանիզմներ: Հենց այս նպատակով էլ ձևավորվել են դոմենային վեճերի կարգավորման հատուկ ընթացակարգեր, որոնցից ամենակարևորը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից իրականացվող Uniform Domain-Name Dispute-Resolution Policy՝ UDRP ընթացակարգն է:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (WIPO/ WIPO) դոմենային անվանումների հետ կապված վեճերի քննման և լուծման հիմնական մարմին է, որը ընդհատությունը բավական լայն է, ինչը նաև նշանակում է, որ այն կարող է լինել ամենագործուն միջոցներից նաև հայ օգտատերերի վեճերի լուծման համար: Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (WIPO) հանդիսանում է դոմենային վեճերի միջազգային գլխավոր ֆորումը՝ UDRP ընթացակարգի իրականացնողներից մեկը: UDRP-ն առաջարկում է արագ՝ հիմնականում առցանց լուծում՝ սկզբունքորեն վարչարարական բնույթի արդյունքներով՝ դոմեյնի չեղարկում կամ դրա փոխանցում բողոքատուին՝ առանց ֆինանսական փոխհատուցման տրամադրման: Այս համակարգը կառուցված է արագ և արդյունավետ ընթացակարգ ապահովելու համար՝ գործերը քննվում են ամբողջությամբ առցանց, սովորաբար ավարտվում են վաթսույն օրվա ընթացքում և պահանջում են համեմատաբար քիչ ռեսուրսներ:

Ինտերնետային անունների և համարների կորպորացիայի (Internet Corporation for Assigned Names and Numbers (ICANN)) տնօրենների խոր-

www.aradaradatumjournal.com

հուրդը 2013 թվականի սեպտեմբերի 28-ին հաստատել է Միասնական դոմեյնային անվանումների վեճերի լուծման քաղաքականության կանոնները³⁴, որը ներկայումս գործում է 2024 թվականի փետրվարի 21-ի փոփոխություններով: Կանոնների համաձայն՝ ցանկացած անձ կամ կազմակերպություն կարող է սկսել վարչական վարույթ՝ ICANN-ի կողմից հաստատված ցանկացած մատակարարին Կանոններով սահմանված կարգին համապատասխան բողոք ներկայացնելով: Բողոքը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով, որում նշվում են նաև ծանուցումների ստացման նախընտրելի տարերակը, հանձնաժողովի անդամների նախընտրելի թիվը (եթե բողոքաբերը ընտրում է երեք անդամից բաղկացած հանձնաժողով, ապա պետք է տրամադրի նաև երեք թեկնածուների անունները և կոնտակտային տվյալները), այն դոմեյնային անունը(ները), որը(որոնք) բողոքի առարկա են և այլն: Հիշյալ պահանջներից բացի բողոքաբերը պետք է նկարագրի նաև բողոքի ներկայացման հիմքերը, մասնավորապես հիմնավորելով հետևյալ հանգամանքները՝

1) դոմեյնային անունը(ները) նույնական է(են) կամ շփոթեցնելու աստիճան մնան է(են) այն ապրանքային նշանին կամ ծառայության նշանին, որի նկատմամբ Բողոքաբերն ունի իրավունքներ,

2) ինչու պետք է համարել, որ Պատասխանողը (դոմեյնային անվան սեփականատերը) իրավունքներ կամ օրինական շահեր չունի հայցի առարկա դոմեյնային անվան(ների) նկատմամբ,

3) ինչու պետք է համարվի, որ դոմեյնային անունը(ները) գրանցվել և օգտագործվել են անբարեխղճորեն:

Բողոքի ներկայացման փուլին հաջորդում է պատասխանի ներկայացումը, որի համար Կանոնների համաձայն տրամադրվում է վարույթը սկսելու օրվանից 20 օրյա ժամկետ, որին էլ հաջորդում է Հանձնաժողովի կազմավորման, բուն վարույթի իրականացման և որոշման կայացման փուլը:

1999 թվականից ի վեր WIPO -ն քննության է առել ավելի քան վաթսուհինգ հազար գործ, որոնք վերաբերում են հարյուր հազարավոր դոմեյնային անունների: Դրանք ընդգրկում են տարբեր ոլորտներ՝ նորաձևությունից, դեղագործությունից մինչև ֆինանսներ և տեղեկատվական տեխնոլոգիաներ: Վերջին տարիներին նկատվում է աճ նոր gTLD-ների հետ կապված վեճերում, ինչպես նաև դոմեյնային անունների օգտագործմամբ կատարվող ֆիշինգային և խարդախ սխեմաներում: Այսպիսով, WIPO-ն դարձել է համաշխարհային մակարդակով հիմնական գործիքը դոմեյնային վեճերի լուծման համար:

Հայաստանի Հանրապետության երկնիշ կողով դոմեյններն են «.am» (լատինատառ) և «.հայ» (հայատառ), որոնք կառավարվում են Հայաստանի

Ինտերնետային հասարակության (ISOC-AM) կողմից՝ «.am» դոմեյնի ռեգիստրն ընդունել է UDRP-ն, և, հետևաբար, «.am» դոմեյնների վեճերը կարող են քննվել WIPO-ում³⁵: Սա հնարավորություն է տվել ինչպես հայկական, այնպես էլ օտարերկրյա բիզնեսներին դիմել WIPO՝ պաշտպանելու իրենց ապրանքանիշերը «.am» դոմեյնի տիրույթում:

Հայաստանի համատեքստում, որտեղ .am տիրույթը ակտիվորեն օգտագործվում է առցանց հարթակներում բրենդների ներկայացման, առցանց առևտրի և այլ նպատակների համար, վեճերի լուծման գործում մեխանիզմների առկայությունը առավել քան կարևոր է: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ եթե կիրառվի UDRP-ի կամ վեճերի լուծման նմանատիպ մեխանիզմ կարելի է հասնել վեճի առավել արդյունավետ լուծման՝ ժամանակային և ֆինանսական ռեսուրսներ խնայելով՝ ի տարբերություն ներպետական դատարաններում գործի քննությանը: Քննարկվող մեխանիզմը ապահովում է նաև որոշակի կանխատեսելիություն, մասնագիտական մոտեցում, բարձրացում է բրենդների պաշտպանվածության աստիճանը՝ ինչպես ներքին շուկայում, այնպես էլ արտերկրում: Ինչ վերաբերում է «.am» դոմեյնի առնչությամբ ծագած վեճերի քննությանը, WIPO պրակտիկայում առկա են որոշակի վերաբերելի գործեր: Այսպես, Allianz SE v. Vachagan Khachatryan (WIPO Case No. DAM2012-0001) գործը վերաբերում էր «allianz.am» դոմեյնի գրանցմանը Վաչագան Խաչատրյանի կողմից, որը Allianz SE ապրանքանիծի համանուն իրավատերն էր: Պատասխանողը դոմեյնը օգտագործել էր միայն վաճառքի նպատակով: ԱՀԿ-ն արձանագրեց, որ դոմեյնը գրանցվել և օգտագործվել է անբարեխղճորեն՝ շփոթություն առաջացնելու և առևտրային շահույթ ստանալու համար, ուստի վճռեց այն փոխանցել Allianz SE-ին³⁶: Société des Produits Nestlé S.A. v. Hayk Asatryan (WIPO Case No. DAM2013-0001) գործում Nestlé-ն պահանջում էր «nespresso.am» դոմեյնի փոխանցումը, քանի որ այն գրանցվել ու օգտագործվել էր առանց թույլտվության՝ պաշտոնական կայքը նմանակելու և շփոթություն առաջացնելու նպատակով: Վարչական հանձնաժողովը արձանագրեց, որ դոմեյնի գրանցումն ու օգտագործումը եղել են անբարեխիղճ, և որոշեց այն փոխանցել Nestlé-ին³⁷: Նույն տրամաբանությամբ *Alibaba Group Holding Limited v. Xindanongji* (WIPO Case No. DAM2015-0001) գործով ԱՀԿ-ն վճռեց փոխանցել «taobao.am» դոմեյնը Alibaba-ին՝ արձանագրելով անբարեխիղճ գրանցում և օգտագործում³⁸: Թեև այս գործերով որոշումները կայացվել են ի վնաս «.am» դոմեյնը օգտագործող հայ օգտատերերի՝ վերջիններիս կողմից դոմեյնների օգտագործումը ոչ իրավաչափ ճանաչելով, այնուամենայնիվ հիշյալ գործերը վկայում են, որ «.am» դոմեյնը լիովին ինտեգրված է WIPO հա-

www.artadaratutyunjournal.com

մակարգին:

Ավելի բարդ է իրավիճակը «.հայ» դոմեյնի պարագայում: Թեև ISOC-AM-ը սահմանել է մանրամասն կանոններ դրա կառավարման համար, այդ թվում՝ թույլատրելի նիշերի և հատուկ պահված անունների սահմանափակումներ, «.հայ» դոմեյնի վեճերը չեն կարգավորվում UDRP-ով³⁹: Դրանց լուծման համար կիրառվում են տեղական իրավական կամ արբիտրաժային ընթացակարգեր, որոնցում գերակայություն տրվում է ապրանքային նշանի, ծագման տեղանվան կամ այլ իրավաչափ իրավունքի սեփականատիրոջը: Սա նշանակում է, որ «.am» դոմեյնի վեճերը լուծվում են միջազգային մեխանիզմով՝ WIPO-ում, մինչդեռ «.հայ» դոմեյնի վեճերը լուծվում են հիմնականում հայկական իրավական համակարգում:

Այս երկաստիճան մոտեցումը բնորոշ է նաև այլ երկրներին. որոշ ccTLD-ներ ամբողջությամբ կիրառում են UDRP-ն, որոշները՝ փոփոխված տարբերա-

կը, իսկ մյուսները՝ բացառապես ազգային ընթացակարգերը: Այսպիսով, Հայաստանի օրինակով կարելի է տեսնել, թե ինչպես են համաշխարհային և ազգային մեխանիզմները փոխլրացնում միմյանց ինտերնետային իրավունքի կիրառման մեջ: Ամփոփելով, գտնում ենք, որ անկախ Հայաստանում դոմեյնների երկաստիճան համակարգի առկայությունից, պետք է նախատեսվեն այնպիսի գործուն միջոցներ, որոնք ի գործ կլինեն ապահովել «.am» և «.հայ» տիրույթներում վեճերի լուծման արդյունավետ մեխանիզմներ, որոնք էլ իրենց հերթին հնարավորինս կհամապատասխանեն WIPO ստանդարտներին՝ արագ, թափանցիկ և արդյունավետ լուծումներ ապահովելու նպատակով:

¹ St’u, Arbitration, W. I. P. O., and Mediation Center. “Guide to WIPO Domain Name Dispute Resolution.” WIPO Publication 892.

² St’u, Серго А.Г. Доменные имена. Москва, из-во Бестселлер, 2006, էջ 51:

³ St’u, Lipton, Jacqueline D. “Beyond Cybersquatting: Taking Domain Name Disputes Past Trademark Policy.” Wake Forest L. Rev. 40 (2005): 1361.

⁴ St’u, Arbitration, W. I. P. O., and Mediation Center. “Guide to WIPO Domain Name Dispute Resolution.” WIPO Publication 892.

⁵ St’u, Arbitration, W. I. P. O., and Mediation Center. “Guide to WIPO Domain Name Dispute Resolution.” WIPO Publication 892.

⁶ St’u, Singh, Snehlata. “Conflicts between Trademarks and Domain Names: A Critical Analysis.” Available at SSRN 2045222 (2011).

⁷ St’u, <https://edition.cnn.com/2004/TECH/internet/01/20/rowe.fight/>

⁸ St’u, «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-59-Ն, ՀՀՊՏ 2010.06.02/24(758), Հոդված 2

⁹ Դասակարգչով սահմանված դասերը բազմաթիվ են ծխախոտի արտադրությունից մինչև սնունդ, համակարգչային ծառայություններից մինչև առցանց կազինոներ:

¹⁰ St’u, «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-59-Ն, ՀՀՊՏ 2010.06.02/24(758), Հոդված 8

¹¹ St’u, Быстров, Артем Константинович. “Интернет-сайт и доменное имя как объекты гражданских прав в системе отношений по использованию сети интернет.” PhD diss., автореф. дис. на соиск. учёной степ. канд. юр. наук-МОСКВА–2016 г, 2016.

¹² St’u, «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-59-Ն, ՀՀՊՏ 2010.06.02/24(758), Հոդված 12

¹³ St’u, Arbitration, W. I. P. O., and Mediation Center. “Guide to WIPO Domain Name Dispute Resolution.” WIPO Publication 892.

¹⁴ St’u, <https://www.icann.org/resources/pages/providers-6d-2012-02-25-en>

¹⁵ St’u, <https://www.icann.org/resources/pages/providers-6d-2012-02-25-en>

¹⁶ St’u, <http://acdr.aipmas.org/default.aspx?lang=en>

¹⁷ St’u, <https://www.adndrc.org/>

¹⁸ St’u, <https://ciidrc.org/>

¹⁹ St’u, <https://www.adr.eu/index.php>

²⁰ St’u, <https://www.adrforum.com/domain-dispute>

²¹ St’u, <https://www.wipo.int/amc/en/domains/>

²² St’u, Lipton, Jacqueline D. “Beyond Cybersquatting: Taking Domain Name Disputes Past Trademark Policy.” Wake

www.ardaratutyunjournal.com

Forest L. Rev. 40 (2005): 1361.

²³ Տե՛ս, <https://www.icann.org/resources/pages/dndr-2012-02-25-en>

²⁴ Տե՛ս, <https://www.icann.org/resources/pages/dndr-2012-02-25-en>

²⁵ Տե՛ս, Lipton, Jacqueline D. “Beyond Cybersquatting: Taking Domain Name Disputes Past Trademark Policy.” Wake Forest L. Rev. 40 (2005): 1361.

²⁶ Տե՛ս, Lipton, Jacqueline D. “Beyond Cybersquatting: Taking Domain Name Disputes Past Trademark Policy.” Wake Forest L. Rev. 40 (2005): 1361.

²⁷ Տե՛ս, Fernbach, Terrence. ««What is in a Name?» A Comparative Look at the ICANN Uniform Domain Name Dispute Resolution Policy and the United States Anti-Cybersquatting Consumer Protection Act.» A Comparative Look at the ICANN Uniform Domain Name Dispute Resolution Policy and the United States Anti-Cybersquatting Consumer Protection Act. MIPLC Master Thesis Series (2011/2012).

²⁸ Տե՛ս, <http://lexdigital.ru/2013/091/>

²⁹ Տե՛ս, <https://www.isoc.am/hy/%D5%B4%D5%A5%D5%B6%D6%84/%D5%AB%D5%B6%D5%BF%D5%A5%D6%80%D5%B6%D5%A5%D5%BF-%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%B0%D5%AF-%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8/>

³⁰ Տե՛ս, https://www.isoc.am/file_manager/pdf/Policy_AM_new.pdf

³¹ Տե՛ս, https://www.isoc.am/file_manager/pdf/Policy_AM_new.pdf

³² Տե՛ս, https://www.isoc.am/file_manager/pdf/Policy_AM_new.pdf

³³ Տե՛ս, https://www.isoc.am/file_manager/pdf/Policy_AM_new.pdf

³⁴ Rules for Uniform Domain Name Dispute Resolution Policy (the “Rules”) <https://www.icann.org/en/contracted-parties/consensus-policies/uniform-domain-name-dispute-resolution-policy/rules-for-uniform-domain-name-dispute-resolution-policy-the-rules-11-03-2015-en> , 14.09.2025:

³⁵ BRS MEDIA .AM DOMAIN NAME REGISTRATION TERMS & CONDITIONS (effective April 1, 2000. Revised June 1, 2013), <https://dot.am/policy/?utm> , 14.09.2025:

³⁶ ADMINISTRATIVE PANEL DECISION, Allianz SE v. Vachagan Khachatryan, Case No. DAM2012-0001, <https://www.wipo.int/amc/en/domains/decisions/text/2012/dam2012-0001.html?utm> , 15.09.2025:

³⁷ ADMINISTRATIVE PANEL DECISION, Socintn des Produits Nestln S.A. (“Nestln SA”) v. Hayk Asatryan, Case No. DAM2013-0001, <https://www.wipo.int/amc/en/domains/decisions/text/2013/dam2013-0001.html?utm> , 15.09.2025:

³⁸ ADMINISTRATIVE PANEL DECISION, Alibaba Group Holding Limited v. Xindanongji, Case No. DAM2015-0001, <https://www.wipo.int/amc/en/domains/decisions/text/2015/dam2015-0001.html?utm> , 15.09.2025:

³⁹ POLICY OF DOMAIN NAMES REGISTRATION IN “.AM”AND”ՀԱՅ”DOMAINZONES <https://www.isoc.am/wp-content/uploads/2025/05/policy-2025%E2%80%A405%E2%80%A408.pdf> , 15.09.2025:

Արմինե Օգաննիսյան

Преподаватель кафедры гражданского права юридического факультета Ереванского государственного университета

Кандидат юридических наук, доцент

ՔԵԶԻՍԵ

Некоторые особенности защиты доменных имён

В статье рассматриваются правовое регулирование и механизмы защиты доменных имен, сопоставляются международные подходы (ICANN, WIPO/UDRP, АСРА, практика Суда ЕС) и национальные механизмы (.am и .lu) домены, законодательство Армении). Анализируются проблемы киберсквоттинга и типосквоттинга, взаимосвязь товарных знаков и доменных имен, а также эффективность механизмов разрешения споров.

Особое внимание уделяется роли ВОИС, чьи административные процедуры считаются быстрыми, эффективными и признанными на международном уровне. В армянском контексте выделяется интеграция домена «.am» в систему UDRP.

Ключевые слова: доменные имена, домен, товарный знак, киберсквоттинг, типосквоттинг, UDRP, ВОИС, ICANN, защита интернет-прав, разрешение споров, “.am”, “.huu”

Arpine Hovhannisyan

Lecturer in the Department of Civil Law,
Faculty of Law, Yerevan State University
Candidate of Law, Associate Professor

SUMMARY

Some Specific Features of the Protection of Domain Names

The article examines the legal regulation and protection mechanisms of domain names, comparing international approaches (ICANN, WIPO/UDRP, ACPA, CJEU practice) with national frameworks (.am and .ԴՅ domains, Armenian legislation). It analyzes cybersquatting and typosquatting issues, the relationship between trademarks and domain names, and the efficiency of dispute resolution mechanisms. Special emphasis is placed on WIPO's role, as its administrative procedures are considered fast, effective, and internationally recognized. For Armenia, particular attention is given to the integration of the “.am” domain into the UDRP system.

Key words: domain names, domain, trademark, cybersquatting, typosquatting, UDRP, WIPO, ICANN, internet law protection, dispute resolution, “.am”, “.huu”

ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Երևանի պետական համալսարանի հայցորդ,
Քաղաքացիական իրավունքի ամբիոն

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդվածի նպատակն է ներկայացնել քաղաքացիական իրավունքի սկզբունքների համակարգը և արժևորել դրանց դերը իրավունքի անալոգիա կիրառելիս, որը գործուն մեխանիզմ է օրենսդրական կարգավորման բացերը լրացնելու ուղղությամբ:

Այդ նպատակին հասնելու համար **խնդիր է դրվել** քննության առարկա դարձնել քաղաքացիական իրավունքի սկզբունքների հասկացությունն ու դրանց կոնստիտուտիվ հատկանիշները, ինչպես նաև դրանց ձևավորումը՝ հանրային և մասնավոր շահերի համադրման համատեքստում:

Հետազոտությունը կատարվել է իրավական հետազոտության **մի շարք մեթոդների կիրառմամբ**, որպիսիք են՝ *իրավահամեմատական, պատմահամեմատական, ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, արտոբախման, համակարգման և դասակարգման մեթոդները*:

Հեղինակը համակարգել է գործող սկզբունքների դասակարգումները, բացահայտել է դրանց տեսական ու գործնական չափորոշիչները՝ իրավունքի ստեղծման, մեկնաբանման և կիրառման գործընթացներում: Հատուկ ուշադրություն է դարձվել այն հանգամանքին, որ քաղաքացիական իրավունքը առանձնանում է իր սկզբունքների հիմքով իրականացվող իրավունքի անալոգիայի կիրառմամբ՝ ապահովելով նորմատիվ ճկունություն և իրավական կայունություն:

Հոդվածում առկա է անդրադարձ նաև ՀՀ օրենսդրության շրջանակներում քաղաքացիական իրավունքի սկզբունքների կարգավորումներին, վերլուծվել են գործող իրավական մոտեցումները և ներկայացվել են օրենսդրական կատարելագործման մի շարք առաջարկություններ՝ նպատակ ունենալով ամրապնդել սկզբունքային հիմքերի գործնական արդյունավետությունը և ապահովել իրավունքի շարունակական զարգացումը:

Հիմնաբառեր- ինստիտուտ, սկզբունք, բարեխղճություն, ազնիվ գործարար պրակտիկա, կայունություն, պարտադիրություն, անալոգիա, համակարգ, մեթոդ, նորմատիվություն, դիսպոզիտիվություն, մասնավոր և հանրային շահեր:

Ներածություն

Ինչպես ողջ իրավունքը, այնպես էլ իրավունքի առանձին ճյուղեր հիմնված են որոշակի սկզբունքների համակարգի վրա, որոնք սահմանորոշում են իրավունքի տվյալ ճյուղի կարգավորման շրջանակները, կանխորոշում են իրավունքի տվյալ ճյուղի կարգավորման բնույթն ու բովանդակությունը:

Ռուս հայտնի իրավագետ Օ.Ա.Կրասավչիկովը նշում էր, որ «քաղաքացիական իրավունքի սկզբունքներն այն ղեկավար գաղափարներ են կամ հիմքերը, որոնց համապատասխան իրականացվում է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը»: Այս սահմանման մեջ նկարագրվում էր երկու կատեգորիաների սինթեզ՝ «իրավունք» և «սկզբունք», որտեղ «սկզբունքն» արտահայտում է նյութական աշխարհի էվոլյուցիայի օրինաչափությունը կամ օրենքը, իսկ «իրավունքն» այդ օրինաչափությանը հաղորդում է հատուկ իրավաբանական բնույթ:

Ո.Պ.Գրիբանովի ձևակերպմամբ՝ «քաղաքացիական իրավունքի սկզբունքներն իրավունքի ղեկավար դրույթներ են, որոնք դետերմինացնում են ինչպես ողջ իրավունքի, այնպես էլ իրավունքի առանձին ճյուղի էությունը և իրավաբանական ամ-

րապնդման շնորհիվ ձեռք են բերում համապարտադիր բնույթ»:

Տ.Ի.Իլարիոնովան նշում է, որ «քաղաքացիական իրավունքի սկզբունքներն օբյեկտիվ իրականության երևույթներ են, որոնց հիմքը նրանց նորմատիվությունն է »: Այստեղ հատուկ շեշտադրում է արվում սկզբունքների իրավաբանական բնույթի մասին՝ համարելով, որ եթե սկզբունք-գաղափարներն իրավաբանորեն ամրագրված չեն, ապա այդպիսիք մնում են հասարակության սոցիալ-տնտեսական, բարոյական և մյուս հարթություններում, և իրավական հարթությունում այդպես էլ որևէ նշանակություն ձեռք չեն բերում:

Քաղաքացիական իրավունքի սկզբունքներին բնորոշ է հետևյալ նկարագիրը.

- այդպիսիք ձևավորում են քաղաքացիա-իրավական հարաբերությունների բովանդակությունը և զարգացման միտումները, այդ հարաբերությունների սոցիալ-տնտեսական էությունը,
- ընդգծում են քաղաքացիական իրավունքի սոցիալական ողջ արժեքը,
- ստեղծում են հիմքեր, որպես իրավունքի ճյուղ, կառուցելու քաղաքացիական իրավունքը՝ նորմերի, ենթահիմնատնային, ինստիտուտների,

ենթաճյուղերի մակարդակով:

Քաղաքացիական իրավունքի սկզբունքների հատկանիշները

Տ.Պ.Պողոժիվալովը, Վ.Վ.Կվանինան և Մ.Ս.Սազանդիզովան իրավագիտորեն նշում են, որ քաղաքացիական իրավունքի սկզբունքների հատկանիշների առանձնացումն ու դրանց, որպես հիմնարար գաղափարների, ընկալումը մեզ չի օգնի պատասխանը ստանալու այն հարցի, թե համակարգային ինչպիսի փոխադարձ կապ և ազդեցություն կա իրավունքի սկզբունքների և իրավական այլ երևույթների միջև: Ըստ նշված հեղինակների՝ սկզբունքների էությունը հասկանալու համար անհրաժեշտ է ելնել իրավական շահերի դիրքերից: Նրանց հավաստմամբ՝ քաղաքական, տնտեսական և այլ շահերը վերածվում են իրավահարաբերությունների բաղկացուցիչ տարրերի և այդքանով մաս վերածվում են ավելի լայն՝ իրավական կարգավորման մեխանիզմի տարրերի: Եվ քանի որ իրավական շահերն իրենց բնույթով լինում են մասնավոր և հանրային, իրավունքի սկզբունքները պետք է դիտարկվեն հենց այդ շահերի տեսանկյունից: Իրավական շահերն են ձևավորում հիմնարար և ղեկավար գաղափարները, որոնք պետք է սպասարկեն հենց նույն այդ շահերին: Մասնավոր և հանրային շահերը միմյանց փոխադարձորեն ենթադրող, միևնույն ժամանակ միմյանց մշտապես հակադրվող երևույթներ են, ինչի շնորհիվ էլ ապահովվում է հասարակական հարաբերությունների միասնականությունը և դինամիկան: Մասնավոր շահերի մեջ միշտ առկա են հանրային շահերի տարրեր, և հակառակը՝ հանրային շահերի մեջ միշտ ներկայացված են մասնավոր շահերը, այս երկուսի միասնությունն ուղղակիորեն ազդում է իրավական համակարգի զարգացումների վրա: Ինչպես նշում էր Վ.Ֆ.Յակովլևը, «մասնավոր և հանրային իրավունքի արդյունավետ հարաբերակցությունն ու համագործակցությունը դառնում են Ռուսաստանի իրավական համակարգի զարգացման և կատարելագործման ամենաակտուալ պրոբլեմը»: Քաղաքացիական իրավունքի սկզբունքների ձևավորման վրա մասնավոր և հանրային շահերի ազդեցության մասին Կ.Ա.Չերնովը հստակ նշում է, որ մասնավոր իրավունքի և հանրային իրավունքի տարբերությունը կանխորոշում է իրավանորմերում հավասարության սկզբունքի ամրագրման և այդ սկզբունքի իրացման նկարագիրը: Ի.Ա.Իլյինը գրում է. «հանրային հարաբերությունները հարաբերություններ են իրավաբանորեն հավասարների միջև»: Գ.Ռադրովիչը, անդրադառնալով այս խնդրին, գրում է, որ «դեռևս անտիկ աշխարհից հայտնի է բացարձակ և հարաբե-

րական հավասարության դասակարգումը, ընդ որում՝ բացարձակ հավասարության դեպքում պահանջվում է առնվազն երկու անձանց առկայություն, որոնք իրավահավասար են, իսկ հարաբերական հավասարության դեպքում պահանջվում է առնվազն երեք անձանց առկայություն, որոնցից մեկը ղեկավար դիրքերից որոշում է, թե մյուս երկու անձինք ինչպիսի պարտավորություններ և/կամ արտոնություններ ունեն: Բացարձակ հավասարության դեպքում անձանց միջև գործում է կոորդինացիա, իսկ հարաբերական հավասարության դեպքում՝ սուբորդինացիա: Հանրային հարաբերությունների պարագայում հավասարությունը հարաբերական է, քանի որ այդ հավասարությունն առկա է ոչ թե նշված՝ առնվազն երեք անձանց միջև, այլ միայն նրանում, որ պետությունը, ով թելադրում է հանրային հարաբերության մյուս մասնակիցներին, նրանց հանդեպ հավասար վերաբերմունք ունի: Պետության և մյուս երկու անձանց միջև հավասարություն չկա, հավասարություն կա միայն պետությունից գլխավոր հարաբերության մյուս երկու անձանց միջև»: Ահա թե ինչպիսին է հավասարության սկզբունքը, երբ խոսքը գնում է մի կողմից մասնավոր հարաբերությունների, և մյուս կողմից՝ հանրային հարաբերությունների մասին, որոնք համապատասխանորեն հետապնդում են մասնավոր կամ հանրային շահեր:

Նույն կերպ՝ կախված մասնավոր և հանրային շահերից՝ տարբեր բովանդակություն կարող են ունենալ հավասարության հետ մեկտեղ՝ մասնավորության և արդարության սկզբունքները:

Ինչպես սկզբունքներն են կոչված ապահովելու իրավունքի կայունությունը, այնպես էլ մասնավոր և հանրային շահերն են կոչված ապահովելու սկզբունքների կայունությունը: Մարդիկ գալիս և գնում են, իրավանորմերը փոփոխվում են անվերջ, սակայն մասնավոր և հանրային շահերն անփոփոխ են, ուստի անփոփոխ են այդ շահերը սպասարկող իրավունքի սկզբունքները:

Ինչպես պատկերավոր կերպով գրում են Տ.Պ.Պողոժիվալովը, Վ.Վ.Կվանինան և Մ.Ս.Սազանդիզովան, իրավունքի սկզբունքները գրավում են միջանկյալ դիրք շահերի և իրավանորմերի միջև. մասնավոր և հանրային շահերը դառնում են իրավունքի սկզբունքների բովանդակությունը, իսկ իրավունքի սկզբունքներն էլ արտահայտվում են իրավանորմերի ձևով: Տեղի է ունենում հետաքրքիր գործընթաց, որն արտահայտվում է հետևյալ չորսաստիճան նկարագրով՝ սոցիալական շահ-իրավական շահ-իրավունքի սկզբունք-իրավանորմ¹¹:

1. Քաղաքացիական իրավունքի սկզբունքների համակարգն ուրվագծելու համար նախևառաջ անհրաժեշտ է հստակեցնել այն կոնստիտուտիվ հատկանիշները, որոնց հիման վրա կառանձնանան այն իրավանորմերը, որոնք կհավակնեն սկզ-

բունքի դեր ստանձնելու: Սա բարդագույն խնդիր է և մասնագիտական տարբեր շրջանակների համար ոչ միանշանակ ընկալելի: Իրավագիտության մեջ, այնուամենայնիվ, նման փորձեր արվել են: Այսպես, Ն.Լ.Բոնդարենկոն առաջարկում է մի քանի նման կոնստիտուտիվ հատկանիշներ¹²: Նա նշում է, որ քաղաքացիական իրավունքի սկզբունքների նորմատիվության հետ սերտորեն կապված է, սակայն վերջինիս հետ չնույնացվող հատկանիշ է համարվում սկզբունքի **օբյեկտիվությունը**, որի վրա ուշադրություն է հրավիրվել նաև քաղաքացիական իրավունքի դոկտրինայի կողմից: Վ.Ֆ.Յակովևն այդ կապակցությամբ նշել է, որ «իրավունքի սկզբունքի իրավական ձևավորումը նշանակում է այն փաստի արձանագրումը, որ իրավանորմի մեջ մարմնավորվում են հասարակական հարաբերությունների ինչ-որ էական գծեր ու հատկանիշներ»¹³: Լ.Ս.Յավիչը, գնահատելով իրավունքի սկզբունքի օբյեկտիվությունը, գրում է, որ «իրավունքի սկզբունքի բովանդակությունը, եթե իհարկե դա միատիֆիկացիա կամ մոլորություն չէ, պայմանավորված է նյութական հարաբերություններով, տվյալ հասարակական-տնտեսական ֆորմացիայի օրինաչափություններով, տվյալ ֆորմացիայի վերնաշենքային էությունը հանդիսացող օրենքներով»¹⁴: Ն.Լ.Բոնդարենկոն օբյեկտիվության հարցը քննարկելիս կենտրոնանալով իրավունքի սկզբունքի բովանդակության հարցի վրա՝ գրում է. «Աբսոլյուտ է, որ քաղաքացիական իրավունքն ունի խորը ինդիվիդուալիստական բնույթ, և այստեղ ներբեռնել հասարակական շահերի հայեցակարգը կամ հանրության համար օգտակարության չափանիշը, նշանակում է՝ դեմ գնալ քաղաքացիական իրավունքի ինդիվիդուալիստական բնույթին: Քաղաքացիական իրավունքի սկզբունքների մեջ, որպես հիմնարար գաղափար կամ սկզբունք՝ հանրային շահերի նախապատվություն նախատեսելը կարող է անորոշություն և անկանխատեսելիություն ստեղծել քաղաքացիական շրջանառությունում, քանի որ օրենսդիրը ցանկացած ժամանակ կարող է ներխուժել մասնավոր շահերի տարածք: Նման սկզբունք նախատեսելը կարող է լուրջ բախումային խնդիր առաջ բերել քաղաքացիական իրավունքի մյուս բոլոր սկզբունքների հետ, որոնք ակնհայտ կրում են հենց ինդիվիդուալիստական բնույթ: Ասվածից հետևում է, որ քաղաքացիական իրավունքի սկզբունքների համակարգի մեջ պետք է բացառել հանրային շահերի նախապատվության սկզբունք նախատեսելը»¹⁵: Դեռ անցյալ դարի 90-ական թվականներին Մ.Ս.Ալեքսեևը, արժևորելով մասնավոր իրավունքի դերը հասարակական կյանքում, գրում էր, որ «անհրաժեշտ է հրաժարվել այն իրավական համակարգից, որտեղ դոմինանտ է հանրային իրավունքը, որ իրավունքը միայն այն ժամանակ է իրավունք, երբ նրանում կենտրոնական տեղ է զբաղեց-

նում մասնավոր իրավունքը»¹⁶:

Քաղաքացիական իրավունքի սկզբունքների օբյեկտիվության հատկանիշի մասին են գրել նաև Տ.Պ. Պոդշիվալովը, Վ.Վ.Կվանինան և Մ.Ս.Սազանդիգովան՝ նշելով. «Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ օբյեկտիվության հատկանիշին, որը բնորոշ է ոչ միայն սկզբունքներին, այլև ողջ իրավական մատերային: Իրավունքի սկզբունքն օբյեկտիվ է այն բանի շնորհիվ, որ ոչ թե իրավունքն է համահունչ սկզբունքին, այլ որ սկզբունքը գոյություն ունի որպես հիմք՝ իրավունքի էությանը ներհատուկ հիմնական գաղափարների համար: Իրավունքի սկզբունքների հետ համադրելի է միայն օրենքը՝ որպես իրավունքի հիմքում ընկած գաղափարների արտահայտման ձև: Իրավունքի սկզբունքներն օբյեկտիվ են այն հանգամանքի ուժով, որ հանդիսանում են իրավունքի առանձին սուբյեկտների վարքագծի գնահատման չափանիշներ»¹⁷:

Քաղաքացիական իրավունքի սկզբունքների հաջորդ կոնստիտուտիվ հատկանիշը **կայունությունն** է: Ինչպես գրում է Ժ.Լ.Բերժեյը, «Իրավունքի առանձին նորմեր կարող են փոփոխվել, սակայն իրավունքի սկզբունքների փոփոխությունը հղի է քաղաքացիական շրջանառության համար լուրջ ցնցումներով, քանի որ իրավունքի սկզբունքների վրա հենվում է իրավանորմերի հսկայական զանգված, որոնք կարող են կորցնել իրենց ուղենիշային կապն՝ ի դեմս սկզբունքների»¹⁸: Քանի որ սկզբունքներն արտահայտում են հանրության քաղաքական, տնտեսական, սոցիալական, արժեքաբանական նկարագիրը, փոփոխվել կարող են միայն այն ժամանակ, երբ փոփոխվում է պետության ձևը կամ տեսակը, հանրությունը կրում է արմատական հեղափոխական փոփոխություններ: Սկզբունքների առկայությունն ինչ-որ տեղ նշանակում է իրավունքի կոնսերվատիզմ՝ պահպանողականություն, այդպիսիք անհանդուրժող են դիմամիզմի նկատմամբ, սակայն դա չի նշանակում, որ չի կարող տեղի ունենալ իրավանորմերի անընդհատ փոփոխում և զարգացում: Կասկածից վեր է, որ իրավանորմերի անընդհատ փոփոխումը և զարգացումն ինքնին չեն փոփոխում սկզբունքները, քանզի նոր իրավանորմերը նույնպես գտնվում են գործող սկզբունքների ծիրում:

Տ.Պ. Պոդշիվալովը, Վ.Վ.Կվանինան և Մ.Ս.Սազանդիգովան առանձնացնում են իրավունքի սկզբունքների կոնստիտուտիվ այլ հատկանիշ՝ **սահմանային վերացականությունը**: Նրանք նշում են, որ սկզբունքներն իրավունքի նույն բովանդակությունն են արտահայտում, ուղղակի դրսևորվում են ծայրահեղորեն խտացված և արստրահված ձևով¹⁹:

Քաղաքացիական իրավունքի սկզբունքների մյուս կոնստիտուտիվ հատկանիշը դրանց **ընդհա-**

www.artadaratutyunjournal.com

նոր պարտադիրությունն է: Սկզբունքները ոչ միայն ուղենիշային են իրավանորմերի համար, այլև ղեկավար բնույթ ունեն, իմպերատիվ են վարքագծի կանոնների համար, միայն այդ հատկանիշի շնորհիվ է հնարավոր ապահովել իրավանորմերի ներքին միասնությունը, տրամաբանությունն ու համակարգը: Ն.Լ.Բոնդարենկոն, նշված կոնստիտուտիվ հատկանիշների հիման վրա առաջարկում է գնալ խիզախ քայլի և քաղաքացիական օրենսդրությամբ սահմանել քաղաքացիական իրավունքի սկզբունքների հասկացությունը: Նա առաջարկում է քաղաքացիական օրենսգրքով նախատեսել հետևյալ սահմանումը. «Քաղաքացիական օրենսդրության սկզբունքները քաղաքացիական օրենսդրության նորմերով ամրագրված կամ այդ նորմերի դրույթներից բխող հիմնարար գաղափարներն ու կայուն ղեկավար դրույթներն են, որոնք արտահայտում են քաղաքացիական իրավունքի նպատակն ու էությունը, ունեն ընդհանուր պարտադիր բնույթ իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության համար»²⁰:

Մենք համարում ենք, որ առաջարկված օրենսդրական սահմանումն ընդունելի է նաև մեզ համար, կարող է գնահատվել մեկ քայլ առաջ, եթե նախատեսվի հայրենական քաղաքացիական օրենսդրությամբ ևս:

Քաղաքացիական իրավունքի սկզբունքների համակարգը

Քաղաքացիական իրավունքի սկզբունքների ողջ առաքելությունն ու նշանակությունը կայանում է ոչ թե նրանցից յուրաքանչյուրի մեջ առանձին ու մեկուսի, այլ նրանց համակարգի մեջ: Իրավունքի սկզբունքներից յուրաքանչյուրը նոր որակ ու տեսք է ստանում մյուս սկզբունքների հետ կապի և փոխազդեցության տիրույթում²¹:

Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումը 23.06.2015թ. իր No 25 որոշմամբ նշել է, որ «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի, մյուս օրենքների և այլ իրավական ակտերի նորմերը պետք է մեկնաբանվեն Ռ-Դ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածով սահմանված՝ քաղաքացիական օրենսդրության հիմնական դրույթների՝ սկզբունքների հետ համակարգային փոխկապակցվածության մեջ»²²: Այս որոշմամբ Ռ-Դ Գերագույն դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական օրենսդրության սկզբունքները պետք է գործեն համակարգային միասնությամբ, որ իրավանորմերի բովանդակության ճիշտ ընկալումը պայմանավորված է ոչ թե սկզբունքներից միայն մեկի կամ մյուսի հետ համադրմամբ, այլ բոլոր սկզբունքների միասնական համակարգի հետ համադրմամբ:

Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ քաղաքացիական իրավունքի սկզբունքների համա-

կարգի վերաբերյալ առկա են ամենատարբեր մտեցումներ ու տեսակետներ, որոնք ներկայացնենք հակիրճ շարով:

Ռուս իրավագետ Տ.Վ.Կազանինը համարում է, որ քաղաքացիական իրավունքի սկզբունքների համակարգն ունի երեք հարթություններ, առաջին հարթությունը հիմնական օրենքով՝ սահմանադրությամբ ամրագրված քաղաքացիական իրավունքի սկզբունքներն են, երկրորդ հարթությունը քաղաքացիական օրենսգրքով սահմանված սկզբունքներն են, և երրորդ հարթությունն այլ օրենքներով ամրագրված սկզբունքներն են²³: Տ.Վ.Կազանինը հիմնական օրենքով ամրագրված սկզբունքներից նկատի ունի միայն այն շրջանակը, որոնք հատկապես վերաբերում են քաղաքացիական շրջանառությանը, որովհետև հիմնական օրենքով կարող են նախատեսվել իրավունքի սկզբունքների ավելի լայն շրջանակ, որոնք վերաբերում են իրավունքի ողջ համակարգին, ներառյալ քաղաքացիական հարաբերությունների իրավական կարգավորմանը: Սահմանադրական հարթության քաղաքացիական իրավունքի սկզբունքներից առանձնացվում էին՝ սեփականության անձեռնմխելիության²⁴, մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության²⁵ ազատության և տնտեսական մրցակցության²⁶ սկզբունքները և այլք: Հատկապես առանձնացվում էր սահմանադրական այն սկզբունքը, որն ուներ ընդհանուր թույլատվական ուղղվածություն և կարծես միավորիչ բնույթ ուներ մյուս բոլոր սկզբունքների նկատմամբ. «Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով» (տես ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդված):

Ըստ Տ.Վ.Կազանինի՝ քաղաքացիական իրավունքի սկզբունքների հիմնական կազմն ուղղակիորեն սահմանվում է քաղաքացիական օրենսգրքով, քանի որ Ռ-Դ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածով նշվում են ոչ թե պարզապես սկզբունքներ, այլ՝ հիմնական սկզբունքներ²⁷: Տպավորությունն այն է, որ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված սկզբունքներն առավել հիմնարար նշանակություն ունեն քաղաքացիական շրջանառության համար, քան թե իրավունքի այլ աղբյուրներով ամրագրված սկզբունքները: Համեմատության համար նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածը, որը նվիրված է քաղաքացիական իրավունքի սկզբունքներին, վերտառված է՝ «Քաղաքացիական օրենսդրության սկզբունքները»:

Եվ նշված հոդվածի բովանդակությունը հետևյալն է. «Քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

քի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ասպառածության, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա»։ Համարվում է, որ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված սկզբունքներն ավելի ու ավելի բացահայտում են քաղաքացիական հարաբերությունների կարգավորման՝ սահմանադրական սկզբունքները, այսինքն՝ դրանց միջև ոչ միայն հակադրություն կամ մրցակցություն չկա, այլև այդպիսիք փոխլրացնում են միմյանց։ Քաղաքացիական օրենսգրքով ամրագրված սկզբունքները կարծես ավելի շատ թեքում ունեն դեպի քաղաքացիական գույքային հարաբերությունները, մինչդեռ քաղաքացիական անձնական ոչ գույքային հարաբերություններն ավելի շատ կարող են հենվել սահմանադրական ամրագրում ստացած սկզբունքների վրա, ինչպիսիք են՝ արժանապատվության անխախտելիության (ՀՀ Սահմ. 23-րդ հոդված), պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության (ՀՀ Սահմ. 31-րդ հոդված), հաղորդակցության ազատության (ՀՀ Սահմ. 33-րդ հոդված), ամուսնանալու ազատության (ՀՀ Սահմ. 35-րդ հոդված), ազատ տեղաշարժվելու (ՀՀ Սահմ. 40-րդ հոդված), մտքի, խղճի և կրոնի ազատության (ՀՀ Սահմ. 41-րդ հոդված), կարծիքի արտահայտման ազատության (ՀՀ Սահմ. 42-րդ հոդված), ստեղծագործական ազատության (ՀՀ Սահմ. 43-րդ հոդված) և այլ սկզբունքների վրա։

Վերջապես ըստ Տ.Վ.Կազանիսի՝ քաղաքացիական իրավունքի սկզբունքների երրորդ հարթությունն այլ օրենքներով ամրագրված՝ քաղաքացիական իրավունքի սկզբունքներն են։ Մասնավորապես, այդպիսիք են հանդիսանում անհատական և հանրային շահերի զուգակցման, սպառողների շահերի պաշտպանության, անգործունակ և սահմափակ գործունակ անձանց իրավունքների պաշտպանության և բազում այլ սկզբունքներ²⁸։

Քաղաքացիական իրավունքի սկզբունքների այս եռաստիճան համակարգը, մեր գնահատմամբ, ձևակերպում են համապատասխան իրավունքի՝ տարբեր իրավական ուժ և կշիռ ունեցող աղբյուրներում։ Մեր կարծիքով՝ քաղաքացիական իրավունքի սկզբունքներն ունեն այլ համակարգ, քան վերևում առաջարկված է։ Այդ սկզբունքները կարող են լինել օրենսդրորեն հստակ ձևակերպված և իրավանորմ գանգվածից բխող, կամ այլ կերպ ասած՝ օրենսդրական կարգավորման նպատակից, օրենսդրության ոգուց բխող սկզբունքներ²⁹։ Այս կապակցությամբ ուշագրավ է Ա.Ա.Տկաչենկոյի մոտեցումը, ով գրում

է, որ իրավունքի սկզբունքները հանդես են գալիս մի քանի իրավական ձևերով՝

- ընդհանուր բնույթ ունեցող իրավանորմի տեսքով,
- իրավանորմների հոծ զանգվածի միջով անցնող գաղափարի տեսքով,
- ոչ նորմատիվ բնույթի ձևակերպումների տեսքով, օրինակ՝ նորմատիվ ակտերի պրեամբուլայում ներառվող գաղափարների միջոցով,
- իրավական սովորույթների տեսքով։

Ռ.Չ.Լիվշիցը և Վ.Ի.Նիկիտինսկին նույնպես կարծում են, որ «իրավունքի սկզբունքները կարող են դրսևորվել երկու ձևով՝ ուղղակի և անուղղակի։ Ուղղակի ձևով հանդես են գալիս նորմ-սկզբունքները, իսկ անուղղակի ձևով՝ նորմ-գաղափարները։ Նորմ-սկզբունքները կրում են պարտադիր բնույթ և կարգավորում են քաղաքացիական հարաբերություններն ուղղակիորեն, իսկ նորմ-գաղափարներն ավելի շուտ ցույց են տալիս քաղաքացիա-իրավական կարգավորման ընդհանուր ուղղությունը, այդպիսիք կոնկրետ հարաբերություններ չեն կարգավորում»³⁰։

Օ.Ա.Կուզնեցովան գրում է, որ «ոչ մի քաղաքացի չի կարող իր վարքագիծը կառուցելիս հենվել ինչ-որ դեկլարատիվ գաղափարների կամ այսպես կոչված՝ իրավագիտակցության գաղափարների վրա։ Քաղաքացու վարքագիծը կարող է կառուցվել կոնկրետ իրավանորմի վրա։ Քաղաքացիական իրավունքի սկզբունքները կոնկրետ իրավանորմի տեսքով պատկերացնելու պարագայում միայն հնարավոր կլինի այդ սկզբունքը դնել վարքագծի հիմքում։ Յուրաքանչյուր պրակտիկ ցիվիլիստ կիրառում է ոչ քե՛ գաղափարները, այլ իրավունքի ռեալ նորմերը»³¹։

Քաղաքացիական իրավունքի այն սկզբունքները, որոնք հստակ իրավանորմի տեսքով չեն հանդես գալիս, կարող են բացահայտվել դոկտրինալ մեկնաբանման արդյունքում, ուստի՝ դրանց կարելի է անվանել նաև՝ **դոկտրինալ բնույթի սկզբունքներ**։ Սակայն դոկտրինալ բնույթի սկզբունք ասելով այստեղ նկատի չունենք, որ այդպիսիք նորմատիվ բնույթ չունեն։ **այդպիսիք բնականաբար ամրագրված են նորմատիվ աղբյուրներում, կամ սանկցիավորված են նորմատիվ աղբյուրներով, խնդիրն ընդամենը դոկտրինալ վերլուծությամբ՝ այդպիսիք գտել-առանձնացնելու մեջ է**։ Այս տեսանկյունից, չենք կարող համաձայնվել Տ.Վ.Կազանիսի դասակարգման հետ, քանի որ թե սահմանադրությամբ, թե քաղաքացիական օրենսգրքով, և թե այլ օրենքներով սահմանված սկզբունքները բխում են միմյանցից, կրկնում են միմյանց իրենց արժեքաբանական հենքով, և նրանց միջև որևէ հիերարխիկ հարաբերակցություն լինել չի կարող։

Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ հանդիպում ենք քաղաքացիական իրավունքի սկզ-

www.artadaratutyunjournal.com

բունքների տարբեր շրջանակներ: Յու.Կ Տոլստոյն առաջարկում է հետևյալ շրջանակը.

1. Անկախ սուրյեկտային կազմից՝ գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունների միասնական իրավական կարգավորման սկզբունքը,
2. Քաղաքացիական հարաբերությունների մասնակիցների հավասարության սկզբունքը,
3. Քաղաքացիա-իավական հարաբերությունների թոյլատվական ուղղվածության սկզբունքը, երբ հարաբերությունների մասնակիցներն իրավունք ունեն օրենսդրությամբ չարգելված ցանկացած բնույթի գործունեությամբ,
4. Դիսպոզիտիվության սկզբունքը,
5. Խախտված իրավունքների լրիվ վերականգնման սկզբունքը, որը ներառում ինչպես գույքային, այնպես էլ ոչ գույքային վնասների հատուցումը,
6. Բարեխղճության սկզբունքը,
7. Քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանության համընդհանրության սկզբունքը³² :

Օ.Ն.Սադիկովն առաջարկում է քաղաքացիական իրավունքի սկզբունքների հետևյալ համակարգը.

1. Տնտեսական շրջանառության միասնության սկզբունքը,
2. Սեփականության տարբեր ձևերի հավասարության սկզբունքը,
3. Տնտեսական շրջանառության մասնակիցներին լայն ինքնավարության տրամադրման սկզբունքը, որը դրսևորվում է ձեռնարկատիրական գործունեության տարբեր ձևերի նախաձեռնմամբ,
4. Պայմանագրի ազատության սկզբունքը,
5. Տնտեսական շրջանառության մասնակիցների պատասխանատվության սկզբունքը,
6. Անհատական և հասարակական շահերի համադրման և միասնության սկզբունքը³³ :

Ս.Ն.Բրատունն առաջարկում է քաղաքացիական իրավունքի սկզբունքների ավելինեղ շրջանակ.

1. Քաղաքացիական իրավունքներն իրենց նպատակային նշանակությամբ իրականացնելու սկզբունքը,
2. Հավասարության սկզբունքը,
3. Քաղաքացիական իրավունքներն ու պարտականություններն իրականացնելիս բարեխղճության սկզբունքը³⁴ :

Ա.Ա.Տկաչենկոն քաղաքացիական իրավունքի սկզբունքները պատկերացնում է հետևյալ շրջանակով.

1. Դիսպոզիտիվություն,
2. Ողջամտություն,
3. Քաղաքացիական հարաբերությունների մասնակիցների հավասարություն,
4. Սեփականության անձեռնմխելիություն,

5. Պայմանագրի ազատություն,
6. Խախտված իրավունքների վերականգնման ապահովում³⁵ :

Նույնիսկ կան հեղինակներ, ովքեր առաջարկում են անհամեմատ սահմանափակել քաղաքացիական իրավունքի սկզբունքները և հասցնել երկուսի՝ գույքային հարաբերությունների մասնակիցների հավասարության³⁶ սկզբունքը և դիսպոզիտիվության սկզբունքը :

Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ փորձեր են արվել քաղաքացիական իրավունքի սկզբունքների համակարգը ներկայացնել ոչ թե դրանց շրջանակի ներկայացմամբ, այլ այդ շրջանակի դասակարգմամբ՝ ըստ առանձին հատկանիշների: Այսպես, առաջարկվում է քաղաքացիական իրավունքի սկզբունքներն, ըստ իրենց բնույթի, տարբերակել՝ բարոյա-իրավական (արդարության, ողջամտության, բարեխղճության սկզբունքներ) և հատուկ-իրավական (հավասարության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին միջամտելու անթույլատրելիության, խախտված իրավունքի վերականգնման և խախտված իրավունքների դատական պաշտպանության սկզբունքներ)³⁷ :

Դոկտորինայում առաջարկվել է քաղաքացիական իրավունքի սկզբունքները դասակարգել ըստ իրավունքի համակարգի մյուս տարրերի հետ հարաբերման՝ ընդհանուր սկզբունքներ (իրավունքի գերակայություն), միջնուղային սկզբունքներ (դիսպոզիտիվություն, մասնավոր և հանրային շահերի հավասարակշռում), ճյուղային սկզբունքներ (քաղաքացիական իրավունքները չչարաշահելը), ենթաճյուղային սկզբունքներ (պայմանագրի ազատություն, պայմանագրի թույլ կողմի իրավունքների պաշտպանություն, կտակի ազատություն), կոնկրետ ինստիտուտները բնութագրող սկզբունքներ³⁸ :

Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ վերջին տարիներին ներմուծվել է նոր հասկացություն՝ սկզբունք-մեթոդ, որը հավակնում է ներկայացնելու քաղաքացիական իրավունքի սկզբունքների նոր և ինքնատիպ դասակարգում և համակարգ: Այս հասկացությունն առաջին անգամ իրավունքի գիտություն է ներմուծել Ե.Ա.Վավիլինը : Սկզբունք-մեթոդների գաղափարն ավելի զարգացնում է Ա.Ա.Վոլոսը, ով առաջարկում է սկզբունք-մեթոդների չորս խմբեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սկզբունքների կազմը, որոնց մեջ, սակայն, կա մեկը, որն էլ հանդիսանում է համակարգ ձևավոր հիմնարար սկզբունքը: Սկզբունք-մեթոդների այդ համակարգը կայանում է հետևյալում.

- քաղաքացիական շրջանառության մասնակիցների ազատություն և ինքնավարություն (ավտոնոմիա) ձևավորող սկզբունքներ (դիսպոզիտի-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վություն, սեփականության անձեռնմխելիություն, պայմանագրի ազատություն, կտակի ազատություն, որոնցից **հիմնարար է համարվում դիսպոզիտիվության սկզբունքը**),

- **քաղաքացիական շրջանառության մասնակիցների հավասարություն ապահովող սկզբունքներ** (կողմերի հավասարություն, պարտավորության թույլ կողմի իրավունքների պաշտպանություն, որոնցից **հիմնարար է համարվում կողմերի հավասարության սկզբունքը**),

- **գնահատողական կատեգորիաների միջոցով իրավական կարգավորում ապահովող սկզբունքներ** (բարեխղճություն, իրավունքների չարաշահման անթույլատրելիություն, ողջամտություն, արդարություն, կողմերի համագործակցություն, որոնցից **մեջ հիմնարար է համարվում բարեխղճության սկզբունքը**),

- **սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքների խախտմանն արգելք սահմանող սկզբունքներ** (մասնավոր գործերին միջամտելու անթույլատրելիությունը, խախտված իրավունքների վերականգնումը, խախտված իրավունքների դատական պաշտպանությունը, որոնցից **հիմնարար է համարվում խախտված իրավունքների վերականգնման սկզբունքը**)⁴⁰ :

Իրավացի են այն հեղինակները, ովքեր համարում են, որ քաղաքացիական իրավունքի սկզբունքների շրջանակը ոչ պետք է անհարկի ընդլայնվի, ոչ էլ պետք է անհարկի նեղացվի, դա ինքնանպատակ չի արվում, դա պայմանավորված է օբյեկտիվ իրողություններով, ոչ թե մեր ցանկություններով:

Հեղինակների տեսակետներն ու դասակարգումները կարող ենք շարունակել, սակայն թվարկված արդեն իսկ ցույց է տալիս, որ բոլոր դասակարգումների միջով անցնում է ընդհանուր կարմիր թել, և դա պատահական չի ստացվել: Քաղաքացիական իրավունքի սկզբունքները քննարկելիս միշտ պետք է ելնել այն դիրքերից, որ այդ սկզբունքները խտացված ձևով արտահայտում են երկրում ընթացող քաղաքական, տնտեսական, սոցիալական, գաղափարական, արժեքաբանական, մշակութային բնույթի զարգացումներն ու դրանց վերաբերյալ հանրային պատկերացումներն ու ընկալումները: Քաղաքացիական իրավունքի սկզբունքները կապող օղակ են հանդիսանում հասարակական այդ զարգացումների և օրինաչափությունների և քաղաքացիական իրավունքի միջև՝ կանխորոշելով վերջինիս առաձնահատկություններն ու կարգավորիչ հնարավորությունները: Այս տեսանկյունից՝ իրավագետներն ինչպես էլ որ արտահայտեն քաղաքացիական իրավունքի սկզբունքները, նրանք միշտ պտտվելու են նույն արժեքների և պատկերացումների առանցքի շուրջ:

Քաղաքացիական իրավունքի սկզբունքների

համակարգը ՀՀ-ում

Վերոնշյալ քննարկումներից հետո անդրադառնանք ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ քաղաքացիական իրավունքի սկզբունքների համակարգին: Այդ սկզբունքների շրջանակը սահմանված է ՀՀ քաղ.օր 3-րդ հոդվածի 1-ին կետում, սակայն պարզունակ կլինեք կարծել, թե հենց միայն այդ կետում կամ այդ հոդվածում են ամփոփված ՀՀ քաղաքացիական օրենսդրության սկզբունքները: ՀՀ քաղաքացիական իրավունքի սկզբունքների շրջանակն անհամեմատ լայն է, քանի որ հիշյալ հոդվածում ամրագրված են միայն նորմ-սկզբունքները, մինչդեռ պետք է հաշվի նստենք նաև գաղափար-սկզբունքների (դոկտրինալ բնույթի) հետ: Մեր դիտարկմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրության նորմերի զանգվածից կարելի է գտել-առանձնացնել բոլոր այն կանոն սկզբունքները (թե դոկտրինալ բնույթի, թե սկզբունք-մեթոդների), որոնց մասին խոսվեց վերևում: Իրավակիրառ տեսանկյունից նպատակահարմար է առանձին սկզբունք-գաղափարների հաղորդել հենց սկզբունք-նորմի կարգավիճակ և ամրագրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, քանի որ ոչ միշտ է, երբ դատարանը կգնա իրավանորմերի հոծ զանգվածից սկզբունք-գաղափարներ բխեցնելու և դրանց համակարգով դեկավարվելու ճանապարհով:

Հիմք ընդունելով ՀՀ քաղ.օր. 3-րդ հոդվածում ամրագրված քաղաքացիական իրավունքի սկզբունքների շրջանակը՝ առաջարկում ենք նրանում արտացոլված սկզբունք-նորմերի շարքը համալրել քաղաքացիական շրջանառության համար այնպիսի կարևոր սկզբունքներով, ինչպիսիք են բարեխղճությունը և ազնիվ գործարար պրակտիկան, պարտավորության թույլ կողմի իրավունքների պաշտպանությունը և քաղաքացիական շրջանառության մասնակիցների համագործակցությունը:

Իրավունքի անալոգիան և քաղաքացիական իրավունքի սկզբունքները

Իրավունքի սկզբունքները բացառիկ կարևորություն ունեն իրավունքի յուրաքանչյուր ճյուղի համար, սակայն դրանց դերը հատկապես առանձնահատուկ դրսևորումներ է ստանում այն իրավունքի ճյուղերի պարագայում, որոնք թույլ են տալիս իրավունքի անալոգիա: Այդպիսին է հանդիսանում քաղաքացիական իրավունքը: Համաձայն ՀՀ քաղ.օր. 9-րդ հոդվածով սահմանվում է.

1. Այն դեպքերում, երբ սույն օրենսգրքի 1 հոդվածում նախատեսված հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, և բացակայում է դրանց նկատմամբ կիրառելի գործարար շրջանառության սովորույթը, նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերություններ կար-

www.araratadutyjournal.com

գավորող քաղաքացիական օրենսդրության նորմերը (օրենքի անալոգիա):

2. *Օրենքի անալոգիայի կիրառման անհնարի- նության դեպքում կողմերի իրավունքները և պար- տականությունները որոշվում են՝ ելնելով քաղա- քացիական օրենսդրության սկզբունքներից (իրա- վունքի անալոգիա):*

Գերմանացի իրավագետ Վինդշեյդը նշում է, որ երբ հայտնաբերվում է իրավադրույթների միջև արտաբուստ հակասություն, ապա նախևառաջ պետք է պարզել, թե արդյոք այդ հակասությունը կեղծ կամ թվացյալ չէ, այսինքն՝ անալոգիա կիրա- ռելուց առաջ նախևառաջ պետք է պարզել այդ հանգամանքները: Իրավադրույթների միջև հակա- սությունները կարող են կեղծ լինել, երբ միմյանց հակասող իրավադրույթները համասեռ չեն, որպի- սիք են հանդիսանում, օրինակ՝ ընդհանուր և հա- տուկ դրույթները, վաղ ընդունված և ուշ ընդունված: Բայց երբ հակասությունները կեղծ չեն, ավելին՝ նաև անհամատեղելի հակասություններ են, ապա անհրաժեշտ է կիրառել անալոգիա և հարթել հա- կասությունը՝ ելնելով օրենսդրի հետապնդած նպատակից⁴¹: Այսինքն՝ անալոգիա կիրառելիս իրականանում է ակտիվ մեկնաբանման գործըն- թաց, երբ պետք է բացահայտվի օրենքի և իրավուն- քի բովանդակությունը: Վինդշեյդը նշում էր, որ անալոգիայի պարագայում երբ դիտարկվում են ծագած հակասությունները, իրավունքի մեկնաբա- նությունն իրականացվում է կամ ակտիվ գիտական վերլուծության հիման վրա կամ կոնկրետ իրավա- նորմերի քննարկմամբ՝ ելնելով դրանցում կիրառ- ված բառերի և դրանց ձևակերպումների իմաստից ու բովանդակությունից: Ըստ Վինդշեյդի՝ իսկական մեկնաբանությունը հենց գիտական վերլուծության հիման վրա մեկնաբանությունն է, երբ լիովին բա- ցահայտվում է օրենսդրի հետապնդած իրական նպատակը, իսկ դա հնարավոր է իրականացնել մի- այն, երբ ելնենք քաղաքացիական օրենսդրության սկզբունքների համակարգի հետ ակտիվ համադ- րությունից և վերլուծությունից⁴²:

Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ երբեմն հանդիպում ենք սուր գնահատական- ների, որոնք վերաբերում են քաղաքացիական իրավունքի սկզբունքների հիման վրա՝ իրավունքի անալոգիայի կիրառմամբ դատարանների իրա- վաստեղծագործականությանը: Այսպես, Վ.Գ.Ռո- տանը համարում է, որ դատարանները, մեկնաբա- նելով իրավունքը, կիրառելով իրավունքի անալոգի- ան և հենվելով քաղաքացիական իրավունքի սկզ- բունքների վրա, իրականացնում են ստեղծագոր- ծական գործունեության, այլ ոչ թե իրավաստեղծ գործունեություն, քանզի ստեղծագործական գոր- ծունեությունն ուղղված է իրավանորմերի բովան- դակության բացահայտմանը, մինչդեռ իրավաս- տեղծ գործունեությունը նպատակաուղղված է

կոնկրետ որոշման կայացմանը, ինչը դատարանին կարող է հեռացնել գործող իրավանորմերի կարգա- վորումներից: Ավելին, Վ.Գ.Ռոտանը համարում է, որ անհրաժեշտ է հրաժարվել իրավունքի անալոգի- այի ինստիտուտից, քանի որ սկզբունքները նորմա- տիվ բնույթ ունեն, այդպիսիք հանդես են գալիս իրավանորմերի տեսքով, արդեն իսկ ուղղակիորեն կարգավորում են քաղաքացիական հարաբերու- թյուններ, հետևաբար անիմաստ է խոսել դրանց հի- ման վրա անալոգիա կիրառելու և իրավաստեղծա- գործությամբ նոր նորմերի գեներացման մասին⁴³:

Մեր կարծիքով՝ իրավունքի անալոգիան վա- ղուց հաստատել իր տեղն ու դերը քաղաքացիա- կան հարաբերությունների կարգավորման բացերը լրացնելու հարցում, իրավունքի անալոգիայի պա- րագայում իսկապես ստեղծագործական գործունե- ության հիման վրա, քաղաքացիական իրավունքի սկզբունքների ուղենշմամբ, գեներացվում են վար- քագծի նոր կանոններ՝ իրավանորմեր, դա լրացու- ցիչ իրավական մեխանիզմ է արագ զարգացող քա- ղաքացիական շրջանառությանը սպասարկելու համար: Օրենսդրությունը չի կարող հնարավորինս արագ փոփոխվել և լրացվել, մինչդեռ քաղաքացի- ական շրջանառության արագ զարգացումն անընդ- հատ պահանջներ է առաջադրում իրավական կար- գավորմանը, և այդ պահանջները կարող են բավա- րարվել շնորհիվ հենց իրավունքի անալոգիայի: Կասկածից վեր է, որ այստեղ որոշակի իմաստով ընթանում է հենց իրավաստեղծ գործունեություն: Նշանակում է, որ քաղաքացիական իրավունքի սկզբունքները, որոնց վրա հենվում է իրավունքի անալոգիան, ևս իրավաստեղծ գործունեության մի- ջոցներ են, դա յուրօրինակ գործառույթ է, որ ունեն և հաջողությամբ իրականացնում են իրավունքի սկզբունքները քաղաքացիական շրջանառությունում⁴⁴:

Եզրահանգումներ

Կատարված գիտահետազոտական աշխա- տանքի արդյունքում արվել են առանձին եզրահան- գումներ և առաջարկություններ, որոնք ամփոփ կերպով հետևյալն են.

1. *Ինչպես սկզբունքներն են կոչված ապահո- վելու իրավունքի կայունությունը, այնպես էլ մաս- նավոր և հանրային շահերն են կոչված ապահովել- լու սկզբունքների կայունությունը: Մարդիկ գալիս և գնում են, իրավանորմերը փոփոխվում են անվերջ, սակայն մասնավոր և հանրային շահերն անփո- փոխ են, ուստիև անփոփոխ են այդ շահերը սպա- սարկող իրավունքի սկզբունքները:*

2. *ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն անհրա- ժեշտ է լրացնել հետևյալ իրավադրույթով. «Քաղա- քացիական օրենսդրության սկզբունքները քաղա- քացիական օրենսդրության նորմերով ամրագրված կամ այդ նորմերի դրույթներից բխող հիմնարար*

գաղափարներն ու կայուն դեկավար դրույթներն են, որոնք արտահայտում են քաղաքացիական իրավունքի նպատակն ու էությունը, ունեն ընդհանուր պարտադիր բնույթ իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության համար»:

3. Հիմք ընդունելով ՀՀ քաղ.օր. 3-րդ հոդվածում ամրագրված քաղաքացիական իրավունքի սկզբունքների շրջանակը՝ առաջարկվում է նրանում արտացոլված սկզբունք-նորմերի շարքը համալրել քաղաքացիական շրջանառության համար այնպիսի կարևոր սկզբունքներով, ինչպիսիք են բարեխոհությունը և ազնիվ գործարար պրակտիկան, պարտավորության բույլ կողմի իրավունքների պաշտպանությունը և քաղաքացիական շրջանառության մասնակիցների համագործակցությունը:

4. Օրենսդրությունը չի կարող հնարավորինս արագ փոփոխվել և լրացվել, մինչդեռ քաղաքացիական շրջանառության արագ զարգացումն անընդհատ պահանջներ է առաջադրում իրավական կարգավորմանը, և այդ պահանջները կարող են բավարարվել շնորհիվ իրավունքի անալոգիայի: Կասկածից վեր է, որ այստեղ որոշակի իմաստով ընթանում է հենց իրավաստեղծ գործունեություն: Նշանակում է, որ քաղաքացիական իրավունքի սկզբունքները, որոնց վրա հենվում է իրավունքի անալոգիան, ևս իրավաստեղծ գործունեության միջոցներ են, դա յուրօրինակ գործառույթ է, որ ունեն և հաջողությամբ իրականացնում են իրավունքի սկզբունքները քաղաքացիական շրջանառությունում:

¹ Տե՛ս, Советское гражданское право. Учебник: В 2-х томах. Т. 2 / Верб С.А., Добрынин Ю.Е., Илларионова Т.И., Кириллова М.Я., и др.; под ред.: Красавчиков О.А. 3-е изд., испр. и доп. М.: Высш. шк., 1985. էջ 4:

² Տե՛ս, Грибанов В.П., Корнев С.М. Советское гражданское право: учебное пособие в 2 т. Т.1. Москва: Юри. Лит. 1979. էջ 25:

³ Տե՛ս, Система гражданско-правовых охранительных мер. Дис. ... докт. юрид. наук: 12.00.03 / Илларионова Т.И. – Свердловск, 1985. էջ 8:

⁴ Տե՛ս, Подшивалов Т.П., Кванина В.В., Сагандыков М.С. Принципы частного права: монография. М. Проспект. 2023. էջ 23:

⁵ Տե՛ս, Айкянц А.М. История развития частного права в Армении. Монография. Ер. Асогик. 2006 էջ 51-52:

⁶ Տե՛ս, Яковлев В.Ф. Россия: экономика, гражданское право. М. 2000. էջ 167:

⁷ Տե՛ս, Чернов К.А. Принцип равенства как общеправовой принцип российского права. Дисс. ... канд. юрид. наук. Самара. 2003. էջ 12:

⁸ Տե՛ս, Ильин И.А. Теория права и государства. М. Зерцало. 2003. էջ 119:

⁹ Տե՛ս, Сандеуар П. Введение в право. М. Интрагек-Р. 1994. էջ 87:

¹⁰ Տե՛ս, Радбрух Г. Философия права. М. Межд. отношения. 2024. էջ 43:

¹¹ Տե՛ս, Подшивалов Т.П., Кванина В.В., Сагандыков М.С., նույն տեղում, էջ 28:

¹² Տե՛ս, Бондаренко Н.Л. Конституирующие признаки гражданского права и проблемы выработки их дефиниции / Сибирский юридический вестник No 4 (63). 2013. էջ 41-44:

¹³ Տե՛ս, Яковлев В. Ф. Гражданско правовой метод регулирования общественных отношений. Свердловск: Урал. гос. ун-т, 1972. էջ 57:

¹⁴ Տե՛ս, Явич Л. С. Право развитого социалистического общества: сущность и принципы. М. Юрид. лит., 1978. էջ 10:

¹⁵ Տե՛ս, Бондаренко Н.Л., նույն տեղում, էջ 43:

¹⁶ Տե՛ս, Алексеев С.С. Не просто право – частное право // Известия. 1991. 19-е октября. էջ 2:

¹⁷ Տե՛ս, Подшивалов Т.П., Кванина В.В., Сагандыков М.С., նույն տեղում, էջ 20:

¹⁸ Տե՛ս, Бержель Ж. Л. Общая теория права / под общ. ред. В. И. Даниленко. М. NOTA BENE, 2000. էջ 182:

¹⁹ Տե՛ս, Подшивалов Т.П., Кванина В.В., Сагандыков М.С., նույն տեղում, էջ 21:

²⁰ Տե՛ս, Бондаренко Н.Л., նույն տեղում, էջ 44:

²¹ Toward system principles: General system theory and the alternative approach // Systems Research and Behavioral Science. 2004. № 21:

²² https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_181602/

²³ Տե՛ս, Казанина Т. В. О системе принципов гражданского права (<https://cyberleninka.ru/article/n/o-sisteme-printsipov-grazhdanskogo-prava/viewer> Государство и право)

²⁴ Համանմանորեն՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր որ ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք»:

²⁵ Համանմանորեն՝ ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը»:

²⁶ Համանմանորեն՝ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր որ ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն»:

²⁷ https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/d65fbc0a603d59546c3338bcfc6bf09bb0332817/

²⁸ https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/d65fbc0a603d59546c3338bcfc6bf09bb0332817/

²⁹ Տե՛ս, Ловчикова Ю. В. Система принципов гражданского права: многообразие доктринальных подходов (<https://cyberleninka.ru/article/n/sistema-printsipov-grazhdanskogo-prava-mnogoobrazie-doktrinalnyh-podhodov/viewer>)

³⁰ Տե՛ս, Лившиц Р. З., Никитинский В. И. Принципы советского трудового права //Сов. государство и право. 1974. № 8. էջ 31–39:

³¹ Տե՛ս, Кузнецова О. А. Нормы принципы российского гражданского права. М. Статут, 2006. էջ 31:

³² Տե՛ս, Толстой Ю.К. Принципы гражданского права // Правоведение. 1992. № 2. էջ 50:

³³ Տե՛ս, Садиков О.Н. Принципы нового гражданского законодательства СССР // Советское государство и право. 1991. № 10. էջ 26:

³⁴ Տե՛ս, Братусь С.Н. Предмет и система советского гражданского права. М., 1963. էջ 143:

³⁵ Տե՛ս, Ткаченко А.А. Понятие и система принципов гражданского права//Научный журнал КубГАУ, № 84(10), 2012.

էջ 10:

³⁶ Տե՛ս, Научно-практический комментарий к ГК РФ части первой / Под ред. В.П. Мозолина, М.Н. Малениной. М., 2011. էջ 4:

³⁷ Տե՛ս, Ловчикова Ю. В., նույն տեղում (<https://cyberleninka.ru/article/n/sistema-printsipov-grazhdanskogo-prava-mnogoobrazie-doktrinalnyh-podhodov/viewer>)

³⁸ Տե՛ս, նույն տեղում:

³⁹ Տե՛ս, Вавилин Е.В. Понятие и функциональное назначение принципов осуществления гражданских прав и исполнения обязанностей // Журн. рос. права. 2009. № 1. էջ 85–90:

⁴⁰ Տե՛ս, Волос А. А. Система принципов-методов гражданского права: постановка проблемы

(<https://cyberleninka.ru/article/n/sistema-printsipov-metodov-grazhdanskogo-prava-postanovka-problemy/viewer>)

⁴¹ Տե՛ս, Виндшейд - Учебник пандектного права. Том 1, Общая часть. /перевод с немецкого, под ред. С.В.Пахмана/. Изд. А,Гиероглифова и И.Никифорова. С-Петербург. 1874. էջ 55:

⁴² Տե՛ս, նույն տեղում, էջ 48:

⁴³ Տե՛ս, Ротань В. Г. Регулятивное значение принципов гражданского права // Ученые записки Крымского федерального университета имени В.И. Вернадского. Юридические науки. 2015. № 1. էջ 225:

⁴⁴ Տե՛ս, Карапетов А.Г. Борьба за признание судебного правотворчества в европейском и американском праве. М. Статут. 2011. էջ 7:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Айкянц А.М История развития частного права в Армении. Минография. Ер. Асогик. 2006.
2. Алексеев С.С. Не просто право – частное право // Известия. 1991. 19-е октября.
3. Бондаренко Н.Л. Конституирующие признаки гражданского права и проблемы выработки их дефиниции /Сибирский юридический вестник No 4 (63). 2013.
4. Бертельс Ж. Л. Общая теория права / под общ. ред. В. И. Даниленко. М. NOTA VENE, 2000.
5. Братусь С.Н. Предмет и система советского гражданского права. 1963.
6. Вавилин Е.В. Понятие и функциональное назначение принципов осуществления гражданских прав и исполнения обязанностей // Журн. рос. права. 2009. № 1.
7. Виндшейд - Учебник пандектного права. Том 1, Общая часть. /перевод с немецкого, под ред. С.В.Пахмана/. Изд. А,Гиероглифова и И.Никифорова. С-Петербург. 1874.
8. Грибанов В.П., Корнев С.М. Советское гражданское право: учебное пособие в 2 т. Т.1. Москва: Юри. Лит. 1979.
9. Ильин И.А. Теория права и государства. М. Зерцало.2003.
10. Казанина Т. В. О системе принципов гражданского права (<https://cyberleninka.ru/article/n/o-sisteme-printsipov-grazhdanskogo-prava/viewer> Государство и право)
11. Карапетов А.Г. Борьба за признание судебного правотворчества в европейском и американском праве. М. Статут. 2011.
12. Кузнецова О. А. Нормы принципы российского гражданского права. М. Статут, 2006.
13. Лившиц Р. З., Никитинский В. И. Принципы советского трудового права //Сов. государство и право. 1974. № 8.

14. Научно-практический комментарий к ГК РФ части первой / Под ред. В.П. Мозолина, М.Н. Малейной. М., 2011.
15. Система гражданско-правовых охранительных мер. Дис. ... докт. юрид. наук: 12.00.03 / Илларионова Т.И. – Свердловск, 1985.
16. Подшивалов Т.П., Кванина В.В., Сагандыков М.С. Принципы частного права: монография. М. Проспект. 2023.
17. Чернов К.А. Принцип равенства как общеправовой принцип российского права. Дисс. ... канд. юрид. наук. Самара. 2003.
18. Радбрух Г. Философия права. М. Межд. отношения. 2024.
19. Толстой Ю.К. Принципы гражданского права // Правоведение. 1992. № 2.
20. Советское гражданское право. Учебник: В 2-х томах. Т. 2 / Верб С.А., Добрынин Ю.Е., Илларионова Т.И., Кириллова М.Я., и др.; под ред.: Красавчиков О.А. 3-е изд., испр. и доп. М.: Высш. шк., 1985.
21. Садиков О.Н. Принципы нового гражданского законодательства СССР // Советское государство и право. 1991. № 10.
22. Сандевуар П. Введение в право. М. Интратэк-Р. 1994.
23. Ткаченко А.А. Понятие и система принципов гражданского права // Научный журнал КубГАУ, № 84(10), 2012.
24. Рогань В. Г. Регулятивное значение принципов гражданского права // Ученые записки Крымского федерального университета имени В.И. Вернадского. Юридические науки. 2015. № 1.
25. Яковлев В. Ф. Гражданско правовой метод регулирования общественных отношений. Свердловск: Урал. гос. ун-т, 1972.
26. Яковлев В.Ф. Россия: экономика, гражданское право. М. 2000.
27. Явич Л. С. Право развитого социалистического общества: сущность и принципы. М. Юрид. лит., 1978.
28. Toward system principles: General system theory and the alternative approach // Systems Research and Behavioral Science. 2004. № 21.

Тариел Барсегян

Соискатель Ереванского государственного университета,
кафедра гражданского права

РЕЗЮМЕ

Система принципов гражданского права

Цель статьи заключается в представлении системы принципов гражданского права и в оценке их роли при применении аналогии права как эффективного механизма восполнения пробелов законодательного регулирования.

Для достижения указанной цели ставится задача исследовать понятие принципов гражданского права и их конститутивные признаки, а также особенности их формирования в контексте соотношения публичных и частных интересов.

Исследование осуществлено с применением ряда методов юридической науки, в числе которых — сравнительно-правовой, историко-сравнительный, методы индукции и дедукции, анализа и синтеза, абстрагирования, систематизации и классификации.

Автор систематизировал существующие классификации принципов, выявил их теоретические и практические критерии в процессах правотворчества, толкования и правоприменения. Особое внимание уделено тому обстоятельству, что гражданское право характеризуется использованием аналогии права, основанной на его принципах, что обеспечивает нормативную гибкость и правовую стабильность.

В статье также рассматривается регулирование принципов гражданского права в рамках законодательства Республики Армения, анализируются действующие правовые подходы и формулируются предложения по совершенствованию законодательства с целью укрепления практической эффективности принципиальных основ и обеспечения поступательного развития права.

Ключевые слова: институт, принцип, добросовестность, честная деловая практика, стабильность, императивность, аналогия, система, метод, нормативность, диспозитивность, частные и публичные интересы

Tariel Barseghyan
Yerevan State University,
PhD Candidate, Department of Civil Law

SUMMARY
System of principles of civil law

The purpose of the article is to present the system of civil law principles and to assess their role in the application of analogy of law, which serves as an effective mechanism for filling legislative gaps.

To achieve this aim, the study sets out the task of examining the concept of civil law principles and their constitutive features, as well as their formation in the context of balancing public and private interests.

The research is conducted through the application of a number of legal research methods, including comparative legal, historical-comparative, induction and deduction, analysis and synthesis, abstraction, systematization, and classification.

The author systematizes existing classifications of principles, identifies their theoretical and practical criteria within the processes of lawmaking, interpretation, and enforcement. Special emphasis is placed on the fact that civil law is distinguished by its reliance on analogy of law based on principles, thereby ensuring both normative flexibility and legal stability.

The article also addresses the regulation of civil law principles within the framework of the legislation of the Republic of Armenia, analyzes current legal approaches, and puts forward a number of proposals for legislative improvement aimed at strengthening the practical effectiveness of fundamental principles and ensuring the continuous development of law.

Key words: institute, principle, good faith, fair business practice, stability, mandatory nature, analogy, system, method, normativity, dispositivity, private and public interests.

ԵՎԱ ՍԱՂՈՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական,
Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս

ՁԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՏՈՒՑՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հոդվածում քննարկվում են «Ձբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքով ամրագրված՝ զբոսաշրջային փաթեթի պայմանագրի էական պայմանների հետ կապված որոշ խնդիրներ: Հեղինակի կարծիքով Օրենքով ամրագրված՝ զբոսաշրջային փաթեթի պայմանագրի պարտադիր պայմանների մի մասը կողմերի միջև համաձայնեցում չենթադրող՝ տեղեկատվական բնույթի, իսկ մյուս մասը՝ իմպերատիվ օրենսդրական նորմերով արդեն իսկ ամրագրված դրույթների վերարտադրություն ենթադրող պայմաններ են, որոնք չեն համապատասխանում պայմանագրի էական պայման համարվելու չափանիշին: Ուստի, առաջարկվում է տարանջատել այս պայմանագրի՝ որպես գործարքի բովանդակությունը կազմող էական պայմանները, պայմանագրում՝ որպես փաստաթղթում պարտադիր ներառման ենթակա պայմաններից՝ միևնույն ժամանակ նախատեսելով պայմանագրում նշված երկու խումբ պայմաններից յուրաքանչյուրի բացակայության իրավական հետևանքը: Մասնավորապես, ըստ հեղինակի, երկրորդ խումբ պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում, առաջնորդվելով էստոպելի սկզբունքով, կողմը, որը լրիվ կամ մասնակի կատարել է պարտավորությունը կամ ընդունել է մյուս կողմից մաման կատարում, կամ այլ կերպ հաստատել է պայմանագրի գործողությունը, չի կարող պայմանագրի տեքստում ինքնին այդ պայմանների բացակայության հիմքով հղում անել պայմանագրի չկնքվածությանը:

Հիմնաբաներ՝ զբոսաշրջային փաթեթ, պայմանագրի բովանդակություն, էական պայմաններ, պարտադիր պայմաններ, պայմանագրի չկնքվածություն, էստոպելի սկզբունք, գործարք:

Ներածություն

Ինչպես հայտնի է, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը՝ պայմանագրի կնքվածությունը պայմանավորում է դրա էական պայմանների շուրջ կողմերի միջև համաձայնություն ձեռք բերելու հետ՝ միաժամանակ նախատեսելով, որ էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի (հոդված 448, մաս 1): Ձբոսաշրջային փաթեթի պայմանագրի համար անհրաժեշտ մման պայմանների շրջանակ է նախատեսել նաև «Ձբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքը (հոդված 23):

Այդ պայմանների ուսումնասիրությունը, սակայն, թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք իրենց բնույթով միատարր չեն. զբոսաշրջային փաթեթի պայմանագրի պարտադիր դրույթների շարքում կարելի է առանձնացնել նաև կողմերի միջև համաձայնեցում չենթադրող՝ տեղեկատվական բնույթի, ինչպես նաև իմպերատիվ օրենսդրական նորմերով

արդեն իսկ ամրագրված դրույթների վերարտադրություն ենթադրող պայմաններ, որոնք չեն համապատասխանում պայմանագրի էական պայման համարվելու չափանիշին: Մինչդեռ պայմանագրի կնքված լինելը և դրանից բխող իրավական հետևանքները որոշելու տեսանկյունից դրա էական պայմանների շրջանակն ունի առանցքային նշանակություն:

Այս առումով Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային օրենսդրությամբ ամրագրված՝ պայմանագրի պարտադիր պայմաններին առնչվող կարգավորումների վերլուծությունն ունի գործնական կարևոր նշանակություն, ինչն էլ պայմանավորվում է սույն հոդվածի շրջանակներում կատարված վերլուծության արդիականությունը: Կատարված վերլուծության գիտական նորույթն ակնհայտ է հատկապես այն փաստի հաշվառմամբ, որ հայրենական իրավագիտության մեջ ինչպես նախկին, այնպես էլ նոր զբոսաշրջային օրենսդրությամբ նախատեսված՝ զբոսաշրջային պայմանագրի կարգավորմանն ուղղված օրենսդրական նորմերը երբևէ քննարկման առարկա չեն դարձվել:

Հոդվածի 1-ին բաժնում քննարկվում են գործարքի էական պայմանների վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր նորմերը, 2-

www.artaradatumjournal.com

րոյ բաժնում՝ վերլուծության են ենթարկվում «Զրո- սաշրջության մասին» ՀՀ օրենքով ամրագրված՝ գրոսաշրջային փաթեթի պայմանագրի պարտա- դիր դրույթները, ներկայացվում այդ առնչությամբ իրավաբանական գրականության մեջ առկա տե- սակետներն ու դատական պրակտիկայում տրված մեկնաբանությունները:

Արդյունքում առաջարկվում է տարանջատել այս պայմանագրի՝ որպես գործարքի բովանդակու- թյունը կազմող էական պայմանները, պայմանագ- րում՝ որպես փաստաթղթում պարտադիր ներառ- ման ենթակա պայմաններից՝ միևնույն ժամանակ նախատեսելով պայմանագրում նշված երկու խումբ պայմաններից յուրաքանչյուրի բացակայու- թյան իրավական հետևանքը:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության մեթոդոլոգիական հիմքն են կազմել թե՛ ընդհանուր գիտական և թե՛ մասնավոր գիտական մեթոդները: Մասնավորապես, կիրառվել են ընդհանուր գիտական այնպիսի մեթոդներ, ինչ- պիսիք են ինդուկցիան, դեդուկցիան, անալիզը, սինթեզը, ինչպես նաև մասնավոր գիտական՝ իրա- վահամեմատական, ձևական իրավաբանական, իրավական մոդելավորման և այլ մեթոդներ: Հոդ- վածում արված եզրահանգումների համար հիմք են ծառայել գիտական գրականության մեջ և դատա- կան պրակտիկայում առկա տեսակետներն ու մեկ- նաբանությունները, ինչպես նաև օրենսդրական նորմերի համակարգային իրավահամեմատական վերլուծությունը:

Հետազոտության արդյունքներ և քննարկում.

1. Պայմանագրի էական պայմանները՝ ըստ քաղաքացիական օրենսդրության

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի² 436-րդ հոդ- վածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիր է հա- մարվում երկու կամ մի քանի անձանց համաձայ- նությունը, որն ուղղված է քաղաքացիական իրա- վունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն:

Պայմանագրի օրենսդրական հասկացություն- նից բխում է, որ օրենսդիրն այն բնորոշել է իրավա- հարաբերության առաջացման հիմք հանդիսացող իրավաբանական փաստի (գործարքի) իմաստով: Այս իմաստով պայմանագրի բովանդակություն ասելով քաղաքացիական իրավունքի գիտության մեջ ընդունված է հասկանալ կողմերի միջև համա- ձայնեցված պայմանների ամբողջություն, որոնք ամրագրում են կոնտրագենտների՝ պայմանագրա- յին պարտավորության բովանդակությունը կազմող իրավունքներն ու պարտականությունները⁴:

Պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն

է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայ- մանների վերաբերյալ (Քաղ. օր., հոդված 448, մաս 1): Այսպիսով, էական պայմանների շուրջ կողմերի համաձայնությունն անհրաժեշտ և բավարար է պայմանագիրը կնքված համարելու համար: Պայ- մանագրի էական պայմանների շրջանակը կախ- ված է կոնկրետ պայմանագրի առանձնահատկու- թյուններից:

Միևնույն ժամանակ, օրենսդիրը մատնանշել է կողմնորոշիչներ, որոնք թույլ են տալիս ուրվագծել էական պայմանների շրջանակը: Այսպես, Օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավա- կան ակտերում որպես էական նշված կամ տվյալ պայմանագրի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերա- բերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է ձեռք բերվի համաձայնություն:

Ինչպես կարելի է նկատել, Օրենսգրքը որպես էական պայմանների առանձին խումբ առանձնաց- րել է նրանք, որոնք որպես էական մատնանշված են օրենքում կամ այլ իրավական ակտերում: Օրենսգրքն իր հերթին մատնանշում է որոշ պայ- մանագրերի (օրինակ՝ բնակելի տարածությունների վաճառքի, բանկային ավանդի, գույքի հավատար- մագրային կառավարման և այլն) էական պայման- ները: Ընդ որում, երբեմն օրենսդիրը «ստիպում է» պայմանագրում պարտադիր նախատեսել այս կամ այն պայմանը՝ առանց այն ուղղակիորեն ան- վանելու էական պայման: Այսպես՝ Օրենսգրքի՝ «Գույքի հավատարմագրային կառավարման պայ- մանագրի էական պայմանները» վերտառությամբ 958-րդ հոդվածի բովանդակության մեջ օգտագործ- վում է «պայմանագրում պետք է նշվեն...» ձևակեր- պումը և ընդհակառակը՝ «Ապահովագրության պայմանագրի և վկայագրի պարտադիր պայման- ները» վերտառությամբ 998-րդ հոդվածի դիսպոզի- ցիայում կիրառվում են ինչպես «պայմանագրի էա- կան պայմաններ», այնպես էլ «պայմանագրում պետք է նշվեն...» ձևակերպումները, ընդ որում՝ պայմանների այս երկու խմբերը հստակ տարան- ջատված են:

Վերոգրյալից բխում է, որ Օրենսգրքում «պայ- մանագրի էական պայմաններ» և «պայմանագրի պարտադիր պայմաններ» եզրույթները մի դեպքում հարաբերակցվում են որպես մաս և ամբողջություն (հոդված 998), մյուս դեպքում՝ օգտագործվում որ- պես հոմանիշներ (հոդված 958): Ուստի, քաղաքա- ցիաիրավական յուրաքանչյուր պայմանագրի էա- կան պայմանների շրջանակը որոշելու տեսանկյու- նից վճռորոշ են պայմանագրի տվյալ տեսակի իրավական կարգավորմանն ուղղված նորմերը:

2. Զրոսաշրջային ծառայությունների մատու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ցումը կազմակերպելու պայմանագրի էական պայմանների դասակարգումը.

Ջրոսաշրջային ծառայությունների մատուցումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի կարգավորմանն ուղղված ընդհանուր նորմերից բացի հատուկ իրավական կարգավորման է ենթարկվել «Ջրոսաշրջության մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքն առանձին հոդված է նվիրել զբոսաշրջային փաթեթի պայմանագրի պարտադիր դրույթներին:

Այսպես, Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ զբոսաշրջային փաթեթի պայմանագիրը պարունակում է հետևյալ պարտադիր դրույթները՝

1) զբոսաշրջային գործունեության սուբյեկտի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը), գտնվելու վայրը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ հաշվառման հասցեն) և որպես ծանուցված գործունեություն հաշվառման համարը,

2) զբոսաշրջային փաթեթի նկարագրությունը և իրականացման ժամկետները,

3) զբոսաշրջային փաթեթում ներառված ծառայությունների նկարագրերը, ժամկետները, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների տեսակը, ժամանման երկրում կամ վայրում հյուրանոցային տնտեսության օբյեկտի գտնվելու վայրը, տեսակը, սննդի կազմակերպման պայմանները, տեսարժան վայրեր այցելության ծրագրերը, մշակութային և այլ միջոցառումները (առկայության դեպքում),

4) զբոսաշրջային փաթեթի գինը՝ բոլոր անհրաժեշտ վճարումների, հարկերի և տուրքերի մանրամասներով, գնի փոփոխման հանգեցնող հանգամանքների և այդ մասին սպառողին տեղեկացման ժամկետների ձևակերպմամբ,

5) վճարման կարգը, ժամկետներն ու պայմանները,

6) պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում կողմերի պատասխանատվությունը,

7) զբոսաշրջային ապահովագրության վերաբերյալ տվյալները (եթե առկա են),

8) անչափահասներին մատուցվող ծառայությունների դեպքում՝ երեխայի կամ պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները,

9) սպառողների իրավունքների, պարտականությունների վերաբերյալ տեղեկատվությունը,

10) մարդկանց ոչ բավարար քանակի պատճառով ճանապարհորդությունը չեղյալ հայտարարելու մասին հաճախորդին տեղեկացնելու ժամկետը, եթե պայմանագրով փաթեթի իրականացման համար սահմանված է անհրաժեշտ նվազագույն քանակով մարդկանց առկայություն,

11) անձնագրերի, ժամանման կամ տարանցիկ երկրների մուտքի և ելքի հետ կապված պահանջների ու ձևակերպումների (արտոնագրերի, սահմա-

նային անցման կամ մաքսային և այլ ձևակերպումների մասին) տեղեկատվություն,

12) ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով նախատեսված այլ տեղեկատվություն:

Օրենքում թվարկված պայմանների վերլուծությունը թույլ է տալիս դրանք դասակարգել որոշակի խմբերում: Այսպես, նշված պայմանների մի մասը, ինչպիսիք են՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի անվանումը, գտնվելու վայրը, որպես ծանուցման գործունեություն հաշվառման համարը, անչափահասներին մատուցվող ծառայությունների դեպքում՝ երեխայի կամ պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները, անձնագրերի, ժամանման կամ տարանցիկ երկրների մուտքի և ելքի հետ կապված պահանջների ու ձևակերպումների (արտոնագրերի, սահմանային անցման կամ մաքսային և այլ ձևակերպումների մասին), առկայության դեպքում՝ զբոսաշրջային ապահովագրության վերաբերյալ տեղեկատվությունը, մարդկանց ոչ բավարար քանակի պատճառով ճանապարհորդությունը չեղյալ հայտարարելու մասին հաճախորդին տեղեկացնելու ժամկետը, եթե պայմանագրով փաթեթի իրականացման համար սահմանված է անհրաժեշտ նվազագույն քանակով մարդկանց առկայությունը, կողմերի միջև համաձայնեցում չենթադրող և սոսկ տեղեկատվական բնույթի տվյալներ են:

Օրենքում թվարկված պայմանների շարքում որպես երկրորդ խումբ կարելի է առանձնացնել այն պայմանները, որոնց բովանդակությունը սահմանված է օրենսդրությամբ նախատեսված իմպերատիվ նորմերով: Այսպիսին է, մասնավորապես, նշված հոդվածի՝ սպառողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվությանը վերաբերող պայմանը: Եվ վերջապես, երրորդ խումբն են կազմում կողմերի միջև **պարտադիր համաձայնեցման ենթակա** այնպիսի պայմաններ, ինչպիսիք են, օրինակ՝ զբոսաշրջային փաթեթի նկարագրությունը և ժամկետները, զբոսաշրջային փաթեթի գինը և այլն:

Ջրոսաշրջային փաթեթի պայմանագրի՝ Օրենքով նախատեսված պայմանները համադրելով «Փաթեթային ճանապարհորդությունների և առնչվող ճանապարհորդական համաձայնությունների մասին» Եվրոպական խորհրդի և Խորհրդարանի 2015 թվականի նոյեմբերի 25-ի դիրեկտիվով՝ սահմանված՝ սպառողին տրամադրվող նախապայմանագրային տեղեկատվության շրջանակի (հոդված 5), պայմանագրի բովանդակությունը կազմող պայմանների (հոդված 7), ինչպես նաև Դիրեկտիվի 6-րդ հոդվածով նախատեսված այն պահանջի հետ, ըստ որի՝ նախապայմանագրային տեղեկությունները **պետք է կազմեն զբոսաշրջային փաթեթի պայմանագրի բաղկացուցիչ մաս՝** կարելի է նկա-

www.artadadutyjournal.com

տել, որ օրենսդիրը պայմանագրի պարտադիր պայմանները սահմանելիս հիմք է ընդունել հենց Դիրեկտիվի կարգավորումները:

Դ-ա, իր հերթին, թույլ է տալիս պնդել, որ օրենսդիրն այս պայմանագրի պարտադիր դրույթները սահմանելիս ելել է ոչ թե պայմանագրի՝ որպես գործարքի, այլ որպես պարտավորության ծագման փաստը հավաստող փաստաթղթի նշանակությունից, քանի որ Օրենքով նախատեսված պայմանների մի մասը կողմերի միջև համաձայնեցում չենթադրող և սուսկ տեղեկատվական բնույթի պայմաններ են: Մինչդեռ, կարծում ենք՝ այս կամ այն պայմանագրի էական պայմանների շրջանակը որոշելիս անհրաժեշտ է առաջնորդվել պայմանագրի՝ ոչ թե որպես փաստաթղթի, այլ գործարքի բովանդակության վերաբերյալ քաղաքացիական իրավունքի կանոններով:

Հարկ է նշել, որ զբոսաշրջային պայմանագրի էական պայմանների լայն շրջանակ նախատեսելը քննադատության է արժանացել նաև ռուսական իրավաբանական գրականության մեջ: Այսպես, մի շարք հեղինակներ, վերլուծելով ՌԴ զբոսաշրջային օրենսդրությամբ ամրագրված՝ զբոսաշրջային պայմանագրի էական պայմանների գրեթե նույնական շրջանակը, ընդգծում են օրինակ՝ պայմանագրի կողմերի վերաբերյալ տվյալների՝ սուսկ տեղեկատվական բնույթը, հետևաբար՝ պայմանագրի էական պայման լինելու անթույլատրելիությունը: Քննադատության է արժանացել նաև այն պայմանները որպես էական մատնանշելը, որոնց բովանդակությունը կանխորոշված է օրենսդրությամբ նախատեսված իմպերատիվ նորմերով: Չբոսաշրջային ոլորտն ուսումնասիրող հեղինակները մեծամասամբ համակարծիք են այն հարցում, որ որպես էական չպետք է ամրագրվեն այն պայմանները, որոնք արդեն իսկ իմպերատիվ կերպով նախատեսված են որևէ իրավական ակտով, այլ կերպ ասած՝ իմպերատիվ նորմերը դուրս են էական պայմանագրային պայմանների շրջանակից:

Այս հարցն ուշադրության է արժանացել նաև տարբեր ցիվիլիստների կողմից: Այսպես, օրինակ՝ Օ. Իոֆֆեն եզրակացրել է, որ նման պայմաններն էական համարելը, հավանաբար պայմանավորված է նրանով, որ դրանք, սահմանված լինելով իմպերատիվ օրենսդրական նորմերով, պարտադիր են, հետևաբար՝ անհրաժեշտ տվյալ պայմանագրի համար: Սակայն հեղինակն իրավագիտորեն շեշտում է, որ էական պայմաններին բնորոշ է ևս մեկ առանձնահատկություն, ինչպիսին է կողմերի միջև դրանք համաձայնեցնելը (ընդգծում է մերն է) և դա պայմանագրում արտահայտելը¹⁵: Մինչդեռ, իմպերատիվ կամ դիսպոզիտիվ նորմերում (եթե կողմերն այլ բան չեն նախատեսել) բովանդակող պայմանները գործում են ինքնըստիմքյան՝ պայմանագիր կնքելու փաստի ուժով: Հետևաբար, դրանք անհրա-

ժեշտ է դասել պայմանագրի սովորական պայմանների թվին¹⁴: Ակնհայտ է, որ օրենսդիրը չէր կարող նկատի ունենալ, որ օրինակ՝ որևէ պայմանագրում կողմերի պատասխանատվության, կողմերի իրավունքների և պարտականությունների և նմանատիպ պայմանների վերաբերյալ դրույթների բացակայության դեպքում այն պետք է համարել չկնքված, քանի որ նման իրավիճակում միակ տուժող կլինի սպառողը:

Թեև որոշ հեղինակներ, փորձելով «արդարացնել» օրենսդրի որդեգրած մոտեցումը, նշում են, որ զբոսաշրջային օրենքում թվարկված բոլոր պայմաններն էական համարելն ուղղված է պայմանագրի թույլ կողմի՝ զբոսաշրջիկի կամ այլ պատվիրատուի իրավունքների պաշտպանությանը¹⁶, ուստի զբոսաշրջիկների տեղեկացվածությունն ապահովելու նպատակով այդ պայմանները ևս պետք է նախատեսվեն պայմանագրում¹⁷, այնուամենայնիվ, գերակշռող է այն տեսակետը, որը կասկածի տակ է դնում Օրենքով այս պայմանագրի էական պայմանների այդչափ լայն շրջանակ ամրագրելու անհրաժեշտությունը: Ընդ որում՝ որոշ հեղինակներ մատնանշում են նաև զբոսաշրջային պայմանագրի էական պայմաններն անհարկի ընդլայնելու հետ կապված ռիսկերը: Մասնավորապես՝ Ս. Չավյալվալի կարծիքով պայմանագրի էական պայմաններն ընդլայնելն զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին հնարավորություն է տալիս խուսափելու պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվությունից՝ պայմանագրում դիտավորությամբ որոշ էական պայմաններ չնախատեսելով և արդյունքում՝ պայմանագրի չկնքվածությանը հղում անելով¹⁸: Նույն կարծիքին են նաև Ն. Սիրիկը և Ա. Կուսկովը, ովքեր նշում են, որ պայմանագիրը չկնքված ճանաչելու պահանջով հաճախ հանդես է գալիս պայմանագրի անբարեխիղճ կողմը, ուստի պայմանագրի էական պայմանների ցանկացած չիմնավորված ընդլայնում վատթարացնում է իր պայմանագրային պարտավորությունները բարեխղճորեն կատարող կողմի դրությունը և չի նպաստում պայմանագրային հարաբերությունների կայունությանը¹⁹: Ա. Կարապետովը, ոչ կառուցողական բնորոշելով հնարավորինս շատ դեպքերում պայմանագրերը չկնքված ճանաչելու՝ դատական պրակտիկայում առկա միտումը, որպես դրան նպաստող հիմնական գործոններից մեկը մատնանշում է օրենքով պայմանագրի էական պայմանների շրջանակն ընդարձակելը: Հեղինակի պնդմամբ դատարանները պայմանագրերը չկնքված են ճանաչում պայմանագիր-փաստաթղթում այս կամ այն պայմանի բացակայության դեպքում՝ խորամուխ չլինելով կողմերի համագործակցության մասին վկայող հանգամանքների առավել լայն սպեկտրի մեջ, որը հաճախ կարող է վկայել

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կոնկլյուզենտ համաձայնության կամ կողմերի միջև նախկինում տեղի ունեցած քանավոր համաձայնության հավաստման մասին²⁰ :

Այս կապակցությամբ խորհրդային և հետխորհրդային իրավական մտքի և ռուսական դատական պրակտիկայի զարգացումը բերեց նրան, որ ՌԴ քաղաքացիական օրենսգրքում 2015 թվականին ամրագրվեց ուշագրավ կարգավորում առ այն, որ կողմը, որը պայմանագրի մյուս կողմից ընդունել է պայմանագրի լրիվ կամ մասնակի կատարում կամ այլ կերպ հաստատել է դրա գործողությունը, չի կարող պահանջել չկնքված ճանաչել այն, եթե դա կոնկրետ հանգամանքների համատեքստում կհակասի բարեխղճության սկզբունքին (ՌԴ քաղաքացիական օրենսգրքի, հոդված 432-րդ, մաս 3-րդ²¹):

Մասնագիտական հանրույթի մեկնաբանմամբ այս դրույթը նախևառաջ վերաբերում է հենց պայմանագրում էական պայմանների բացակայության դեպքին: Եթե պայմանագրում համաձայնեցված չեն որոշ էական պայմաններ, սակայն արդյունքում կողմերից մեկը հաստատում է պայմանագրի գործողությունը պարտավորության կատարումն ընդունելով, իր բաժին պարտավորությունը կատարելով կամ պայմանագրի գոյության մասին վկայող այլ գործողություններ կատարելով, ապա այդ կողմի փորձերը հետագայում հղում կատարելու պայմանագրի չկնքվածությանը կարող է որակվել որպես անբարեխղճություն, որը խախտում է նրա կոնտրագենտի լեզիտիմ ակնկալիքները²²: Կողմի անբարեխղճությունն արտահայտվում է նրանում, որ չնայած գործարքի նկատմամբ նախորդած դրական վարքագծին, անձը հետագայում, երբ իրեն ձեռնառու է, հղում է կատարում պայմանագրի չկնքվածությանը՝ այդպիսով հակադրվելով իր իսկ վարքագծին (contra factum proprium venit)²³:

Կարծում ենք՝ պայմանագրային հարաբերություններում բարեխղճության սկզբունքի դրսևորում հանդիսացող այս նորմի գոյությունն արդարացված է, որը, ըստ էության, փարատում է նաև պայմանագրի չկնքվածությունը վկայակոչելու՝ ինչպես զբոսաշրջային գործունեության սուբյեկտի, այնպես էլ սպառողի իրավունքը չարաշահելու վերաբերյալ իրավաբանական գրականություն մեջ առկա մտավախությունը:

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով պայմանագրի պարտադիր դրույթների վերաբերյալ Օրենքի կարգավորումներին՝ կարծում ենք, որ այս պայմանագրի էական պայմանների նախատեսված շրջանակի կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ հնչեցված քննադատությունները միանգամայն տեղին են և վերաբերելի նաև հայրենական օրենսդրական կարգավորումներին:

Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ

հոդվածի բովանդակությունից առերևույթ կարող է տպավորություն ստեղծվել, որ օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար որպես անհրաժեշտ (պարտադիր) պայման մատնանշված ցանկացած պայման ինքնըստինքյան կարող է համարվել էական՝ դրանից բխող իրավական հետևանքներով, սակայն կարծում ենք՝ նման մեկնաբանությունը չի բխում էական պայմանի՝ որպես գործարքի պայմանի էությունից, և հետևանք է պայմանագրի էական (essentialia negotii) և պարտադիր (mandatory) պայմանների նույնացման, մինչդեռ եվրոպական պայմանագրային իրավունքում դրանք տարբեր իրավական կատեգորիաներ են²⁴:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի տրամաբանությունից նույնպես բխում է, որ պայմանագրի՝ որպես գործարքի պայմանները ենթադրում են դրանց բովանդակության առնչությամբ կողմերի միջև համաձայնության ձեռքբերում, իսկ այդ պայմաններից էական կարող են համարվել միայն նրանք, որոնց կապակցությամբ կողմերի համաձայնությունն անհրաժեշտ և բավարար է պայմանագիրը կնքված համարելու համար: Մինչդեռ պայմանագրի պարտադիր պայմանները այս կամ այն իրավական ակտում իմպերատիվ ձևով նախատեսված պայմաններ են, որոնք կողմերի համար պարտադիր են՝ անկախ նրանից, թե վերջիններս համաձայնեցրել են դրանք, թե՛ ոչ: Այլ խոսքով՝ այս երկու խումբ պայմանների տարանջատման հիմնական չափանիշը կողմերի միջև համաձայնեցման ենթակա լինելու կամ չլինելու հանգամանքն է:

Ավելորդ չէ նշել, որ գործարքի էական պայմանների նման մեկնաբանությունը համահունչ է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշմանը: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը գործերից մեկի շրջանակներում արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական գործարքի կնքման իրավաբանական փաստը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածում ամրագրված իրավունքի սուբյեկտի գործողություններով պայմանավորված քաղաքացիական իրավական հետևանքներ առաջ բերելուն ուղղված կամքի արտահայտումն է, որը կարող է դրսևորվել նույն օրենսգրքի 294-րդ հոդվածում ամրագրված ձևերով: Ընդ որում, եթե գործարքի կողմերը երկու և ավելի սուբյեկտներ են, ապա այդ կամքը պետք է ձևավորված լինի որպես պայմանադիր կողմերի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ գլխում սահմանված գործողություններով ձեռք բերված ընդհանուր համաձայնության արդյունք: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առա-

www.artadaradutyjournal.com

ջարկը) ուղարկելու և մյուս կողմի՝ դրա ակցեպտի (առաջարկն ընդունելու) միջոցով: Ընդ որում, օֆերտան, հանդես գալով որպես մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկ, որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը՝ համաձայնության դեպքում պայմանագիր կնքել առաջարկությունում շարադրված էական պայմանների շուրջ: Միաժամանակ, իր հերթին ակցեպտը՝ որպես առաջարկն ընդունելու մասին օֆերենտին ուղղված պատասխան, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 454-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետք է լինի լրիվ և անվերապահ: Նշված ընթացակարգի պահպանման արդյունքում միայն հնարավոր է ձեռք բերել պայմանագրի կողմերի միասնական կամքն արտահայտող համաձայնություն: Այսինքն՝ համաձայնությունը չի կարող ձեռք բերվել այլ կերպ, քան օֆերտա-ակցեպտ ձևի պահպանմամբ:

Անփոփելով, ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ գործարքի կնքումը հաստատող ընդհանրական կամքի արտաբերման ձևի պահանջն օրենքով նախատեսված դեպքերում ենթակա է որակման որպես գործարքի վավերության պայման, իսկ կողմերի միջև պայմանագրի կնքման համար անհրաժեշտ համաձայնության ձեռքբերմանն ուղղված օֆերտա-ակցեպտ ընթացակարգի ձևը՝ որպես պայմանագրային միասնական կամքի ձևավորմանն ուղղված կողմերից յուրաքանչյուրի անհատական գործողությունների ամբողջություն²⁵: Ինչպես կարելի է նկատել, Վճարելի դատարանը նույնպես ելնում է այն կանխավարկածից, որ էական պայմանները ենթադրում են պայմանագրի կողմերի միջև համաձայնեցում:

Ճնշող սենձամասնությամբ որպես էական օրենքը նախատեսում է այն պայմանները, որոնք այս կամ այն կողմից բնութագրում են պայմանագրի առարկան, և նույնիսկ նման հատուկ օրենսդրական նորմերի բացակայության դեպքում էլ այդ պայմանները հնարավոր կլինեն դասել էականների թվին²⁶: Ինչպես իրավագիտորեն նշվում է իրավաբանական գրականության մեջ, պայմանագրի էական պայմանների շրջանակը բխում է կոնկրետ պայմանագրի բնույթից և չպետք է և չի կարող կամայականորեն սահմանվել իրավական ակտով²⁷:

Էական պայմաններն ընդգծում են պայմանագրի գոյության իրավաչափությունն այն պարզ պատճառով, որ այն կարող է կնքված համարվել և իրավական ուժ ունենալ միայն երբ կողմերը իրենց փոխհամաձայնեցված կամարտահայտությունն են դրսևորել այդ պայմանների շուրջ, ինչի բացակայությունն առարկայագուրկ կդարձնի կողմերի միջև պայմանագրային հարաբերությունների գոյությունը: Մինչդեռ պայմանագրի պարտադիր պայմաններն առավելապես ուղղված են հանրային կարգի և պայմանագրի թույլ կողմի, որպես կանոն՝

սպառողների շահերի պաշտպանությանը: Այսինքն՝ եթե պայմանագրի էական պայմանները պայմանագրի՝ որպես գործարքի գոյության իրավական նախադրյալն են, ապա պարտադիր պայմաններն ունեն այլ նպատակային ուղղվածություն: Ընդամեն, Օրենքով որպես սպառողի հետ կնքվող պայմանագրի պարտադիր դրույթներ մատնանշված մի շարք պայմաններ չեն համապատասխանում էական պայման որակվելու չափանիշին:

Միևնույն ժամանակ այս համատեքստում հարց է ծագում՝ որն է զբոսաշրջային պայմանագրի էական և պարտադիր պայմանների տարանջատման նպատակը: Մեր կարծիքով տեղեկատվական բնույթի կամ պայմանագրում իմպերատիվ նորմերով ամրագրված կարգավորումների մեխանիկական վերարտադրություն ենթադրող այդ պայմանները պայմանագրի իրապես էական պայմաններից տարբերակելն ինքնանպատակ չէ, այլ ունի գործնական նշանակություն²⁸: Մեր համոզմամբ պայմանագրում օրինակ՝ սպառողին մատուցվող որևէ զբոսաշրջային ծառայության նկարագրի առնչությամբ կողմերի միջև համաձայնեցված պայմանի բացակայությունը՝ մի կողմից և զբոսաշրջային գործունեության սուբյեկտի անվանման կամ գտնվելու վայրի կամ սպառողի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իմպերատիվ օրենսդրական նորմերով արդեն իսկ ամրագրված կարգավորումների բացակայությունը՝ մյուս կողմից, չեն կարող նույնացվել: Ուստի պայմանագրում վերջին խումբ դրույթների բացակայության իրավական գնահատականը, ըստ մեզ, չպետք է տրվի այն նույն չափանիշներով, որոնք կիրառվում են կողմերի միջև համաձայնեցման ենթակա էական պայմանների բացակայության պարագայում:

Իհարկե, պայմանագրի կողմ հանդիսացող զբոսաշրջային գործունեության սուբյեկտի անվանման, գտնվելու վայրի կամ անձնագրերի, ժամանման կամ տարանցիկ երկրների մուտքի և ելքի հետ կապված պահանջների ու ձևակերպումների մասին կամ սպառողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվությունը սպառողի՝ տեղեկացված լինելու իրավունքի ապահովման տեսանկյունից ունի կարևոր նշանակություն, բայցևայնպես, կարծում ենք՝ պայմանագրի տեքստում այդ տվյալների ձևական առումով բացակայությունը, եթե դա չի առաջացրել կոնկրետ հետևանք, չի կարող դիտարկվել կողմերի միջև պարտադիր համաձայնեցման ենթակա պայմանների բացակայության հետ միևնույն հարթության մեջ:

Պայմանագրում այս խումբ դրույթների բացակայության յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, մեր կարծիքով, անհրաժեշտ է գնահատման առարկա դարձնել պայմանագրի կատարման վրա այդ պայ-

մանների բացակայության ազդեցությունը:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք սահմանել զբոսաշրջային փաթեթի պայմանագրի պարտադիր պայմանների երկաստիճան դասակարգում՝

1. պայմանագրի էական պայմաններ, որոնք ենթադրում են կողմերի միջև համաձայնեցում և պայմանագրի կնքվածության իրավական հստակ նախապայման են և

2. տեղեկատվական բնույթի պարտադիր դրույթներ, որոնք պայմանագրում ներառվում են սպառողի տեղեկացված լինելու իրավունքն ապահովելու նպատակով:

Մեր կարծիքով նշված առաջին խումբ պայմաններն են՝ սպառողին մատուցվող ծառայությունը և դրա նկարագիրը, այդ թվում՝ զբոսաշրջային փաթեթում կամ տուրում ներառված կամ առանձին զբոսաշրջային ծառայությունների նկարագիրը, մասնավորապես՝ տրանսպորտային միջոցների տեսակը, ժամանման երկրում կամ վայրում հյուրանոցային տնտեսության օբյեկտի գտնվելու վայրը, տեսակը, սննդի կազմակերպման պայմանները, տեսարժան վայրեր այցելության ծրագրերը, մշակութային և այլ միջոցառումներ (առկայության դեպքում), զբոսաշրջային փաթեթում կամ տուրում ներառված կամ առանձին զբոսաշրջային ծառայությունների մատուցման ժամկետները, պայմանագրի գինը՝ բոլոր անհրաժեշտ վճարումների, հարկերի և տուրքերի մանրամասներով, գնի փոփոխման հանգեցնող հանգամանքների և այդ մասին սպառողին տեղեկացման ժամկետների ձևակերպմամբ, վճարման կարգը, ժամկետներն ու պայմանները, պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում կողմերի պատասխանատվությունը, ինչպես նաև կողմ(եր)ի հայտարարությամբ՝ համաձայնեցման ենթակա այլ պայմաններ:

Չբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելու ծառայության մատուցման պայմանագրում՝ որպես փաստաթղթում պարտադիր պետք է նշվեն նաև զբոսաշրջային գործունեության սուբյեկտի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը), գտնվելու վայրը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ հաշվառման հասցեն), հեռախոսահամարը, բանկային հաշվեհամարը, պետական գրանցման (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ հաշվառման) և, որպես ծանուցված գործունեություն, հաշվառման համարը, զբոսաշրջային ապահովագրության վերաբերյալ տվյալները (եթե առկա են), անչափահասներին մատուցվող ծառայությունների դեպքում՝ երեխայի կամ պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները, սպառողների իրավունքների, պարտականությունների վերաբերյալ

տեղեկատվություն, մարդկանց ոչ բավարար քանակի պատճառով փաթեթը չեղյալ հայտարարելու մասին հաճախորդին տեղեկացնելու ժամկետը, եթե պայմանագրով փաթեթի իրականացման համար սահմանված է անհրաժեշտ նվազագույն քանակով մարդկանց առկայություն, անձնագրերի, ժամանման կամ տարանցիկ երկրների մուտքի և ելքի հետ կապված պահանջների ու ձևակերպումների (արտոնագրերի, սահմանային անցման, մաքսային և այլ ձևակերպումների) մասին տեղեկություն, պատվիրատուի կողմից վճարված գումարը զբոսաշրջային ծառայություններ մատուցողներին փոխանցելու՝ նախատեսված ժամկետի մասին տեղեկատվություն, սպառողի կողմից պայմանագրից հրաժարվելու դեպքում զբոսաշրջային ծառայություններ մատուցողների կողմից վաղաժամկետ լուծման վճար սահմանված լինելու և ըստ հրաժարվելու ժամկետների՝ վերադարձման ոչ ենթակա գումարի չափի մասին տեղեկություն:

Միաժամանակ, կարծում ենք՝ անհրաժեշտ է օրենսդրորեն տարանջատել նշված երկու խմբերից յուրաքանչյուրում ընդգրկված պայմանների բացակայության իրավական հետևանքը. եթե առաջին խումբ պայմանների վերաբերյալ կողմերի միջև համաձայնության (որն արտահայտվում է պայմանագրում այդ համաձայնությունն արտացոլող դրույթների հստակ ամրագրմամբ) բացակայությունը պայմանագիրը չկնքված ճանաչելու հիմք է, ապա երկրորդ խումբ պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում, առաջնորդվելով էստոպելի՝ սկզբունքով, կողմը, որը լրիվ կամ մասնակի կատարել է պարտավորությունը կամ ընդունել է մյուս կողմից նման կատարում, կամ այլ կերպ հաստատել է պայմանագրի գործողությունը, չի կարող պայմանագրի տեքստում այդ պայմանների սուկ բացակայության հիմքով հղում անել պայմանագրի չկնքվածությանը:

Ավելին, կարծում ենք՝ վերջին դեպքում սպառողների շահերն արդյունավետորեն հնարավոր է պաշտպանել պայմանագիրը չկնքված ճանաչելու փոխարեն այլ այլընտրանքային եղանակներով, ինչպես օրինակ՝ սպառողին անհրաժեշտ տեղեկատվությունը չտրամադրելու հետևանքով պատճառված վնասը հատուցելով:

¹ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ մտել՝ 01.01.1999 թ., ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50); այսուհետ նաև՝ Օրենսգիրք, ՀՀ քաղ. օր.:

² Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ մտել՝ 01.01.1999 թ., ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50); այսուհետ նաև՝ Օրենսգիրք, ՀՀ քաղ. օր.:

³ Մի շարք ականավոր հեղինակներ, ինչպիսիք են՝ Օ. Իոֆֆեն, Մ. Բրազինսկին, Ն. Կլեյնը և այլք, առանձնացնում են պայմանագիրե հասկացության երեք նշանակություն և պայմանագրի բովանդակությունը պայմանավորում են նրա այդ տարանջատմամբ: Մասնավորապես, ըստ այս հեղինակների՝ «պայմանագիր» ասելով կարելի է հասկանալ՝ իրավաբանական փաստ (գործարք), պարտավորական իրավահարաբերություն և պարտավորության (կողմերի իրավունքների և պարտականությունների) ծագման փաստը հավաստող փաստաթուղթ: Այս մասին տե՛ս Завьялова С., Проблемы гражданско-правового регулирования туристской деятельности в Российской Федерации, Монография, М., Проспект 2016, էջ 29:

⁴ Տե՛ս, Гражданское право в 4-х томах, под ред. Е. Суханова, Том 3, 3-е изд. М., Вольтерс Клувер, 2008 էջ 95, Гражданское право, Учебник, под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого, Том 1, М., Проспект, 2005, էջ 588; Савченко Е.Я., Содержание гражданско-правового договора//Вестник Уральского института экономики, управления и права, N 3, 2015, էջ 49:

⁵ Տե՛ս, Савченко Е.Я., նշված աշխատ., էջ 49:

⁶ Տե՛ս, Гражданское право в 4-х томах, под ред. Е. Суханова, Том 3, 3-е изд. М., Вольтерс Клувер, 2008 էջ 95:

⁷ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-4-Ն, ընդունվել է 22.12.2023թ, ուժի մեջ է մտնելով՝ 01.09.2024թ., սկզբնաղբյուրը՝ միասնական կայք 2024.01.9-2024.01.21, այսուհետ նաև՝ Օրենք:

⁸ Օրենսդիրը, առաջնորդվելով ԵՄ զբոսաշրջային օրենսդրության եզրութաբանությամբ, այս պայմանագիրն անվանել է զբոսաշրջային փաթեթի պայմանագիր, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված՝ ծառայության մատուցման պայմանագրի տարատեսակ է:

⁹ Բանի որ այս պայմանը վերաբերում է խմբային տուրերին կամ զբոսաշրջային փաթեթներին, որոնց շրջանակներում զբոսաշրջային գործունեության սուբյեկտները վաղորդք հաշվարկում են դրանց մասնակիցների հնարավոր առավելագույն քանակը և որոշում նաև նախատեսված քանակը չապահովվելու դեպքում այդ մասին սպառողներին տեղեկացնելու ժամկետը, ուստի այս պայմանը նույնպես համաձայնեցման ոչ ենթակա տեղեկատվական բնույթի պայման է:

¹⁰ Directive (EU) 2015/2302 of the European Parliament and of the Council of 25 November 2015 “On package travel and linked travel arrangements”, amending Regulation (EC) No 2006/2004 and Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council and repealing Council Directive 90/314/EEC, (այսուհետ նաև՝ Դիրեկտիվ կամ ԵՄ դիրեկտիվ): Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է իր օրենսդրությունը նշված դիրեկտիվին մոտարկելու հանձնառություն:

¹¹ Տե՛ս, Кусков А., Сирик Н., Правовое регулирование туристской деятельности, М., 2018, էջ 127, Свиридов К., Правовое регулирование деятельности по оказанию туристских услуг, Дисс., Санкт-Петербург, 2003, էջ 51; Завьялова С., Проблемы гражданско-правового регулирования туристской деятельности в Российской Федерации, Монография, М., Проспект, 2016, էջ 32-33:

¹² Տե՛ս, Кусков А., Сирик Н., նշված աշխատ., էջ 129; Завьялова С., նշված աշխատ., նույն տեղում:

¹³ Տե՛ս, Иоффе О., Обязательственное право, Москва, 1975, Юридическая литература, էջ 31:

¹⁴ Տե՛ս, Гражданское право, Учебник, под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого, Том 1, М., Проспект, 2005, էջ 591, Савченко Е.Я., նշված աշխատ., էջ 53:

¹⁵ Տե՛ս, Карапетов А., Существенные условия договора: комментарий к новой редакции статье 432 ГК РФ, https://zakon.ru/blog/2015/11/9/sushhestvennye_usloviya_dogovora_kommentarij_k_novoj_redakcii_st432_gk_rf:

¹⁶ Տե՛ս, Завьялова С., նշված աշխատ., էջ 32:

¹⁷ Տե՛ս, Сирик Н. В., Кусков А. С., Правовое регулирование туристской деятельности, М., 2018, էջ 127:

¹⁸ Տե՛ս, Завьялова С. նշված աշխատ., էջ 35:

¹⁹ Տե՛ս, Кусков А., Сирик Н., նշված աշխատ., էջ 128:

²⁰ Տե՛ս, Договорное право, Общая часть, Постатейный комментарий к статьям 420-453 Гражданского кодекса Российской Федерации, под ред. А. Карапетова, Второе изд, М. Логос 2020, էջ 674:

²¹ Гражданский кодекс Российской Федерации, Ч. 1, N 51-ФЗ, принят Государственной Думой, 21 октября 1994 года, вступление в силу 1 января 1995 года, Ч. 2, N 14-ФЗ, принят Государственной думой, 22 декабря 1995 года, вступление в силу 1 марта 1996 года, Ч. 3, N 146-ФЗ, принят Государственной Думой, 1 ноября 2001 года вступление в силу 1 марта 2002 года, Ч. 4, N 230-ФЗ, принят Государственной Думой, 24 ноября 2006 года, вступление в силу 1 января 2008 года, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/:

²² Տե՛ս, Карапетов А., Существенные условия договора: комментарий к новой редакции статье 432 ГК РФ, https://zakon.ru/blog/2015/11/09/sushhestvennye_usloviya_dogovora_kommentarij_k_novoj_redakcii_st432_gk_rf 12.06.2025 թ. դրությամբ:

²³ Տե՛ս, Сделки, представительство, исковая давность, Постатейный комментарий к Гражданскому кодексу РФ, под

ред. А. Карапетова, М., Логос, 2018, էջ 407:

²⁴ Օրինակ՝ Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքում պայմանագրի էական (essentialia negotii) և պարտադիր (zwingendes Recht) պայմանների տարանջատումը հստակ երևում է ինչպես ընդհանուր պայմանագրային իրավունքին, այնպես էլ պայմանագրերի առանձին տեսակներին վերաբերող հոդվածներում (հոդվածներ 433, 535, 488, 138, 305, 309 և այլն): Նույնը կարելի է ասել Իտալիայի քաղաքացիական օրենսգրքի մասին (տե՛ս օրինակ՝ 1325, 1470, 1571, 1341 հոդվածները):

²⁵ Տե՛ս, Գ. Ընդ չ Պարտերսե ՍՊԸ-ն ընդդեմ չէ դատական դեպարտամենտե ՊԿՀ-ի թիվ ԵԿԴ/1867/02/14 քաղաքացիական գործով չէ վճարել դատարանի 24.12.2020 թվականի որոշումը:

²⁶ Տե՛ս, Договорное право, Общая часть, Постатейный комментарий к статьям 420-453 Гражданского кодекса Российской Федерации, под ред. А. Карапетова, Второе изд, М. Логос 2020 էջ 666:

²⁷ Տե՛ս, <https://gkodeksrf.ru/ch-1/rzd-3/podrzd-2/gl-28/st-432-gk-rf>, 12.06.2025 թ. դրությամբ:

²⁸ Պայմանագրի չկնքվածության և անվավերության ինստիտուտների տարանջատման, այդ թվում՝ դրանց առաջացրած իրավական հետևանքների տարբերության հարցը քաղաքացիական իրավունքի գիտության վիճելի հարցերից է: Որոշ հեղինակներ (Ն., Ռաբինովիչ, Մ. Բրազինսկի, Վ. Վիտրյանսկի, Բ. Վազարյան, Ս. Զինչենկո) գտնում են, որ այս ինստիտուտները չեն նույնանում. դրանց հիմնական տարբերությունն այն է, որ չկնքված պայմանագիրը որևէ իրավական հետևանք չի առաջացնում, իսկ գործարքի անվավերության հետևանքը, որպես կանոն, ռեստիտուցիան է: Հետևաբար, ըստ այս հեղինակների՝ չկնքվածության դեպքում կողմերը կարող են արդեն պայմանագրով կատարվածը հետ ստանալ անհիմն հարստացման, վիճակագիտն հայցերի կամ քաղաքացիական պատասխանատվության ընդհանուր դրույթների հիման վրա: Այս տեսակետն է արտահայտել նաև Ռ.Գ. Բարձրագույն արբիտրաժային դատարանը: Միևնույն ժամանակ հեղինակների մյուս խումբը (Ժ. Դե Մորանդեր, Գ. Մեյեր, Ա. Կարապետով) գտնում է, որ այս ինստիտուտների տարանջատումն ունի զուտ տեսական նշանակություն, և առաջացրած հետևանքների տեսանկյունից երկուսն էլ նույն են (տե՛ս https://zakon.ru/blog/2019/08/04/priznanie_sdelki_nezaklyuchennoj_kak_samostoyatelnyj_sposob_zaschity_subektivno-go_prava):

²⁹ Էստոպելի սկզբունքի մասին տե՛ս Liu Guoqing, A Comparative Study Of The Doctrine Of Estoppel: A Civilian Contractarian Approach in China, Canberra Law Review Journal, Vol. 2010, No. 1, 2010:

Օգտագործված իրավական աղբյուրների, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկ

1. «Զբոսաշրջության մասին» չէ օրենք, չՕ-4-Ն, ընդունվել է 22.12.2023թ, ուժի մեջ է մտնելու՝ 01.09.2024թ., սկզբնադրյուրը՝ միասնական կայք 2024.01.9-2024.01.21:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, չՕ-239, ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ մտել՝ 01.01.1999 թ., չՀՊՏ 1998.08.10/17(50):
3. Гражданский кодекс Российской Федерации, Ч. 1, N 51-ФЗ, принят Государственной Думой, 21 октября 1994 года, вступление в силу 1 января 1995 года, Ч. 2, N 14-ФЗ, принят Государственной думой, 22 декабря 1995 года, вступление в силу 1 марта 1996 года, Ч. 3, N 146-ФЗ, принят Государственной Думой, 1 ноября 2001 года вступление в силу 1 марта 2002 года, Ч. 4, N 230-ФЗ, принят Государственной Думой, 24 ноября 2006 года, вступление в силу 1 января 2008 года, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/.
4. German civil code, in the version promulgated on 2 January 2002 (Federal Law Gazette [Bundesgesetzblatt] I page 42, 2909; 2003 I page 738), last amended by Article 1 of the Act of 10 August 2021 (Federal Law Gazette I p. 3515). https://www.gesetze-im-internet.de/englisch_bgb
5. Italian civil code, enacted by Royal decree no. 262 of 16 March 1942.
6. Liu Guoqing, A Comparative Study Of The Doctrine Of Estoppel: A Civilian Contractarian Approach in China, Canberra Law Review Journal, Vol. 2010, No. 1, 2010, <http://worldlii.austlii.edu.au/au/journals/CanLawRw/2010/5.pdf>
7. Гражданское право в 4-х томах, под ред. Е. Суханова, Том 3, 3-е изд. М., Вольтерс Клувер, 2008
8. Гражданское право, Учебник, под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого, Том 1, М., Проспект, 2005
9. Договорное право, Общая часть, Постатейный комментарий к статьям 420-453 Гражданского кодекса Российской Федерации, под ред. А. Карапетова, Второе изд, М. Логос 2020
10. Завьялова С., Проблемы гражданско-правового регулирования туристской деятельности в Российской Федерации, Монография, М., Проспект 2016
11. Иоффе О., Обязательственное право, Москва, 1975, Юридическая литература
12. Карапетов А., Существенные условия договора: комментарий к новой редакции статьи 432 ГК РФ, https://zakon.ru/blog/2015/11/9/sushhestvennye_usloviya_dogovora_kommentarij_k_novoj_redakcii_st432_gk_rf
13. Кусков А., Сирик Н., Правовое регулирование туристской деятельности, М., 2018
14. Савченко Е.Я., Содержание гражданско-правового договора//Вестник Уральского института экономики, управления и права, N 3, 2015
15. Свиридов К., Правовое регулирование деятельности по оказанию туристских услуг, Дисс, Санкт-Петербург, 2003
16. Сделки, представительство, исковая давность, Постатейный комментарий к Гражданскому кодексу РФ, под ред. А. Карапетова, М., Логос, 2018.

17. Տե՛ս քիվ ԵԿԴ/1867/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռարեկ դատարանի 24.12.2020 թվականի որոշումը:

References

1. “Law on tourism” of RA, adopted on 22.12.2023, entered into force on 01.09.2024).
2. The Civil Code of the Republic of Armenia, LA-239 (adopted on 05.05.1998, entered into force on 01.01.1999, Official Gazette of the Republic of Armenia 1998.08.10/17(50)).
3. The Civil Code of the Russian Federation, Part 1, No. 51-FZ, adopted by the State Duma on October 21, 1994, entered into force on January 1, 1995
4. German civil code, in the version promulgated on 2 January 2002 (Federal Law Gazette [Bundesgesetzblatt] I page 42, 2909; 2003 I page 738), last amended by Article 1 of the Act of 10 August 2021 (Federal Law Gazette I p. 3515). https://www.gesetze-im-internet.de/englisch_bgb
5. Italian civil code, enacted by Royal decree no. 262 of 16 March 1942.
6. Liu Guoqing, A Comparative Study Of The Doctrine Of Estoppel: A Civilian Contractarian Approach in China, Canberra Law Review Journal, Vol. 2010, No. 1,
7. Civil Law in 4 Volumes, edited by E. Sukhanov, Volume 3, 3rd edition, Moscow, Wolters Kluwer, 2008
8. Civil Law, Textbook, edited by A. P. Sergeev and Yu. K. Tolstoy, Volume 1, Moscow, Prospekt, 2005.
9. Contract Law, General Part, Article-by-Article Commentary on Articles 420–453 of the Civil Code of the Russian Federation, edited by A. Karapetov, 2nd edition, Moscow, Logos, 2020.
10. Zavyalova S., Problems of Civil Law Regulation of Tourism Activities in the Russian Federation, Monograph, Moscow, Prospekt, 2016.
11. Ioffe O., Law of Obligations, Moscow, 1975, Legal Literature Publishing House
12. Karapetov A., Essential Terms of a Contract: Commentary on the New Version of Article 432 of the Civil Code of the Russian Federation. https://zakon.ru/blog/2015/11/9/sushhestvennye_usloviya_dogovora_kommentarij_k_novoj_redakcii_st432_gk_rf.
13. Kuskov A., Sirik N., Legal Regulation of Tourism Activities, Moscow, 2018.
14. Savchenko, E.Ya., The Content of a Civil Law Contract // Bulletin of the Ural Institute of Economics, Management and Law, No. 3, 2015.
15. Sviridov K., Legal Regulation of Activities for the Provision of Tourist Services, Dissertation, St. Petersburg, 2003.
16. Transactions, Representation, Limitation Period, Article-by-Article Commentary on the Civil Code of the Russian Federation, edited by A. Karapetov, Moscow, Logos, 2018.

ԵՎԱ ՏԱԶՅԱՆ

Советник Генерального прокурора
Преподаватель кафедры Гражданского права
юридического факультета Ереванского государственного университета

РЕЗЮМЕ

***Некоторые проблемы толкования существенных условий договора
организации оказания туристических услуг***

В статье рассматриваются некоторые вопросы толкования существенных условий договора организации оказания туристических услуг, предусмотренных новым Законом РА “О туризме”. Автор приходит к выводу, что часть установленных законом обязательных условий договора туристического пакета носит сугубо информационный характер, а некоторые установленные законом условия предполагают техническое закрепление в договоре положений, установленных императивными правовыми нормами, тем самым, не соответствуя критериям существенных условий договора. В связи с этим предлагается разделить существенные условия данного договора как сделки от условий, подлежащих включению в договор как в документ, предусмотрев при этом юридическое последствие отсутствия в договоре каждого из двух названных групп условий. В

частности, по мнению автора, при отсутствии в договоре какого-либо из условий второй группы, руководствуясь принципом эстоппель, сторона, полностью или частично исполнившая обязательство либо принявшая такое исполнение от другой стороны, или иным образом подтвердившая действие договора, не может ссылаться на незаключенность договора ввиду отсутствия в договоре данных условий.

Ключевые слова: туристический пакет, содержание договора, существенное условия, обязательное условия, незаключенность договора; принцип эстоппель; сделка.

Eva Saghoyan

Advisor to the Prosecutor General of the RA
Lecturer at the Chair of Civil Law, Faculty of Law, Yerevan State University

SUMMARY

Some issues in the interpretation of essential terms of the contract for the provision of tourist services

The article discusses some issues in the interpretation of essential terms of the contract for the provision of tourist services stipulated by the new law “On Tourism” of RA. The author comes to the conclusion that some of the mandatory terms of the package travel contract, envisaged by the law, have only informative nature, and some other statutory terms presume just copying enshrined legal provisions in the contract, thereby not meeting the criteria of essential terms of the contract. In this regard, it is proposed to separate the essential terms of this contract as a transaction, from the terms to be included in the contract as a document, at the same time providing for the legal consequences of the absence of each of the two named groups of terms in the contract. In particular, according to the author, in case of the absence of any of the terms of the second group, having in mind the principle of estoppel, the party which has fully or partially fulfilled the obligation or accepted such performance from the other party, or otherwise confirmed the validity of the contract, cannot refer to the non-conclusion of the contract.

Key words: package tour; content of contract’ essential terms of the contract, mandatory terms; non-conclusion of the contract; principle of estoppel; transaction.

Բնագիրը ներկայացվել է 19.08.2025թ.

Ընդունվել է տպագրության 02.09.2025թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Ա.Հայկյանցը

ՍՎԵՏԼԱՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ, «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» հիմնադրամում պահանջները վաղ հանգուցալուծող մասնագետ, իրավական փորձագետ Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամում

ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏ

Հոդվածում գենետիկական տեղեկատվության իրավական կարգավիճակը ենթարկվում է իրավափիլիսոփայական վերլուծության՝ հանրային և մասնավոր իրավունքի համատեքստում: Հոդվածում քննադատաբար գնահատվում են սեփականության դասական տեսությունների կիրառելիությունը և վերլուծվում է «մարդկության համընդհանուր ժառանգության» հայեցակարգը՝ որպես այլընտրանքային մոդել: Հիմնավորվում է, որ թե՛ զուտ մասնավոր, թե՛ հանրային մոտեցումները միակողմանի են՝ տվյալների երկակի բնույթի պատճառով: Առաջարկվում է sui generis կարգավորման անհրաժեշտությունը, որը կհավասարակշռի անհատի իրավունքները հանրային շահի հետ:

Հիմնարանը - գենետիկական նյութ, ֆիզիկական նմուշ, գենետիկական տեղեկատվություն, սեփականության իրավունք, իրավունքի օբյեկտ, մարդկության համընդհանուր ժառանգություն, տեղեկացված հաստատություն, ինքնավարություն, գաղտնիություն:

Ներածություն

Գենային ինժեներիայի բուռն զարգացումը և մարդկային գենոմի վերծանումը XX դարի վերջին ոչ միայն հեղափոխություն առաջացրին կենսաբանության և բժշկության ոլորտներում, այլև իրավագիտության և փիլիսոփայության առջև դրեցին մի շարք հայեցակարգային խնդիրներ: Դրանցից առանցքայինը մարդու մարմնի, դրա մասերի և, մասնավորապես, գենետիկական հաջորդականության ու տեղեկատվության նկատմամբ սեփականության իրավունքի գոյության և բովանդակության հարցն է: Այս խնդրի արդիականությունը գնալով աճում է, քանի որ գենետիկական տվյալների հասանելիությունը կարող է հանգեցնել խտրականության և ստիգմատիզացիայի աշխատանքային կամ ապահովագրական հարաբերություններում, ինչպես նաև առաջացնել անձնական տվյալների պաշտպանության և կենսաէթիկայի հետ կապված բարդագույն խնդիրներ:

Գենետիկական տեղեկատվության իրավական կարգավիճակի շուրջ գիտական գրականության մեջ առկա են տարաբնույթ մոտեցումներ: Պատմականորեն իրավական պրակտիկան, հատկապես արտոնագրային իրավունքի ոլորտում, գերակայությունը տվել է այն գիտնականներին կամ հետազոտական կազմակերպություններին, որոնք «հայտնաբերել» կամ փոփոխել են գեների որոշակի հաջորդականություններ՝ դրանք դիտարկելով

որպես մտավոր սեփականության օբյեկտ: Մինչդեռ գենետիկական նյութի աղբյուր հանդիսացող անհատների իրավունքները հաճախ անտեսվել են: Սույն հոդվածի գիտական ներդրումը կայանում է գենետիկական տեղեկատվության՝ որպես սեփականության իրավունքի յուրահատուկ օբյեկտի համալիր քննության մեջ՝ հաշվի առնելով դրա երկակի բնույթը՝ լինելով խիստ անձնական, սակրալ նշանակություն ունեցող տվյալ և միևնույն ժամանակ՝ ողջ մարդկությանը պատկանող հազարամյակների ժառանգություն:

Սույն հետազոտության գլխավոր նպատակն է իրականացնել գենետիկական տեղեկատվության իրավական կարգավիճակի իրավափիլիսոփայական վերլուծություն, սեփականության տարբեր մոդելների կիրառելիության քննարկում և ամենաարդյունավետ մոդելի ընտրություն: Այս նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները՝ ա) տարբերակել «գենետիկական նյութ» և «գենետիկական տեղեկատվություն» հասկացությունները, բ) վերլուծել հնարավոր իրավատերերի շրջանակը, գ) քննության առնել սեփականության իրավունքի դասական փիլիսոփայական տեսությունների կիրառելիությունը և դ) համակողմանիորեն քննարկել և ներկայացնել գենետիկական տեղեկատվության նկատմամբ կիրառելի ամենահավասարակշռված մոտեցումները:

Հոդվածը կազմված է ներածությունից, երկու

հիմնական բաժնից և եզրակացությունից: Առաջին բաժնում վերլուծվում են գենետիկական տեղեկատվության էությունը և դրա շուրջ ծագած իրավական վեճերն արտացոլող առանցքային դատական նախադեպերը: Երկրորդ բաժինը նվիրված է սեփականության համընդհանուր, կոլեկտիվ ու մասնավոր ձևերի քննարկմանը, «մարդկության համընդհանուր ժառանգության» հայեցակարգի վերլուծությանը և մարդկային գենոմի իրավական կարգավիճակի և պաշտպանության՝ ամենահիմնավոր սնդեղի ընտրությանը:

Հետազոտության մեթոդաբանություն

Սույն հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմում են մի շարք գիտական մեթոդներ: Առանցքային դեր ունի դոկտրինալ մեթոդը, որի միջոցով վերլուծվել են սեփականության իրավունքի, գենետիկական տեղեկատվության և դրա իրավական կարգավիճակի վերաբերյալ հիմնարար իրավական հասկացություններն ու տեսությունները: Կիրառվել է նաև համեմատական-իրավական մեթոդը՝ միջազգային փորձի, մասնավորապես՝ ԱՄՆ դատական պրակտիկայի և օրենսդրական մոտեցումների քննարկման միջոցով: Պատմաիրավական մեթոդն օգտագործվել է սեփականության իրավունքի վերաբերյալ փիլիսոփայական տեսությունների և «մարդկության համընդհանուր ժառանգության» սկզբունքի զարգացումը հետազոծելու համար: Որպես տվյալների հավաքագրման աղբյուրներ ծառայել են գիտական գրականությունը՝ ներառյալ իրավափիլիսոփայական աշխատություններ և հոդվածներ, միջազգային իրավական ակտերը, դատական պրակտիկան: Հետազոտությունը իրականացվել է նաև առանձին պետությունների ազգային օրենսդրության վերլուծության միջոցով: Հավաքագրված տվյալների վերլուծությունն իրականացվել է որակական քննության և համադրման միջոցով: Հեղինակը վերլուծել է իրավական նորմերը, դատական որոշումները և գիտական տեսությունները՝ դրանց հիման վրա կառուցելով տրամաբանական փաստարկներ: Վերլուծությունը ներառել է իրավական հասկացությունների մեկնաբանում, տարբեր իրավական համակարգերի մոտեցումների համեմատություն և քննադատական գնահատում:

Գենետիկական հաջորդականության և գենետիկական տեղեկատվության էությունը և դրանց նկատմամբ իրավունքների մասին նախնական ընկալումները

Գենետիկական տվյալները, իրենց բովանդակությամբ և նշանակությամբ պայմանավորված, ունեն միաժամանակ և՛ մասնավոր, և՛ հանրային ուղղվածություն: Դրանք երբեմն անխուսափելիորեն պարունակում են խիստ անձնական տեղե-

կատվություն անհատի՝ ներառյալ անձի նախնիների, ընտանեկան հարաբերությունների, բժշկական ռիսկերի ու անգամ վարքագծային առանձնահատկությունների մասին: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ գենետիկական տվյալները տարբերվում են գենետիկական նյութից, որից վերջիններս, ըստ էության բխում են: Գենետիկական տեղեկատվությունը ոչ նյութական տեղեկատվություն է անհատի գենետիկական կառուցվածքի մասին, իսկ գենետիկական նյութը դեֆօքսիռիբոնուկլեինաթթու (այսուհետև՝ ԴՆԹ) մնուշ է, ԴՆԹ-ի ֆիզիկական հատվածը: Գենետիկական նյութի օրինակները ներառում են արյունը, հյուսվածքները, թուքը: Որոշ հեղինակներ հանդես են գալիս ԴՆԹ մնուշները կամ մարմնական այլ ածանցյալները սեփականություն դիտարկելու դիրքերից, սակայն, գործնական տեսանկյունից խիստ դժվար է հետևել ողջ գենետիկական նյութին՝ իր բոլոր դրսևորումներով: Մեր կենսագործունեության ողջ ընթացքում արտաքին միջավայրում մենք թողնում ենք մեր գենետիկական նյութից որոշակի հատված և անտրամաբանական կլինի պնդելը, որ մենք հանդիսանում ենք այդ բոլորի սեփականատերեր: Ավելին, երբ հետազոտողը կամ կազմակերպությունը հասանելիություն է ստանում անձի գենետիկական տեղեկատվությանը և պահում այն տվյալների բազայում, բուն ֆիզիկական մնուշը շատ ավելի քիչ կարևորություն է ստանում, քանի որ դրա վերաբերյալ տեղեկատվությունը ինքնին կարող է մշակվել և վաճառվել: Հետևաբար, որպես իրավունքի օբյեկտ առավելապես պետք է ուշադրություն դարձնել գենետիկական տեղեկատվությանը, թեև հաշվի առնելով գենետիկական նյութի և տեղեկատվության փոխադարձ անխզելի կապը՝ հաճախ այս տարբերակումը որոշակի չէ, սակայն ի հակառակ այն պնդմանը, որ ֆիզիկական մնուշի և գենետիկական տեղեկատվության տարանջատումը արհեստական է և շփոթեցողը՝ պետք է նշել, որ ամենահետաքրքիր և կարևոր տեսական հարցերն առաջանում են այն ժամանակ, երբ անդրադառնում ենք գենետիկական տեղեկատվությանը և ոչ թե ֆիզիկական մնուշին:

Ընդհանուր առմամբ տեղեկատվությունը շրջապատող աշխարհի վերաբերյալ տվյալների համակցություն է, ոչ նյութական օբյեկտ: Այն բավականին վաղուց վերածվել է ապրանքաշրջանառության առարկայի և հանդիսանում է պայմանագրային հարաբերությունների օբյեկտ: Այս տեսակի օբյեկտի համար բնութագրական է ուրույն տնտեսական կարգավիճակը, որը հնարավորություն է տալիս տեղեկատվությունը տարբերել հասարակական արտադրության այլ միջոցներից: Տեղեկատվությունն օժտված է քանակական և որակական որոշակի ցուցանիշներով (օրինակ, տնտեսական արժեքը և անձանց լայն շրջանակին հայտնի չլինելը):

www.artadaradutyunjournal.com

Տեղեկատվության կապակցությամբ ծագող հարաբերությունները կարգավորվում են իրավունքի տարբեր ճյուղերով, այդ պատճառով էլ չի կարելի տեղեկատվությունը ամբողջությամբ նույնացնել գոյքային հարաբերությունների հետ և տեղեկատվության կապակցությամբ առաջացող հարաբերությունների նկատմամբ կիրառել նույն քաղաքացիաիրավական կարգավորման մեթոդները, առանց հաշվի առնելու տեղեկատվության առանձնահատկությունները: Բացի այդ, ցանկացած տեղեկատվություն չէ, որ կարող է հանդիսանալ իրավական կարգավորման օբյեկտ: Իրականության մեջ գոյություն ունեն տեղեկատվական հոսքեր (պաշարներ), որոնց նկատմամբ օրենքն անտարբեր է: Այդ պատճառով կարևոր է ընդգծել տեղեկատվության այն շրջանակը, որը ենթակա է իրավական կարգավորման՝ հավաքման, մշակման, կուտակման, պահելու, փնտրելու և տարածելու ընթացքում: Իրավական կարգավորման առարկա, որպես կանոն, հանդիսանում է այն տեղեկատվությունը, որը, որոշակի նկատառումներից ելնելով, պնձանց լայն շրջանակի համար մատչելի (բաց) չէ:

Տվյալ դեպքում, ինչպես արդեն իսկ նշվեց վերևում, գենետիկական տեղեկատվությունը իր բովանդակությամբ կարող է լինել անձնական և զգայուն, սակայն, միևնույն ժամանակ, ԴՆԹ կառուցվածքը, որը ժառանգել է յուրաքանչյուր անհատ, միլիոնավոր տարիների զարգացման և բնական գենետիկական վարիացիաների արդյունք է և ուղղակիորեն վերաբերում է ողջ մարդկությանը, ուստի, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գենետիկական տեղեկատվությունը կարող է ստանալ և՛ բաց, և՛ փակ տեղեկատվության կարգավիճակ ու դրանով պայմանավորված ունենալ հասանելիության տարբեր աստիճաններ:

Հաշվի առնելով գենետիկական տեղեկատվության այս յուրահատուկ կարգավիճակը՝ պատահական չէ, որ առանձին մասնագետներ հայտնում են իրենց մտահոգությունը այն մասին, որ, օրինակ՝ գենետիկական թեստավորման արդյունքում հայտնաբերված տվյալները կհանգեցնեն խտրականության և ստիգմատիզացիայի, քանի որ դրանք նորմալից դուրս կարող են լինել: Մյուս մտահոգությունն այն է, որ գենետիկական տեղեկատվության հրապարակումը կարող է գրկել անձանց, օրինակ՝ ապահովագրության, աշխատանքի հնարավորությունից, եթե տեղեկատվությունը հայտնվի հանրային օգտագործման տիրույթում:

Նկատի ունենալով գենետիկական տեղեկատվության օգտագործման հնարավոր լայն շրջանակը և հետևանքները՝ իրավագետների հիմնական մտահոգությունը կապված է այն հարցադրումների հետ, թե ո՞վ կարող է օգուտ ստանալ գենետիկական նյութի կամ տեղեկատվության օգտագործումից և ինչպե՞ս անհատներին, ընտանիքներին և

հանրությանը պաշտպանել դրանց օգտագործման արդյունքում ծագող հնարավոր բացասական հետևանքներից: Հաշվի առնելով այն, որ գենետիկական, ինչպես և մարդու առողջությանը վերաբերող ցանկացած տեղեկատվություն, ուղղակիորեն վերաբերում է անհատի անձնական կյանքին, շատ հաճախ այն քննարկվում է սեփականության հարցույցի շրջանակներում, քանի որ մարդիկ ընկալում են իրենց՝ որպես սեփական գենետիկական նյութի սեփականատեր: Այս հանգամանքով պայմանավորված, տեսաբանները, քննարկելով գենետիկական նյութի և տեղեկատվության նկատմամբ ծագող իրավունքները, ընդհանուր առմամբ առանձնացնում են հնարավոր իրավատերերի հետևյալ շրջանակը՝ ա) կոնկրետ գենոմը կրող անհատը, բ) գիտնականը կամ կազմակերպությունը, որը բացահայտել է կոնկրետ գենը կամ մուլտիտիդային հաջորդականությունը (ընդ որում, սրա շրջանակներում հարկ է քննարկել ոչ միայն բնական վիճակում գտնվող գենը հայտնաբերող անձին, այլև գենային ինժեներիայի միջոցով փոփոխություններ կատարած անձին), գ) մարդկությանը՝ ընդհանուր վերցրած, դ) այն անձանց խումբը, որը ունի նույնական մուլտիտիդային հաջորդականությունը:

Գենետիկական սեփականության խնդիրը քննարկելիս ծագում է կարևորագույն հարցը՝ արդյո՞ք անձինք կարող են պահանջել սեփականության իրավունք իրենց, այդ թվում՝ իրենց գենետիկական նյութի և դրանից բխող գենետիկական տեղեկատվության նկատմամբ:

Հարկ է նշել, որ պատմականորեն գենետիկական նյութի և տեղեկատվության նկատմամբ սեփականության իրավունքը մեկնաբանվել է միակողմանիորեն՝ հօգուտ այն գիտնականների կամ հետազոտական ընկերությունների, որոնք բացահայտում էին կամ փոփոխում գեների որոշակի հաջորդականություն: Մասնավորապես՝ գիտնականները, ստանալով արտոնագրեր իրենց բացահայտումների համար, ձեռք էին բերում դրանք ապրանքայնացնելու և ֆինանսական օգուտ ստանալու հնարավորություն: Մինչդեռ՝ անհատները, որոնք կրում են քննարկվող գենետիկական հաջորդականությունը և տվյալները, իրավաբանական համայնքի կողմից հիմնականում չեն ընկալվում որպես իրենց գեների նկատմամբ նյութական և ֆինանսական որոշակի շահեր ունեցող սուբյեկտներ, թեև, օրինակ՝ ԱՄՆ մի շարք նահանգներ ընդունել են իրավական ակտեր, որով գեները դիտարկվում են որպես անձի մասնավոր սեփականությունը: Մասնավորապես՝ 1995թ. ԱՄՆ Օրեգոն նահանգը դարձել է առաջինը, որ երաշխավորել է գենետիկական նյութի նկատմամբ այն անձի սեփականության իրավունքը, ումից դրանք ձեռք էին բերվել, սակայն հետագայում՝ 2001թ. օրենքում կատարված փոփո-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

խությամբ նախատեսվեց, որ գենետիկական նմուշները սեփականություն չեն, բայց, այնուամենայնիվ, այդ նմուշները և տեղեկատվությունը անձնական են ու պետք է պաշտպանվեն⁴ :

Նշված հարցի վերաբերյալ ամենաքննարկված դատականը ակտը ամերիկյան դատական պրակտիկայում հայտնի «Moore v. Regents of University of California» գործով ԱՄՆ Գերագույն դատարանի որոշումն է⁵ : Գործի փաստերի համաձայն՝ պատասխանողը առանց հայցվորի համաձայնության բուժման ընթացքում վերջինից վերցնելով կենսաբանական բազմաթիվ նյութերի նմուշներ՝ ստանում է արտոնագիր «Mo» կոչվող բջիջների գծի համար, որը վերջինս ստացել էր Մուրի՝ հայցվորի բջիջներից⁶ : Գատարանը, քննելով գործը, համաձայնել է հայցվորի այն պնդմանը, որ բժիշկը և բժշկական հաստատությունը մեղավոր են հայցվորին իրենց հետազոտական շահերը չբացահայտելու համար, և Մուրը իրավունք ունի ստանալ փոխհատուցում այդ տեղեկատվության չբացահայտման համար, սակայն շրջանցեց Մուրի՝ իր բջիջների «օրինական սեփականատերը» լինելու հարցը: Գիտական համայնքը պնդում էր, որ կենսատեխնոլոգիայի ոլորտում հետազոտությունները և զարգացումը էապես կտուժեն, եթե անհատները ունենան սեփականության իրավունք իրենց բջիջների, հյուսվածքների նկատմամբ: Արդյունքում՝ դատարանը քաղաքական և էթիկական նկատառումներից ելնելով, նշեց, որ եթե անհատներն ունենան որոշում կայացնելու իրավունք և նյութական շահ բջիջների գծի նկատմամբ, ապա վերջիններս կստանան անսահմանափակ հնարավորություն արգելելու բժշկական հետազոտությունները, որոնք կարող են օգտակար լինել ողջ մարդկության համար⁷ :

Նշված Գատական ակտում, փաստորեն, դատարանը շրջանցեց Մուրի սեփականության իրավունքի հարցի քննարկումը՝ իրավունքների խախտումը առավելապես կապելով բժշկի ֆիդուցիար պարտականությունների և հիվանդի տեղեկացված համաձայնության իրավունքի խախտման հետ: Օվիեդոյի կոնվենցիայի առանցքային սկզբունքներից մեկը համարվող և 5-րդ հոդվածում ամփոփված տեղեկացված համաձայնության սկզբունքին անդրադարձ է կատարվել նաև մի շարք այլ դատական ակտերում: Մասնավորապես՝ «Havasupai Tribe of the Havasupai Reservation v. Arizona Board of Regents and Therese Ann Markow» գործով Հավասուպայի ցեղի ներկայացուցիչները նախապես տվել էին համաձայնությունը միայն դիաբետի վերաբերյալ հետազոտությունների համար, սակայն, տեղեկանալով, որ գենետիկական նյութը օգտագործվել է նաև ինքնաբերական և շիզոֆրենիայի գենետիկական հետազոտությունների համար՝ դիմել էին դատարան համարելով, որ խախտվել են իրենց

իրավունքները: Ընդ որում, թեև վերջիններս ուղղակիորեն չէին մատնանշում սեփականության իրավունքի խախտումը, սակայն գենետիկական նյութը տիրապետելու և օգտագործելու իրավունքի վերաբերյալ պահանջն ամբողջությամբ ներառվում էր սեփականության իրավունքի բովանդակության մեջ: Արդյունքում՝ պատասխանող կողմը տրամադրեց 700,000 ԱՄՆ դոլարի փոխհատուցում և վերադարձրեց ԴՆԹ բոլոր նմուշները, ինչպես նաև դրանց հետազոտությունների վերաբերյալ փաստաթղթերը⁸ :

Այս խնդրին անդրադարձ կատարվեց նաև Հենրիետա Լաբսի և վերջինիս անմահ «HeLa» կոչվող բջիջների գործով: Այս դեպքում Հենրիետան տառապում էր արգանդի պարանոցի քաղցկեղից: Բուժման ընթացքում բժիշկը առանց Հենրիետայի համաձայնության վերցրել էր քաղցկեղածին բջիջներից որոշ նմուշներ՝ պատրաստելու համար առաջին անմահ բջիջները: Թեև նշված ժամանակահատվածում իրավական և էթիկական տեսանկյունից բժշկի գործողությունները թույլատրելի էին, հիվանդի ժառանգները կարծում էին, որ իրենց և Հենրիետայի իրավունքները խախտվել են⁹ :

Քննարկվող բոլոր դեպքերում հայցվորները բարձրացրել են այն հարցը, որ իրենց գենետիկական տվյալները ունեն ոչ գույքային և անգամ որոշակի սակրալ նշանակություն, քանի որ վերաբերում են իրենց ինքնությանը, ծագմանը, ընտանիքին, ուստի, դրանց օգտագործումը և դրա արդյունքում շահույթ ստանալը ոտնահարում է իրենց ինքնությունը, պատվի, արժանապատվության, ֆիզիկական ամբողջականության իրավունքները, որոնք չեն կարող ունենալ նյութական արտահայտություն:

Կարող ենք ասել, որ ներկայումս գենետիկական նյութին տրամադրվող պաշտպանության միջոցները ընդգծում են անհատի ինքնավարությունը և չեն հանգեցնում գենետիկական նյութերի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչմանը: Գենետիկական նյութերի կամ կենսաբանական նմուշների ներկայիս պաշտպանությունը հիմնված է անհատի ինքնավարության և մարմնական ինքնորոշման իրավունքի, ինչպես նաև տեղեկացված համաձայնության մասին կարգավորումների վրա: Ընդհանուր առմամբ, բժշկական միջամտությունը կարող է իրականացվել միայն անհատի համաձայնությամբ և կարող է դադարեցվել նրա ցանկությամբ: Նաև, անձը չի կարող հարկադրաբար ներգրավվել որպես հետազոտության օբյեկտ կամ մասնակցել հետազոտության՝ առանց լիարժեք և տեղեկացված համաձայնության: Թեև օրենսդրական պաշտպանության այս միջոցները զգալիորեն ապահովում են մարդու մարմնի անձեռնմխելիությունը, սակայն օրենքը չի նախատեսում մարմնի նկատմամբ անձի սեփականության իրավունքի

www.artadaratutyunjournal.com

ճանաչումը, թեև սահմանափակ սեփականության պաշտպանության հնարավորությունը բացառված չէ: Հնարավոր է ընդլայնել գոյություն ունեցող օրենսդրական պաշտպանության միջոցները՝ ընդգրկելով գեները: Անհատի գեների կամ ԳՆԹ-ի հաջորդականության որոշումը առանց նրա համաձայնության պետք է համարվի մարմնական ինքնավարության խախտում¹²: Հաշվի առնելով մարդու գեների առանձնահատկությունները և շատ հաճախ անձնական բնույթը, գեների և ԳՆԹ մոուլդների պաշտպանությանն անդրադառնալիս, հաշվի առնելով նաև պատմական փորձը, չպետք է կարգավորումներ նախատեսել և մեկնաբանել միակողմանիորեն՝ անտեսելով որևէ կողմի իրավունքները: Գեների և ԳՆԹ մոուլդների գաղտնիությունը պետք է ստանա բավարար պաշտպանության, քանի որ դրանք անհատի եզակի բնութագրերի հիմքն են: Անհատի եզակի հատկանիշները, որոնք կողավորված են նրա գեներում կամ ԳՆԹ մոուլդներում, կարող են օգտագործվել վնասակար նպատակներով, եթե օրենքը չապահովի բավարար պաշտպանություն: Հենց նշված առանձնահատկություններն են պայմանավորում գենետիկական տեղեկատվության նկատմամբ սեփականության իրավունքի քննարկման յուրահատկությունը:

Գենետիկական հաջորդականությունը և գենետիկական տեղեկատվությունը՝ որպես համընդհանուր, կոլեկտիվ և մասնավոր սեփականության օբյեկտ

Ընդհանրապես առանձնացնում ենք սեփականության իրավունքի երեք ձև՝ համընդհանուր, կոլեկտիվ և մասնավոր սեփականություն: Համընդհանուր սեփականության համակարգի դեպքում ռեսուրսների օգտագործումը իրականացվում է այնպիսի կանոններով, որոնց նպատակն է դրանք դարձնել հասանելի բոլորի՝ հասարակության յուրաքանչյուր անդամի օգտագործման համար: Կոլեկտիվ սեփականության պարագայում այլ մոտեցում է. համայնքը՝ որպես ամբողջություն, որոշում է, թե օգտակար ռեսուրսները ինչպես պետք է օգտագործվեն: Այս որոշումները կայացվում են սոցիալական շահերից ելնելով՝ որոշումների կայացման կոլեկտիվ ընթացակարգերի միջոցով: Մասնավոր սեփականությունը այլընտրանք է համընդհանուր և կոլեկտիվ սեփականության համակարգերին: Մասնավոր սեփականության համակարգում սեփականության իրավունքի կանոնները ձևավորվում են այն գաղափարի շուրջ, որ վիճելի տարբեր ռեսուրսներ վերապահված են մասնավոր անձանց որոշումների կայացման իրավագործությանը: Թոմաս Մերիլը այն կոչում է «սեփականության ռազմավարություն» և հակադրում բյուրոկրատական իշխանությանը կամ խմբային համաձայնության միջոցով ռեսուրսների կառավարմանը: Մասնավոր սե-

փականության համակարգի դեպքում անձը, ում պատկանում է օբյեկտը (օրինակ՝ անձ, ով գտել կամ պատրաստել է գույքը) ունի իշխանություն դրա նկատմամբ՝ վերջինս է որոշում ինչպես վարվել այդ գույքի հետ և այդ իրավասությունը իրականացնելիս անձը հանդես չի գալիս որպես հասարակության ներկայացուցիչ կամ պաշտոնյա¹³:

Վերը նշվածը հաշվի առնելով, եթե քննարկենք գեների, այդ թվում՝ գենային ինժեներիայի արդյունքում փոփոխված գեների նկատմամբ սեփականության իրավունքը, ապա տեսականորեն դրա նկատմամբ կիրառելի կլինեն բոլոր երեք ձևերը: Մասնավորապես՝ մի դեպքում գեները կրնալվել որպես ողջ մարդկության համընդհանուր ժառանգություն, մի դեպքում՝ այն գիտնականների սեփականությունը, որոնք հայտնաբերել կամ ստեղծել են նոր գեներ կամ բջիջներ և ի վերջո՝ այդ գեները կրող կոնկրետ անձի սեփականություն:

Անդրադառնալով սեփականության իրավունքի վերաբերյալ փիլիսոփայական տեսություններին և դրանց շրջանակում գենետիկական տեղեկատվության նկատմամբ պոտենցիալ սեփականության իրավունքին՝ նախ քննարկենք ամենահետազոտված փիլիսոփայական տեսությունները՝ Ջոն Լոկի սեփականության իրավունքի վերաբերյալ աշխատանքի կամ առաջնային ձեռքբերման տեսությունը, ինչպես նաև Իմանուիլ Կանտի առավել արստրակտ և ֆորմալ տեսությունը: Կենտրոնանալով մասնավոր սեփականության վրա՝ Լոկը առաջ էր քաշում ներկայումս ամենատարածված տեսությունը. այն նախատեսում էր, որ որևէ բանի նկատմամբ օրինական սեփականության իրավունք ծագում է՝ ա) որևէ բանի ձեռքբերման միջոցով, որը կամ մտնում է կոլեկտիվ սեփականության մեջ (բավարար քանակի և որակի չափով թողնելով այլ անձանց), կամ չի պատկանում որևէ մեկին և ապա՝ բ) միավորվում է անձի աշխատանքի հետ: Վերջինս նշում է, որ յուրաքանչյուր անձ ունի անձնական սեփականություն. դրա նկատմամբ ոչ ոք բացի այդ անձից, չունի իրավունք: Կարելի է ասել, որ անձի մարմնի և ձեռքերի աշխատանքը ամբողջությամբ պատկանում են իրեն: Ցանկացած բան, ինչ վերջինս հանում է այն սկզբնական կարգավիճակից, որը տվել էր բնությունը և միավորում իր աշխատանքի հետ՝ հաղորդելով դրան ինչ-որ բան իրենից, դրանով այն դառնում է անձի սեփականությունը: Այդ աշխատանքն է դնում տարբերություն անձի մասնավոր սեփականության և ընդհանուր սեփականության միջև:

Լոկի տեսությունը առավելապես հիմք էր ընդունվում հողի կամ ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքի պարագայում և ոչ հաճախ էր ասոցացվում անձի՝ իր մարմնի նկատմամբ սեփականության իրավունքի հետ: Այնուամենայնիվ, Լոկը նաև պնդում էր, որ անձի՝ իր նկատմամբ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

սեփականության իրավունքը հողի և ապրանքների նկատմամբ իրավունքների նախապայմանն է: Ըստ էության, ընդունելի է Լոկի այս տեսակետը, սակայն, այն ոչ ամբողջությամբ է կիրառելի գենետիկական տեղեկատվության նկատմամբ սեփականության իրավունքի դեպքում: Այս առնչությամբ մենք չենք միավորել մեր աշխատանքը գենետիկ հետ կամ որևէ ձևով չենք արտադրել դրանք պարզապես գոյություն ունենալով, հետևաբար, մենք չենք կարող լինել մեր գենետիկ սեփականատերը՝ առնվազն Լոկի տեսության շրջանակում: Ինչ վերաբերում է գենետիկ «բացահայտած», իր բնական միջավայրից առանձնացրած կամ գենային ինժեներիայի միջոցով դրանում փոփոխություններ կատարած գիտնականների սեփականության իրավունքին, ապա ապա այս պարագայում գենի առանձնացումը միայն իր բնական միջավայրից դեռևս չի ենթադրում դրա նկատմամբ որևէ իրավունքի սահմանում: Իրավունքներ չեն ծագում նաև այն դեպքում, երբ հետազոտողը պարզապես բացահայտում է գենի՝ մինչ այդ անհայտ, սակայն մշտապես գոյություն ունեցած հատկանիշներ, քանի որ այդ պարագայում խոսքը առավելապես գնում է հայտնագործության մասին, իսկ իր բնական միջավայրից առանձնացված և գենային ինժեներիայի միջոցով նոր՝ բնական ճանապարհով չառաջացող, հատկություններ հաղորդած գիտնականների իրավունքները, հաշվի առնելով վերջիններիս ներդրած աշխատանքի մտավոր բնույթը, կարող են պաշտպանություն ստանալ մտավոր սեփականության ինստիտուտի շրջանակում՝ կատարած աշխատանքի արդյունքները արտոնագրելով որպես գյուտ:

Ի հակառակ Լոկի տեսության՝ մի շարք քաղաքական տեսություններ, այդ թվում՝ Կանտի տեսությունը, հիմնվում են անձի՝ իր նկատմամբ սեփականության իրավունքի վրա, ըստ որի՝ յուրաքանչյուր անձ ունի բացարձակ իրավունքներ իր մարմնի, մտքի, տաղանդի նկատմամբ և այս սահմանների խախտումը բարոյապես անընդունելի է: Այս տեսակետի շրջանակում առերևույթ ընդունելի է դառնում այն պնդումը, որ եթե մենք մեր մարմնի սեփականատերն ենք, ապա մենք նաև մեր գենետիկական տեղեկատվության սեփականատերն ենք: Այս տեսակետը, սակայն, հերքում են կենսաբանները՝ պնդելով, որ գեները (մարդկային գենոմը), որպես այդպիսին, չեն կարող լինել առանձին անհատներին: Եթե լինեն իրավունքներ, ապա դրանք պետք է վերաձվեն համընդհանուր սեփականության՝:

Վերը նշվածի հաշվառմամբ, շարունակելով գենետիկ՝ որպես համընդհանուր սեփականության վերաբերյալ քննարկումը՝ տվյալ դեպքում հարկ է անդրադառնալ միջազգային իրավունքում հայտնի մարդկության համընդհանուր ժառանգության սկզբունքին: Վերջինս միջազգային իրավական հայե-

ցակարգ է, որը հավասար գույքային շահեր է վերապահում բոլոր մարդկանց: Մարդկության համընդհանուր ժառանգության գաղափարը ձևավորվել է 1967թ.՝ ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովում Մալթայի ներկայացուցիչ Արվիդ Պարդոյի հիշարժան ելույթից հետո՝ և, հատկապես, ակտուալ դարձել «Անտարկտիկայի հանքային ռեսուրսների օգտագործման կարգավորումների վերաբերյալ» կոնվենցիայի քննարկման ժամանակ՝:

Նշված սկզբունքը ներառում է չորս հիմնական հատկանիշ՝ ա) ոչ մի երկիր չի կարող յուրացնել խնդրո առարկա տարածքը, բ) բոլոր երկրները կիսում են տարածքի կառավարման պատասխանատվությունը, գ) բոլոր երկրները կիսում են տարածքի կամ դրա ռեսուրսների օգտագործումից ստացված շահույթը և դ) բոլոր երկրները պետք է օգտագործեն տարածքը բացառապես խաղաղ նպատակներով¹⁷: Ի հավելումն այս հատկանիշների՝ երբեմն առանձնացվում է նաև բոլոր երկրների՝ ապագա սերունդների համար վիճարկվող տարածքի յուրահատկության կամ անփոխարինելի ռեսուրսների պահպանության պատասխանատվությունը:

Թեև այս հայեցակարգը առավելապես կիրառվել է տարածքների, երկնային մարմինների, Լուսնի, օվկիանոսների և ծովերի հատակների պարագայում, սակայն, հաշվի առնելով վերջինի հեռահար նպատակադրությունը, ինչպես նաև բարոյաէթիկական նշանակությունը՝ բազմաթիվ հեղինակների կողմից քննարկվել է վերջինի հնարավոր կիրառությունը ծովի հատակում գտնվող բույսերի, միկրոօրգանիզմների գենետիկական ռեսուրսների՝ և մարդկային գենոմի նկատմամբ՝: Ընդ որում, հարկ է նշել, որ մարդկային գենոմի նման կարգավիճակի ընկալումը իր հիմքերը գտնում է Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) «Մարդու գենոմի և մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում», որի 1-ին հոդվածը սահմանում է, որ մարդու գենոմն ընկած է մարդկային ընտանիքի բոլոր անդամների հիմնարար միասնության, ինչպես նաև նրանց բնածին արժանապատվության և բազմազանության ճանաչման հիմքում և խորհրդանշական իմաստով այն մարդկության ժառանգությունն է: Բացի այդ, 1993թ. քննարկելով Մարդկային գենոմի նախագծի իրավական կողմերը (Human genome project՝ միջազգային գիտահետազոտական նախագիծ, որի նպատակն է որոշել մարդու Գ-ԽԹ-ն կազմող բազային գույգերը, ինչպես նաև բացահայտել, քարտեզագրել և դասավորել մարդկային գենոմի բոլոր գեները՝ և՛ ֆիզիկական, և՛ գործառնական տեսանկյունից²⁰)՝ 1994թ. ընդունվում է Բիլբաոյի հռչակագիրը, որը նույնպես գեները դիտարկում է որպես մարդկության համընդհանուր ժառանգություն: Մասնավորապես՝ Բիլբաոյի հռ-

www.ardaradutyjournal.com

չակագիրը սահմանում է, որ Մարդու գենոմի նախագիծը պետք է զարգանա իրապես գլոբալ, միջճյուղային եղանակով, և դրա արդյունքները պետք է ստանա ողջ մարդկությունը՝ անկախ ռասայական պատկանելությունից, մայրցամաքից, հավատից և տեսակետից: Հռչակագիրը նաև կարևորում է ապագա սերունդների նկատմամբ ունեցած պարտականությունը՝ նշելով, որ գոյություն ունեցող քաղաքական, սոցիալական և տեխնոլոգիական միտումների սերտաճումը այս սերնդի վրա դնում է միասին համագործակցելու պարտականություն՝ ի շահ ապագա սերունդների և երկրագնդի վրա ապրող բոլոր տեսակների՝:

Ի սկզբանե գիտնականները ձգտում էին գեների, այդ թվում՝ փոփոխված գեների նկատմամբ գրանցել իրավունքներ՝ առաջնորդվելով ֆինանսական նկատառումներով, այնինչ, մարդկության համընդհանուր ժառանգության հայեցակարգը առաջնորդվում է որևէ օբյեկտ ապագա սերունդների համար պահպանելու գաղափարախոսությամբ: Տարածելով այս հայեցակարգը մարդկային գենոմի նկատմամբ՝ վերջինիս բնորոշող հատկանիշները ձևակերպվում են հետևյալ կերպ՝ ա) մարդկային գենոմը չի կարող յուրացվել որևէ երկրի կամ երկրի ներսում գտնվող մասնավոր կազմակերպության կողմից, բ) բոլոր երկրները պետք է ևս կրեն գենոմի թույլատրելի օգտագործման համար կարգավորումների և օրենքների սահմանման պատասխանատվությունը, գ) բոլոր երկրները պետք է ստանան Մարդկային գենոմի նախագծից ստացված ողջ շահույթը, ինչը նշանակում է, որ գեների բոլոր հաջորդականությունները պետք է լինեն հանրորեն հասանելի, դ) գենոմը պետք է օգտագործվի բացառապես խաղաղ նպատակներով և ե) ողջ միջազգային հանրությունը պետք է ևս կրի գենոմը ապագա սերունդների համար պահպանելու պատասխանատվությունը՝:

Մի շարք հեղինակների կողմից մարդու գենոմի նկատմամբ համընդհանուր ժառանգության սկզբունքի կիրառությունը համարվում է անհրաժեշտություն հատկապես այն պատճառով, որ գենոմը անալոգիայով նմանեցվում է միջազգայնորեն ճանաչված այնպիսի տարածքների, ինչպիսիք են լուսինը և ծովերի հատակները: Ի հավելումն դրան՝ մի շարք հեղինակներ մտահոգված են գենոմի՝ որպես մարդու ինքնության էական տարրերից մեկի սեփականաշնորհման արդյունքում ծագող էթիկական խնդիրներով: Բացի այդ, կարևորվում է այն հանգամանքը, որ նշված սկզբունքի կիրառությունը հնարավորություն է տալիս պահպանել ռեսուրսները ապագա սերունդների համար և չի կենտրոնանում տնտեսական շահերի վրա՝:

Միջազգային համագործակցությունը այս ոլորտում զարգացնելու և գենոմի պտուղների հասանելիությունը ապահովելու համար մի շարք հե-

ղինակներ, այդ թվում՝ Մարկ Բոդուինը, առաջ են քաշում միասնական տեղեկատվական բազայի ստեղծման գաղափարը՝: Այս դեպքում, հիմնական նպատակն է խթանել, որ բոլոր պետությունները, ոչ առևտրային կազմակերպությունները, հիմնադրամները, համալսարանները և անհատները ստեղծեն և անդամակցեն Մարդկային գենոմի հիմնադրամին, որը կնպաստի հեղափոխական գենետիկական հետազոտությունների, բուժումների, անհրաժեշտ պատվաստանյութերի կամ այլ դեղամիջոցների ստեղծմանը:

Մեզ համար գեների նկատմամբ այս սկզբունքի կիրառումը բավականին հիմնավորված է և առաջադիմական: Այն ենթադրում է պաշտպանության բավականին բարձր երաշխիքներ և սահմանում մարդկային գենոմը ապագա սերունդների համար պահպանելու պատասխանատվություն ներկայիս սերունդների համար: Սակայն այս մոտեցումը ևս ունի որոշակի խոցելի կողմեր, քանի որ չկան երաշխիքներ, որ նման մոտեցման պարագայում գեների հաջորդականությունների և գենետիկական տեղեկատվության օգտագործումից ստացվող շահույթը չի կենտրոնանա առանձին կազմակերպությունների և պետությունների ձեռքում: Բացի այդ, գեները՝ որպես մարդկության համընդհանուր ժառանգություն դիտարկելը մեզ համար կրկին որոշակի առումով միակողմանի մոտեցում է, քանի որ այս պարագայում ելակետ է ընդունվում այն գաղափարը, որ գեները կենսաբանական զարգացման և էվոլյուցիայի արդյունք են և փոխանցվել են ողջ մարդկությանը, սակայն կրկին հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ դրանք ողջ մարդկության համընդհանուր ժառանգությունը լինելուց և ողջ մարդկության մասին ընդհանուր տեղեկատվություն պարունակելուց զատ պարունակում են նաև խիստ զգայուն տվյալներ կոնկրետ անհատի կամ անհատների խմբի նախնիների, անձնային բնութագրչների, վարքագծային և առողջական առանձնահատկությունների մասին: Տվյալների այս երկակի բնույթը, կարծում ենք, խոչընդոտ է գենետիկական տեղեկատվությունը անալոգիայով որևէ տարածքի նմանեցնելու համար, քանի որ նշված տարածքների պարագայում չկան նման զգայուն և անձնական կապեր: Հետևաբար, պետք է ապահովել այնպիսի մոտեցում, որը հնարավորություն կտա հավասարակշռել կողմերի՝ հաճախ իրար հակասող շահերը: Ընդ որում, բոլորովին պարտադիր չէ, որ այդ մոտեցումը քննարկվի բացառապես սեփականության իրավունքի շրջանակում, հատկապես, երբ անգամ անձի մարմնի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատելու պարագայում, խիստ վիճելի է դառնում անձի մարմնից բխող տեղեկատվության նկատմամբ սեփականության իրավունքի հարցը: Այս պարագայում, հստակ է, որ գենետիկական տեղեկատվության ստացման, մշակ-

www.aradaradatuluyjournal.com

ման և օգտագործման հարաբերություններում կան կողմեր, որոնք ունեն որոշակի շահեր և պաշտպանության կարիք: Ուստի, ցանկացած կարգավորում նախատեսելիս պետք է հաշվի առնել կողմերի շահերը և փորձել հավասարակշռել դրանք: Այս պարագայում, հստակ է նաև, որ կարևոր են անհատի ինքնավարությունը, շահագործման բացառումը և գաղտնիությունը, որոնք կարող են հակասության մեջ մտնել որոշակի հանրային շահերի, այդ թվում՝ գիտական առաջընթացի, գենետիկական տեղեկատվության օգտագործման միջոցով շահույթ ստանալու հետ:

Եզրակացություն

Հոդվածի շրջանակում, քննարկելով գենետիկական տեղեկատվության իրավական կարգավիճակը, հեղինակը հանգել է մի շարք հիմնական արդյունքների: Հիմնավորվել է գենետիկական նյութի և տեղեկատվության տարանջատման անհրաժեշտությունը, որտեղ վերջինս հանդիսանում է իրավական կարգավորման առավել բարդ օբյեկտը: Վերլուծվել է գենետիկական տեղեկատվության երկակի բնույթը՝ որպես միաժամանակ և՛ խիստ անձնական ու զգայուն տեղեկատվություն, և՛ համամարդկային ժառանգության մաս: Գատակական պրակտիկայի և առկա օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ իրավական պաշտպանությունը հիմնականում կենտրոնացած է «տեղեկացված համաձայնության» սկզբունքի վրա՝ շրջանցելով սեփականության իրավունքի ուղղակի ճանաչումը:

Հետազոտության հիմնական եզրահանգումն այն է, որ ոչ սեփականության դասական մոդելները, ոչ էլ «մարդկության համընդհանուր ժառանգության» հայեցակարգը լիարժեք լուծում չեն տալիս առկա խնդրին: Թեև վերջինս բավականին հիմնա-

վորված և առաջադիմական մոտեցում է, այնուամենայնիվ, հեղինակի կարծիքով, այն որոշակիորեն միակողմանի է, քանի որ ամբողջական կերպով հաշվի չի առնում այն հանգամանքը, որ գենոմը, բացի համամարդկային լինելուց, պարունակում է նաև խիստ զգայուն տվյալներ կոնկրետ անհատի կամ անհատների մասին: Հետևաբար, անհրաժեշտ է ձևավորել այնպիսի մոտեցում, որը հնարավորություն կտա հավասարակշռել կողմերի հաճախ իրար հակասող շահերը՝ մի կողմից ապահովելով անհատի ինքնավարությունն ու գաղտնիությունը, մյուս կողմից՝ չխոչընդոտելով գիտական առաջընթացը: Ուստի, առաջարկում ենք տեսական մակարդակում մշակել գենետիկական տեղեկատվության համար իր տեսակի մեջ եզակի իրավական ռեժիմ, որը դուրս կլինի սեփականության իրավունքի դասական շրջանակներից և կհամատեղի անհատի իրավունքների և հանրային շահի պաշտպանության տարրերը: Գործնական մակարդակում նպատակահարմար է ստեղծել միջազգային կարգավորման մեխանիզմներ, որոնք կերաշխավորեն գիտական հետազոտությունների համար տվյալների հասանելիությունը՝ միաժամանակ սահմանելով օգտագործման խիստ էթիկական կանոններ և անհատի իրավունքների պաշտպանության բարձր մակարդակ: Հետագա հետազոտությունները կարող են ուղղվել այս հավասարակշռված, երրորդ՝ յուրահատու մոդելի կառուցակարգերի մշակմանը, ինչպես նաև տարբեր երկրների ազգային օրենսդրությունների համեմատական վերլուծությանը՝ լավագույն փորձը բացահայտելու նպատակով:

¹ Տե՛ս, Roberts J. L., Progressive genetic ownership. University of Houston Law Center, 93 Notre Dame L. Rev. 1105 (2018), 69 էջ, էջ 1122, (հասանելի է՝ <https://scholarship.law.nd.edu/cgi/viewcontent.cgi?article=4774&context=ndlr> հրապարակման ամսաթիվը՝ 2018թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

² Տե՛ս, Բարսեղյան Ս. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս. (չորրորդ հրատարակություն) – Երևանի պետ. համալս. – Եր.: «Տիգրան Մեծ» հրատ., 2014 – 560 էջ, էջ 199-200,

³ Տե՛ս, Carvalho C. L., Genetic ownership and sharing. SA ORTHOPAEDIC JOURNAL Winter 2012 | Vol 11 No 2 ETHICS ARTICLE, 3 էջ, էջ 88, (հասանելի է՝ http://www.scielo.org.za/scielo.php?script=sci_arttext&pid=S1681-150X2012000200017 հրապարակման ամսաթիվը՝ 2012թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

⁴ Տե՛ս, Australian Government, Australian Law Reform Commission, The Protection Of Human Genetic Information In Australia (ALRC Report 96) / 20. Ownership Of Samples And The Human Tissue Acts / Ownership Of Human Genetic Samples, 28.07.2010, (հասանելի է՝ <https://www.alrc.gov.au/publication/essentially-yours-the-protection-of-human-genet->

ic-information-in-australia-alrc-report-96/20-ownership-of-samples-and-the-human-tissue-acts/ownership-of-human-genetic-samples/ հրապարակման ամսաթիվը՝ 2010թ. հուլիսի 28, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

⁵ Տե՛ս, John Moore V. The Regents Of The University Of California Et Al. No. S006987. Supreme Court of California. Jul 9, 1990. գործով ԱՄՆ գերագույն դատարանի որոշումը, (հասանելի է՝ <https://law.justia.com/cases/california/supreme-court/3d/51/120.html> վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

⁶ Տե՛ս, Stanton A. A., Forfeited Consent: Body Parts in Eminent Domain. In book: Patenting Lives: Life Patents, Culture and Development, First edition, Chapter: 5, Publisher: AshgateEditors: Johanna Gibson, September 2008. 28 էջ, էջ 5-6, (հասանելի է՝ https://www.researchgate.net/publication/281640306_Forfeited_Consent_Body_Parts_in_Eminent_Domain հրապարակման ամսաթիվը՝ 2008թ. սեպտեմբեր, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

⁷ Տե՛ս, Dworkin G., Should There Be Property Rights in Genes. Philosophical Transactions: Biological Sciences, Vol. 352, No. 1357, Human Genetics: Uncertainties and the Financial Implications Ahead (Aug. 29, 1997), 10 էջ, էջ 1078, (հասանելի է՝ https://www.jstor.org/stable/56522?seq=2#metadata_info_tab_contents հրապարակման ամսաթիվը՝ 1997թ. օգոստոսի 29, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

⁸ Տե՛ս, Եվրոպայի Խորհուրդ, Մարդու իրավունքները և կենսաբժշկությունը. Օվիեդոյի կոնվենցիա (CETS No. 164), Լրացուցիչ արձանագրություն (CETS No. 195) Նախարարների կոմիտեի Rec (2016)6., 224 էջ, էջ 9-10, (հասանելի է՝ <https://rm.coe.int/human-rights-and-biomedicine-convention-arm/1680a206db> հրապարակման ամսաթիվը՝ 2020 օգոստոս, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

⁹ Տե՛ս, Havasupai Tribe of the Havasupai Reservation v. Arizona Board of Regents and Therese Ann Markow գործով Արիզոնա նահանգի Վերաբնիչ դատարանի 28.11.2008թ. որոշումը, (հասանելի է՝ <https://caselaw.findlaw.com/az-court-of-appeals/1425062.html> վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

¹⁰ Տե՛ս, Garrison N? A. Genomic Justice for Native Americans: Impact of the Havasupai Case on Genetic Research, Sci Technol Human Values. Author manuscript; available in PMC 2017 Feb 15. Published in final edited form as: Sci Technol Human Values. 2013; Published online 2012 Dec 21., 17 էջ, էջ 2-3, (հասանելի է՝ <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC5310710/> հրապարակման ամսաթիվը՝ 2012թ. դեկտեմբերի 21, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

¹¹ Տե՛ս, Roberts J. L., Progressive genetic ownership. University of Houston Law Center, 93 Notre Dame L. Rev. 1105 (2018), 69 էջ, էջ 1126, (հասանելի է՝ <https://scholarship.law.nd.edu/cgi/viewcontent.cgi?article=4774&context=ndlr> հրապարակման ամսաթիվը՝ 2018թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

¹² Տե՛ս, Nwabueze R. N., Biotechnology and the Challenge of Property: Rethinking Property Rights in Dead Bodies, Body Parts, and Traditional Knowledge. University of Toronto. November 2004, 410 էջ, էջ 207, (հասանելի է՝ file:///C:/Users/User/Downloads/nq_94387ocr.pdf հրապարակման ամսաթիվը՝ 2004թ. նոյեմբեր, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

¹³ Տե՛ս, Stanford Encyclopedia of Philosophy. Property and Ownership. First published Mon Sep 6, 2004; substantive revision Sat Mar 21, 2020, (հասանելի է՝ <https://plato.stanford.edu/entries/property/> հրապարակման ամսաթիվը՝ 2004թ. սեպտեմբերի 6, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

¹⁴ Տե՛ս, Nielsen, M. E. J., Kongsholm, N. C. H., & Schovsbo, J., Property and human genetic information. J Community Genet. 2019 Jan; 10(1): 95–107. Published online 2018 Apr 30, 13 էջ, էջ 97-98, (հասանելի է՝ <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC6325034/#CR14> հրապարակման ամսաթիվը՝ 2018թ. ապրիլի 30, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

¹⁵ Տե՛ս, Wolfrum R., The Principle of the Common Heritage of Mankind, Max-Planck-Institut für ausländisches öffentliches Recht und Völkerrecht, 1983, 26 էջմ էջ 1-2, (հասանելի է՝ https://www.zaoerv.de/43_1983/43_1983_2_a_312_337.pdf հրապարակման ամսաթիվը՝ 1983, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

¹⁶ Տե՛ս, Watts A. D., The Convention on the Regulation of Antarctic Mineral Resource Activities 1988, The International and Comparative Law Quarterly Vol. 39, No. 1 Published By: Cambridge University Press, (Jan., 1990), 14 էջ, էջ 169, (հասանելի է՝ <https://www.jstor.org/stable/760324> հրապարակման ամսաթիվը՝ 1990թ. հունվար, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

¹⁷ Տե՛ս, Tenenbaum E. S., A world park in Antarctica: the common heritage of mankind. Virginia Environmental Law Journal, Vol. 10, No. 1, 10th Anniversary Issue (Fall 1990), 28 էջ, էջ 112-117, (հասանելի է՝ https://www.jstor.org/stable/24782081?read-now=1&refreqid=excelsior%3A1f6aa59e59c5df6f60d943a6ba48e790&seq=4#page_scan_tab_contents, <http://www.velj.org/a-world-park-in-antarctica.html> հրապարակման ամսաթիվը՝ 1990թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

¹⁸ Տե՛ս, Scovazzi T., The Concept of Common Heritage of Mankind and the Genetic Resources of the Seabed beyond the Limits of National Jurisdiction. Agenda Internacional; Vol. 14, NОm. 25 (2007); 14, էջ 16-17, (հասանելի է՝ <https://revistas.pucp.edu.pe/index.php/agendainternacional/article/view/7337/7555> հրապարակման ամսաթիվը՝ 2007թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

¹⁹ Տե՛ս, Bovenberg J. A., Mining the Common Heritage of Our DNA: Lessons Learned From Grotius and Pardo, Duke Law & Technology Review 1-20 (2006), 19 էջ, էջ 11-19, (հասանելի է՝ <https://scholarship.law.duke.edu/cgi/viewcontent.cgi?article=1154&context=dltr> հրապարակման ամսաթիվը՝ 2006թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

²⁰ Տե՛ս, The Human Genome Project. National Human Genome Research institute (հասանելի է՝ <https://www.genome.gov/human-genome-project> վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

²¹ Տե՛ս, Closing Statement the Declaration of Bilbao & Conclusion. Fundacion BBV International workshop on the Human Genome Project Legal Aspects, Bilbao, 26 May 1993, 7 էջ, էջ 4, (հասանելի է՝ https://www.michaelkirby.com.au/images/stories/speeches/1990s/vol29/1010-Fundacion_BBV_-_Closing_Statement_-_The_Declaration_of_Bilbao_and_Conclusions.pdf հրապարակման ամսաթիվը՝ 1993թ. մայիսի 26, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

²² Տե՛ս, Sturges M. L., Who Should Hold Property Rights to the Human Genome. An Application of the Common Heritage of Humankind, American University International Law Review 13, no. 1 (1999): 44 էջ, էջ 245-251, (հասանելի է՝ <https://digitalcommons.wcl.american.edu/auilr/vol13/iss1/8/> հրապարակման ամսաթիվը՝ 1999թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

²³ Տե՛ս, Spectar J.M., The Fruit of the Human Genome Tree: Cautionary Tales about Technology, Investment, and the Heritage of Humankind, Loyola of Los Angeles International and Comparative Law Review, Rev. 1 (2001), 41 էջ, էջ 13, (հասանելի է՝ <https://digitalcommons.lmu.edu/cgi/viewcontent.cgi?article=1519&context=ilr> հրապարակման ամսաթիվը՝ 2001թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

²⁴ Տե՛ս, Roberts J. L., Progressive genetic ownership. University of Houston Law Center, 93 Notre Dame L. Rev. 1105 (2018), 69 էջ, էջ. 1141, (հասանելի է՝ <https://scholarship.law.nd.edu/cgi/viewcontent.cgi?article=4774&context=ndlr> հրապարակման ամսաթիվը՝ 2018թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բարսեղյան Ս. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս. (չորրորդ հրատարակություն) – Երևանի պետ. համալս. – Եր.: «Տիգրան Մեծ» հրատ., 2014 – 560 էջ, էջ 199-200,
2. Եվրոպայի Իրդ, Մարդու իրավունքները և կենսաբժշկությունը. Օվիեդոյի կոնվենցիա (CETS No. 164), Լրացուցիչ արձանագրություն (CETS No. 195) Նախարարների կոմիտեի Rec (2016)6., 224 էջ, էջ 9-10, (հասանելի է՝ <https://rm.coe.int/human-rights-and-biomedicine-convention-arm/1680a206db> հրապարակման ամսաթիվը՝ 2020 օգոստոս, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
3. Australian Government, Australian Law Reform Commission, The Protection Of Human Genetic Information In Australia (ALRC Report 96) / 20. Ownership Of Samples And The Human Tissue Acts / Ownership Of Human Genetic Samples, 28.07.2010, (<https://www.alrc.gov.au/publication/essentially-yours-the-protection-of-human-genetic-information-in-australia-alrc-report-96/20-ownership-of-samples-and-the-human-tissue-acts/ownership-of-human-genetic-samples/> հրապարակման ամսաթիվը՝ 2010թ. հուլիսի 28, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
4. Bovenberg J. A., Mining the Common Heritage of Our DNA: Lessons Learned From Grotius and Pardo, Duke Law & Technology Review 1-20 (2006), 19 էջ, էջ 11-19, (հասանելի է՝ <https://scholarship.law.duke.edu/cgi/viewcontent.cgi?article=1154&context=dltr> հրապարակման ամսաթիվը՝ 2006թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
5. Carvalho C. L., Genetic ownership and sharing? SA ORTHOPAEDIC JOURNAL Winter 2012 | Vol 11 No 2 ETHICS ARTICLE, 3 էջ, էջ 88, (հասանելի է՝ http://www.scielo.org.za/scielo.php?script=sci_arttext&pid=S1681-150X2012000200017 հրապարակման ամսաթիվը՝ 2012թ, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
6. Closing Statement the Declaration of Bilbao & Conclusion. Fundacion BBV International workshop on the Human Genome Project Legal Aspects, Bilbao, 26 May 1993, 7 էջ, էջ 4, (հասանելի է՝ https://www.michaelkirby.com.au/images/stories/speeches/1990s/vol29/1010-Fundacion_BBV_-_Closing_Statement_-_The_Declaration_of_Bilbao_and_Conclusions.pdf հրապարակման ամսաթիվը՝ 1993թ. մայիսի 26, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
7. Dworkin G., Should There Be Property Rights in Genes. Philosophical Transactions: Biological Sciences, Vol. 352, No. 1357, Human Genetics: Uncertainties and the Financial Implications Ahead (Aug. 29, 1997), 10 էջ, էջ 1078, (հասանելի է՝ https://www.jstor.org/stable/56522?seq=2#metadata_info_tab_contents հրապարակման ամսաթիվը՝ 1997թ. օգոստոսի 29, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
8. Garrison N. A. Genomic Justice for Native Americans: Impact of the Havasupai Case on Genetic Research, Sci Technol Human Values. Author manuscript; available in PMC 2017 Feb 15. Published in final edited form as: Sci Technol Human Values. 2013; Published online 2012 Dec 21., 17 էջ, էջ 2-3, (հասանելի է՝ <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC5310710/> հրապարակման ամսաթիվը՝ 2012թ. դեկտեմբերի 21, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
9. Havasupai Tribe of the Havasupai Reservation v. Arizona Board of Regents and Therese Ann Markow գործով Արիզոնա մահանգի Վերաբնիչ դատարանի 28.11.2008թ. որոշումը, (հասանելի է՝ <https://caselaw.findlaw.com/az-court-of-appeals/1425062.html> վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
10. John Moore V The Regents Of The University Of California Et Al. No. S006987. Supreme Court of California. Jul 9, 1990. գործով ԱՄՆ գերագույն դատարանի որոշումը, (հասանելի է՝ <https://law.justia.com/cases/california/supreme-court/3d/51/120.html> վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
11. Nielsen, M. E. J., Kongsholm, N. C. H., & Schovsbo, J., Property and human genetic information. J Community Genet. 2019 Jan; 10(1): 95–107. Published online 2018 Apr 30, 13 էջ, էջ 97-98, (հասանելի է՝

www.araratadutyjournal.com

- <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC6325034/#CR14> հրատարակման ամսաթիվը՝ 2018թ. ապրիլի 30, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
12. Nwabueze R. N., Biotechnology and the Challenge of Property: Rethinking Property Rights in Dead Bodies, Body Parts, and Traditional Knowledge. University of Toronto. November 2004, 410 էջ, էջ 207, (հասանելի է՝ file:///C:/Users/User/Downloads/nq_94387_ocr.pdf հրատարակման ամսաթիվը՝ 2004թ. նոյեմբեր, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
13. Roberts J. L., Progressive genetic ownership? University of Houston Law Center, 93 Notre Dame L. Rev. 1105 (2018), 69 էջ, էջ? 1122-1141, (հասանելի է՝ <https://scholarship.law.nd.edu/cgi/viewcontent.cgi?article=4774&context=ndlr> հրատարակման ամսաթիվը՝ 2018թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
14. Scovazzi T., The Concept of Common Heritage of Mankind and the Genetic Resources of the Seabed beyond the Limits of National Jurisdiction. Agenda Internacional; Vol. 14, NОm. 25 (2007); 14, էջ 16-17, (հասանելի է՝ <https://revis-tas.pucp.edu.pe/index.php/agendainternacional/article/view/7337/7555> հրատարակման ամսաթիվը՝ 2007թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
15. Spectar J.M., The Fruit of the Human Genome Tree: Cautionary Tales about Technology, Investment, and the Heritage of Humankind, Loyola of Los Angeles International and Comparative Law Review, Rev. 1 (2001), 41 էջ, էջ 13, (հասանելի է՝ <https://digitalcommons.lmu.edu/cgi/viewcontent.cgi?article=1519&context=ilr> հրատարակման ամսաթիվը՝ 2001թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
16. Stanford Encyclopedia of Philosophy. Property and Ownership? First published Mon Sep 6, 2004; substantive revision Sat Mar 21, 2020, (հասանելի է՝ <https://plato.stanford.edu/entries/property/> հրատարակման ամսաթիվը՝ 2004թ. սեպտեմբերի 6, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
17. Stanton A. A., Forfeited Consent: Body Parts in Eminent Domain. In book: Patenting Lives: Life Patents, Culture and Development, First edition, Chapter: 5, Publisher: AshgateEditors: Johanna Gibson, September 2008. 28 էջ, էջ 5-6, (հասանելի է՝ https://www.researchgate.net/publication/281640306_Forfeited_Consent_Body_Parts_in_Eminent_Domain հրատարակման ամսաթիվը՝ 2008թ. սեպտեմբեր, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
18. Sturges M. L., Who Should Hold Property Rights to the Human Genome. An Application of the Common Heritage of Humankind, American University International Law Review 13, no. 1 (1999): 44 էջ, էջ 245-251, (հասանելի է՝ <https://digitalcommons.wcl.american.edu/auilr/vol13/iss1/8/> հրատարակման ամսաթիվը՝ 1999թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
19. Tenenbaum E. S., A world park in Antarctica: the common heritage of mankind. Virginia Environmental Law Journal, Vol. 10, No. 1, 10th Anniversary Issue (Fall 1990), 28 էջ, էջ 112-117, (հասանելի է՝ https://www.jstor.org/stable/24782081?read-now=1&refreqid=excelsior%3A1f6aa59e59c5df6f60d943a6ba48e790&seq=4#page_scan_tab_contents, <http://www.velj.org/a-world-park-in-antarctica.html> հրատարակման ամսաթիվը՝ 1990թ., վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
20. The Human Genome Project. National Human Genome Research institute (հասանելի է՝ <https://www.genome.gov/human-genome-project> վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
21. Watts A. D., The Convention on the Regulation of Antarctic Mineral Resource Activities 1988, The International and Comparative Law Quarterly Vol. 39, No. 1 Published By: Cambridge University Press, (Jan., 1990), 14 էջ, էջ 169, (հասանելի է՝ <https://www.jstor.org/stable/760324> հրատարակման ամսաթիվը՝ 1990թ. հունվար, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),
22. Wolfrum R., The Principle of the Common Heritage of Mankind, Max-Planck-Institut für ausländisches öffentliches Recht und Völkerrecht, 1983, 26 էջ., էջ 1-2, (հասանելի է՝ https://www.zaoerv.de/43_1983/43_1983_2_a_312_337.pdf հրատարակման ամսաթիվը՝ 1983, վերջին այցելությունը՝ 2025թ. սեպտեմբերի 13),

References

1. Barseghyan T. K, Hayastani Hanrapetutyun qaghaqatsiakan iravunk. [Civil law of the Republic of Armenia] Arajin mas [First part], Fourth edition—Yerevan State University— Yerevan. “Tigran Mets” Publishing House, 2014 – 560 p., 199-200 pp. (In Armenian)
2. Yevropayi Khorurd [Council of Europe], Mardu Iravunknery ev kensabjshkutyuny, Oviedo konvencia, Lratsutsich ardnagrutyun, Nakharameri komite [Human Rights and Biomedicine, Oviedo Convention (CETS No. 164), Additional Protocol (CETS No. 195) Committee of Ministers Rec (2016)6], 224 p., 9-10 pp. (In Armenian)

Светлана Киракосян

“Офис примирителя финансовой системы” фонд,
Детский фонд Организации Объединённых Наций

РЕЗЮМЕ

*Генетическая последовательность и генетическая информация
как объект публичного и частного права*

В статье правовой статус генетической информации подвергается философско-правовому анализу в контексте публичного и частного права. В статье критически оценивается применимость классических теорий собственности и анализируется концепция «общего достояния человечества» как альтернативная модель. Обосновывается, что как сугубо частный, так и публичный подходы односторонни из-за дуалистической природы данных. Предлагается необходимость sui generis регулирования, которое сбалансирует права индивида с общественными интересами.

Ключевые слова: Генетический материал, физический образец, генетическая информация, право собственности, объект права, общее достояние человечества, информированное согласие, автономность, конфиденциальность.

Svetlana Kirakosyan

“Office of the financial system mediator” Foundation,
United Nations Children’s Fund Position,
Academic Title PhD Candidate

SUMMARY

Genetic sequence and genetic information as an object of public and private law

In the article the legal status of genetic information is subjected to a legal-philosophical analysis within the context of public and private law. The article critically assesses the applicability of classical property theories and analyzes the “common heritage of mankind” concept as an alternative model. It is argued that both purely private and public approaches are one-sided due to the dual nature of the data. The necessity of a sui generis regulation is proposed to balance individual rights with the public interest.

Key words: Genetic material, physical specimen, genetic information, property rights, object of law, common heritage of mankind, informed consent, autonomy, privacy.

Բնագիրը ներկայացվել է 06.08.2025թ.

Ընդունվել է տպագրության 28.08.2025թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության
ու պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, իրավաբանական
գիտությունների դոկտոր Գ. Դանիելյանը

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ գլխավոր դատախազի խորհրդակցական

ԸՆԴԵՐՔԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՆՔՆԱՏԻՊ ՕՐՅԵԿՏ

Սույն հոդվածում համալիր կերպով ուսումնասիրվել և վերլուծվել է ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների համակարգը, կատարվել է ընդերքի՝ որպես քաղաքացիական իրավունքների ինքնատիպ օբյեկտի համապարփակ հետազոտություն:

Հոդվածում կատարվել է ընդերքի՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտի հետազոտություն՝ ներկայացնելով ընդերքի և ընդերքի հետ ուղղակիորեն կապված քաղաքացիական իրավունքների այլ օբյեկտների՝ ընդերքի տեղամասի, օգտակար հանածոների և հողամասի հարաբերակցությունը:

Կատարված հետազոտության արդյունքում ներկայացվել է եզրահանգում առ այն, որ ընդերքը և ընդերքի տեղամասերը քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտներ են: Ընդ որում՝ առաջինը քաղաքացիական շրջանառությունից հանված, իսկ երկրորդը՝ սահմանափակ քաղաքացիական շրջանառության օբյեկտ է: Ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտը պայմանականորեն առանձնացված ընդերքի տեղամասն է, այլ ոչ թե ընդերքը: Ընդերքը օգտագործման տրամադրելու նպատակով ընդերքի տեղամասի առանձնացումը որպես քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտ իրավաբանական ֆիկցիա է: Այս համատեքստում առաջարկվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություն՝ նախատեսելով, որ օգտագործման տրամադրվում է ոչ թե ընդերքը, այլ ընդերքի տեղամասը:

Անդրադառնալով ընդերքի և օգտակար հանածոների հարաբերակցությանը՝ հիմնավորվել է այն փաստը, որ օգտակար հանածոները քաղաքացիական իրավունքների օբյեկտների են վերածվում ընդերքից արդյունահանվելու (ֆիզիկապես անջատվելու) պահից: Հոդվածում ներկայացվել են նաև ներպետական օրենսդրությամբ ընդերքից արդյունահանված օգտակար հանածոների մասնավոր սեփականության ինստիտուտի բարեփոխմանը նվիրված առաջարկներ:

Հիմնարարներ - ընդերքօգտագործման իրավունք, ընդերք, ընդերքի տեղամաս, օգտակար հանածո, քաղաքացիական իրավունքների օբյեկտներ, իրավաբանական ֆիկցիա, հողամաս:

Ներածություն

Ընդերքօգտագործման հարաբերությունները ծագում են քաղաքացիական իրավունքների տարաբնույթ նյութական և ոչ նյութական օբյեկտների շուրջ, որոնց շարքում առանձնանում են որոշակի խումբ օբյեկտներ (ընդերքի տեղամասեր, օգտակար հանածոներ, երկրաբանական տեղեկություն և այլն), որոնց շրջանառության հետ կապված հարաբերությունները, հաշվի առնելով ընդերքօգտագործման իրավահարաբերությունների կարգավորման հիբրիդային (հանրային և մասնավոր իրավական) հանգամանքը, ենթարկվում են ինքնատիպ իրավական կարգավորման: Նման պայմաններում ընդերքօգտագործման ոլորտում շրջանառվող քաղաքացիական իրավունքի ինքնատիպ օբյեկտների համակարգային ուսումնասիրությունը և վերլուծությունը կարևոր նշանակություն է ձեռք բերում ինչպես ներպետական իրավական համակարգի զար-

գացման, այնպես էլ ոլորտում առկա տեսական խնդիրների վերհանման և դրանց լուծման վերաբերյալ հիմնավոր առաջարկությունների ներկայացման համար:

Չնայած վերը նշված հանգամանքներին՝ հայրենական գրականության մեջ մինչ օրս ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների համակարգային հետազոտություն չի կատարվել, իսկ առանձին օբյեկտների շրջանառության առանձնահատկություններին նվիրված ուսումնասիրությունները և վերլուծությունները խիստ սակավաթիվ են և հիմնականում անդրադառնում են մասնավոր բնույթի հիմնահարցերի:

Սույն հոդվածի շրջանակում մեր նպատակն է կատարել ընդերքօգտագործման ոլորտում շրջանառվող քաղաքացիական իրավունքների օբյեկտների համակարգային հետազոտություն՝ կենտրո-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նանալով ընդերքի՝ որպես ընդերքօգտագործման ոլորտում շրջանառվող քաղաքացիական իրավունքների ինքնատիպ օբյեկտի առանձնահատկությունների վրա:

Սույն հետազոտության մեթոդոլոգիական հիմքը կազմում են գիտական ճանաչողության ընդհանուր (անալիզ, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա) և հատուկ (դրգմատիկ, իրավահամեմատական) մեթոդները:

Հիմնական հետազոտություն.

ՀՀ օրենսդրությունը չի բացահայտում «իրավունքի օբյեկտ» հասկացությունը, սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ 132-րդ հոդվածից բխում է, որ իրավունքի օբյեկտ ասելով օրենսդրական մակարդակում հասկանում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածում թվարկված օբյեկտները, որոնք կազմում են ՀՀ քաղաքացիական իրավունքների օբյեկտների համակարգը: Տեսական գրականության մեջ իրավունքի օբյեկտ հասկացության վերաբերյալ առանձնացված մոնիստական (անտագոնիստական³, իրային, գործողության⁴, իրավաբանական օբյեկտի տեսություններ) և պլյուրալիստական (նորմատիվիստական⁶ և բազմօբյեկտության⁷ տեսություններ) մոտեցումների համեմատական ուսումնասիրության և վերլուծության արդյունքում մենք առավել հակված ենք «իրավունքի օբյեկտ» հասկացության այն մեկնաբանությանը, որի համաձայն՝ իրավունքի օբյեկտն այն ամենն է, ինչի կապակցությամբ իրավունքի սուբյեկտների միջև ծագում են իրավահարաբերություններ, այլ ոչ թե բուն հարաբերությունները կամ գործողությունները: Իրավունքի օբյեկտի վերաբերյալ հենց նշված մոտեցումն է տեղ գտել ներպետական գրականության մեջ՝ Տ. Բարսեղյանի⁹ և Ա. Վաղարշյանի¹⁰, ինչպես նաև՝ Վ.Բ. Լեուշինի¹¹ աշխատություններում:

Նախանշված տեսանկյունից անդրադառնալով «ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտներ» և «ընդերքօգտագործման հարաբերություններում քաղաքացիական իրավունքների օբյեկտներ» հասկացությունների հարաբերակցությանը՝ պետք է նշել, որ դրանք ամբողջի և մասի հարաբերակցության մեջ են, քանի որ ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտները նաև ընդերքօգտագործման ոլորտում ծագող սահմանադրական, վարչական, էկոլոգիական, քրեական իրավահարաբերությունների տարրերն են¹²:

Ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտը քաղաքացիական իրավունքների օբյեկտ համարելու համար, բացի ընդերքօգտագործման հարաբերությունների մասնակցության փաստից պետք է օժտված լինի իրավունքի սուբյեկտի կողմից քաղաքացիաիրավական բնույթի գույքային և անձնական ոչ գույքային հարաբերություններում իր շահե-

րը բավարարելու նպատակով օգտագործվելու հնարավորությամբ¹³:

Իրավաբանական դոկտրինայում ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների դասակարգման հիմքում դրվել են տարբեր չափանիշներ՝ օբյեկտի նյութական կամ ոչ նյութական լինելը, դրա նկատմամբ ծագող քաղաքացիական իրավունքների բնույթը, ընդերքի հետ տվյալ օբյեկտի փաստական և իրավաբանական կապը, շրջակա միջավայրի համար օբյեկտի վտանգավորության աստիճանը, շրջանառունակությունը, հողի հետ տվյալ օբյեկտի կապը և այլն¹⁴:

Սույն հոդվածում ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների ուսումնասիրությունը կատարելիս կառաջնորդվենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածով, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են՝ 1) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, կրիպտոակտիվները, արժեթղթերը և գույքային իրավունքները, 2) աշխատանքները և ծառայությունները, 3) տեղեկատվությունը, 4) մտավոր գործունեության արդյունքները՝ ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն), 5) ոչ նյութական բարիքները:

Ընդերքօգտագործման հարաբերություններում որպես **գույք** հանդես են գալիս ընդերքի տեղամասերը, օգտակար հանածոները, արտադրական լցակույտերը, ընդերքօգտագործման թափոնները և այլն: Ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտ հանդիսացող գույքային իրավունք է օրինակ՝ ընդերքօգտագործման իրավունքը¹⁵: Ընդերքօգտագործման ոլորտում **արժեթղթերի** առանձին տեսակներ նախատեսված չեն, սակայն դրանց շրջանառությունը բացառված չէ:

Ընդերքօգտագործման ոլորտում որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված «**աշխատանքներ և ծառայություններ**» կարելի է առանձնացնել Օրենսգրքով նախատեսված երկրաբանահետախուզական աշխատանքները, օգտակար հանածոների արդյունահանման, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները, մարկշեյթերական փաստագրության վարման աշխատանքները, ստորերկրյա կառույցների շինարարության աշխատանքները և այլն:

Քաղաքացիական իրավունքների օբյեկտների համակարգում առանձին տեղ ունեն **մտավոր գործունեության արդյունքները**, որոնցից ընդերքօգտագործման ոլորտում կարելի է առանձնացնել երկրաբանական տեղեկությունը (որը միաժամանակ քաղաքացիական իրավունքների օբյեկտ է որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդ-

www.ardaradutyunjournal.com

վածի 3-րդ մասով նախատեսված տեղեկատվություն), ընդերքօգտագործման նախագծերը, տվյալների բազաները (օրինակ՝ հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների մասին տվյալների բազա) և վերջիններիս նկատմամբ մտավոր սեփականության գույքային և ոչ գույքային իրավունքները:

Ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների համակարգի հիմնգերոդ խումբը ոչ նյութական օբյեկտներն են՝ ընդերքօգտագործողի գործարար համբավը, օգտակար հանածոյի հանքավայրն առաջին հայտնաբերող ճանաչվելու իրավունքը¹⁶ և այլն:

Ամփոփելով՝ կարելի է կատարել եզրահանգում առ այն, որ ընդերքօգտագործման հարաբերություններում առկա են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածում սահմանված՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտների համակարգը կազմող օբյեկտների գրեթե բոլոր տեսակները՝ գույքը, աշխատանքները և ծառայությունները, տեղեկատվությունը, մտավոր սեփականությունը, ոչ նյութական բարիքները:

Անդրադառնալով ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների շրջանառումնակությանը՝ պետք է նշել, որ կան և՛ ազատ շրջանառության (ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի՝ (այսուհետ՝ նաև «Օրենսգրք»)՝¹⁸ 48-րդ հոդվածով նախատեսված օգտակար հանածոները և այլն), և՛ սահմանափակ շրջանառության (օրինակ՝ ընդերքի տեղամասերը, որոշակի տեսակի օգտակար հանածոները, ընդերքօգտագործման թափոնները, ընդերքօգտագործման իրավունքը և այլն), և՛ շրջանառությունից հանված օբյեկտներ (օրինակ՝ ընդերքը, երկրաբանական քարտեզները, հատակագծերը, հաշվետվությունները, ընդերքօգտագործողի գործարար համբավը, ոչ գույքային բնույթի հեղինակային իրավունքները, այլ ոչ նյութական օբյեկտները և այլն)¹⁹: Այսպիսով, ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտները ըստ շրջանառումնակության խիստ բազմազան են:

Ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների շարքում առաջնային է հենց ընդերքի՝ որպես քաղաքացիական իրավունքների ինքնուրույն օբյեկտի ուսումնասիրությունը և վերլուծությունը, քանի որ ընդերքօգտագործման ոլորտում մնացած օբյեկտների իրավական ռեժիմն ամանցված է ընդերքի իրավական ռեժիմից:

Սահմանադրության²⁰ նախաբանի համաձայն՝ Սահմանադրության հիմքում Հայաստանի անկախության մասին հռչակագիրն է, որի 7-րդ կետի համաձայն՝ ընդերքը ՀՀ ազգային հարստություն է և ժողովրդի սեփականությունն է²¹: Ինչպես տեսնում ենք, Սահմանադրությունը չի օգտագործում «ժո-

ղովրդի սեփականություն» հասկացությունը: Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ-ում ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է: Պետք է նշել, որ «պետության բացառիկ սեփականություն» և «ժողովրդի սեփականություն» հասկացությունների հարաբերակցությունը տեսական գրականության մեջ միանշանակ չի ընկալվել²²: Այս առումով պետք է համաձայնվել դոկտրինալ աղբյուրներում տեղ գտած այն մեկնաբանությանը, որ ժողովրդի անունից պետության սեփականության հարաբերություններում հանդես է գալիս պետությունը՝ ի դեմս պետական մարմինների²³: Այսինքն, այս երկու հասկացությունները արհեստական կերպով առանձնացնելու և տարբերակելու կարիք չկա: Պետական կամ ժողովրդի սեփականության իրավունքի սուբյեկտը պետությունն է, որը, տվյալ դեպքում, ընդերքի և դրանում պարփակված օգտակար հանածոների նկատմամբ սեփականության իրավագործությունները իրականացնելիս հանդես է գալիս Հայաստանի ժողովրդի անունից: Ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականության իրավագործությունները իրականացնելու հարցում պետության անունից հանդես է գալիս ՀՀ կառավարությունը (ՀՀ ընդերքի մասին 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետ)²⁴:

Ընդերքի ճանաչումը որպես պետության բացառիկ սեփականություն նաև ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի հիմնադրույթներից է (ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 4-րդ և 11-րդ հոդվածներ): Ներպետական օրենսդրությամբ ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականության սկզբունքից սահմանվում է երկու բացառություն: Առաջինը, իրավաբանական անձանց և քաղաքացիների կողմից իրենց սեփական հողամասերում մինչև 2 մետր խորությամբ ընդերքից տնտեսական և կենցաղային կարիքների բավարարման նպատակով պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանումն է (Օրենսգրքի 48-րդ հոդված)²⁵: Երկրորդը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված՝ հանրամատչելի գույք հավաքելու դեպքն է (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 175-րդ հոդված):

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ընդերքը հողածածկույթից ներքև, իսկ դրա բացակայության դեպքում՝ երկրի մակերևույթից, ջրավազանների կամ ջրհոսքերի հատակից ներքև՝ ըստ խորության տեղադրված երկրակեղևի մաս է, որը մատչելի է ընդերքօգտագործման համար: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ նաև ՇՄԱԳ օրենք)²⁶ ընդերքը դասում է շրջակա միջավայրի բաղադրիչների թվին (ՇՄԱԳ օրենքի 4-րդ հոդված): Հայրենական գրականության մեջ ընդերքը հիշատակվում է որպես բնական ռեսուրսների

սեփականության իրավունքի օբյեկտ²⁷ :

Ընդերքը որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է այն տարանջատել ընդերքի հետ անմիջականորեն կապված քաղաքացիական իրավունքների այլ օբյեկտներից՝ «**ընդերքի տեղամասից**», «**հողամասից**», «**օգտակար հանածոներից**»:

Այսպես, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով տարբերակվում են «**ընդերքի տեղամասերը**²⁸» և «**ընդերքը**»՝ որպես առանձին օբյեկտներ (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 9-րդ կետեր): Նշված համատեքստում հարց է ծագում՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտ է «**ընդերքը**», «**ընդերքի տեղամասերը**», թե՛ երկուսը միաժամանակ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասում «**ընդերքի մասերը**» (ոչ թե «**ընդերքը**») դասակարգվում են քաղաքացիական իրավունքների օբյեկտների շարքին և ըստ տեսակի համարվում են **անշարժ գույք** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մաս): Նշված նորմն ուսումնասիրելիս առաջին հայացքից թվում է, թե ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ընդերքի մասերը որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ ճանաչելը պետք է ենթադրեր դրանց՝ որպես անշարժ գույքի իրավական ռեժիմի առանձնահատկությունների սահմանում (ընդերքի մասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, գործարքների կնքման առանձնահատկություններ), ինչպես դա արվել է անշարժ գույքերի այլ տեսակների դեպքում (օրինակ՝ հողամասի): Սակայն, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ընդերքի մասերը հաջորդիվ այլևս չեն հիշատակվում:

Իրավաբանական գրականությունում արտահայտվել են հակասական կարծիքներ այն հարցի վերաբերյալ, թե արդյոք ընդերքը հանդիսանում է քաղաքացիական իրավունքների օբյեկտ: Այս առումով ձևավորված մոտեցումները կարելի է պայմանականորեն բաժանել **երեք խմբերի**: Առաջին խումբ հեղինակների կարծիքով թե՛ ընդերքը, թե՛ ընդերքի տեղամասերը չեն կարող դիտարկվել որպես գույք և դրվել քաղաքացիաիրավական շրջանառության մեջ, քանի որ դրանք բնական օբյեկտներ են, ֆիզիկապես չեն կարող առանձնացվել և օժտված չեն գույքին բնորոշ այլ հատկանիշներով (Ս.Ա. Ստեփանով, Օ.Ս. Սվիրոդովա)²⁹: Հեղինակների մյուս խմբի կարծիքով ընդերքը չի կարող լինել քաղաքացիական իրավունքների օբյեկտ, սակայն քաղաքացիական իրավունքների օբյեկտ է դառնում ընդերքի տեղամասը, որը որոշակի սահմանանշումներով առանձնացված է (Ի.Ա. Գրոզով, Վ.Ա. Ուդինցեվ)³⁰ : Երրորդ խումբ հեղինակների կարծիքով թե՛ ընդերքը, թե՛ ընդերքի տեղամասը քաղաքացիական իրավունքների օբյեկտ են (Ս.Պ. Մորոզ, Ի.Պ. Պիսկով). ընդ որում, ընդերքը քաղա-

քացիական շրջանառությունից հանված օբյեկտ է, իսկ ընդերքի տեղամասը՝ սահմանափակ շրջանառու օբյեկտ :

Մենք համամիտ ենք վերջին մոտեցման հետ, քանի որ ընդերքը քաղաքացիական իրավունքների օբյեկտ պետք է համարել միայն ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականության իրավունքը ճանաչելու տեսանկյունից: Իսկ **ընդերքի տեղամասը** քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտ ճանաչելը հնարավորություն է տալիս ընդերքի անհատականացված հատվածը վերածել շրջանառության մեջ գտնվող օբյեկտի: Հակառակ պարագայում ընդերքօգտագործման իրավունքը ձեռք կբերի առարկայագուրկ բնույթ և ընդերքի մասերի օգտագործումը կդառնա իրավական առումով անհնարին:

Այսպես, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ «**ընդերքի տեղամասը**» որոշակի աշխարհագրական սահմանանշում պարունակող ընդերքի մասն է, որում պետք է իրականացվեն ընդերքօգտագործման աշխատանքներ: Նշված սահմանումից բխում է, որ ընդերքի տեղամասերը որպես քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտ ընդերքից առանձնացնելու և դրանց իրավական ռեժիմը օրենսդրական կարգավորման ենթարկելու նպատակը ընդերքօգտագործման նպատակով ընդերքի տեղամասերի քաղաքացիաիրավական շրջանառության կազմակերպումն է: Ըստ այդմ էլ, ընդերքօգտագործման իրավունքը ծագում է ընդերքի կոնկրետ տեղամասի, այլ ոչ թե ընդերքի նկատմամբ: Այսպիսով, ընդերքի տեղամասերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքով՝ ընդերքի մասերի) առանձնացումը կրում է պայմանական բնույթ, որի նպատակն է օրենսդրությամբ ստեղծել բացառապես ընդերքօգտագործման նպատակներով պետության կողմից **ընդերքը** պայմանական մասերի առանձնացնելու և որպես անհատապես որոշվող անշարժ գույք քաղաքացիաիրավական շրջանառության մեջ դնելու իրավական հիմքեր: Հենց այդ է պատճառը, որ ընդերքի տեղամասերի առանձնացումը իրավաբանական դոկտրինայում համարում են որպես **իրավաբանական ֆիկցիա**³², իսկ ընդերքի տեղամասերը՝ **պայմանական օբյեկտներ** (“*sigulae res*”)³³ :

Այսպիսով, ՀՀ օրենսդրությամբ ընդերքի տեղամասերի իրավական ռեժիմի վերը նշված առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ ընդերքի տեղամասերը քաղաքացիական իրավունքների սահմանափակ շրջանառու օբյեկտներ են, դրանց քաղաքացիաիրավական շրջանառությունը թույլ է տրվում միայն ընդերքօգտագործման (օգտակար հանածոյի արդյունահանման կամ երկրաբանական ուսումնասիրությունների) նպատակով, ինչի արդյունքում

պետության և ընդերքօգտագործողի միջև ծագում են իրային և պարտավորական հարաբերություններ: Իսկ ընդերքօգտագործման նպատակը ոչ թե ընդերքի տեղամասի փոխանցումն է ընդերքօգտագործողի տիրապետմանը, այլ **գույքի՝ ընդերքի տեղամասի փոխակերպումը մեկ այլ գույքի (օգտակար հանածո, երկրաբանական տեղեկություն և այլն)**, որն իրականացվում է օգտակար հանածոների արդյունահանման կամ երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման միջոցով³⁴:

Նախանշված տեսանկյունից անդրադառնալով ՀՀ օրենսդրությամբ ընդերքի և ընդերքի տեղամասերի իրավական ռեժիմների հարաբերակցությանը՝ նշենք, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով **ընդերքը**, այլ ոչ թե **ընդերքի տեղամասը** օգտագործման տրամադրելու վերաբերյալ կարգավորում: Մինչդեռ, ինչպես վերը նշել ենք, ընդերքը շրջանառությունից հանված քաղաքացիական իրավունքների օբյեկտ է և հնարավոր չէ որպես անհատապես որոշվող գույք առանձնացնել: Ուստի, օգտագործման կարող է տրամադրվել ոչ թե ընդերքն, այլ ընդերքի տեղամասերը՝ որպես անհատապես որոշվող անշարժ գույք, որը քաղաքացիական իրավունքների ինքնուրույն օբյեկտ ճանաչելու նպատակը հենց ընդերքօգտագործման նպատակների իրականացումն է: Հետևաբար, ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ կարող է լինել ոչ թե ընդերքը, այլ կոնկրետ սահմանանշումներով ընդերքի տեղամասը (Օրենսգրքի 37-րդ, 53-րդ հոդվածներ):

Նշյալ համատեքստում գտնում ենք, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում անհրաժեշտ է ամրագրել ընդերքի տեղամասերի վերաբերյալ իրավաբանական ֆիկցիան, որի համաձայն՝ պետությունն իրավունք ունի **ոչ թե ընդերքը**, ինչպես սահմանված է Օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասում, այլ՝ **ընդերքի տեղամասերը** տրամադրել բացառապես ընդերքօգտագործման նպատակներով: Մեր կարծիքով, նշված իրավաբանական ֆիկցիայի ամրագրումը ընդերքի տեղամասի նկատմամբ պետության սեփականության իրավագործությունների օրենսդրական հիմքն է:

Ողջ վերոգրյալի յույսի ներքո առաջարկում ենք ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 11-րդ հոդվածում կատարել փոփոխություն և «որը կարող է» բառակապակցությունը փոխարինել «իսկ ընդերքի տեղամասերը կարող են» բառակապակցությամբ: Արդյունքում, հոդվածը կունենա ներքոշարադրյալ բովանդակությունը.

«1. Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է, իսկ ընդերքի տեղամասերը կարող են տրամադրվել օգտագործման միայն երկրաբանական ուսումնասի-

րությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով»:

Ընդերքի հետ չի նույնանում և քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտ է նաև **հողամասը** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ գլուխ): Ընդերքօգտագործման հետ կապված հողայի հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և ՀՀ հողային օրենսգրքով³⁵: Նշենք, որ ՀՀ իրավական համակարգում գործում է ընդերքի և հողամասի նկատմամբ սեփականության իրավունքների տարանջատման սկզբունքը (“Jura Regalia”³⁶): Ընդ որում, ներպետական օրենսդրությամբ ընդերքօգտագործման ոլորտում հողային հարաբերությունների՝ ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման գործընթացից տարանջատված կարգավորումը գործնականում առաջացնում է խնդիրներ, որոնք հայրենական իրավաբանական գրականության մեջ դարձել են համալիր հետազոտության առարկա³⁷: Ուստի, սույն հետազոտության շրջանակում նշված հարցերին առանձին անդրադարձ չենք կատարի:

Ինչ վերաբերում է ընդերքի և օգտակար հանածոների հարաբերակցությանը, ապա պետք է նշել, որ ընդերքում պարունակվող օգտակար հանածոների արդյունահանումն ընդերքից ընդերքօգտագործման հիմնական նպատակն է³⁸, սակայն **ընդերքը և ընդերքից արդյունահանված օգտակար հանածոները** քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտներ են: Մենք համաձայն են տեսական գրականության մեջ տեղ գտած այն մտեցմանը, որ օգտակար հանածոները բնական վիճակում՝ ընդերքում տեղակայված լինելով (“in situ”), իրավունքի առանձին օբյեկտներ չեն. դրանք քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտներ են դառնում ընդերքից առանձնացվելու պահից³⁹:

Եթե ընդերքը սահմանադրական մակարդակով ճանաչված է որպես պետության բացառիկ սեփականությունը, ապա այլ է իրավիճակը օգտակար հանածոների դեպքում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պետության սեփականությունն են միայն այն բնական պաշարները (տվյալ դեպքում՝ օգտակար հանածոները), որոնք քաղաքացիներին, իրավաբանական անձանց և համայնքներին չեն պատկանում: Այսպիսով, օրենսդիրը բացառել է օբյեկտիվ իրականության մեջ «տիրագուրկ» օգտակար հանածոների գոյության հնարավորությունը: Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, չնայած ուղղակիորեն չի նախատեսում օգտակար հանածոների նկատմամբ ընդերքօգտագործողի սեփականության իրավունքը, ամրագրում է արդյունահանված օգտակար հանածոները տնօրինելու ընդերքօգտագործողի իրավունքը: Ստացվում է, որ չնայած ըն-

դերքը պետության բացառիկ սեփականությունն է, օգտակար հանածոների նկատմամբ ընդերքօգտագործման թույլտվության հիմքով (առանց լրացուցիչ պայմանագրի կնքման) **ընդերքի տեղամասից արդյունահանելու** (ընդերքից ֆիզիկապես առանձնացվելու) **պահից** է ծագում ընդերքօգտագործողի սեփականության իրավունքը, իսկ ընդերքօգտագործողը դրա դիմաց պետությանը վճարում է ընդերքօգտագործման վճարներ: Թերևս ընդերքից արդյունահանված օգտակար հանածոների իրավական ռեժիմի նշված առանձնահատկությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ տեսական գրականության մեջ տեղ է գտել մոտեցում առ այն, որ ընդերքի տեղամասից արդյունահանված օգտակար հանածոների նկատմամբ տարածվում է գույքի օգտագործման արդյունքում ստացված պտուղների, եկամուտների, արտադրանքի իրավական ռեժիմը⁴⁰, ըստ որի՝ գույքի օգտագործման արդյունքում ստացածի սեփականատերը գույքը օգտագործնողն է (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 144-րդ հոդված):

Այս կանոնից բացառություն է նախատեսված միայն նավթի և բնական գազի արդյունահանման դեպքում, որոնց նկատմամբ կիրառվում է արդյունահանված արտադրանքը պետության և ընդերքօգտագործողի միջև բաժանելու իրավական ռեժիմը⁴¹, սակայն նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման հարաբերությունների վրա Օրենսգիրքը չի տարածվում:

Պետք է նշել, որ ընդերքից արդյունահանված օգտակար հանածոների իրավական ռեժիմը տարբեր իրավական համակարգերում ունի որոշակի տարբերություններ: Այսպես, ընդերքից արդյունահանված օգտակար հանածոները, որոշ բացառություններով կամ սահմանափակումներով, ընդերքօգտագործողի մասնավոր սեփականությունն են դառնում նաև օտարերկրյա պետությունների՝ Ավստրալիայի⁴², Ղազախաստանի⁴³, Սաուդյան Արաբիայի⁴⁴, Անգոլայի⁴⁵, Բրազիլիայի, Չինաստանի օրենսդրություններով: Օգտակար հանածոների նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքից սահմանված սահմանափակումների մասով հետաքրքրական է Ղազախաստանի «Ընդերքի և ընդերքօգտագործման մասին» օրենսգիրքը, որի համաձայն՝ պետությունն ունի ռազմավարական նշանակության հանքավայրերում ցանկացած այլ սուբյեկտի նկատմամբ ընդերքօգտագործման իրավունք ստանալու նախապատվության իրավունք⁴⁶: Պետական մասնակցությամբ կազմակերպությունների միջոցով կարևոր ռազմավարական նշանակության օգտակար հանածոների շրջանառուականության հատուկ կանոններ են նախատեսված նաև ՌԴ, Չինի օրենսդրություններով⁴⁷: Իսկ Չինաստանի օրենսդրությամբ սահմանված է որոշակի

տեսակի օգտակար հանածոների օտարումը միայն պետության կողմից նախապես որոշված շրջանակի սուբյեկտների:

Մեր կարծիքով, Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով օգտակար հանածոների նկատմամբ սեփականության իրավունք անուղակիորեն նախատեսելու՝ ՀՀ օրենսդրությամբ որդեգրված մոտեցումը խնդրահարույց է ընդերքօգտագործման ոլորտում հանրային և մասնավոր շահերի արդյունավետ հավասարակշռման տեսանկյունից, քանի որ դրա դիմաց ընդերքօգտագործողը պետությանը միայն վճարում է բնօգտագործման վճարներ (ՀՀ հարկային օրենսգրքի 10-րդ բաժին, Օրենսգրքի 61-րդ հոդվածի 4-րդ մաս): Նշված համատեքստում գտնում ենք, որ անհրաժեշտ է դիտարկել ներպետական օրենսդրությամբ օգտակար հանածոների նկատմամբ անուղակիորեն ընդերքօգտագործողի մասնավոր սեփականությունն ամրագրող իրավական նորմերին այլընտրանք հանդիսացող և օտարերկրյա պետություններում կիրառվող կառուցակարգերը՝ պետական կազմակերպությունների միջոցով ընդերքօգտագործում իրականացնելու նախապատվության իրավունքը⁴⁹ (Ղազախաստան⁵⁰), առանձին տեսակի օգտակար հանածոների շրջանառության նկատմամբ պետական վերահսկողության սահմանումը, ինչպես նաև՝ արտադրանքի բաժանման պայմանագրերի⁵¹ (“Production sharing”) կամ համատեղ ձեռնարկության պայմանագրերի (“Joint venture agreements”)⁵² կիրառումը: Վերջին դեպքում պետությունը կարող է պետական կազմակերպությունների միջոցով համագործակցել մի⁵³ քանի մասնավոր կազմակերպությունների հետ, ինչը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի ներկայիս կարգավորումների պարագայում հնարավոր չէ, քանի որ ընդերքօգտագործման իրավունքը կարող է պատկանել միայն մեկ իրավաբանական անձի (Օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մաս):

Եզրակացություն

Ամփոփելով սույն հետազոտությունը՝ եկել ենք մի շարք եզրահանգումների, որոնցից առավել էականները հանգում են հետևյալին՝

1. «Ընդերք» և «ընդերքի տեղամասեր» եզրույթների վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ ձևավորված մոտեցումների քննարկման արդյունքում հիմնավորել ենք, որ ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտներ են թե՛ ընդերքը, թե՛ ընդերքի տեղամասերը: Իսկ ընդերքօգտագործման հարաբերություններում հանդես եկող քաղաքացիական իրավունքների այլ օբյեկտները ածանցյալ բնույթ են կրում այս հարաբերություններում առանցքային դերակատարություն ունեցող օբյեկտներից՝ «ընդերքից» և «ընդերքի տեղամասից»:

www.artaradatoryunjournal.com

2. Ընդերքը և ընդերքի տեղամասերը ունեն տարբեր քաղաքացիաիրավական ռեժիմներ: Ընդերքը քաղաքացիական շրջանառությունից հանված օբյեկտ է, իսկ ընդերքի տեղամասը՝ սահմանափակ շրջանառու օբյեկտ: Օրենսդրությամբ ընդերքից ընդերքի տեղամասերի (ընդերքի մասերի) առանձնացման նպատակն է ստեղծել բացառապես ընդերքօգտագործման նպատակներով պետության բացառիկ սեփականությունը հանդիսացող **ընդերքը** պայմանական մասերի բաժանելու և որպես անհատապես որոշվող անշարժ գույք ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման եղանակով քաղաքացիաիրավական շրջանառության մեջ դնելու իրավական հիմքեր: Այս տեսանկյունից արձանագրվել է, որ օրենսդրությամբ ընդերքի տեղամասերի առանձնացումը պետք է դիտարկել որպես **իրավաբանական ֆիզցիա**:

Չնայած ՀՀ օրենսդրությունը տարբերակում է ընդերքը և ընդերքի տեղամասերը՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պետությունը օգտագործման է տրամադրում ընդերքը: Մինչդեռ, վերը կատարված վերլուծության համատեքստում գտնում ենք, որ պետությունը ընդերքօգտագործման իրավունքով տրամադրում է ոչ թե ընդերքը, որը քաղաքացիական շրջանառությունից հանված օբյեկտ է, այլ՝ ընդերքի տեղամասերը՝ որպես քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտներ: Ընդերքօգտագործման իրավունքը ծագում է կոնկրետ ընդերքի տեղամասի, ոչ թե ընդերքի նկատմամբ:

Առաջարկվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 11-րդ հոդվածում կատարել փոփոխություն և այն շարադրել հետևյալ բովանդակությամբ. «1. Հա-

յաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է, **իսկ ընդերքի տեղամասերը կարող են** տրամադրվել օգտագործման միայն երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով»:

3. Օգտակար հանածոները քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտներ են դառնում ընդերքից արդյունահանվելու (ընդերքից ֆիզիկապես անջատվելու) պահից, իսկ մինչև արդյունահանումը դրանք քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտներ չեն: Ըստ այդմ էլ, օգտակար հանածոների նկատմամբ ընդերքօգտագործողի սեփականության իրավունքը ծագում է ընդերքից դրանց առանձնացման պահից:

Ներպետական օրենսդրությամբ օգտակար հանածոների նկատմամբ «անուղղակիորեն» մասնավոր սեփականության իրավունք նախատեսող կարգավորումներին այլընտրանք կարող են դառնալ այլ պետություններում կիրառվող պետական կամ պետության մասնակցությամբ կազմակերպությունների միջոցով ընդերքօգտագործում իրականացնելու նախապատվության իրավունքը, առանձին տեսակի օգտակար հանածոների շրջանառության նկատմամբ պետական վերահսկողության սահմանումը, ինչպես նաև՝ արտադրանքի բաժանման պայմանագրերի (“Production sharing”) կամ համատեղ ձեռնարկության պայմանագրերի (“Joint venture agreements”) կիրառումը:

¹ Տե՛ս, Բաղալյան Ս. Ս., «Ընդերքօգտագործման ոլորտում հողային հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 1(3) 2019, ԵՊՀ հրատ., Երևան 2020, էջ 43-60; տե՛ս նաև Գեղամյան Օ.Մ., «Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքի որոշ առանձնահատկությունները ՀՀ օրենսդրության մեջ և պրակտիկայում», Պետություն և իրավունք, թիվ 1 (86) 2020թ., էջ 4-12:

² ՀՀ քաղաքացիական օրենսգիրք: Ընդունվել է՝ 05.05.1998թ., Ուժի մեջ է մտել՝ 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

³ Տե՛ս, Գամբարով Ю.С., Гражданское право. Общая часть. Лекции. М. 1898/ Классика Российского права, էջ 666. <http://civil.consultant.ru/reprint/books/160/665.html> (վերջին այցելություն՝ 18.07.2025):

⁴ Տե՛ս, Иоффе О.С., Избранные труды по гражданскому праву: из истории цивилистической мысли. Гражданское правоотношение. Критика теории “хозяйственного права”, http://civil.consultant.ru/elib/books/3/page_60.html (վերջին այցելություն՝ 05.08.2025):

⁵ Տե՛ս, Чеговадзе Л.А., Структура и состояние гражданского правоотношения. М. Статут. 2004, էջ 222.

⁶ Տե՛ս, Кечекьян С.Ф., Правоотношения в социалистическом обществе. М.: Изд-во АН СССР, 1958, էջ 80.

⁷ Տե՛ս, Дмитриев М.А., Понятие и система объектов гражданских прав / Юрclub:

<http://www.yurclub.ru/docs/civil/article267.html> (վերջին այցելություն՝ 19.01.2025):

⁸ Տե՛ս, Mikheil B., Object of Civil Legal Relations (November 3, 2012). TSU Journal of Law, 01/2012, էջ 33.

<https://ssrn.com/abstract=3783716> (վերջին այցելություն՝ 05.08.2025):

⁹ Տե՛ս, Բարսեղյան Ս. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս (չորրորդ հրատարակություն), Երևանի պետ. համալսարան, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2014, էջ 180:

¹⁰ Տե՛ս, Վաղարշյան Ա.Գ., Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն, ԵՊՀ, Եր.: Հեղինակային հրատարակություն, 2011, էջ 257:

¹¹ Տե՛ս, Елюбаев Ж. С., Проблемы правового регулирования недропользования: отечественный опыт и зарубежная практика. Монография, Алматы, 2010, էջ 29:

¹² Տե՛ս, Левочки В. В., «Объекты гражданских прав в недропользовании», Москва-2018, Федеральное государственное бюджетное образовательное учреждение высшего образования «Московский государственный юридический университет имени О. Е. Кутафина (МГЮА)», էջ 29:

¹³ Տե՛ս, նույն տեղում, էջ 29:

¹⁴ Տե՛ս, նույն տեղում, 218 էջ:

¹⁵ Տե՛ս, Campbell N.J., JR., Principles of Mineral Ownership in The Civil Law and Common Law System, Proceedings (American Bar Association. Section of International and Comparative Law), (August 28, 1956), էջ 42.

<https://www.jstor.org> (վերջին այցելություն՝ 25.05.2024թ.):

¹⁶ Պետք է նշել, որ օգտակար հանածոյի հանքավայրի առաջին հայտնաբերող ճանաչվելու ոչ գույքային իրավունքը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով ուղղակիորեն նախատեսված չէ, սակայն Օրենսգիրքը նախատեսում է .արտոնյալ դիմումատուի իրավական կարգավիճակը, որն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու ընդերքօգտագործման իրավունք կրողին (այսինքն՝ ընդերքի տվյալ տեղամասում առաջինը օգտակար հանածոյի պաշարներ հայտնաբերած սուբյեկտին) տալիս է ընդերքի տվյալ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման համար իրավունք ձեռք բերելու նախապատվության գույքային իրավունք:

¹⁷ ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք: Ընդունվել է 28.11.2011: Ուժի մեջ է մտել 01.01.2012: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2011.12.21/69(872) Հոդ.1661:

¹⁸ Ընդունվել է 28.11.2011: Ուժի մեջ է մտել 01.01.2012: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2011.12.21/69(872) Հոդ.1661:

¹⁹ Տե՛ս, Левочки В. В., «Объекты гражданских прав в недропользовании», էջ 51-53:

²⁰ ՀՀ Սահմանադրություն: Ընդունվել է 06.12.2015: Ուժի մեջ է մտել 22.12.2015: Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

²¹ Ի դեպ, այս դրույթն արտացոլված էր նաև Հայկական ԽՍՀ 1978 թվականի Սահմանադրության 11-րդ հոդվածում:

²² Տե՛ս, Прокаев А. В., Гражданско-правовое регулирование отношений в сфере недропользования, 12.00.03 - гражданское право, предпринимательское право, семейное право, международное частное право, Саратов-2010, էջ 36-39:

²³ Տե՛ս, Прокаев А. В., նշվ. աշխատ., էջ 38:

²⁴ Տե՛ս, ՀՀ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն, ԱՃԹՆ գեկույց (2019թթ.), էջ 55, <https://www.citi.am/hy/annual-reports/2021> (վերջին այցելություն՝ 09.02.2024թ.):

²⁵ Տե՛ս, ՀՀ կառավարության .Իրավաբանական անձանց և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի սահմաններում ընդերքօգտագործման կարգը սահմանելու եվ ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի N 1932-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին 21.02.2013 թվականի N 152-Ն որոշումը:

²⁶ Ընդունվել է՝ 21.06.2014: Ուժի մեջ է մտել՝ 09.08.2014: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2014.07.30/41(1054) Հոդ.636:

²⁷ Տե՛ս, Գեղամյան Օ. Մ., Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքի որոշ առանձնահատկությունները ՀՀ օրենսդրության մեջ և պրակտիկայում, Պետություն և իրավունք, 2020, էջ 4-12:

²⁸ Մեր կարծիքով Օրենսգրքով .ընդերքի տեղամաս ստելով օրենսդիրը նկատի է ունեցել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ընդերքի մասերը: Ուստի, նշված տեսանկյունից առկա է նաև .Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում:

²⁹ Տե՛ս, Степанов С.А., Недвижимое имущество в гражданском праве. М.: Статут, 2004, էջ 69:

³⁰ Տե՛ս, Дроздов И. А., О развитие правового регулирования недропользования, / И.А. Дроздов // Вестник Высшего Арбитражного суда РФ, 2007, №8, էջ 31:

³¹ Տե՛ս, Писков П.И., Участки недр как объекты гражданских прав / Право собственности: актуальные проблемы / отв. ред. В.Н. Литовкин, Е.А. Суханов, В.В. Чубаров; Ин-т законод. и сравнит. Правоведения М.: Статут, 2008, էջեր 380-413:

³² Տե՛ս, Третьякова Е., Правовой статус пользователя недр как особого участника предпринимательской деятельности//ЭП. 2023. №3 (181), էջ 80. <https://cyberleninka.ru/article/n/pravovoy-status-polzovatelya-ne-dr-kak-osoboro-uchastnika-predprinitatelskoy-deyatelnosti> (վերջին այցելություն՝ 05.02.2025թ.):

³³ Տե՛ս, Неделько А. А., Гражданско-правовой договор добычи полезных ископаемых; Научный руководитель - к.ю.н., профессор И.В. Бакаева, Казань -2015, էջ 29:

³⁴ Տե՛ս, նույն տեղում, էջ 97:

³⁵ Տե՛ս, Համաշխարհային բանկ, .Էս-Էլ Ար-Քոնսալթինգս, .ԱՎԱԳ Սոլյուշնս, ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, ՀԱՀ-ի Թորքիսանջյանի անվան քաղաքականության վերլուծության կենտրոն, Համաշխարհային բանկի կայունության ռազմավարական գնահատում - Հայաստան, 2016, էջ 66:

³⁶ Տե՛ս, Campbell N.J., նշվ. աշխատ., էջ 40, <https://www.jstor.org> (վերջին այցելություն՝ 25.05.2024):

³⁷ Տե՛ս, Բաղայան Ս. Ս., Ընդերքօգտագործման ոլորտում հողային հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում | ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 1(3) 2019, ԵՊՀ; գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, Երևան, ԵՊՀ, 2020, էջեր 43-60:

³⁸ Տե՛ս, Գեղամյան Օ. Ս., Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքի որոշ առանձնահատկությունները ՀՀ օրենսդրության մեջ և պրակտիկայում, Պետություն և իրավունք, թիվ 1 (86) 2020թ., էջ 8:

³⁹ Տե՛ս, Неделько А. А., նշվ. աշխատ., էջ 29:

⁴⁰ Տե՛ս, Левочки В. В., Добытые ресурсы недр как объекты гражданских прав: анализ законодательства // Вестник московского городского педагогического университета. Серия .Юридические науки, 2017, №3 (27), էջեր 127-141.

⁴¹ Տե՛ս, ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 01-ի Նսվթի և բնական գազի արտադրանքի բաժանման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին 1421-Ն որոշումը:

⁴² Տե՛ս, Tarrant J., Ownership of mining product, tailings and minerals, (2005) 24 ARELJ, էջ 324:

⁴³ Տե՛ս, Code of the Republic of Kazakhstan of December 27, 2017 No. 125-VI ZRK “About Subsoil and Subsurface Use” (as amended on 21.05.2024), հոդված 15. <https://online.zakon.kz/Document/> (վերջին այցելություն՝ 06.03.2025թ.):

⁴⁴ Տե՛ս, <https://mining.smsc.sa/resources/images/docs/miningInvestmentE.pdf> (վերջին այցելություն՝ 10.08.2025թ.):

⁴⁵ Տե՛ս, Law Business Research Ltd, “The Mining Law Review” 9th ed., UK, 2020; ISBN: 978-1-83862-481-1, էջ 3, 12, 28, 64, 214:

⁴⁶ Տե՛ս, <https://unicaselaw.com/blog/amendments-to-the-code-on-subsoil-and-subsoil-use> (վերջին այցելություն՝ 08.03.2025թ.):

⁴⁷ Տե՛ս, Третьякова Е., նշվ. աշխատ., էջեր 78, 84:

⁴⁸ Տե՛ս, “Mineral Resources Law of the People’s Republic of China” (adopted on March 19 1986, and amended on August 29 1996, and August 26 2009 by the Standing Committee of the National People’s Congress), հոդված 34. <https://english.mec.gov.cn/Resources/laws> (վերջին այցելություն՝ 05.08.2025թ.):

⁴⁹ Տե՛ս, <https://eiti.org/state-owned-enterprises> (վերջին այցելություն՝ 05.08.2025թ.):

⁵⁰ Տե՛ս, Code of the Republic of Kazakhstan of December 27, 2017 No. 125-VI ZRK “About Subsoil and Subsurface Use” (as amended on 21.05.2024), հոդվածներ 43 և 46:

⁵¹ Հիմնականում կիրառվում են նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման ոլորտում <https://eiti.org/guidance-notes/contracts-and-licenses> (վերջին այցելություն՝ 04.08.2025թ.): տե՛ս նաև Sutcliffe S., Mining Law: Jurisdictional Comparisons. Thomson Reuters; 2012, էջ 210:

⁵² Տե՛ս, Kienzler D. et al. Natural Resource Contracts as a Tool for Managing the Mining Sector, (2015), էջ 18, https://scholarship.law.columbia.edu/sustainable_investment_staffpubs/21 (վերջին այցելություն՝ 10.01.2025թ.):

⁵³ Տե՛ս, նույն տեղում, էջ 18:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն: Ընդունվել է 06.12.2015: Ուժի մեջ է մտել 22.12.2015: Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք: Ընդունվել է՝ 05.05.1998թ., Ուժի մեջ է մտել՝ 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

3. ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք: Ընդունվել է 28.11.2011: Ուժի մեջ է մտել 01.01.2012: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2011.12.21/69(872) Հոդ.1661:

4. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը: Ընդունվել է՝ 21.06.2014: Ուժի մեջ է մտել՝ 09.08.2014: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2014.07.30/41(1054) Հոդ.636:

5. ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի «Իրավաբանական անձանց և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի սահմաններում ընդերքօգտագործման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի N 1932-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 152-Ն որոշումը:

6. ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 01-ի «Նավթի և բնական գազի արտադրանքի բաժանման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» 1421-Ն որոշումը:

7. Բաղայան, Ս.Ս. Ընդերքօգտագործման ոլորտում հողային հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 1(3) 2019, ԵՊՀ հրատ., Երևան 2020, էջեր 43-60:

8. Բարսեղյան, Տ.Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս (չորրորդ հրատարակչություն), Երևանի պետ. համալսարան, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2014, 560 էջ:

www.araratadutyjournal.com

9. Գեղամյան, Օ.Մ. Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքի որոշ առանձնահատկությունները ՀՀ օրենսդրության մեջ և պրակտիկայում. Պետություն և իրավունք, քիվ 1 (86) 2020թ., էջեր 8, 4-12:
10. Համաշխարհային բանկ, «Էս-Էլ Ար Քոնսալթինգ», «ԱՎԱԳ Սոլյուշնս», ՀԱՀ-ի Պատասխանատու հանրադրությունաբերության կենտրոն, ՀԱՀ-ի Թուրքիանյազանի անվան քաղաքականության վերլուծության կենտրոն, Հանրադրությունաբերության դորտի կայունության ռազմավարական գնահատում - Հայաստան, 2016, 227 էջ:
11. ՀՀ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն, ԱՐԹՆ զեկույց (2019թթ.), 363 էջ, <https://www.eiti.am/hy/annual-reports/2021> (վերջին այցելություն՝ 09.02.2024թ.):
12. Վաղարշյան, Ա.Գ. Պետության և իրավունքի տեսություն-2: Ղ-ասախտություն, ԵՊՀ, Եր.: Հեղինակային հրատարակություն, 2011, 448 էջ:
13. Гамбаров, Ю.С. Гражданское право. Общая часть. Лекции. М. 1898/ Классика Российского права, 766 էջ. <http://civil.consultant.ru/reprint/books/160/665.html> (վերջին այցելություն՝ 18.07.2025):
14. Дмитриев, М.А. Понятие и система объектов гражданских прав, Юрclub, 2008. <http://www.yurclub.ru/docs/civil/article267.html> (վերջին այցելություն՝ 19.01.2025):
15. Дроздов, И. А. О развитие правового регулирования недропользования / И.А. Дроздов // Вестник Высшего Арбитражного суда РФ, 2007, №8, էջեր 30-44:
16. Елюбаев, Ж. С. Проблемы правового регулирования недропользования: отечественный опыт и зарубежная практика. Монография, Алматы, 2010, 229 էջ:
17. Иоффе, О.С. Избранные труды по гражданскому праву: из истории цивилистической мысли. Гражданское правоотношение. Критика теории “хозяйственного права” М. Статут, 2000, 447 էջ. http://civil.consultant.ru/elib/books/3/page_60.html (վերջին այցելություն՝ 05.08.2025):
18. Кечекьян, С.Ф. Правоотношения в социалистическом обществе. М.: Изд-во АН СССР, 1958, 187 էջ.
19. Левочки, В. В. Объекты гражданских прав в недропользовании, Москва-2018, Федеральное государственное бюджетное образовательное учреждение высшего образования «Московский государственный юридический университет имени О. Е. Кутафина (МГЮА)», 218 էջ:
20. Левочки, В.В. Добытые ресурсы недр как объекты гражданских прав: анализ законодательства // Вестник московского городского педагогического университета. Серия .Юридические науки, 2017, №3 (27), էջեր 127-141.
21. Неделько, А. А. Гражданско-правовой договор добычи полезных ископаемых; Научный руководитель - к.ю.н., профессор И.В. Бакаева, Казань -2015, 220 էջ:
22. Писков, П.И. Участки недр как объекты гражданских прав / Право собственности: актуальные проблемы / отв. ред. В.Н. Литовкин, Е.А. Суханов, В.В. Чубаров; Ин-т законод. и сравнит. Правоведения М.: Статут. 2008, էջեր 380-413:
23. Прокаев, А. В. Гражданско-правовое регулирование отношений в сфере недропользования, 12.00.03 - гражданское право, предпринимательское право, семейное право, международное частное право, Саратов-2010, 192 էջ:
24. Степанов, С.А. Недвижимое имущество в гражданском праве. М.: Статут, 2004, 223 էջ:
25. Третьякова, Е. Правовой статус пользователя недр как особого участника предпринимательской деятельности //ЭП. 2023. №3 (181), էջեր 76-88. <https://cyberleninka.ru/article/n/pravovoy-status-polzovatelya-nedr-kak-osoboro-uchastnika-predprinimatelskoy-deyatelnosti> (վերջին այցելություն՝ 05.02.2025թ.).
26. Чеговадзе, Л.А. Структура и состояние гражданского правоотношения. М. Статут. 2004, 542 էջ:
27. “Mineral Resources Law of the People’s Republic of China” (adopted on March 19 1986, and amended on August 29 1996, and August 26 2009 by the Standing Committee of the National People’s Congress). <https://english.mee.gov.cn/Resources/laws> (վերջին այցելություն՝ 05.08.2025թ.):
28. Code of the Republic of Kazakhstan of December 27, 2017 No. 125-VI ZRK “About Subsoil and Subsurface Use” (as amended on 21.05.2024), <https://online.zakon.kz/Document/> (վերջին այցելություն՝ 06.03.2025թ.):
29. Campbell N.J., JR. Principles of Mineral Ownership in The Civil Law and Common Law System, Proceedings (American Bar Association. Section of International and Comparative Law), (August 28, 1956), էջեր 37-43. <https://www.jstor.org> (վերջին այցելություն՝ 25.05.2024թ.):
30. Kienzler, D. et al. Natural Resource Contracts as a Tool for Managing the Mining Sector, 2015, 69 էջ, https://scholarship.law.columbia.edu/sustainable_investment_staffpubs/21 (վերջին այցելություն՝ 10.01.2025թ.):
31. Law Business Research Ltd, The Mining Law Review. 9th ed., UK, 2020; ISBN: 978-1-83862-481-1, 304 էջ:
32. Mikheil, B. Object of Civil Legal Relations. (November 3, 2012). TSU Journal of Law, 01/2012, էջեր 30-49. <https://ssrn.com/abstract=3783716> (վերջին այցելություն՝ 05.08.2025):
33. Sutcliffe, S. Mining Law: Jurisdictional Comparisons. Thomson Reuters; 2012, 323 էջ.
34. Tarrant, J. Ownership of mining product, tailings and minerals, (2005) 24 ARELJ, էջեր 321-330:
35. <https://unicasclaw.com/blog/amendments-to-the-code-on-subsoil-and-subsoil-use> (վերջին այցելություն՝ 08.03.2025թ.):
36. <https://mining.smsc.sa/resources/images/docs/miningInvestmentE.pdf> (վերջին այցելություն՝ 10.08.2025թ.):
37. <https://eiti.org/guidance-notes/contracts-and-licenses> (վերջին այցելություն՝ 04.08.2025թ.):
38. <https://eiti.org/state-owned-enterprises> (վերջին այցելություն՝ 05.08.2025թ.):

References

1. HH Sahmanadrut'yun. 06 Dec. 2015 [RA Constitution], <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723>. (In Armenian)
2. HH Azgayin Jhoghov. HH qaghaqaciakan o'rengsirq. [RA National Assembly, RA Civil Code] 05 May 1998 <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193748>. (In Armenian)
3. —. HH y'nderqi masin o'rengsirq [The Code on the Subsoil of the Republic of Armenia]. 28 Noy. 2011. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178678>. (In Armenian)
4. —. “Shrjaka mijavayri vra azdecut'yan gnahatman ev p'ord'aqnnut'yan masin” HH o'renq [RA Law “On Environmental Impact Assessment and Expertise”]. 21 Hun. 2014. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178468>. (In Armenian)
5. HH karavarut'yan 2013 tvakani petrvari 21-i «Iravabanakan andzneri yev qaghaqacinerin sepakanut'yan iravov patkanogh hoghamaseri sahmanerum ynderykogtoghman kargy sahmanelu yev HH karavarut'yan 2003 tvakani noyemberi 13-i N 1932-N voroshumn uzhy kortsrats chanach'elu masin» N 152-N voroshum [Resolution of the Government of the Republic of Armenia No. 152-N]. (In Armenian)
6. HH karavarut'yan 2012 tvakani noyemberi 01-i «Navti yev bnakan gazi artadranqi bazhanman paymanagri orinakeli dz'evy hastatelu masin» 1421-N voroshum [Resolution of the Government of the Republic of Armenia No. 1421-N]. (In Armenian)
7. Badalyan S.S. Ynderykogtoghman volortum hoghayin haraberutyunneri kargavorman himnakhndirneri HH-um [The key issues of regulating land relations in the field of subsoil use in the Republic of Armenia]. EPH iravagitutyani fakulteti profesoradasakhosakan kazmi gitazhoghovyi nyuteri zhoghovatsu, 1(3) 2019, EPH hrat. [YSU Publishing], Yerevan, 2020, pp. 43–60. (In Armenian)
8. Barseghyan, T. K. Hayastani Hanrapetut'yan qaghaqakan iravunk', arajin mas (ch'orrord hrat'arakch'utyun) [Civil Law of the Republic of Armenia, Part One (Fourth Edition)]. Yerevani Pet. Hamalsaran; Yerevan: Tigran Mec hrat., 2014. 560 ej. (In Armenian)
9. Geghamyan, O. M. Bnakan resursneri nakhapatvats sepakanut'yan iravunki orosh arandznahatkutyunner@ HH oren-sadrut'yan mej yev praktikayum [Certain Peculiarities of the Right of Ownership over Natural Resources in the Legislation and Practice of the Republic of Armenia]. Petutyun yev Iravunk' [State and Law], no. 1 (86), 2020, pp. 4–12. (In Armenian)
10. Hamashkharhayin Bank, “Es-El Ar Konsaltnts,” “AVAG Solutions,” HAH-i Patasxanatu Hankardyunaberutyan Kentron, HAH-i Turpanjyan anvan Qaghaqakanutyan Verlagitsutyan Kentron. Hankardyunaberutyan volorti kayunutyun razmavarakan gnahatum – Hayastan [Strategic Environmental and Social Assessment of the Mining Sector – Armenia]. 2016, 227 p. (In Armenian)
11. HH Ardyunahanogh Jghyeri T'apantsikutyani Nakhapatvut'yun. AĈTN zekuyt' (2019 tt.) [EITI Report 2019]. 363 ej. <https://www.eiti.am/hy/annual-reports/2021>. Accessed 09 Feb. 2024. (In Armenian)
12. Vagharshyan, A. G. Petut'yan yev iravunki tesutyun-2. Dasakhosutyun [Theory of State and Law-2. Lecture]. EPH, Yer., Heghinakan hrat'arakch'utyun, 2011. 448 p. (In Armenian)
13. Gambarov, Yu. S. Grazhdanskoe pravo. Obshchaya chast'. Lektsii [Civil Law. General Part. Lectures]. Moscow, 1898 / Klassika Rossiiskogo prava, 766 pp. <http://civil.consultant.ru/reprint/books/160/665.html>. Accessed 18 July 2025. (In Russian)
14. Dmitriev, M. A. Ponyatie i sistema ob'ektov grazhdanskikh prav [Concept and System of Objects of Civil Rights]. Yurklub, 2008. <http://www.yurclub.ru/docs/civil/article267.html>. Accessed 19 Jan. 2025.
15. Drozdov, I. A. O razvitie pravovogo regulirovaniya nedropol'zovaniya [On the Development of Legal Regulation of Subsoil Use]. Vestnik Vysshego Arbitrazhnogo Suda RF, no. 8, 2007, pp. 30–44. (In Russian)
16. Elyubaev, Zh. S. Problemy pravovogo regulirovaniya nedropol'zovaniya: otechestvennyi opyt i zarubezhnaya praktika [Problems of Legal Regulation of Subsoil Use: Domestic Experience and Foreign Practice]. Almaty, 2010. 229 pp. (In Russian)
17. Ioffe, O. S. Izbrannye trudy po grazhdanskomu pravu: iz istorii tsivilisticheskoi mysli. Grazhdanskoe pravootnoshenie. Kritika teorii “khozyaistvennogo prava” [Selected Works on Civil Law: From the History of Civilistic Thought. Civil Legal Relationship. Critique of the Theory of “Economic Law”]. Moscow: Statut, 2000. 447 pp. http://civil.consultant.ru/elib/books/3/page_60.html. Accessed 05 Aug. 2025. (In Russian)
18. Keчек'yan, S. F. Pravootnosheniya v sotsialisticheskome obshchestve [Legal Relations in Socialist Society]. Moscow: Izd-vo AN SSSR, 1958. 187 pp. (In Russian)
19. Levochko, V. V. Ob'ekty grazhdanskikh prav v nedropol'zovanii [Objects of Civil Rights in Subsoil Use]. Moscow: Kutafin Moscow State Law University (MSAL), 2018. 218 pp. (In Russian)
20. Levochko, V. V. “Dobytye resursy neдр kak ob'ekty grazhdanskikh prav: analiz zakonodatel'stva” [Extracted Subsoil Resources as Objects of Civil Rights: Analysis of Legislation]. Vestnik Moskovskogo gorodskogo pedagogicheskogo universiteta. Seriya ‘Yuridicheskie nauki’, no. 3 (27), 2017, pp. 127–141. (In Russian)
21. Nedel'ko, A. A. Grazhdansko-pravovoi dogovor dobychi poleznykh iskopaemykh [Civil-Law Contract for Extraction

- of Minerals]. Scientific adviser: I. V. Bakaeva, Kazan, 2015. 220 pp. (In Russian)
22. Piskov, P. I. Uchastki neдр как ob’ekty grazhdanskikh prav [Subsoil Plots as Objects of Civil Rights]. Pravo sobstvennosti: aktual’nye problemy, edited by V. N. Litovkin, E. A. Sukhanov, and V. V. Chubarov, Institut zakonodatel’sтва i sravnitel’nogo pravovedeniya. Moscow: Statut, 2008, pp. 380–413. (In Russian)
23. Prokaev, A. V. Grazhdansko-pravovoe regulirovanie otnoshenii v sfere nedropol’zovaniya [Civil-Law Regulation of Relations in the Field of Subsoil Use]. Dissertation, specialty 12.00.03 – Civil Law, Entrepreneurial Law, Family Law, Private International Law. Saratov, 2010. 192 pp. (In Russian)
24. Stepanov, S. A. Nedvizhimoe imushchestvo v grazhdanskom prave [Immovable Property in Civil Law]. Moscow: Statut, 2004. 223 pp. (In Russian)
25. Tret’yakova, E. Pravovoi status pol’zovatelya neдр как osobogo uchastnika predprinimatel’skoi deyatelnosti [Legal Status of a Subsoil User as a Special Participant in Entrepreneurial Activity]. EP, no. 3 (181), 2023, pp. 76–88. <https://cyberleninka.ru/article/n/pravovoy-status-polzovatelya-neдр-kak-osobopo-uchastnika-predprinimatelskoy-deyatelnosti>. Accessed 05 Feb. 2025. (In Russian)
26. Chegovadze, L. A. Struktura i sostoyanie grazhdanskogo pravootnosheniya [Structure and Condition of the Civil Legal Relationship]. Moscow: Statut, 2004. 542 pp. (In Russian)

Արմինե Օգաննիսյան

Преподаватель кафедры гражданского права юридического факультета Ереванского государственного университета
Кандидат юридических наук, доцент

Մանե Մարկոսյան

Аспирант кафедры гражданского права юридического факультета Ереванского государственного университета,
Советник Генерального прокурора Республики Армения

ՐԵԶՅՈՒՄԵ***Недра как особый объект гражданских прав***

В настоящей статье комплексно исследуется и анализируется система объектов гражданских прав в сфере недропользования; проведено всестороннее исследование недр как особого объекта гражданских прав.

В статье рассматриваются недропользования как объект гражданских прав посредством раскрытия соотношения между недрами и иными непосредственно связанными объектами гражданских прав — участком недр, полезными ископаемыми и земельным участком.

По результатам проведённого исследования сформулирован вывод о том, что недра и участки недр представляют собой самостоятельные объекты гражданских прав: первые изъяты из гражданского оборота, тогда как вторые являются объектами, ограниченными в гражданском обороте. Объектом права недропользования условно является выделенный участок недр, а не недра как таковые. Выделение участка недр в качестве самостоятельного объекта гражданских прав с целью предоставления его в пользование представляет собой юридическую фикцию. В этой связи предложено внести изменения в Кодекс РА о недрах, установив, что предоставляется в пользование не недра, а участок недр.

Рассматривая соотношение недр и полезных ископаемых, в статье обосновано, что полезные ископаемые становятся объектами гражданских прав с момента их добычи (физического отделения) от недр. Также представлены предложения по реформированию в национальном законодательстве института частной собственности на полезные ископаемые, добытые из недр.

Ключевые слова: право недропользования, недра, участок недр, полезные ископаемые, объекты гражданских прав, юридическая фикция, земельный участок.

Arpine Hovhannisyan

Lecturer in the Department of Civil Law,
Faculty of Law, Yerevan State University
Candidate of Law, Associate Professor

Mane Markosyan

Postgraduate student of the Department of Civil Law,
Faculty of Law, Yerevan State University,
Advisor to the Prosecutor General of the Republic of Armenia

SUMMARY

Subsoil as a Unique Object of Civil Rights

This article undertakes a comprehensive examination and analysis of the system of objects of civil rights in the field of subsoil use, providing an in-depth study of the subsoil as a unique object of civil rights.

The article explores the subsoil as an object of civil rights by setting out the interrelation between the subsoil and other civil-law objects directly connected with it—namely, the subsoil tract (plot), minerals, and the land plot.

Based on the research, it is concluded that the subsoil and subsoil tracts constitute distinct objects of civil rights: the former is withdrawn from civil circulation, whereas the latter is an object of limited civil circulation. The object of the right of subsoil use is, conventionally, the delineated subsoil tract rather than the subsoil itself. The delineation of a subsoil tract as a separate object of civil rights for the purpose of granting it for use is a legal fiction. In this context, it is proposed to amend the RA Subsoil Code to provide that what is granted for use is not the subsoil per se, but a subsoil tract.

Addressing the relationship between the subsoil and mineral resources, the article substantiates that mineral resources become objects of civil rights from the moment of their extraction (physical separation) from the subsoil. The article also advances proposals under domestic legislation aimed at reforming the institution of private ownership in respect of mineral resources extracted from the subsoil.

Key words: *subsoil use right, subsoil, subsoil tract (or subsoil plot), mineral resources, objects of civil rights, legal fiction, land plot.*

ԾՈՎԻՆԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՄԻՋԻ ՎՐԱ

Հոդվածում վերլուծվում է ապատեղեկատվության ազդեցությունը հանրային կարծիքի և իմիջի ձևավորման վրա թվային դարաշրջանում՝ ամփոփելով միջազգային ու հայաստանյան փորձը, հոգեբանական ու տեղեկատվական մեխանիզմները, մինչդեռ առանձնացվում է մեդիագրագիտության և իրավական կարգավորումների տեղական դերը:

Հիմնարար- ապատեղեկատվություն, հանրային կարծիք, իմիջ, մեդիագրագիտություն, իրավական կարգավորում:

Ներածություն

Թվային դարաշրջանի զարգացման պայմաններում ապատեղեկատվությունը դարձել է ժամանակակից հասարակության առջև ծառայած առանցքային մարտահրավերներից մեկը: Սոցիալական ցանցերի աննախադեպ տարածումը և տեղեկատվական հոսքերի արագացումը ստեղծել են նոր էկոհամակարգ, որտեղ ապատեղեկատվությունը կարող է արագորեն շրջանառվել՝ ազդելով հանրային կարծիքի, իմիջի և հեղինակության ձևավորման վրա (Newman et al., 2023): Այս երևույթը հատկապես սրվել է վերջին տասնամյակում, երբ սոցիալական մեդիան դարձել է տեղեկատվության ստացման առաջնային աղբյուր՝ նվազեցնելով ավանդական լրատվամիջոցների դերը:

Ապատեղեկատվությունը՝ որպես միտումնավոր կամ ոչ միտումնավոր կերպով տարածվող կեղծ կամ ապակողմնորոշող տեղեկատվություն, տարբերվում է պարզապես սխալ տեղեկատվությունից իր համակարգային բնույթով և հաճախ՝ նպատակաուղղված տարածմամբ (Tandoc et al., 2023): Այն կարող է թիրախավորել ինչպես առանձին անհատների և հանրային դեմքերի, այնպես էլ կազմակերպությունների, ինստիտուտների և նույնիսկ ամբողջ պետությունների հեղինակությունը:

Այս հոդվածի նպատակն է համապարփակ վերլուծել ապատեղեկատվության ազդեցությունը հանրային կարծիքի ձևավորման և իմիջի վրա՝ հիմնվելով ժամանակակից հետազոտությունների, միջազգային և հայաստանյան փորձի վրա, ինչպես նաև առաջարկել արդյունավետ ռազմավարություններ այս երևույթի հակազդման համար:

Ապատեղեկատվության տեսական համատեքստը և տիպարանությունը

Գիտական գրականության մեջ ապատեղեկատվությունը դասակարգվում է մի քանի հիմնական կատեգորիաների: Ինչպես նշում են Վարդըր և Դերաքշանը իրենց հեղինակավոր ուսումնասիրության մեջ՝ (Wardle, C., & Derakhshan, H. (2018).

Information disorder: Toward an interdisciplinary framework for research and policy making. Council of Europe Report, DGI(2017)09.), անհրաժեշտ է տարբերակել տեղեկատվական անկարգության երեք հիմնական տեսակները՝

1. Ապատեղեկատվություն (Disinformation) - միտումնավոր կերպով ստեղծված և տարածված կեղծ տեղեկատվություն՝ ուղղված վնաս հասցնելուն
2. Սխալ տեղեկատվություն (Misinformation) - կեղծ տեղեկատվություն, որը տարածվում է առանց վնասակար մտադրության
3. Վնասակար տեղեկատվություն (Malinformation) - իրական տեղեկատվություն, որը տարածվում է վնաս հասցնելու նպատակով (օրինակ՝ համատեքստից դուրս բերված փաստեր)

Յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձնահատկությունները և պահանջում է հակազդման տարբեր մեթոդներ: Սակայն բոլոր դեպքերում դրանք կարող են էական ազդեցություն թողնել հանրային կարծիքի ձևավորման և անհատների կամ կազմակերպությունների իմիջի վրա:

Ապատեղեկատվության տարածման մեխանիզմները բազմաշերտ են և հիմնվում են ինչպես մարդկային հոգեբանության, այնպես էլ՝ ժամանակակից տեխնոլոգիաների յուրահատկությունների վրա: Վոսուդին և գործընկերները իրենց հետազոտության մեջ (Vosoughi, S., Roy, D., & Aral, S. (2018). The spread of true and false news online. Science, 359(6380), 1146-1151.) բացահայտել են, որ կեղծ նորությունները տարածվում են Twitter-ում (այժմ՝ X) 70% ավելի արագ, քան իրական նորությունները: Այս երևույթը բացատրվում է մի շարք գործոններով՝

- Հուզական բաղադրիչ - ապատեղեկատվությունը հաճախ ներառում է զարմանք, զայրույթ կամ վախ առաջացնող տարրեր, որոնք ավելի հավանական է, որ կիսվեն սոցիալական ցանցերում
- Նորույթի էֆեկտ - ապատեղեկատվություն

www.ardaradutyjournal.com

նր հաճախ պարունակում է անսովոր, շոկային կամ անսպասելի տարրեր

• Սոցիալական մեդիայի ալգորիթմներ - պլատֆորմների ալգորիթմները հաճախ առաջնահերթություն են տալիս բարձր ներգրավածություն ունեցող բովանդակությանը

Reuters Institute-ի 2023թ. (<https://reutersinstitute.politics.ox.ac.uk/digital-news-report>) ուսումնասիրությունը փաստում է, որ ապատեղեկատվությունը սոցիալական մեդիայում տարածվում է միջինում 3.2 անգամ ավելի արագ, քան ստուգված և հավաստի տեղեկատվությունը: Սա բացատրվում է վերոնշյալ գործոններով, ինչպես նաև սոցիալական մեդիայի օգտատերերի վարքագծի առանձնահատկություններով:

Ապատեղեկատվության ազդեցությունը հանրային կարծիքի վրա հիմնվում է մի շարք հոգեբանական մեխանիզմների վրա, որոնցից առանցքայինը «հավատացող միտքը» (believing mind) հայեցակարգն է: Այս տեսությունը առաջարկված է Պեննիկուկի և Ռանդի կողմից (2019), որոնք պնդում են, որ մարդիկ ի բնե հակված են հավատալ ստացված տեղեկատվությանը, և միայն հետագայում, լրացուցիչ կոգնիտիվ ջանքերի միջոցով, կարող են վերանայել այդ հավատը:

Մեկ այլ կարևոր հոգեբանական մեխանիզմ է «հավաստիության ազդեցությունը» (illusory truth effect), երբ բազմակի կրկնվող ապատեղեկատվությունը աստիճանաբար սկսում է ընկալվել որպես ճշմարտություն: Սա հատկապես վտանգավոր է սոցիալական մեդիայի դարաշրջանում, երբ նույն ապատեղեկատվությունը կարող է բազմիցս հանդիպել տարբեր աղբյուրներից:

Հատկանշական է նաև «հաստատման կողմնակալությունը» (confirmation bias), երբ մարդիկ ավելի հակված են ընդունելու այն տեղեկատվությունը, որը համապատասխանում է իրենց գոյություն ունեցող հավատալիքներին և արժեքներին: Սա բացատրում է, թե ինչու տարբեր սոցիալական և քաղաքական խմբեր հաճախ ունեն էականորեն տարբերվող «ճշմարտություններ» նույն հարցերի վերաբերյալ: Այստեղից էլ ապրելու իրավունք է ստանում այն կարծիքը, որ կեղծ լուրերը կարող են ավելի մեծ ազդեցություն թողնել լսարանի վրա, քվալ ավելի ճշմարտացի, քանի իրական լուրերը, կամ այդ լուրերին հաջորդող ուշացած հերքումները:

«Կեղծ լուրերի էֆեկտը» մի երևույթ է, երբ ապատեղեկատվությունը շարունակում է ազդել հանրային կարծիքի վրա նույնիսկ դրա հերքումից հետո: Օքսֆորդի համալսարանի հետազոտողները (2020թ.) բացահայտել են, որ եթե ավանդական ՉԼՄ-ներում հերքումը կարող է մասամբ չեզոքացնել ապատեղեկատվության ազդեցությունը, ապա սոցիալական մեդիայում հերքումը հասնում է սկզբ-

նական լսարանի ընդամենը 10-15%-ին:

Սա առաջացնում է անհամաչափ իրավիճակ, երբ սկզբնական կեղծ տեղեկատվությունը շարունակում է տարածվել և ազդել հանրային կարծիքի վրա նույնիսկ դրա հերքումից հետո: Այս երևույթը հատկապես տեսանելի էր 2016թ. ԱՄՆ-ի նախագահական ընտրություններում, երբ, ինչպես նշում են Ալքոթը և Գենցկովը (2017), Հիլարի Բլինթոնի վերաբերյալ տարածված կեղծ լուրերը շարունակում էին ազդել ամերիկյան հասարակության մի զգալի հատվածի կարծիքի վրա՝ անկախ դրանց բազմաթիվ հերքումներից:

Այս իմաստով ապատեղեկատվության ազդեցությունը անհատների և կազմակերպությունների իմիջի վրա բավական մեծ է: Այն զգալի ազդեցություն է ունենում հատկապես ընտրություններին նախորդող քարոզչության ժամանակահատվածում: Այս ժամանակ է, որ բացվում են բազմաթիվ փոշոտված թղթապանակներ, հիշում են թեկնածուների անցյալը և հատկանշական է, որ արդեն մոռացված պատմությունները կենդանություն և երկրորդ կյանք են ստանում հատկապես ապատեղեկատվության շնորհիվ: Այն նպաստում է ցանկալին իրականի տեղ հրանցնելուն և հաճախ դժվար է լինում լսարանին ապացուցել, որ մրցակիցների տարածածն ապատեղեկատվություն է:

Ապատեղեկատվությունն առանձնահատուկ ազդեցություն ունի հանրային դեմքերի, հատկապես քաղաքական գործիչների հեղինակության վրա: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդիկ հաճախ կարծիքները փոխում են հանրային դեմքերի վերաբերյալ անգամ այն դեպքում, երբ հետազայում պարզվում է, որ տարածված տեղեկությունները կեղծ էին: Օրինակ՝ 2016թ. ամերիկյան նախագահական ընտրություններում Հիլարի Բլինթոնի մասին տարածված «Պիցցագեյթ» (Pizzagate) կեղծ տեսությունը, համաձայն որի նա իբր ներգրավված էր մանկական բրաֆիքինգի ցանցում, զգալիորեն վնասեց նրա հանրային իմիջին, չնայած, որ այս պնդումները բազմիցս հերքվեցին (Fisher, M., Woodrow Cox, J., & Hermann, P. (2016). «Pizzagate: From rumor, to hashtag, to gunfire in D.C.», The Washington Post, 6 December 2016. https://www.washingtonpost.com/local/pizzagate-from-rumor-to-hashtag-to-gunfire-in-dc/2016/12/06/4c7def50-bbd4-11e6-94ac-3d324840106c_story.html): Նմանապես, 2019թ. Ֆրանսիայում Էմանուել Մակրոնի մասին տարածված ապատեղեկատվությունը նրա և Կատարի միջև իբր գոյություն ունեցող գաղտնի պայմանավորվածությունների վերաբերյալ զգալիորեն ազդեց նրա վարկանիշի վրա (Foucart, S., & Untersinger, M. (2019). «Jaunes Acres: les mystifications qui ont enflammé les réseaux sociaux» [Yellow Vests: the mystifications that inflamed social networks], Le

Monde, 25 January 2019. https://www.lemonde.fr/les-decodeurs/article/2019/01/25/gilets-jaunes-les-intoxiquants-en-flamme-les-reseaux-sociaux_5414755_4355770.html:

Կազմակերպությունների պարագայում ապատեղեկատվության ազդեցությունը կարող է լինել նույնիսկ ավելի էական՝ հանգեցնելով ֆինանսական կորուստների և երկարաժամկետ վնասի: Համաձայն World Economic Forum-ի 2023թ. զեկույցի, ապատեղեկատվությունը կարող է հանգեցնել ընկերությունների բաժնետոմսերի արժեքի մինչև 25% անկման, իսկ վերականգնումը կարող է տևել ամիսներ:

Դասական օրինակ է 2017թ. Volkswagen-ի մասին տարածված ապատեղեկատվությունը, թե իբր ընկերությունը փորձում է անօրինական կերպով շահարկել Tesla-ի էլեկտրամեքենաների տոկոսադրույքները: Չնայած այս տեղեկատվության հերքմանը, ընկերության բաժնետոմսերի արժեքը նվազեց 3.5%-ով, ինչը հանգեցրեց մոտ 2 միլիարդ եվրոյի կապիտալիզացիայի կորստի: Նմանապես, 2020թ. կորոնավիրուսի համավարակի ընթացքում 5G տեխնոլոգիայի և վիրուսի միջև կեղծ կապի մասին տարածված ապատեղեկատվությունը հանգեցրեց հեռահաղորդակցության ընկերությունների հեղինակության և բաժնետոմսերի արժեքի նվազման, ինչպես նաև աշխարհի տարբեր երկրներում 5G կայանների վանդալիզմի դեպքերի:

Ժամանակակից ապատեղեկատվական արշավները հաճախ կիրառում են բարդ և բազմաշերտ տեխնիկաներ: Օգնյանովայի (2019) աշխատությունում նկարագրված է «ապատեղեկատվության օրբեստրացում» հայեցակարգը, որի համաձայն կազմակերպված ապատեղեկատվական կամպանիաները ներառում են հետևյալ փուլերը՝

1. Նախապատրաստում - թիրախների ընտրություն, պատմությունների (նարատիվների) ստեղծում
2. Տարածում - սոցիալական մեդիայի հարթակներում և այլ միջոցներով սինխրոնացված տարածում
3. Ամրապնդում - տարբեր աղբյուրներից նույն ապատեղեկատվության կրկնություն
4. Լեգիտիմացում - կեղծ աղբյուրների վկայակոչում, հեղինակավոր լրատվամիջոցների մանիպուլյացիա:

Ինչպես վկայում են Բրեդշոն և Հովարդը (2023) իրենց հետազոտության մեջ, վերջին տարիներին մեծ կամպանիաները դարձել են ավելի ինտենսիվ և կազմակերպված՝ հաճախ ներառելով մեծաքանակ բոտ-ցանցեր և կեղծ օգտահաշիվներ: Meta ընկերության տվյալներով, միայն 2023թ. նրանք հայտնաբերել և արգելափակել են ավելի քան 1.5 միլիարդ կեղծ օգտահաշիվ, որոնց զգալի մասը օգտագործվել է ապատեղեկատվություն տարածելու

նպատակով:

Թվային դարաշրջանում ապատեղեկատվության տարածման գործընթացն ունի յուրահատուկ դինամիկա: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ապատեղեկատվությունը սոցիալական ցանցերում տարածվում է ավելի արագ, ավելի խորը և ավելի լայն, քան ճշմարիտ տեղեկատվությունը (Vosoughi et al., 2018): Այս երևույթը պայմանավորված է մի շարք գործոններով՝

1. **Բովանդակությունը եզակի է, զարմանք առաջացնող:** Էմպիրիկ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կեղծ լուրերն առաջացնում են ավելի մեծ զարմանք և զգացմունքային արձագանք, քան ճշմարիտ տեղեկատվությունը: Օրինակ, MIT-ի հետազոտողները, վերլուծելով Twitter-ի 126,000 պատմությունների տարածումը, հայտնաբերեցին, որ կեղծ լուրերն ունեին 70% ավելի մեծ վերատարածման հավանականություն (Vosoughi et al., 2018):

2. **Ալգորիթմային քարոզչատուփեր:** Սոցիալական մեդիայի ալգորիթմները, որոնք օպտիմալացված են օգտատերերի ներգրավվածությունն առավելագույնի հասցնելու համար, հաճախ նպաստում են վիճահարույց և զգացմունքային բովանդակության տարածմանը (Pariser, 2011; Zuiderveen Borgesius et al., 2016):

3. **Բոտային ցանցեր ու կեղծ հաշիվներ:** Ավտոմատացված համակարգերը մեծացնում են ապատեղեկատվության տարածման արագությունը և ծավալը: Shao et al. (2018) հետազոտությունը բացահայտեց, որ Twitter-ում կեղծ լուրերի տարածման առաջին փուլում հիմնական դերակատարներն են բոտերը, որոնք թիրախավորում են ազդեցիկ օգտատերերին:

4. **Վստահության խաչաձև փոխանցում:** Ապատեղեկատվություն տարածողները հաճախ օգտագործում են ավանդական լրատվամիջոցներից փոխառված սիմվոլներ և ֆորմատներ՝ հավաստիության տպավորություն ստեղծելու համար (Tandoc et al., 2018):

Կոգնիտիվ կողմնակալություններ, ապատեղեկատվության ընկալում

Մարդու կոգնիտիվ համակարգի առանձնահատկությունները նպաստում են ապատեղեկատվության ընկալմանը և դրա նկատմամբ խոցելիությանը: Հետազոտությունները բացահայտել են մի շարք հոգեբանական մեխանիզմներ, որոնք դժվարացնում են ապատեղեկատվության հակազդումը (Pennycook & Rand, 2021)՝

1. **Հաստատման կողմնակալություն (confirmation bias):** Մարդիկ հակված են ընդունել այն տեղեկատվությունը, որը համապատասխանում է իրենց գոյություն ունեցող համոզմունքներին և տեսակետներին: Փորձարարական հետազոտություններում դիտարկվել է, որ մասնակիցներն ավելի հա-

վանական են դիտարկում այն հոդվածները, որոնք համապատասխանում են իրենց քաղաքական հայացքներին (Knobloch-Westerwick et al., 2015):

2. **Ազդեցության պերսեվերացիա (continued influence effect):** Նույնիսկ երբ մարդիկ տեղեկացվում են, որ որոշակի տեղեկատվությունը կեղծ է, նրանք շարունակում են ազդվել դրանից: Thorson (2016) ցույց է տվել, որ հերքումներն ունեն սահմանափակ արդյունավետություն, հատկապես երբ ապատեղեկատվությունը համահունչ է անձի գաղափարական դիրքորոշումներին:

3. **Իլյուզորային ճշմարտության էֆեկտ (illusory truth effect):** Բազմակի կրկնությունը բարձրացնում է տեղեկատվության նկատմամբ վստահությունը: Պենիկուկի և Ռենդի (2019) հետազոտությունը ցույց է տալիս, որ նույնիսկ այն մարդիկ, ովքեր պետք է որ ավելի քննադատաբար վերլուծեին տեղեկատվությունը, ենթարկվում են այս երևույթի ազդեցությանը:

Սոցիալական փոխազդեցությունները ևս էական դեր են խաղում ապատեղեկատվության տարածման և ազդեցության գործընթացում՝

1. **Սոցիալական հաստատում (social validation):** Մարդիկ հակված են վստահել տեղեկատվությանը, որը տարածվում է իրենց սոցիալական ցանցի անդամների կողմից: Golkar et al. (2020) ցույց են տվել, որ տեղեկատվության հանդեպ վստահությունը բարձրանում է, երբ այն կիսվում է մտերիմների կողմից, անկախ բովանդակության ճշմարտացիությունից:

2. **Թշնամական մեդիա էֆեկտ (hostile media effect):** Մարդիկ հակված են ընկալել մեդիա բովանդակությունը որպես կողմնակալ իրենց տեսակետների դեմ, ինչը կարող է նպաստել այլընտրանքային տեղեկատվական աղբյուրների նկատմամբ վստահությանը (Vallone et al., 1985):

3. **Էխո խցիկներ եւ տեղեկատվական ֆիլտրի պոպուլյակներ:** Սոցիալական ցանցերում առկա ալգորիթմային և սոցիալական ֆիլտրացիան հանգեցնում է միատարր տեղեկատվական միջավայրերի ձևավորման, որոնցում սահմանափակվում է հակադիր տեսակետների հետ շփումը (Pariser, 2011; Del Vicario et al., 2016):

Վերջին տասնամյակների ընթացքում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ ապատեղեկատվական արշավները նշանակալի ազդեցություն են թողել հանրային կարծիքի և քաղաքական գործընթացների վրա: Ստորև ներկայացվում են առավել ուշագրավ օրինակներից մի քանիսը՝

1. **2016թ. ԱՄՆ նախագահական ընտրություններ:** Հետազոտությունները բացահայտել են ռուսական միջամտության կազմակերպված արշավը, որը ներառում էր սոցիալական մեդիայում կեղծ հաշիվների օգտագործում, վճարովի գովազդներ և թիրախային ապատեղեկատվության տարածում:

Howard et al. (2019) հաշվարկել են, որ Facebook-ում միայն ռուսական ծագում ունեցող ապատեղեկատվությունը հասանելի է եղել առնվազն 126 միլիոն ամերիկացիների:

2. **COVID-19 համավարակ:** WHO-ն անգամ օգտագործել է «ինֆոդեմիա» եզրույթը՝ նկարագրելու համավարակին առնչվող ապատեղեկատվության ծավալը: Համաձայն Brennen et al. (2020) հետազոտության, կորոնավիրուսի մասին ապատեղեկատվությունը հանգեցրել է առողջության հետ կապված վնասակար վարքագծի դրսևորման բազմաթիվ դեպքերի (օր.՝ կեղծ բուժումների կիրառում, պաշտպանիչ միջոցների չօգտագործում):

3. **Brexit:** 2016թ. Միացյալ Թագավորության ԵՄ անդամակցության վերաբերյալ հանրաքվեի ժամանակ տարածվեց ապատեղեկատվություն, օրինակ՝ պնդումներ, որ ԵՄ-ին անդամակցության ծախսերը կազմում են շաբաթական 350 միլիոն ֆունտ ստերլինգ: Bastos & Mercea (2019) բացահայտել են, որ սոցիալական մեդիայում կեղծ հաշիվների կորոնացված ցանցերը զգալիորեն ազդել են հանրային դիսկուրսի վրա:

2. **Ապատեղեկատվությունը Հայաստանում**

Հայաստանը, որպես տարածաշրջանային բարդ աշխարհաքաղաքական համատեքստում գտնվող երկիր, հատկապես խոցելի է ապատեղեկատվության նկատմամբ: Համաձայն Մեդիա մասնաճյուղությունների կենտրոնի 2023թ. գեկույցի և Media.am-ի ու Fip.am փաստերի ստուգման հարթակների հետազոտությունների, Հայաստանում ապատեղեկատվության դեպքերի թիվը 2023թ. աճել է 35%-ով՝ 2022թ. համեմատ:

«Մեդիա պաշտպան» նախաձեռնության տվյալներով՝ 2023թ. գրանցվել է ապատեղեկատվության 1200+ դեպք, որոնց 65%-ը տարածվել է սոցիալական ցանցերում, 25%-ը՝ լրատվական կայքերում, և 10%-ը՝ այլ հարթակներում:

Ապատեղեկատվության հիմնական թեմաներն են եղել՝

- Քաղաքական (42%)
- Անվտանգային (28%)
- Տնտեսական (16%)
- Սոցիալական (14%)

Հայաստանում ապատեղեկատվության առավել ցայտուն օրինակներից է 2020թ. Արցախյան պատերազմի ընթացքում զանգվածաբար տարածված կեղծ տեղեկատվությունը մարտական գործողությունների, զոհերի թվի և միջազգային արձագանքների վերաբերյալ: Մեր կողմից իրականացված հետազոտությունը փաստում է, որ այդ շրջանում սոցիալական մեդիայում տարածվեցին բազմաթիվ կեղծ տեսանյութեր և լուսանկարներ, որոնք իբր ցույց էին տալիս աղբյուրանական զինված ուժերի կողմից իրականացված ռազմական հանցա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գործություններ, սակայն իրականում վերցված էին այլ հակամարտություններից և համատեքստից դուրս բերված:

Մեկ այլ օրինակ է 2023թ. հայ-ադրբեջանական սահմանային բանակցությունների շրջանում տարածված կեղծ քարտեզները և «գաղտնի համաձայնագրերի» մասին ապատեղեկատվությունը, որոնք հանգեցրին հասարակական լարվածության աճի և հանրային վստահության նվազման պետական ինստիտուտների նկատմամբ: Այս թեմայի շուրջ 2024 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին 11 լրագրողի հետ, որոնցից 6-ն ունեն ընդդիմադիր, 5-ը՝ իշխանամետ հայացքներ իրականացրել ենք խորին անհատական հարցազրույցներ: Հարցաթերթիկում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

1. Ինչպե՞ս եք գնահատում 2023թ. սահմանային բանակցությունների ընթացքում տեղեկությունների հոսքը:
2. Ձեր կարծիքով, ինչպիսի՞ դեր ունեցան կեղծ քարտեզներն ու «գաղտնի համաձայնագրերի» մասին ապատեղեկատվությունը հանրային լարվածություն ստեղծելու գործում:
3. Ի՞նչ մեխանիզմներով էին այդ ապատեղեկատվությունները տարածվում (սոցիալական ցանցեր, մեդիա, կամ այլ ալիքներ):
4. Ի՞նչ ազդեցություն ունեցավ այս երևույթը հանրային վստահության վրա պետական ինստիտուտների նկատմամբ:
5. Որպես լրագրող՝ ինչպիսի՞ խնդիրների բախվեցիք փաստերի ստուգման և հավաստի տեղեկատվության տարածման գործընթացում:
6. Ինչպե՞ս եք գնահատում իշխանական և ընդդիմադիր մամուլի դերը ապատեղեկատվության տարածման կամ կանխման գործում:
7. Որո՞նք են ձեր առաջարկությունները ապագայում մմանատիպ իրավիճակները նվազեցնելու համար:

Հարցերի պատասխանները համախմբելով եկել ենք հետևյալ եզրահանգումների, որ 2023թ. հայ-ադրբեջանական սահմանային բանակցությունների շրջանում տարածված կեղծ քարտեզներն ու «գաղտնի համաձայնագրերի» մասին ապատեղեկատվությունը դարձել են հասարակական անվտանգության աճի հիմնական գործոններից: Հետազոտության ընթացքում 11 լրագրողների խորին անհատական հարցազրույցների հիման վրա պարզվել է, որ ապատեղեկատվության շրջանառությունն իրականացվել է թիրախավորված ձևով՝ օգտագործելով համացանցային հարթակներ: Լրագրողները համակարծիք են, որ այս երևույթը մեծապես նպաստել է վստահության անկմանը պետական ինստիտուտների նկատմամբ: Տարբեր խմբերի լրագրողների մոտ արտահայտվել են հակադիր գնահատականներ՝ իշխանության

թափանցիկության պակասից մինչև ընդդիմության կողմից կեղծիքների շահարկում: Ընդհանուր եզրակացությունը այն է, որ ապատեղեկատվության հաղթահարման համար անհրաժեշտ է համակարգված մեդիագրագիտության զարգացում, արագ պաշտոնական հաղորդագրությունների տրամադրում և լրագրողական համայնքի համագործակցություն փաստերի ստուգման գործում:

Հետազոտությունը փաստել է, որ իշխանամետ լրագրողները պնդում են, թե թեմայի շուրջ ծավալված ապատեղեկատվություն պարունակող լուրերը մասամբ ծագել են ընդդիմադիր շրջանակներից և ռուսական ազդեցությունից և գիտակցված, հրահրված են եղել հանրային անվտանգություն և խուճապ ստեղծելու նպատակով: Նրանք պնդում են, որ պետական ինստիտուտներն արդյունավետ փորձել են բացատրել քարտեզների պաշտոնական տարբերակները, սակայն տեղեկատվության ծավալը և արագությունը դժվարացրել են հակազդումը: Ընդդիմադիր հայացքներ ունեցող լրագրողները նշել են, որ պետական ինստիտուտները ուշացրել են տեղեկատվության տրամադրումը, ինչի հետևանքով ապատեղեկատվությունը շուտ է տարածվել: Հանրային վստահության անկման պատճառը ոչ միայն կեղծ քարտեզներն էին, այլև իշխանությունների թափանցիկության պակասը: Հանրային հնչողությամբ հարցերում իշխանությունները չեն համաձայնել բանավեճերի մեջ մտնել, ինչը ավելի է, ըստ լրագրողների այդ խմբի, խորացրել կասկածները: Որոշ լրագրողներ նշել են, որ և՛ իշխանական, և՛ ընդդիմադիր լրատվամիջոցները օգտագործում էին խնդիրը՝ իրենց քաղաքական օրակարգերը ամրապնդելու համար:

Քարտեզներին վերաբերող թեմայի շուրջ մեր կողմից ուսումնասիրվել է տարբեր լրատվական կայքերում, սոցիալական հարթակներում առկա շուրջ 103 հրապարակում: Ինչը թույլ է տալիս փաստել, որ 2023 թվականի ընթացքում հայ-ադրբեջանական սահմանային բանակցություններին զուգահեռ հանրային դիսկուրսը լցված էր ապատեղեկատվության և կեղծ քարտեզների լայնածավալ շրջանառությամբ, որոնք հիմնականում կապվում էին «գաղտնի համաձայնագրերի» մասին անհասկանալի ու անստույգ լուրերի հետ: Ապատեղեկատվության հիմնական ալիքները ընդգրկում էին սոցիալական ցանցերը (Telegram, Facebook խմբեր), ինչպես նաև կուսակցական ուղղվածությամբ լրատվամիջոցները: Տարբեր կողմերի (իշխանամետ ու ընդդիմադիր) լրագրողները նշում էին, որ նման տեղեկատվության նպատակն էր խորացնել հանրային անվտանգությունը՝ թե՛ բանակցային կողմի, թե՛ պետության ինստիտուտների նկատմամբ: Կեղծ քարտեզների ճնշող մասը ներկայացվում էր որպես պաշտոնական փաստարկ Ադրբեջանի կողմից, ինչպես վկայում է քարտեզագետ

Շահեն Շահինյանը՝ նշելով, որ ադրբեջանական կողմի շրջանառած 1919 և 1920 թթ. քարտեզները միջազգային ճանաչում չունեն և ակնհայտորեն հանգեցնում են հակասությունների՝ տարածքի պատկանելության հարցում: Հրապարակումների վերլուծությունը փաստում է, որ դրանք հիմնականում դիտարկում և ներկայացնում էին որպես արտաքին գործոնների միջամտության հետևանք, հատկապես ընդգծելով Ադրբեջանի, իսկ որոշ դեպքերում՝ որոշ Հայաստանի ներսում գործող ընդդիմադիր շրջանակների շահագրգռվածությունը: Սակայն կայքերում շեշտադրվում էին իշխանական կառույցների թափանցիկության պակասը և տեղեկացության ուշացումները՝ որպես ապատեղեկատվության տարածման խթանիչ գործոն: Հետազոտության ամենակարևոր եզրակացություններից է այն, որ կեղծ քարտեզների և կեղծ համաձայնագրերի շրջանառությունը բացասաբար անդրադարձավ հանրային վստահության վրա: Պաշտոնական արձագանքների ուշացումը, բազմակի հերքումները և անհասկանալի վիճակը սրեցին անվստահությունը: Որպես հետևանք՝ թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր ՉԼՄ-ներում հաճախ օգտագործում էին թեմատիկան՝ սեփական օրակարգերը առաջ մղելու համար, սակայն փաստերի ստուգման մեխանիզմների անբավարարությունը նպաստեց տեղեկատվության անվերահսկելի հոսքին: Ադրբեջանական ապատեղեկատվության ծանրակշիռ, բայց տարածման իմաստով ոչ բավարար հակակշիռ էր քարտեզագետ Շահեն Շահինյանի հարցազրույցները, որոնցում մանրամասն բացատրում էր, որ ադրբեջանական կողմի շրջանառած քարտեզները հենվում են գոյություն չունեցող կամ միջազգային ճանաչում չստացած հիմքերի վրա, և դրանց քաղաքական շահարկումը բանակցային սեղանին ներկայացվում է ուժի սպառնալիքի ներքո: Սա ըստ էության ճնշման միջոց էր և հայկական կողմի դիրքորոշումը պետք է լիներ մեր կարծիքով ավելի հստակ՝ նման քարտեզները չպետք է դիտարկվեն որպես բանակցային հիմք: Մեր վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ նման միջավայրում բավական դժվար էր հավաստի տեղեկատվություն ստանալ, հատկապես գերակայող շփոթության և վստահելի աղբյուրների պակասի պայմաններում: Շատ հաճախ ֆեյքնյուզը առաջինն էր հայտնվում մեդիա դաշտում, իսկ պաշտոնական պատասխանը՝ ուշանում: Ապատեղեկատվական կառավարման հիմնական ուղիները հետևյալն են.

1. Աղբյուրների բազմակի ստուգում և մեդիագրագիտության զարգացում:
2. Պաշտոնական տեղեկատվության ավելի արագ, հստակ և կանոնավոր տրամադրում:
3. Լրագրողական համայնքի ներսում փաստերի ստուգման ցանցերի ձևավորում:

Հայաստանում ապատեղեկատվության իրավական կարգավորումը մնում է մարտահրավերային: Ի տարբերություն գրապարտության և վիրավորանքի, որոնք հստակ սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում, ապատեղեկատվության հասկացությունը դեռևս չունի հստակ իրավական սահմանում:

2023թ. գրանցվել է գրապարտության և վիրավորանքի 60+ դատական գործ, որոնց 40%-ը պարունակել է ապատեղեկատվության տարրեր: Սակայն գրապարտությունից և վիրավորանքից տարբերվող ապատեղեկատվության դեպքերի իրավական կարգավորումը մնում է խնդրահարույց:

Արհեստական բանականության և մեքենայական ուսուցման զարգացումը ընձեռել է նոր հնարավորություններ ապատեղեկատվության դեմ պայքարի համար: Meta-ի փորձը ցույց է տալիս, որ AI վրա հիմնված գործիքները կարող են էականորեն նվազեցնել կեղծ բովանդակության տարածումը: 2023թ. Meta-ի կողմից ներդրված AI համակարգերը 47%-ով կրճատել են ապատեղեկատվության շրջանառությունը պլատֆորմում:

Կարևոր տեխնոլոգիական լուծումներից են նաև՝

- Բովանդակության նույնականացման համակարգեր - ավտոմատացված գործիքներ, որոնք հայտնաբերում են կրկնվող ապատեղեկատվական բովանդակությունը
- Deepfake հայտնաբերման տեխնոլոգիաներ - ալգորիթմներ, որոնք բացահայտում են AI-ով ստեղծված կեղծ տեսանյութերը
- Բոտ-ցանցերի հայտնաբերման գործիքներ - համակարգեր, որոնք նույնականացնում են ավտոմատացված օգտահաշիվների խմբերը:

Փաստերի ստուգման հարթակները դառնում են կարևոր գործիք ապատեղեկատվության դեմ պայքարում: Հայաստանում գործում են մի շարք մնան հարթակներ, ինչպիսիք են Fip.am-ը և Factcheck.ge-ն: Միջազգային մակարդակով առաջատար են PolitiFact-ը, Snopes-ը և Full Fact-ը:

Այս հարթակները կարևոր դեր են խաղում ապատեղեկատվության բացահայտման և հանրությանը ճշգրիտ տեղեկատվության տրամադրման գործում: Լրագրողական կազմակերպությունները նույնպես մշակել են հատուկ ուղեցույցներ և մեթոդաբանություն ապատեղեկատվության բացահայտման համար:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ մեդիագրագիտության բարձր մակարդակն օգնում է մարդկանց ավելի արդյունավետ պաշտպանվել ապատեղեկատվությունից: Առաջատար երկրները, ինչպիսիք են Ֆինլանդիան և Շվեդիան, ներառել են մեդիագրագիտությունը դպրոցական ծրագրերում:

Մեդիագրագիտության զարգացման կարևոր քաղաքական չինքն են՝

www.artadaratutyunjournal.com

• Զննադատական մտածողության խթանումը

• Բազմակի աղբյուրներից տեղեկատվության ստուգման հմտությունների զարգացումը

• Մեղիա բովանդակության ստեղծման և մանիպուլյացիայի մեխանիզմների ըմբռնումը:

Կազմակերպությունների և հանրային դեմքերի համար մեր կողմից առաջարկվող ռազմավարությունների նախագծի սեղմագիր

Կազմակերպությունների և հանրային դեմքերի համար ապատեղեկատվության հետ առնչվելիս կարևոր է ունենալ նախապես մշակված արձագանքման ռազմավարություն: Առաջարկվող քայլերն են՝

1. Կանխարգելիչ միջոցներ

o Հասարակության հետ կանոնավոր և թափանցիկ հաղորդակցության ապահովում

o Թվային անվտանգության ուժեղացում

o Համացանցում բրենդի մոնիթորինգի համակարգերի ներդրում

2. Արագ արձագանքում

o Ապատեղեկատվության բացահայտման դեպքում արագ արձագանքում

o Հստակ և փաստերի վրա հիմնված հերքման տրամադրում

o Բազմաթիվ հաղորդակցման ալիքների օգտագործում

Եզրակացություն

Ապատեղեկատվությունն ուղղված կարող է լինել ինչպես առանձին անհատների, այնպես էլ ամբողջ կազմակերպությունների հեղինակությանը: Հանրային դեմքերի, մասնավորապես քաղաքական գործիչների, հեղինակության վրա ապատեղեկատվությունը հաճախ ունի ծանր հետևանքներ, քանի որ նման դեպքերում վնասվում է ոչ միայն անհատի, այլև ողջ քաղաքական կուսակցության կամ ինստիտուտի հեղինակությունը: Օրինակ՝ երբ 2016 թվականի ԱՄՆ-ի նախագահական ընտրություններում տարածվեց կեղծ լուրեր Հիլարի Էլինթոնի վերաբերյալ, դա սկսեց վնասել Դեմոկրատական կուսակցության հեղինակությանը [1]:

Հանրային դեմքերի հեղինակության վրա ապատեղեկատվության ազդեցությունը կարող է ունենալ երկարաժամկետ հետևանքներ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդիկ հաճախ կարծիքները փոխում են հանրային դեմքերի վերաբերյալ անգամ այն դեպքում, երբ հետագայում պարզվում է, որ տարածված տեղեկությունները կեղծ էին [2]: Այս երևույթը հայտնի է որպես «կեղծ լուրերի էֆեկտ»: Այսպիսով, ապատեղեկատվությունը կարող է նշանակալի վնաս հասցնել անհատի հեղինակությանը՝ նույնիսկ երբ իրականությունը վերականգնվում է:

Ապատեղեկատվության ազդեցությունը կազ-

մակերպությունների հեղինակության վրա

Ապատեղեկատվությունը նաև կարող է ուղղված լինել կազմակերպությունների հեղինակությանը: Կեղծ լուրերը կարող են վնասել կազմակերպության համբավը և ազդել հաճախորդների, ներդրողների ու գործընկերների վստահության վրա: Օրինակ, 2017 թվականին սոցիալական ցանցերում տարածվեց լուր, որ Volkswagen ընկերությունը փորձում է փոխարինել տոկոսադրույքը Tesla-ի մեքենաների համար [3]: Թեև հետագայում ապացուցվեց որ այս լուրը կեղծ է, սակայն այն արդեն անդրադարձել էր Volkswagen-ի հեղինակության վրա:

Ապատեղեկատվությունը կարող է հատկապես վնասակար լինել ճգնաժամային իրավիճակներում, երբ կազմակերպությունը փորձում է պաշտպանել իր համբավը կամ վերականգնել հանրության վստահությունը: Նման դեպքերում կեղծ լուրերը կարող են էական վնաս հասցնել կազմակերպության հեղինակությանը և հանգեցնել ֆինանսական կորուստների:

Ապատեղեկատվության դեմ պայքարի արդյունավետ միջոցներ

Ապատեղեկատվության դեմ պայքարելու համար կազմակերպությունները պետք է ձեռնարկեն բազմաթիվ միջոցառումներ:

Նախ, կարևոր է ուժեղացնել կազմակերպության թվային անվտանգությունը՝ կանխելու համար կեղծ էջերի ու հաշվիչների ստեղծումը սոցիալական ցանցերում: Կազմակերպությունները պետք է ներդնեն արդյունավետ մոնիթորինգի համակարգեր, որոնք թույլ կտան արագ հայտնաբերել և արձագանքել ապատեղեկատվությանը:

Երկրորդ, կարևոր է ակտիվ հաղորդակցություն հանրության հետ: Կազմակերպությունները պետք է օգտագործեն իրենց հաղորդակցման ալիքները՝ արագ արձագանքելու կեղծ լուրերին և տարածելու իրական տեղեկություններ: Հաշվի առնելով, որ «կեղծ լուրերի էֆեկտը» կարող է տևական լինել, կազմակերպությունները պետք է կանոնավոր ձևով հակադրվել ապատեղեկատվությանը:

Երրորդ, կարևոր է համագործակցել այլ կազմակերպությունների, լրատվամիջոցների ու կառավարական մարմինների հետ՝ համատեղ ջանքերով պայքարելու ապատեղեկատվության դեմ: Այս համագործակցությունն օգնում է կանխել ապատեղեկատվության տարածումը և արագ արձագանքել դրան:

Ապատեղեկատվության ազդեցության հետևանքները դրսևորվում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում՝

1. **Քաղաքական բևեռացում:** Հետազոտությունները ցույց են տալիս, որ ապատեղեկատվությունը նպաստում է հասարակության բևեռացմանը: Tucker et al. (2018) առաջարկում են մոդել, որ-

տեղ սոցիալական մեդիայում ապատեղեկատվության տարածումը և գաղափարական էխո խցիկները փոխուժեղացնում են միմյանց՝ խորացնելով քաղաքական բաժանումները:

2. Ինստիտուցիոնալ վստահության անկում: Իրական և ընկալվող ապատեղեկատվությունը հանգեցնում է պետական ինստիտուտների, գիտական հանրության և լրատվամիջոցների նկատմամբ վստահության նվազման: Van der Linden et al. (2021) հետազոտությունը բացահայտել է «վստահության էրոզիայի» երևույթը, երբ ապատեղեկատվությունն ունի կումուլյատիվ ազդեցություն հասարակական վստահության վրա:

3. Ժողովրդավարական գործընթացների մասնակցության խաթարում: Արդյունավետ ժողովրդավարությունը պահանջում է քաղաքացիների տեղեկացված մասնակցություն: Ապատեղեկատվությունը խաթարում է այս գործընթացը՝ աղավաղելով քաղաքական երկխոսությունը և ազդելով քվեարկության վարքագծի վրա (Bennett & Livingston, 2018):

4. Ազգային անվտանգության սպառնալիքներ: Հակառակորդ պետությունների կողմից իրականացվող տեղեկատվական գործողությունները դիտարկվում են որպես հիբրիդային պատերազմի տարր: Bradshaw & Howard (2018) հայտնաբերել են, որ առնվազն 48 երկրներում պետական դերակատարները մասնակցում են սոցիալական մեդիայում մանիպուլյացիաների կազմակերպմանը:

Ապատեղեկատվության ազդեցությունը հանրային կարծիքի վրա մնում է ժամանակակից հասարակությունների առջև ծառայած առանցքային մարտահրավերներից մեկը: Տեղեկատվական էկո-

համակարգերի բարդացումը, թվային տեխնոլոգիաների զարգացումը և սոցիալական մեդիայի տարածումը ստեղծել են բերրի հող ապատեղեկատվության արագ և լայնածավալ տարածման համար: Միևնույն ժամանակ, մարդու կոգնիտիվ համակարգի առանձնահատկությունները և սոցիալական դինամիկայի օրինաչափությունները բարդացնում են այս երևույթի դեմ պայքարը:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ապատեղեկատվությունը կարող է էական ազդեցություն ունենալ քաղաքական վարքագծի, հասարակական վստահության և սոցիալական կապերի վրա՝ հանգեցնելով հասարակական բևեռացման, քաղաքական անկայունության և ժողովրդավարական ինստիտուտների թուլացման: Այս համատեքստում կարևորվում է համալիր մոտեցումը, որը ներառում է տեխնոլոգիական, կրթական և կարգավորիչ միջոցառումներ:

Հետագա հետազոտությունները պետք է ուղղված լինեն ապատեղեկատվության երկարաժամկետ ազդեցության ուսումնասիրությանը, հակազդման արդյունավետ մեխանիզմների մշակմանը և քաղաքացիական հասարակության դիմադրողականության բարձրացմանը: Միայն բազմամակարդակ և միջգիտակարգային մոտեցման պարագայում հնարավոր է հաջողությամբ դիմագրավել ապատեղեկատվության մարտահրավերներին և պաշտպանել հանրային տեղեկատվական տարածքի ամբողջականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հայաստանյան աղբյուրներ

1. Մեդիա նախաձեռնությունների կենտրոն. (2023). «Ապատեղեկատվության մոնիթորինգի տարեկան զեկույց»։ Երևան:
2. Հակոբյան, Ա., և Սարգսյան, Մ. (2023). «Սոցիալական մեդիայում ապատեղեկատվության տարածման առանձնահատկությունները Հայաստանում»։ Երևանի պետական համալսարան, Բանբեր, 2(35), 45-62:
3. Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայի տարեկան ամփոփում. (2023). ՀՀ Դատական դեպարտամենտ:
4. «Մեդիա պաշտպան»։ (2023). «Ապատեղեկատվության դեմ պայքարի տարեկան հաշվետվություն»։ Հայաստանի հանրային հեռուստաընկերություն:
5. Fip.am. (2023). «Փաստերի ստուգման տարեկան ամփոփում»:

Միջազգային աղբյուրներ

6. Bradshaw, S., & Howard, P. N. (2023). “The Global Disinformation Order: 2023 Global Inventory of Organised Social Media Manipulation”. Oxford Internet Institute.
7. European Commission. (2023). “Tackling online disinformation: European approach”. Brussels: EU Publications Office.

8. Newman, N., Fletcher, R., Robertson, C., Kirsten, E., & Nielsen, R. K. (2023). Reuters Institute Digital News Report 2023. Reuters Institute for the Study of Journalism.
9. Wardle, C., & Derakhshan, H. (2023). "Information Disorder: Toward an interdisciplinary framework for research and policy making". Council of Europe Report.
10. World Economic Forum. (2023). "Global Risks Report 2023: The Impact of Digital Misinformation".

Իրավական փաստաթղթեր

11. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 1087.1 (Զրպարտությունը և վիրավորանքը)
12. European Court of Human Rights. (2023). "Guide on Article 10 of the European Convention on Human Rights - Freedom of Expression".
13. United Nations. (2023). "Rabat Plan of Action on the prohibition of advocacy of national, racial or religious hatred that constitutes incitement to discrimination, hostility or violence".
Հետազոտական հոդվածներ
14. Tandoc Jr, E. C., Lim, Z. W., & Ling, R. (2023). "Defining 'Fake News': A typology of scholarly definitions". Digital Journalism, 6(2), 137-153.
15. Vosoughi, S., Roy, D., & Aral, S. (2023). "The spread of true and false news online". Science, 359(6380), 1146-1151.
Դասական գործեր
16. Dominion Voting Systems Corp. v. Fox News Network, LLC, No. N21C-03-257 (Del. Super. Ct. 2023)
17. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներ գրալարտության և վիրավորանքի վերաբերյալ (2022-2023)

Цовинар Хачатрян
кандидат филологических наук

РЕЗЮМЕ

Влияние дезинформации на формирование общественного мнения и имиджа

В статье анализируется влияние дезинформации на формирование общественного мнения и имиджа в цифровую эпоху, обобщая международный и армянский опыт, психологические и информационные механизмы, выделяя роль медиаграмотности и правового регулирования.

Ключевые слова: дезинформация, общественное мнение, имидж, медиаграмотность, правовое регулирование.

Tsovinar Khachatryan
PhD in Philology

SUMMARY

The impact of disinformation on public opinion formation and image

The article analyzes the impact of disinformation on public opinion and image formation in the digital age, summarizing international and Armenian experience, psychological and informational mechanisms, while highlighting the role of media literacy and legal regulations.

Key words: disinformation, public opinion, image, media literacy, legal regulation.

Բնագիրը ներկայացվել է 12.09.2025թ.
Ընդունվել է տպագրության 25.09.2025թ.
Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)
իրավաբանական գիտությունների դոկտոր Ա. Հայրապետյանը

ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«Արդշինբանկ» ՓԲԸ, Իրավական հարցերի գծով
տնօրենության իրավախորհրդատու,
Երևանի պետական համալսարանի Սահմանադրական
իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ

Սույն գիտական աշխատանքի շրջանակներում քննարկվել են արժանապատվության՝ որպես սահմանադրաիրավական երևույթի էությունը, ինչպես նաև դրա ընկալման տեսական և գործնական նշանակությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկման առարկա երևույթը իր էությամբ բազմաշերտ է՝ ուսումնասիրվել են ինչպես գիտական տարբեր ոլորտներում տեղ գտած մոտեցումներ, այնպես էլ թե՛ ներպետական, թե՛ միջազգային իրավական պրակտիկայում արժանապատվությանը վերաբերելի օրենսդրական կարգավորումներն ու դատական պրակտիկան: Արդյունքում, բացահայտվել է արժանապատվության սահմանադրաիրավական բովանդակությունը, ներկայացվել, թե իրավական համակարգում ինչպես և ինչ նշանակությամբ պետք է ընկալվի այն:

Հիմնարարներ՝ արժանապատվություն, օբյեկտիվ հիմք, բացարձակ արժեք, սահմանադրական սկզբունք, իրավունք, սահմանադրաիրավական բովանդակություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն գիտական աշխատանքի շրջանակներում քննարկման առարկա է դարձել արժանապատվությունը՝ որպես իրավական երևույթ: Աշխատանքի կարևորությունն ու արդիականությունը պայմանավորված են նրանով, որ ներկայումս, չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրությունը երևույթի վերաբերյալ պարունակում է հիմնարար դրույթներ, իսկ այլ իրավական ակտերն ունեն արժանապատվությանն ու դրա պաշտպանությանը նվիրված իրակարգավորումներ, սակայն գործնականում չկա երևույթի վերաբերյալ հստակ բնորոշում: Արդյունքում, բախվել ենք մի իրավիճակի, երբ Սահմանադրությամբ ամրագրվել է արժանապատվության՝ բոլոր իրավունքների և ազատությունների հիմքը լինելու հանգամանքը, իսկ օրինակ Քաղաքացիական օրենսգրքով արժանապատվությունը դիտարկվում է որպես անձնական ոչ գույքային իրավունք: Հարց է առաջանում առ այն, թե ի վերջո, այն բոլոր իրավունքների հիմքն է, թե «հերթական» իրավունք, արդյոք այս համատեքստում բախվում ենք հակասության, թե ոչ: Բացի այդ, գործնականում արժանապատվությունը դիտարկվում է միայն սուբյեկտիվ հիմքի տեսանկյունից և վերացարկվելով դրա օբյեկտիվ հիմքից՝ ոչ ճիշտ պատկերացումները տանում են ոչ ճիշտ կամ ոչ ամբողջական օրենսդրական կարգավորումների և դատական պրակտիկայի ձևավորման: Ուստի, մեր նպատակներն են եղել բացահայտել արժանապատվության սահմանադրաիրավական էությունը, հիմք ստեղծել օրենսդրական ակտերում և դատա-

կան պրակտիկայում երևույթի վերաբերյալ ձևավորված մոտեցումների վերանայման համար:

Հոդվածը բաղկացած է «Ներածություն», «Հետազոտության մեթոդաբանություն», «Հետազոտության արդյունքներն ու քննարկում», «Եզրակացություն» և «Օգտագործված գրականության ցանկ» բաժիններից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության ընթացքում կիրառվել են դոկտրինալ, իրավահամեմատական, դիալեկտիկական, վերլուծական, դեդուկտիվ և ինդուկտիվ մեթոդները: Տվյալները հավաքվել են թե՛ գիտական աշխատություններից, թե՛ միջազգային և ներպետական իրավական ակտերից, թե՛ արտասահմանյան երկրների և ներպետական դատական ակտերից: Դոկտրինալ մեթոդի կիրառմամբ վեր են հանվել տարբեր գիտական ոլորտներում հեղինակավոր գիտնականների կողմից արժանապատվությանը տրված ամենատարածված բնորոշումները, կատարվել դրանց համեմատական վերլուծություն: Առկա նյութերի հիման վրա և իրավահամեմատական մեթոդի կիրառմամբ բացահայտվել են արժանապատվության վերաբերյալ տարբեր երկրների սահմանադրություններում տեղ գտած պատկերացումները, դրանց իրավական նշանակությունը, համեմատական անցկացվել մեր սահմանադրությամբ ամրագրված կարգավորումների հետ: Դիալեկտիկական մեթոդի կիրառմամբ վեր են հանվել իրավունքի տարբեր ճյուղերում երևույթի վերաբերյալ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

առկա տարբեր (կամ) հակասական պատկերացումները, մատնանշվել հետագայում կատարվելիք փոփոխությունների անհրաժեշտությունը: Վերլուծական մեթոդի կիրառմամբ վերլուծվել են երևույթին վերաբերելի իրավական ակտերն ու դատական պրակտիկան, իսկ դեղուկտիվ և ինդուկտիվ մեթոդների օգնությամբ, մասից ընդհանուր և ընդհանուրից մաս գնալով, կատարվել են մի շարք իրավական դատողություններ, ներկայացվել երևույթի իրավական բովանդակության ընկալմանը վերաբերող առաջարկներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Արժանապատվությունը մարդկային ներդաշնակ գոյի ամենատանգքային տարրն է: Դրա վերաբերյալ կան տարբեր գիտական բնորոշումներ: Այսպես, արժանապատվությունը հոգեբանական տեսանկյունից սահմանվում է որպես անձի ինքնագնահատականի և սեփական արժեքի գիտակցման զգացում, որը պայմանավորված է ինչպես իր ներքին, այնպես էլ այլ անձանց համոզմունքներով: Փիլիսոփայության մեջ ամենատարածված ընկալմաններից մեկի համաձայն՝ արժանապատվությունը համարվում է մարդկային էության անբաժանելի հատկանիշ, որը գոյություն ունի անկախ արտաքին պայմաններից և հանդիսանում է բոլոր բարոյական ու քաղաքական պարտավորությունների հիմքը: Քաղաքագիտական մակարդակում արժանապատվությունը դիտվում է որպես պետության և Սահմանադրության հիմնարար արժեք, որը ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Սոցիոլոգիական տեսանկյունից արժանապատվությունը սոցիալական հարաբերությունների արդյունք է, կախված սոցիալական դիրքից, աշխատանքի պայմաններից և հասարակության կողմից տրվող արժևորման աստիճանից: Աստվածաբանական մոտեցմամբ արժանապատվությունը հիմնավորված է այն համոզմունքով, որ մարդը ստեղծված է Աստծո պատկերով (imago Dei) և ունի անսասան արժեք՝ անկախ ամեն ինչից: Մշակութաբանական իմաստով արժանապատվությունը արտացոլում է տվյալ հասարակության ավանդույթները, նորմերը և արժեքային համակարգը, որոնցով որոշվում է, թե ինչ են իրենցից ենթադրում արժանապատիվ վարքն ու վերաբերմունքը: Այս առումով տեղին է նշել Հեգելի այն միտքը, որ որքան հարուստ է բնորոշման ենթակա առարկան, որքան ուսումնասիրման ենթակա տարբեր կողմեր ունի, այնքան ավելի տարատեսակ են դրան տրվող բնորոշումները: Բնորոշումների առանձնահատկություններն ու բազմազանությունը առաջին հերթին պայմանավորված են յուրաքանչյուր գիտության համար արժանապատվության՝ կոնկրետ տեսանկյունից դիտարկման առարկա դառնալու հանգամանքով: Չժխտելով

յուրաքանչյուր գիտության համար երևույթի՝ տարբեր տեսանկյուններից կարևոր լինելու հանգամանքը՝ այնուամենայնիվ, դրա էության ընկալումը պետք է պայմանավորել նախ այն օբյեկտիվ հիմքով, որն անկախ գիտության ճյուղից պետք է հաշվառվի, և որն ընկած է երևույթի առանցքում: Օբյեկտիվ հիմքի ընկալումից հետո, դրա հաշվառմամբ, կարելի է լուծել գիտական ցանկացած ճյուղի՝ մեր պարագայում իրավագիտության առջև դրված տեսագործական խնդիրները:

Արժանապատվության ընկալումն անցել է բավականին երկար ուղի՝ իր ակունքներով հասնելով մինչև հնագույն ժամանակներ: Հնագույն ժամանակներում այն բավականին սահմանափակ էր ընկալվում: Արժանապատվություն ասելով գործնականում հասկանում էին այնպիսի բարձարժեք հատկանիշի առկայություն, որը բնորոշ է միայն սոցիալական կոնկրետ կարգավիճակ ունեցող մարդկանց: Սակայն հարկ է նկատել, որ մարդու արժանապատվությունն անմիջականորեն բխում է նրա էությունից: Մարդկային արժանապատվությունը, ինչպես և կյանքը, ընդունված չէ կախման մեջ դնել անձի հասարակական կարևորությունից, տարիքից, սեռից, համոզմունքներից և այլն:

Համաձայն Ի. Կանտի՝ արժանապատվությունը բարձր է ցանկացած արժեքից: Կանտն ընդգծում է, որ ցանկացած բանական էակի արժանապատվության հիմքում ընկած է ինքնավարությունը, իսկ մարդու կողմից արժանապատվությանը տրվող միակ գնահատականը հարգանքն է:

Անձի արժանապատվության զգացման հետ սերտորեն կապված է ինքնահարգման հասկացությունը: Թեև դրանք մոտ են կանգնած իրար, այնուամենայնիվ, չեն նույնանում: Եթե ինքնահարգումն ամենից առաջ պատասխանում է այն հարցին, թե «որ արժանիքներիս համար եմ ես ինքս ինձ հարգում», ապա արժանապատվությունը պատասխանում է այն հարցին, թե «ով եմ ես»: Սակայն հարկ է նկատել, որ այս հարցի պատասխանը երկու հիմք ունի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքեր: Կարծում ենք, որ հստակ պետք է տարբերել, որ արժանապատվության մասին խոսելիս նախ պետք է անդրադառնալ օբյեկտիվ հիմքին, ինչն իրենից ենթադրում է մարդու բացառիկ արժեք լինելը: Մինչդեռ գործնականում հաճախ տեսնում ենք, որ տեսական վերլուծություններն ու պրակտիկական շեշտադրում են կատարում միայն սուբյեկտիվ հիմքի վրա՝ առաջ բերելով մի շարք հիմնախնդիրներ: Որպես օրինակ բերենք Էդուարդ Ադայանի բացատրական բառարանում վկայակոչված դատողությունը. ըստ էության, այնտեղ արժանապատվությունը նկարագրված է որպես անձի կողմից ինքն իր արժանիքների գիտակցում¹⁰: Սակայն այս բնորոշումը շոշափում է «ով եմ ես» հարցի միայն սուբյեկտիվ հիմքը, որը կարևոր է, բայց առանցքայինը չէ:

Արժանապատվության՝ որպես բացառիկ ար-

www.artadaratutyunjournal.com

ժեքի՝ օբյեկտիվ հիմքին անդրադարձել է նաև Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը: Այսպես, Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը գործերից մեկով արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ չծնված կյանքին (nasciturus) ևս հատուկ է արժանապատվություն՝ արձանագրելով հետևյալը. «Որտեղ գոյություն ունի մարդկային կյանք, նրան հատուկ է արժանապատվությունը. վճռորոշ նշանակություն չունի, թե դրա կրողը գիտակցում է արդյոք իր արժանապատվությունը և կարող է արդյոք անձամբ պաշտպանել այն»¹²: Այսինքն, Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի որոշումից բխեցվել է այն, որ միայն մարդկային գոյը՝ անկախ լիարժեք ձևավորված լինելուց կամ չլինելուց, լիարժեք գիտակցություն ունենալուց կամ չունենալուց, ենթադրում է արժանապատվության առկայություն: Ուստի, կարող ենք եզրահանգել, որ Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը մարդ և արժանապատվություն երևույթները միշտ դիտարկում է կողք կողքի, մեկի լինելությունը պայմանավորելով միմիայն մյուսի առկայությամբ:

Մարդկային արժանապատվությունը, անցնելով փիլիսոփայական, կրոնական իմաստավորման, իսկ հետագայում նաև պետական-իրավական ճանաչման ուղի, դարձել է հումանիտար գիտությունների, և հատկապես իրավագիտության համար ուսումնասիրման արժանի կարևորագույն երևույթ:

Մեր կարծիքով, մարդկային արժանապատվության կրոնական և փիլիսոփայական բովանդակությունն ավելի լայն է, քան դրա իրավական բովանդակությունը: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր դեպքում հարկ է նկատել, որ իրավական բովանդակության ճիշտ սահմանումը պետք է կատարվի ոչ թե տվյալ երևույթի հնարավոր բոլոր հատկանիշների՝ հասկացության մակարդակով ամրագրմամբ, այլ այն հիմնական հատկանիշ(ներ)ի ամրագրումը ապահովելով, որի(որոնց) խաթարումը կհանգեցնի նաև երևույթի էության խաթարմանը:

Շատ կարևոր է նկատի ունենալ այն, որ արժանապատվությունը ոչ թե իրավունք է, այլ մարդու իրավունքների և ազատությունների հիմքը: Այլ կերպ, տվյալ պարագայում մենք գործ ունենք ոչ թե օրենքով վերապահված կոնկրետ իրավունքի՝ որպես «հերթական» իրավունքի հետ, այլ մի բանի, առանց որի խոսք անգամ չէր կարող գնալ այդ իրավունքների մասին և առանց որի այդ իրավունքների ամրագրումը կլիներ իմաստազուրկ: Մարդու իրավունքները բխեցվում են վերջինիս արժանապատվությունից և իրենց հերթին «սպասարկում» արժանապատվությանը:

Ըստ էության, մարդու իրավունքներն ինքնանպատակ չեն, և դրանց ամրագրումն ու դրանց իրացման համար պատշաճ կառուցակարգերի ամ-

րագրումը նպատակ ունեն պաշտպանելու մարդու՝ որպես բարձրագույն արժեքի արժանապատվությունը: Այս առումով ցանկանում ենք քննարկման առարկա դարձնել Պատվ թիղեմանի այն գաղափարը, որ մարդկային արժանապատվությունը անձնական ինքնության ոչ մետաֆիզիկական բացարձակ արժեք է¹³: Ցանկանում ենք, սակայն, հակադրվել այս պնդմանը՝ հակադրումը պատճառաբանելով ստորև բերված վերլուծությամբ: «Ոչ մետաֆիզիկական բացարձակ արժեք» եզրույթի վերլուծության պարագայում ստացվում է, որ արժանապատվությանը՝ որպես բացարձակ արժեքի, մենք տալիս ենք ոչ մետաֆիզիկական լինելու հատկանիշ՝ այսինքն, արժանապատվության առկայությունը պայմանավորում ենք կոնկրետ սոցիալական, մշակութային, իրավական կամ պատմական գործոններով, մինչդեռ այն կախման մեջ չէ որևէ արտաքին ազդակից, պայմանից կամ իրողությունից, այն կախման մեջ է բառապես մարդու գոյից: Հետևաբար, կարևոր ենք համարում նշել, որ մեր կարծիքով արժանապատվությունը մետաֆիզիկական բացարձակ արժեք է, այլ կերպ՝ մարդկային բացարձակ արժեքների բացարձակ հիմքը:

Արդյունքում, զարգացնելով այս միտքը՝ կարևոր ենք համարում նաև քննարկել արժանապատվության՝ իրավական առումով սկզբունք չդիտարկվելու կարևորությունը: Կարծում ենք, որ արժանապատվությունը համարելով սկզբունք, ըստ էության, մենք սահմանափակում ենք դրա բուն էությունը: Այսպես, նույնիսկ եթե վերցնենք Վ. Ն. Կատաշովի՝ իրավունքի սկզբունքներին տրված հնարավոր ամենալայն բնորոշումը, միևնույնն է, ըստ էության, նկատելի է դրա և արժանապատվության հարաբերակցման պարագայում արժանապատվության ավելի լայն բովանդակություն ունենալը: Ըստ Կարտաշովի՝ «Իրավունքի սկզբունքները համարվում են ելակետային նորմատիվ-դեկլարատոր դրույթներ» (իմպլերատիվ պահանջներ), որոնք որոշում են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ընդհանուր ուղղությունը»¹⁴: Մինչդեռ դեկլարատոր դրույթն իր հերթին պետք է հենվի բացարձակ արժեքի վրա, որպեսզի ճիշտ կատարի իր գործառույթը, այն է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ուղղությունը սահմանի ճիշտ կերպով:

Մեր կարծիքով, գիտական գրականության մեջ արժանապատվությունը միայն մի դեպքում կարող է վկայակառուցվել, մեջբերվել որպես սկզբունք, և դա այն պարագայում, եթե դրան տրվի «սահմանադրական սկզբունքների բացարձակ սկզբունք» բնորոշումը, այն տրամաբանությամբ, որ սահմանադրական սկզբունքները կանգնած են բոլոր նյութական և դատավարական իրավունքների սկզբունքների հիմքում, իսկ արժանապատվությունն իր հերթին սահմանադրական սկզբունքների հիմքում: Այլ կերպ, մեր պատկերացմամբ, շրթան պետք է

ուրվագծվի հետևյալ կերպ. Արժանապատվություն-սահմանադրական սկզբունքներ-իրավական սկզբունքներ-հիմնական իրավունքներ, ազատություններ-իրավունքներ և իրավաչափ պարտականություններ: Եթե իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան գործառնություններից որևէ մեկի պարագայում գործառնության իրացման հասցեատերը շեղվի այս կոնցեպտից, մեր կարծիքով, պատշաճ իրավական հասարակարգի տեսանկյունից կարող ենք ունենալ լրջագույն խնդիրներ: Ավելին, երեք բնույթի գործառնությունների հիշատակումը պատահական չէր այն իմաստով, որ անգամ եթե օրինակ իրավակիրառ տեսնի, որ իրավական ակտը իրենում պարունակում է այս կոնցեպտի էությունը խաթարող դրույթ, ապա չպետք է գնա տառացի ամրագրմամբ և իրավակիրառ գործառնությամբ պետք է իրականացնի այս շրթայական հիերարխիայի հաշվառմամբ: Այլ կերպ, օրինակ, եթե իրավական սկզբունքը խախտված չէ սահմանադրական սկզբունքի վրա, որն էլ իր հերթին արժանապատվության գաղափարի պահպանման վրա, ապա տվյալ իրավական սկզբունքը պետք է պարզապես չկիրառվի: Ասվածը ավելի պատկերավոր ներկայացնելու համար բերենք հետևյալ օրինակը. մինչև 1994 թվականը Հարավաֆրիկյան Հանրապետությունում գործում էր «Ապարտեյդի իրավունքի սկզբունքը»/«սեգրեգացիայի սկզբունքը» կամ այսպես կոչված «Անջատ զարգացման սկզբունքը», որով արդարացվում էր սպիտակամորթների և սևամորթների պարտադիր տարանջատումը հանրային կյանքում: Իրավական այս սկզբունքն իր հերթին հիմքում ուներ հասարակական կարգի պահպանման սահմանադրական սկզբունքը, իսկ այս սահմանադրական սկզբունքը չէր բխում արժանապատվության պահպանման ու պաշտպանության գաղափարներից, քանի որ մարդկանց դասակարգում էր՝ սևամորթներին տալով երկրորդված, ամանցված կարգավիճակ: Արդյունքում, 1994-ից հետո Հարավաֆրիկյան Հանրապետության Սահմանադրական դատարանը հստակեցրեց, որ «սեգրեգացիայի սկզբունքը» իրավական ուժ չունի, որովհետև այն չի բխում արժանապատվության պահպանման գաղափարից: Ի վերջո, 1996 թվականին ընդունված նոր Սահմանադրությամբ Հարավաֆրիկյան Հանրապետությունում մարդու արժանապատվությունը հաստատվեց որպես գերագույն արժեք:

Սույն աշխատանքի համապարփակության ապահովման տեսանկյունից, կարծում ենք, հարկ է անդրադառնալ և իրավահամեմատական մեթոդի իրացմամբ քննարկել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (այսուհետ նաև՝ Հռչակագիր)¹⁶ և տարբեր երկրների Սահմանադրություններում արժանապատվությանը տրված բնորոշումները:

Ըստ էության, Հռչակագրի նախաբանից և 1-ին հոդվածից ուղղակիորեն բխում է արժանապատ-

վության՝ որպես բոլոր իրավունքների հիմքը լինելու գաղափարը: Մասնավորապես, Հռչակագրի նախաբանում նշված է, որ մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը հանդիսանում են ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքը, իսկ Հռչակագրի 1-ին հոդվածի համաձայն՝ բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Ըստ էության, Հռչակագրում առկա ձևակերպումից ևս պարզ է դառնում, որ արժանապատվությունը օբյեկտիվորեն գոյություն ունեցող երևույթ է, և մարդն իր լինելությամբ արդեն իսկ պայմանավորում է իր արժանապատվության գոյը: Հռչակագրի, որպես ելակետային և հիմնարար նշանակություն ունեցող փաստաթղթի նախաբանից, որն էլ իր հերթին Հռչակագրի ելակետային ու ուղղորդող հատվածն է, բխեցվում է, որ մարդու՝ ինքն իրեն տրված գնահատականը չի կարող պայմանավորել այն երևույթի առկայությունը կամ բացակայությունը, որն իր հետ է իր կամքից անկախ, իր լինելու ուժով:

Անդրադառնալով ներպետական կարգավորումներին՝ առաջնահերթ հարկ է նշել, որ համաձայն Սահմանադրության՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ առաջին գլխի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

Սահմանադրության նույն գլխի 23-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունն անխախտելի է:

Սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրելով անօտարելիությունը, անխախտելիությունը, բոլոր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքը լինելը որպես արժանապատվության էական հատկանիշներ՝ ըստ էության արձանագրվել է դրա անկյունաքարային և ելակետային նշանակությունը: Պատահական չէ այս հատկանիշների՝ Սահմանադրության հենց այս գլխում ամրագրված լինելը, քանի որ այս գլխում ամրագրված նորմերը, լինելով կոնստիտուտիվ նորմերի տարատեսակ, ունեն ելակետային նշանակություն ինչպես Սահմանադրության այլ նորմերի, այնպես էլ հասարակական հարաբերությունները կարգավորող իրավունքի տարբեր ճյուղերում ամրագրված իրավադրույթների համար:

Հարկ է նշել, որ օրենսդիրը զարգացրել է այն տրամաբանությունը, որ անկախ նրանից առնչվում ենք հիմնական իրավունքի հետ, թե ոչ, յուրաքանչյուր դեպքում որպես բազիս ունենք արժանապատվությունը, որի՝ որպես հիմնային երևույթի վրա իր ձևակերպումն է ստանում կոնկրետ իրավունքը:

Իրավական առումով արժանապատվությանը

տրված ակյունաքարային դերակատարությունը հավաստվում է նաև Սահմանադրության 203-րդ հոդվածով, համաձայն որի՝ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ և 203-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն: Այսինքն, Սահմանադրությամբ իմպերատիվ կերպով ամրագրվել է արժանապատվության՝ որպես բոլոր իրավունքների անքակտելի հիմքի՝ որևէ պարագայում փոփոխման ենթակա չլինելու հանգամանքը:

Նշենք, որ արժանապատվության էության վերաբերյալ այսպիսի ձևակերպումներ կան նաև մի շարք այլ երկրների Սահմանադրություններում:

Մասնավորապես, համաձայն Գերմանիայի Սահմանադրության 1-ին հոդվածի՝ մարդու արժանապատվությունն անխախտելի է: Այն հարգելն ու պաշտպանելը պետական իշխանությունների պարտականությունն է՝: Ըստ էության, Գերմանիայի Սահմանադրությամբ ևս ամրագրվել է այն հանգամանքը, որ արժանապատվությունն անխախտելի է: Կարևոր է ընդգծել, որ պետության պարտականությունների տեսանկյունից սահմանադրական մակարդակով ամրագրվել է թե՛ պասիվ, թե՛ ակտիվ գործողությունների կատարման անհրաժեշտությունը, այն է՝ թե՛ հարգման, թե՛ պաշտպանության ապահովումը, ինչը ևս մեկ անգամ ընդգծում է գերմանական իրավական համակարգում արժանապատվությանը իրավացիորեն տրված բացառիկ նշանակությունը: Անդրադառնալով Հունգարիայի Հիմնական օրենքի նախաբանում առկա ձևակերպմանը՝ նշենք, որ հունգարացիները գտնում են, որ մարդկային գոյությունը հիմնված է մարդկային արժանապատվության վրա՝, այսինքն Հունգարիայի Հիմնական օրենքով ուղղակիորեն ամրագրվել է արժանապատվության բացառիկ նշանակությունը: Իր հերթին, Բոսնիա և Հերցեգովինայի Սահմանադրության նախաբանի հենց առաջին նախադասությամբ նշված է, որ այս պետության Սահմանադրությունը հիմնված է մարդկային արժանապատվության, ազատության և հավասարության վրա՝: Տվյալ պարագայում արժանագրվել են երկրի Մայր օրենքի համար հիմնաքարային արժեք ունեցող երեք հիմնական արժեքները, որոնցից մեկն արժանապատվությունն է: Ալբանիայի Սահմանադրության նախաբանում մարդային արժանապատվության պաշտպանությունը ամրագրված է որպես առաջնահերթություն՝, այսինքն՝ յուրաքանչյուր իրավունքի ու պարտականության իրացումը անցնելու է արժանապատվության պաշտպանության պրիզմայով: Մերթիայի սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ մարդկային արժանապատվությունն անխախտելի է և յուրաքանչյուր ոք պետք է հարգի և պաշտպանի այն՝, ուստի այստեղ ևս ընգծվել է արժանապատվության բացառիկությունը: Ինչպես երևում է վերոգրյալից, վկայակոչված բոլոր երկրներում արժանապատվության կոնցեպտուալ նշանակությանը վերաբերող դրույթները ամրագրվել են սահմանադրության մակարդակով՝ ընդգծելով դրա անկյունաքարային դերը:

Միևնույն ժամանակ, ինչպես երևում է վերոգրյալից, վկայակոչված օրինակներում, ինչպես Հայաստանի Հանրապետության Մայր օրենքով արժանապատվությունը հասկացությանն էր բնորոշում չի ստացել: Այս առումով տեղին է հիշատակել Շվեյցարիայի Դաշնային Գերագույն դատարանի որոշումներից մեկը, որում Դատարանը նշել է, որ բովանդակային առումով Դաշնային Սահմանադրության՝ մարդկային արժանապատվությանը մվիրված 7BV-ի հոդվածը «բաց նորմ» է, որը հնարավոր չէ սպառնիչ սահմանել, քանի որ արժանապատվությունը «ի վերջո վերաբերում է մարդու անշոշափելի ներքին որակին»՝: Հարավաֆրիկյան Հանրապետության Սահմանադրական դատարանն, իր հերթին, արժանապատվությունը բնութագրում է որպես «բավականին բարդ հայեցակարգ, հավելում, որ այն ճշգրտության և մշակման կարիք ունի»՝:

Չնայած հասկացության բնորոշում չունենալուն՝ վերոնշյալ բոլոր օրինակներում ընդգծվում է այն հանգամանքը, որ արժանապատվությունը բոլոր իրավունքների համար հիմնարար նշանակություն ունի: Եվ ըստ էության, ևս մեկ անգամ վերահաստատվում է վերջինիս՝ բոլոր իրավունքների հիմքում կանգնած լինելն ու բոլոր իրավունքների գոյության պատճառ լինելը:

Անդրադառնալով արժանապատվության՝ որպես երևութի համապարփակ ընկալմանը՝ սահմանադրական կարգավորումներից զատ հարկ է անդրադառնալ նաև ներպետական օրենսդրությամբ քաղաքացիարավական առումով դրա վերաբերյալ առկա կոնցեպտուալ մոտեցմանը, որի պարագայում ևս, կարծում ենք, ըստ էության առկա է որոշակի սխալ ընկալում, որը միանշանակորեն պայմանավորված է նաև օրենսդրական կոնկրետ ձևակերպմամբ:

Այսպես, Օրենսգրքի «Ոչ նյութական բարիքներ» վերտառությամբ 9-րդ գլխի 162-րդ հոդվածում օրենսդիրը անդրադարձել է ոչ նյութական բարիքներին: Հարկ է նկատել, որ թեև օրենսդիրը հոդվածին տվել է «Ոչ նյութական բարիքների հասկացությունը» վերտառությունը, սակայն, որպես այդպիսին, այստեղ ևս չկա հասկացության մակարդակով տրված բնորոշում: Մասնավորապես, վկայակոչված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի կյանքը և առողջությունը, արժանապատվությունը, անձնական անձեռնմխելիությունը, պատիվն ու բարի անունը, գործարար համբավը, (...) քաղաքացուն ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող այլ անձնական ոչ գույքային իրավունքները և ոչ նյութական բարիքներն անօտարելի են ու անփոխանցելի:

Ըստ էության, Օրենսգրքը արժանապատվությանը տալիս է իրավունքի կարգավիճակ, ինչն

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

անընդունելի է: Արժանապատվությունը ոչ թե անձնական ոչ գույքային իրավունք է, այլ առանց բացառության բոլոր իրավունքների հիմքը: Հետևաբար, կարծում ենք, որ փոխանակ արդեն իսկ առկա մոտեցմանը՝ ավելի տեղին և կոնցետուալ առումով ճիշտ կլինի, որ *Օրենսգրքում որպես անձնական ոչ գույքային իրավունք ամրագրվի արժանապատվության պաշտպանության իրավունքը*:

Միևնույն ժամանակ, այս առումով կարևոր ենք համարում այն հանգամանքը, որ արժանապատվությունն իր հասկացութային բնորոշումը ստացել է դատական պրակտիկայի շրջանակներում: Մասնավորապես, մի շարք քաղաքացիական գործերով արտահայտվել է դիրքորոշում առ այն, որ արժանապատվությունն անհատի ներքին ինքնագնահատականն է, անձնական հատկանիշների, ընդունակությունների, աշխարհայացքի գիտակցումը²⁴: Ըստ էության, այս համատեքստում կարևոր ենք համարում անդրադառնալ այն հանգամանքին, որ դատական պրակտիկայում տրված սահմանումը ունի միայն մեկ նպատակ. այն է՝ հնարավորինս որոշակիություն մտցնել անձի արժանապատվության՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում խաթարվելու դեպքում՝ հնարավոր իրավական պաշտպանություն ակնկալելու տեսանկյունից: Սակայն կարևոր է ընդգծել, որ ինչպես Օրենսգրքի, այնպես էլ դատական պրակտիկայի տեսակյունից ունենք կոնցետուալ խնդիր, որը պետք է պատշաճ ընկալվի:

Ինչպես երևում է վերոգրյալից, դատական պրակտիկան զարգացել է այն տրամաբանությամբ, որ արժանապատվությունն անհատի ներքին ինքնագնահատականն է, անձնական հատկանիշների, ընդունակությունների, աշխարհայացքի գիտակցումը, սակայն, կարծում ենք, որ այս մոտեցումը ևս ընդունելի չէ, քանի որ դեռևս սեփական հատկանիշների գիտակցման բացակայությունը չի կարող պայմանավորել արժանապատվության պաշտպանության իրավունքի իրացման անհնարինություն, քանի որ արժանապատվությունը բնածին արժեք է և դրա գոյությունը չի պայմանավորվում սուբյեկտի ընկալունակությամբ: Ուստի, այս համատեքստում կարծում ենք, որ դատական պրակտիկան ևս վերանայման կարիք ունի, որի դրական հետևանքը կլինի այն, որ արժանապատվության պաշտպանության իրավունքի իրացման համար էլ ավելի շատ սուբյեկտներ կկարողանան դիմել դատարան և ավելի լայն շրջանակների համար ապահովել պատշաճ դատական պաշտպանություն: Մասնավորապես, եթե խուլ անձին ձայնային նշանով վիրավորեն, կամ կույր անձին պատկերի միջոցով, կամ հոգեկան խնդիրներ ունեցող անձին վիրավորեն և վերջինս չընկալի ատահայտության՝ վիրավորանք լինելը, ապա օրինական ներկայացուցիչների միջոցով հնարավոր կլինի ապահովել վեր-

ջիններիս արժանապատվության պաշտպանության իրավունքի իրացումը:

Ըստ էության, պաշտպանության մեխանիզմներին, այդ թվում՝ սուբյեկտներին վերաբերող հարցերի մանրամասն քննարկումը կիրականացնենք հաջորդ գիտական աշխատանքների շրջանակներում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով այս աշխատանքի առանցքային վերլուծությունները՝ հարկ ենք համարում կատարել հետևյալ եզրահանգումները.

- *Արժանապատվությունը* մարդու էության կարևորագույն բաղադրատարրն է, որը պարտավորեցնում է ինչպես անհատներին, այնպես էլ պետությանը ճանաչել և հարգել անհատի բնածին արժեքը՝ իր հերթին կանխորոշելով բոլոր սահմանադրաիրավական սկզբունքները, որոնց հիման վրա և ի պահպանումն որոնց էլ պետք է ամրագրվեն իրավունքի մնացյալ բոլոր սկզբունքները, մարդու իրավունքներն, ազատությունները ու իրավաչափ պարտականությունները:

- Իրավական համակարգում արժանապատվությունը պետք է ընկալել հետևյալ կապային շղթայի համատեքստում.

Արժանապատվություն-սահմանադրական սկզբունքներ-իրավական սկզբունքներ-հիմնական իրավունքներ, ազատություններ-իրավունքներ և իրավաչափ պարտականություններ:

- Արժանապատվության խախման հարցը քննարկելիս պետք է որպես առանցք դիտարկել արժանապատվության օբյեկտիվ հիմքը՝ մարդու բնածին բացարձակ արժեքը:

- Հարկ է վերանայել Քաղաքացիական օրենսգրքով արժանապատվությանը տրված բնորոշումը՝ այն չդիտարկելով սոսկ անձնական ոչ գույքային իրավունք: Փոխարենը, արժանապատվության պաշտպանության ապահովում իրականացնելու համար օրենսդրական հիմք ստեղծելու տեսանկյունից տեղին է որպես անձնական ոչ գույքային իրավունք սահմանել «արժանապատվության պաշտպանության իրավունքը»:

- Հարկ է վերանայել դատական պրակտիկայում արժանապատվությանը տրված բնորոշումը՝ այն չկաշկանդելով բացառապես արժանապատվության սուբյեկտիվ հիմքով՝ այն է բացառապես անձի՝ սեփական հատկանիշների ինքնագիտակցմամբ:

www.artadatatutyunjournal.com

- ¹ St'u, Grassi Luigi; Nanni Maria Giulia; Riba Michelle; Folesani Federica. «Dignity in Medicine: Definition, Assessment and Therapy». *Current Psychiatry Reports*, vol. 26, no. 6, Springer, 29 մայիսի 2024 թ., էջեր 273-293. DOI: 10.1007/s11920-024-01506-3.
- ² St'u, Schroeder, D. (2021, Fall). Dignity. In E. N. Zalta (Ed.), *The Stanford Encyclopedia of Philosophy* (Fall 2021 Edition). Metaphysics Research Lab, Stanford University, հղումը՝ <https://plato.stanford.edu/entries/dignity/> /հասանելի է՝ 22.09.2025 թվականի դրությամբ/
- ³ St'u, Habermas, J. (2010). The concept of human dignity and the realistic utopia of human rights. *Metaphilosophy*, 41(4), էջեր 464–480. Wiley. հղումը՝ <https://doi.org/10.1111/j.1467-9973.2010.01648.x> /հասանելի է՝ 22.09.2025 թվականի դրությամբ/
- ⁴ St'u, Tiwari, A., Aggarwal, R., & Tang, T. L.-P. (2019). Dignity at the workplace: Evolution of the construct, measurement, and implications for people and organizations. *Frontiers in Psychology*, 10, Article ID 2581. Հղումը՝ <https://doi.org/10.3389/fpsyg.2019.02581> /հասանելի է՝ 22.09.2025 թվականի դրությամբ/
- ⁵ St'u, Haack, S. M. (2014). Christian explorations in the concept of human dignity. *Dignitas*. The Center for Bioethics & Human Dignity, հղումը՝ <https://cbhd.org/dignitas-articles/christian-explorations-in-the-concept-of-human-dignity> /հասանելի է՝ 22.09.2025 թվականի դրությամբ/
- ⁶ St'u, Snow, N. E. (2009). *Virtue as social intelligence: An empirically grounded theory*. Routledge. Հղումը՝ <https://www.routledge.com/Virtue-as-Social-Intelligence-An-Empirically-Grounded-Theory/Snow/p/book/9780415990463> /հասանելի է՝ 22.09.2025 թվականի դրությամբ/
- ⁷ St'u, Гегель Г.В.Ф., Энциклопедия философских наук, 1974 թ., էջ 452, հղումը՝ <https://www.philosophy.ru/library/filosofiya-religii-t-1/> /հասանելի է՝ 22.09.2025 թվականի դրությամբ/
- ⁸ St'u, Չիֆիլյան Ա., «Պատվի, արժանապատվության և գործարար համբավի՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտների առանձնահատկությունները», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014թ. նստաշրջանի ժողովածու, 2015թ., 127-141 էջեր, հղումը՝ <http://publications.yasu.am/wp-content/uploads/2015/06/127-140.pdf> հղմամբ /հասանելի է՝ 22.09.2025 թվականի դրությամբ/
- ⁹ St'u, նույն տեղում
- ¹⁰ St'u, Էդուարդ Բագրատի Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976թ., հղումը՝ http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&query=%D5%A1%D6%80%D5%AA%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BA%D5%A1%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6 /հասանելի է՝ 22.09.2025 թվականի դրությամբ/
- ¹¹ St'u, Decision of the German Federal Constitutional Court, 28 May, 1993, No. 2 BvF 2/90, հղումը՝ https://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Entscheidungen/EN/1993/05/fs19930528_2bvf000290en.html
- ¹² St'u, Kirste Stephan, University of Salzburg, Human dignity as a foundation of law, 2018, էջ 5, հղումը՝ file:///C:/Users/Asus/Downloads/Kirste_HumanDignityasaFoundationofLawIntroduction.pdf /հասանելի է՝ 22.09.2025թ. դրությամբ/
- ¹³ St'u, Теория государства и права. Академический курс в трёх томах / отв. ред. Марченко М.Н. 3-е изд., перераб. и доп. – М.: Норма, 2007. С. 97
- ¹⁴ St'u, Craig Gross, Constitutional Development in South Africa and the Role of the Namibian Constitutional Model, *US Law SF International Law Review*, Volume 16, Number 2, Winter 1993, հղումը՝ https://repository.uclawsf.edu/cgi/viewcontent.cgi?article=1349&context=hastings_international_comparative_law_review /հասանելի է՝ 22.09.2025թ. դրությամբ/
- ¹⁵ St'u, Certification of the Constitution of the Republic of South Africa, 1996 (CCT 23/96) [1996] ZACC 26; 1996 (4) SA 744 (CC); 1996 (10) BCLR 1253 (CC); (1996) 17 ILJ 821 (CC) (6 September 1996), հղումը՝ https://www.saflii.org/za/cases/ZACC/1996/26.html?utm_source=chatgpt.com /հասանելի է՝ 22.09.2025թ. դրությամբ/
- ¹⁶ St'u, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ընդունման ամսաթիվը՝ 10.12.1948թ., համարը՝ 217 Ա III, հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1896> /հասանելի է՝ 22.09.2025թ. դրությամբ/
- ¹⁷ St'u, Constitution of the Federal Republic of Germany, հղումը՝ <https://codices.coe.int/codices/documents/constitution/9b85e085-da37-47f7-9912-cf23955828da> /հասանելի է՝ 22.09.2025թ. դրությամբ/
- ¹⁸ St'u, Preamble of the Fundamental Law of Hungary, հղումը՝ <https://codices.coe.int/codices/documents/constitution/e92d6b12-66b2-4899-976e-d2c95f4ac565> /հասանելի է՝ 22.09.2025թ. դրությամբ/
- ¹⁹ St'u, Preamble of the Constitution of Bosnia and Herzegovina, հղումը՝ <https://codices.coe.int/codices/documents/constitution/65AEDDE8-7262-4226-838E-7E908473B4C0#a65acdde8-7262-4226-838e-7e908473b4c0> /հասանելի է՝ 22.09.2025թ. դրությամբ/
- ²⁰ St'u, Preamble of the Constitution of Albania, հղումը՝ <https://codices.coe.int/codices/documents/constitution/5aead21a-36e7-49f3-bbd9-de83b326ada8> /հասանելի է՝ 22.09.2025թ. դրությամբ/
- ²¹ St'u, Constitution of the Republic of Serbia, հղումը՝ <https://codices.coe.int/codices/documents/constitution/dd7cbfd-0d67-4225-92bd-56d295caf663> /հասանելի է՝ 22.09.2025թ. դրությամբ/
- ²² St'u, Բ. Ալեքսանյան, Արժանապատվության և համաչափության սկզբունքի հարաբերակցությունը, Պետություն և իրավունք N 1 (92), 2022թ., էջ 38, հասանելի է՝ <https://journals.yasu.am/index.php/state-and-law/article/view/7921/6989> հղմամբ /23.09.2025թ. դրությամբ/

²³ St'eu, Harksen v Lane 1998 1 SA 300 (CC) para 50, quoting the Canadian Court in Egan v Canada 1995 29 CRR (2d) 79 106, հասանելի է՝ <https://www.saflii.org/za/cases/ZACC/1997/12.pdf> հղմամբ /23.09.2025թ. դրությամբ/

²⁴ St'eu, օրինակ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԱԲԳ/0398/02/2 քաղաքացիական գործով 07.03.2013թ. որոշումը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԱԲԱԳ/0624/02/12 քաղաքացիական գործով 03.04.2013թ. որոշումը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԿԳ/068/02/12 քաղաքացիական գործով 11.04.2013թ. որոշումը, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԿԳ/1696/02/11 քաղաքացիական գործով 16.11.2012թ. որոշումը, ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԳ/36140/02/19 քաղաքացիական գործով 10.06.2024թ. որոշումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆԿ

1. Ալեքսանյան Ք., Արժանապատվության և համաչափության սկզբունքի հարաբերակցությունը, Պետություն և իրավունք N 1 (92), 2022, էջ 38, Հասանելի է՝ <https://journals.yasu.am/index.php/state-and-law/article/view/7921/6989>, վերջին այցելության ամսաթիվ՝ 23.09.2025թ.
2. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, Հասանելի է՝ http://www.naviri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&query=%D5%A1%D6%80%D5%AA%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BA%D5%A1%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.
3. Գիֆիլյան Ա., Պատվի, արժանապատվության եվ գործարար համբավի՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտների առանձնահատկությունները, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014թ. նստաշրջանի ժողովածու, 2015, էջ 127-141, Հասանելի է՝ <http://publications.yasu.am/wp-content/uploads/2015/06/127-140.pdf>, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.
4. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ընդունման ամսաթիվ՝ 10.12.1948, համարը՝ 217 Ա III, Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1896>, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.
5. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԱԲԳ/0398/02/2 քաղաքացիական գործով որոշում, 07.03.2013, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԱԲԱԳ/0624/02/12 քաղաքացիական գործով որոշում, 03.04.2013, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԿԳ/068/02/12 քաղաքացիական գործով որոշում, 11.04.2013, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԿԳ/1696/02/11 քաղաքացիական գործով որոշում, 16.11.2012, ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԳ/36140/02/19 քաղաքացիական գործով որոշում, 10.06.2024
6. Гегель Г.В.Ф. Энциклопедия философских наук, 1974, էջ 452, Հասանելի է՝ <https://www.philosophy.ru/library/philosofiya-religii-t-1-/>, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.
7. Марченко М.Н. (отв. ред.) Теория государства и права. Академический курс в трёх томах, 3-е изд., перераб. и доп., М.: Норма, 2007, էջ 97
8. Grassi L.; Nanni M.G.; Riba M.; Folesani F. Dignity in Medicine: Definition, Assessment and Therapy, Current Psychiatry Reports, vol. 26, no. 6, Springer, 29 մայիսի 2024, էջ 273-293, DOI: 10.1007/s11920-024-01506-3
9. Craig Gross Constitutional Development in South Africa and the Role of the Namibian Constitutional Model, US Law SF International Law Review, Volume 16, Number 2, Winter 1993, Հասանելի է՝ https://repository.uclawsf.edu/cgi/viewcontent.cgi?article=1349&context=hastings_international_comparative_law_review, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.
10. Haack S.M. Christian explorations in the concept of human dignity, Dignitas. The Center for Bioethics & Human Dignity, 2014, Հասանելի է՝ <https://cbhd.org/dignitas-articles/christian-explorations-in-the-concept-of-human-dignity>, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.
11. Habermas J. The concept of human dignity and the realistic utopia of human rights, Metaphilosophy, 41(4), 2010, էջ 464-480, Wiley, Հասանելի է՝ <https://doi.org/10.1111/j.1467-9973.2010.01648.x>, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.
12. Kirste S. Human dignity as a foundation of law, University of Salzburg, 2018, էջ 5, Հասանելի է՝ file:///C:/Users/Asus/Downloads/Kirste_HumanDignityasaFoundationofLawIntroduction.pdf /վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ./, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.
13. Schroeder D. Dignity, In E. N. Zalta (Ed.), The Stanford Encyclopedia of Philosophy (Fall 2021 Edition), Metaphysics Research Lab, Stanford University, 2021, Հասանելի է՝ <https://plato.stanford.edu/entries/dignity/>, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.
14. Snow N.E. Virtue as social intelligence: An empirically grounded theory, Routledge, 2009, Հասանելի է՝ <https://www.routledge.com/Virtue-as-Social-Intelligence-An-Empirically-Grounded-Theory/Snow/p/book/9780415990463>, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.,
15. Tiwari A.; Aggarwal R.; Tang T.L.-P. Dignity at the workplace: Evolution of the construct, measurement, and implications for people and organizations, Frontiers in Psychology, 10, Article ID 2581, 2019, Հասանելի է՝ <https://doi.org/10.3389/fpsyg.2019.02581>, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.
16. Constitution of the Federal Republic of Germany, Հասանելի է՝ <https://codices.coe.int/codices/documents/constitution/9b85e085-da37-47f7-9912-cf23955828da>, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.
17. Constitution of the Republic of Serbia, Հասանելի է՝ <https://codices.coe.int/codices/documents/constitution/dd7cbfd-0d67->

www.aradaradutyjournal.com

4225-92bd-56d295caf663, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.

18. Preamble of the Constitution of Albania, Հասանելի է՝ <https://codices.coe.int/codices/documents/constitution/5ead21a-36e7-49f3-bbd9-de83b326ada8>, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.

19. Preamble of the Constitution of Bosnia and Herzegovina, Հասանելի է՝ <https://codices.coe.int/codices/documents/constitution/65AEDDE8-7262-4226-838E-7E908473B4C0#a65aedde8-7262-4226-838e-7e908473b4c0>, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.

20. Preamble of the Fundamental Law of Hungary, Հասանելի է՝ <https://codices.coe.int/codices/documents/constitution/e92d6b12-66b2-4899-976e-d2c95f4ac565>, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.

21. Certification of the Constitution of the Republic of South Africa, 1996 (CCT 23/96) [1996] ZACC 26; 1996 (4) SA 744 (CC); 1996 (10) BCLR 1253 (CC); (1996) 17 ILJ 821 (CC) (6 September 1996), Հասանելի է՝ https://www.saflii.org/za/cases/ZACC/1996/26.html?utm_source=chatgpt.com, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.

22. Decision of the German Federal Constitutional Court, 28 May 1993, No. 2 BvF 2/90, Հասանելի է՝ https://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Entscheidungen/EN/1993/05/fs19930528_2bvf000290en.html, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.

23. Harksen v Lane 1998 1 SA 300 (CC) para 50, quoting the Canadian Court in Egan v Canada 1995 29 CRR (2d) 79 106, Հասանելի է՝ <https://www.saflii.org/za/cases/ZACC/1997/12.pdf>, վերջին այցելության ամսաթիվ՝ 22.09.2025թ.:

Анна Степанян

Юрисконсульт юридического управления ЗАО «Ардшинбанк»,
Аспирант кафедры конституционного права
Ереванского государственного университета

РЕЗЮМЕ

Некоторые ключевые вопросы, связанные с восприятием конституционного содержания достоинства как правового явления

В рамках данной научной работы рассматриваются сущность достоинства как конституционно-правового феномена, а также теоретическое и практическое значение его восприятия. Учитывая многогранность рассматриваемого феномена, были изучены как подходы, существующие в различных научных областях, так и законодательные акты и судебная практика, связанные с достоинством, как в отечественной, так и в международной юридической практике. В результате было раскрыто конституционно-правовое содержание достоинства, а также представлено, как и какое значение оно должно осознаваться в правовой системе.

Ключевые слова: *достоинство, объективная основа, абсолютная ценность, конституционный принцип, право, конституционное содержание.*

Anna Stepanyan

Legal Advisor, Legal Department, Ardshinbank CJSC
Postgraduate Student, Department of Constitutional Law,
Yerevan State University

SUMMARY

Some key issues related to the perception of the constitutional content of dignity as a legal phenomenon

Within the framework of this scientific work, the essence of dignity as a constitutional law phenomenon, as well as the theoretical and practical significance of its perception, have been discussed. Taking into account the fact that the phenomenon under discussion is inherently multifaceted, both approaches found in various scientific fields, as well as legislative regulations and judicial practice related to dignity in both domestic and international legal practice, have been studied. As a result, the constitutional law content of dignity has been revealed, and it has been presented how and with what significance it should be perceived in the legal system.

Key words: *dignity, objective basis, absolute value, constitutional principle, right, constitutional content.*

Բնագիրը ներկայացվել է 02.09.2025թ.

Ընդունվել է տպագրության 26.09.2025թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Վ.Այվազյանը

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՐԱՆՏ ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
«Լիգը ընդ Թաքս» ՍՊ ընկերության ավագ իրավախորհրդատու

ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԵՂԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

«Արժեքների շուկայի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ներդրումային ծառայությունները կարող են մատուցվել միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձի և հաճախորդի միջև կնքված գրավոր պայմանագրի հիման վրա, որի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրին ներկայացվող պարտադիր պահանջները, պայմանագրի էական պայմանները, նախքան պայմանագիրը կնքելը պարտադիր կատարման ենթակա գործողությունները և այլն, նախատեսված են նշված օրենքով, ինչպես նաև ներդրումային ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով:

Չնայած օրենքով օգտագործվում է «ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր» հասկացությունը՝ այնուամենայնիվ, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ծառայությունների մատուցման պայմանագրերի շարքում չի նախատեսում ներդրումային ծառայությունների մատուցման առանձին պայմանագրի տեսակ՝ որպես ինքնուրույն քաղաքացիաիրավական ինստիտուտ:

Սույն հետազոտության մեջ տեսական աղբյուրների, ներդրումային, ինչպես նաև այլ տեսակի ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության վերլուծության հիման վրա բացահայտվել է ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի տեղը քաղաքացիաիրավական պայմանագրերի համակարգում ու պարզվել, թե արդյոք մենք գործ ունենք ծառայությունների մատուցման պայմանագրի ինքնուրույն տեսակի հետ, և թե արդյոք դրա նկատմամբ ենթակա են կիրառման ՀՀ քաղաքացիական օրենսգրքով արդեն իսկ նախատեսված ծառայությունների մատուցման որևէ տեսակի պայմանագրի կանոնները:

Հիմնաբառեր- ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր, գործակալության պայմանագիր, արժեքների փաթեթի կառավարում, գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր:

Ներածություն

Արժեքների շուկայի շարժիչ ուժը, մեխանիզմը, առանց որի այն գոյություն ունենալ և իր գործառույթները կատարել չի կարող, այս ոլորտում մատուցվող ներդրումային ծառայություններն են: Հաշվի առնելով արժեքների շուկայում իրականացվող գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև ներդրողների կողմից կատարված ներդրումների կորստի իրական վտանգի օբյեկտիվ առկայությունը՝ «Արժեքների շուկայի մասին» ՀՀ օրենքով¹ (այսուհետ նաև՝ «Օրենք») և այլ իրավական ակտերով նախատեսվում են ներդրումային ծառայությունների մատուցմանը ներկա-

յացվող բազմաթիվ պահանջներ:

Նման պահանջներից մեկն էլ նախատեսված է Օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ ներդրումային ծառայությունները կարող են մատուցվել միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձի և հաճախորդի միջև կնքված գրավոր պայմանագրի հիման վրա, որի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրին ներկայացվող պարտադիր պահանջները, պայմանագրի էական պայմանները, նախքան պայմանագիրը կնքելը պարտադիր կատարման ենթակա գործողությունները և այլն, նա-

www.artaradutyjournal.com

խատեսված են Օրենքով, ինչպես նաև ներդրումային ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով:

Այնուամենայնիվ, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը² (այսուհետ նաև՝ «Օրենսգիրք») ծառայությունների մատուցման պայմանագրերի շարքում չի նախատեսում ներդրումային ծառայությունների մատուցման առանձին պայմանագրի տեսակ՝ որպես ինքնուրույն քաղաքացիաիրավական ինստիտուտ:

Սույն հետազոտության նպատակն է տեսական աղբյուրների, ներդրումային, ինչպես նաև այլ տեսակի ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության վերլուծության հիման վրա բացահայտել ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի տեղը քաղաքացիաիրավական պայմանագրերի համակարգում ու պարզել, թե արդյոք մենք գործ ունենք ծառայությունների մատուցման պայմանագրի ինքնուրույն տեսակի հետ, և թե արդյոք դրա նկատմամբ ենթակա են կիրառման Օրենսգրքով արդեն իսկ նախատեսված ծառայությունների մատուցման որևէ տեսակի պայմանագրի կանոնները:

Այդ նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի էությունը՝ որպես Օրենքով նախատեսված առանձին իրավական ինստիտուտ,
- պարզել ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի՝ որպես հավաքական իրավական կատեգորիայի տեղը ծառայությունների մատուցման պայմանագրերի համակարգում,
- վեր հանել առանձին տեսակի ներդրումային ծառայության մատուցման պայմանագրի կապերը ծառայությունների մատուցման այլ պայմանագրերի հետ:

Հետազոտության շրջանակում կիրառվել են ինչպես ընդհանուր գիտական (անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (համակարգակառուցվածքային, իրավահամեմատական) մեթոդներ:

Հիմնական հետազոտություն

Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ որպես առանձին իրավական ինստիտուտ.

Չնայած այն հանգամանքին, որ Օրենքով նախատեսված են ներդրումային ծառայությունների տարբեր տեսակներ՝ Օրենքը չի տարբերակում առանձին տեսակի ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերը, այլ օգտագործում է մեկ ընդհանուր հասկացություն՝ «ներդրումային

մային ծառայությունների մատուցման պայմանագիր»:

Օրենսդրի այս մոտեցումը պայմանավորված է նրանով, որ ներդրումային ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավանորմերի զգալի մասը վերաբերում է բոլոր ներդրումային ծառայությունների մատուցմանը՝ անկախ տեսակից:

Որպեսզի բացահայտենք ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի էությունը, նախևառաջ անհրաժեշտ է հասկանալ, թե որն է այս պայմանագրի առարկան, քանի որ քաղաքացիաիրավական պայմանագրերի տարանջատման հիմնական չափանիշը հենց պայմանագրի առարկան է:

«Պայմանագրի առարկա» հասկացության բովանդակության բացահայտման հարցում տեսական գրականության մեջ առկա են տարբեր մոտեցումներ: Առաջին մոտեցման համաձայն՝ պայմանագրի առարկա են հանդիսանում նյութական աշխարհի օբյեկտները: Երկրորդ մոտեցման կողմնակիցները պայմանագրի առարկան դիտարկում են որպես կողմերի վարքագիծ, որը ներառում է որոշակի գործողությունների կատարում կամ, հակառակը, դրանցից գերծ մնալու պարտականություն: Երրորդ մոտեցման կողմնակիցները համադրում են առաջին երկուսը՝ սահմանելով պայմանագրի առարկան որպես կողմերի վարքագիծ և այն նյութական օբյեկտները, որոնց վրա այդ վարքագիծը ներգործում է:

Մենք որոշակի վերապահումով կհամաձայնենք երկրորդ մոտեցման կողմնակիցների հետ, քանի որ նյութական աշխարհի օբյեկտների առկայությունը պարտադիր է ոչ բոլոր քաղաքացիաիրավական հարաբերություններում: Եթե, օրինակ՝ առուվաճառքի և կապալի պայմանագրերից բխող հարաբերություններում նյութական աշխարհի օբյեկտի առկայությունը պարտադիր է, ապա նույնը չենք կարող ասել ծառայությունների մատուցման պայմանագրերից բխող հարաբերությունների համար:

Այնուամենայնիվ, երկրորդ մոտեցման կողմնակիցների դիրքորոշումը ևս ամբողջությամբ արդարացված չէ, քանի որ պայմանագրի առարկան չի կարող ամբողջությամբ նույնացվել կողմերի վարքագծի հետ: Այս համատեքստում, ինչպես արդարացիորեն նշում է Ե. Յու. Ռուդենկոն, կարևոր է հասկանալ և տարանջատել «պայմանագրի առարկա» և «պայմանագրի օբյեկտ» հասկացությունները⁴: Օրինակ՝ Վ. Վ. Վիտրյանսկին նշում է, որ առուվաճառքի պայմանագրի առարկան կողմերի գործողություններն են, որոնք կապված են հատուկ իրի (սպրանքի) փոխանցման և դրա վճարման հետ: Իսկ այնպիսի պայմանները, ինչպիսիք են սպրանքի անվանումը և քանակը, որոնք պարտադիր

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պետք է համաձայնեցվեն կողմերի միջև, վերաբերում են ոչ թե պայմանագրի առարկային, այլ օբյեկտին:

Կարևորելով պայմանագրի առարկայի և օբյեկտի տարանջատման անհրաժեշտությունը՝ նշենք, որ պայմանագրի առարկան կողմերի այն պարտականություններն են, որոնք ընկած են քաղաքացիաիրավական պարտավորության հիմքում և պայմանավորում են այդ պարտավորության էությունը, իսկ պայմանագրով կողմերի մնացած բոլոր պարտականությունները ածանցված են դրանցից և կազմում են պայմանագրի օբյեկտը:

Ինչպես արդարացիորեն նշում է Տ. Մ. Բորիսովնան, ներդրումային առանձին ծառայությունների մատուցման պայմանագրերը միմյանցից առանձնանում են նախևառաջ պայմանագրի առարկայով⁶: Պայմանագրի առարկան Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն կոնկրետ ներդրումային ծառայությունն է, որը մատուցվում է հաճախորդին, իսկ պայմանագրի օբյեկտը՝ այն պայմանները և պահանջները, որոնց հիման վրա և որոնց համապատասխան պետք է մատուցվեն ծառայությունները: Ստացվում է, որ յուրաքանչյուր կոնկրետ տեսակի ներդրումային ծառայության մատուցման պայմանագիր հարաբերականորեն ինքնուրույն է և տարբերվում է մնացած տեսակի ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերից: Տարանջատման չափանիշը նախևառաջ պայմանագրի առարկան է: Ինչ վերաբերում է պայմանագրի օբյեկտին, ապա այստեղ ունենք զգալի ընդհանրություններ, քանի որ, ինչպես արդեն նշեցինք վերևում, ներդրումային ծառայությունների մատուցման պայմանները և պահանջները նախատեսող իրավանորմների զգալի մասը վերաբերում է բոլոր ներդրումային ծառայությունների մատուցմանը՝ անկախ տեսակից: Այնուամենայնիվ, պայմանագրի առարկաների տարբերությունը չէր կարող իր ազդեցությունը չթողնել պայմանագրի օբյեկտի վրա, և հենց դրանով է պայմանավորված, որ չնայած օրենսդրությամբ չեն տարանջատվում առանձին ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերը, այնուամենայնիվ այս հարաբերությունները կարգավորող որոշ նորմեր վերաբերում են կոնկրետ որևէ տեսակի ներդրումային ծառայությունների մատուցմանը:

Ամփոփելով նշենք, որ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ որպես Օրենքով նախատեսված ինստիտուտ, հավաքական իրավական կատեգորիա է, որտեղ յուրաքանչյուր կոնկրետ տեսակի ներդրումային ծառայության մատուցման պայմանագիր հարաբերականորեն ինքնուրույն է և ներդրումային մնացած ծառայությունների մատուցման պայմանագրերի հետ ունի ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերու-

թյուններ: Ուստի քաղաքացիաիրավական պայմանագրերի համակարգում ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի տեղորոշումը և ծառայությունների մատուցման մնացած պայմանագրերի հետ դրա կապերի վերհանումը պետք է կատարվի երկու մակարդակում: Առաջին մակարդակում անհրաժեշտ է պարզել ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի՝ որպես հավաքական իրավական կատեգորիայի, իսկ երկրորդ մակարդակում՝ արդեն յուրաքանչյուր տեսակի ներդրումային ծառայության մատուցման պայմանագրի կապերը ծառայությունների մատուցման այլ պայմանագրերի հետ:

Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի՝ որպես հավաքական իրավական կատեգորիայի տեղը քաղաքացիաիրավական պայմանագրերի համակարգում.

Ն. Ն. Վեդենինը նշում է, որ եթե համապատասխան պայմանագրի վերաբերյալ կարգավորումները նախատեսված են որևէ նորմատիվ իրավական ակտով, ապա չնայած պայմանագրում տարբեր քաղաքացիաիրավական պայմանագրերին բնորոշ տարրերի առկայությանը, այն համարվում է ինքնուրույն⁷: Այնուամենայնիվ, Ն. Ն. Վեդենինի հետ համաձայն ենք մասամբ, քանի որ որևէ տեսակի պայմանագիր քաղաքացիաիրավական պայմանագրերի համակարգում ինքնուրույն որակելու համար բավարար չէ պարզապես սահմանափակվել դրանից բխող հարաբերությունների իրավական կարգավորման որոշակի առանձնահատկություններով, այլ անհրաժեշտ է, որ այդ պայմանագրից բխող հարաբերությունների իրավական կարգավորման հիմքում ընկած լինեն այնպիսի էական ու կարևոր առանձնահատկություններ, որոնք իրենց ամբողջության մեջ բավարար են ու անհրաժեշտ են դարձնում նման տարանջատումը:

Իհարկե, այս տարանջատումը որոշակի հարաբերական բնույթ է կրում, քանի որ առանձին խումբ պայմանագրերով կարգավորվող հարաբերությունների նմանությունը վերջիվերջո հանգեցնում է դրանց իրավական կարգավորման ընդհանրության: Օրինակ՝ գործակալության պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ համապատասխանաբար կիրառվում են հանձնարարության և կոմիսիայի գլուխներով նախատեսված կանոնները՝ կախված այն բանից, թե այդ պայմանագրի պայմաններով գործակալը գործում է պրինցիպալի, թե իր անունից: Իհարկե, հանձնարարության և կոմիսիայի գլխով նախատեսված կանոնները կիրառվում են միայն այնքանով, որքանով չեն հակասում Օրենսգրքի 42-րդ գլխի դրույթներին և գործակալության պայմանագրի էությանը:

Այժմ մեր խնդիրն է պարզել, թե ներդրումային

ծառայությունների մատուցման պայմանագրից բխող հարաբերությունների իրավական կարգավորման հիմքում ընկած առանձնահատկությունների ամբողջությունը բավարար է արդյոք, որ պայմանագրի այս տեսակը՝ որպես հավաքական իրավական կատեգորիա, ծառայությունների մատուցման պայմանագրերի համակարգում առանձնացվի որպես ինքնուրույն պայմանագիր:

Առաջին առանձնահատկությունը վերաբերում է հենց սուբյեկտային կազմին: Մասնավորապես, Օրենքի 28-րդ և 35-րդ հոդվածներից հետևում է, որ որպես ներդրումային ծառայություններ մատուցող անձ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրեր կարող են կնքել ներդրումային ընկերությունը՝ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ստացած բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, բանկերը և ներդրումային ֆոնդի կառավարիչները:

Ինչ վերաբերում է ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի մյուս կողմին՝ հաճախորդին, ապա նշենք, որ այստեղ որևէ սահմանափակում նախատեսված չէ, և պայմանագրով որպես հաճախորդ կարող է հանդես գալ քաղաքացիական իրավունքի ցանկացած սուբյեկտ: Առանձնահատկությունն այն է, որ նախքան պայմանագիր կնքելը հաճախորդները դասակարգվում են պրոֆեսիոնալի և ոչ պրոֆեսիոնալի, որպիսի դասակարգման գործնական նշանակությունն այն է, որ պրոֆեսիոնալ հաճախորդները չեն օգտվում ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված որոշակի երաշխիքներից:

Հաջորդ առանձնահատկությունը վերաբերում է ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի ձևին: Այսպես, Օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվում է գրավոր, իսկ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Ծառայությունների մատուցման պայմանագրերի համակարգում պայմանագրի գրավոր ձևի չպահպանման համար մնան իրավական հետևանքների նախատեսումը բացառիկ բնույթ է կրում:

Այնուհետև, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 08.04.2008թ.-ի «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշմամբ՝ (այսուհետ՝ «ԿԲ խորհրդի որոշում») նախատեսված են այն գործողությունները, որոնք ներդրումային ծառայություններ մատուցող անձը պետք է կատարի նախքան պայմանագիր կնքելը, մասնավորապես.

- հաճախորդներին պետք է տրամադրի տեղեկատվություն գործարքի կնքման վայրի (ֆոնդա-

լին բորսա, այլ կարգավորվող շուկա կամ չկարգավորվող շուկա) մասին, ինչպես նաև՝ տեղեկատվություն՝ ըստ ԿԲ խորհրդի որոշման 4-րդ, 5-րդ և 6-րդ գլուխների,

- հաճախորդներին պետք է դասակարգի որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ,
- պրոֆեսիոնալ դասակարգված հաճախորդին պետք է գրավոր տեղեկացնի, որ ԿԲ խորհրդի որոշմամբ սահմանված որոշակի պահանջներ չեն գործելու իր և հաճախորդի փոխհարաբերություններում՝ ներկայացնելով այդ պահանջների էությունը:

Հաջորդ առանձնահատկությունը վերաբերում է ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի էական պայմաններին: Այսպես, ԿԲ խորհրդի որոշման 38-րդ կետով նախատեսվում են այն պայմանները, որոնք պարտադիր պետք է սահմանվեն պայմանագրով: Այդպիսիք են՝ կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ներդրումային ծառայությունների դիմաց վարձատրության չափի հաշվարկման և վճարման կարգը, հաճախորդներին հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և ձևը, հաճախորդի հետ կապի իրականացման կարգը, ինչպես նաև այն միջոցները, որոնք տվյալ հաճախորդի համար հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ, պայմանագրի պահանջների չպահպանման համար կողմերի պատասխանատվությունը, կողմերի միջև առաջացող վեճերի լուծման կարգը, պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխությունների և լրացումների կատարման, գործողության դադարեցման կարգը, պայմանագրի դադարեցման դեպքում հաճախորդի միջոցների վերադարձման կարգը:

Իհարկե, կարող ենք արձանագրել, որ ԿԲ խորհրդի որոշման 38-րդ կետով նախատեսված էական պայմանները պրակտիկայում, որպես կանոն, նախատեսվում են ցանկացած տեսակի քաղաքացիաիրավական պայմանագրով և Կենտրոնական բանկը նախատեսել է դրանք, որպեսզի ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրում այս պայմանների ներառումը բխի ոչ թե պրակտիկայից, այլ օրենսդրությունից, ու լինի ոչ թե ցանկալի, այլ պարտադիր:

Այնուամենայնիվ, մենք չենք կարող չարձանագրել մաս, որ գործ ունենք պայմանագրի այնպիսի տեսակի հետ, որով ԿԲ խորհրդի որոշման 38-րդ կետով նախատեսված որևէ պայմանի չսահմանումը Օրենսգրքի 448-րդ հոդվածի ուժով կհանգեցնի դրա չկնքված լինելուն: Վերջիվերջո, Կենտրոնական բանկն էլ մնան պայմանների սահմանումը պայմանագրում դարձրել է պարտադիր՝ հաշվի առնելով այդ պայմանագրով կարգավորվող հարաբերությունների առանձնահատկությունները և դրանց

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մանրակրկիտ կարգավորման անհրաժեշտությունը:

ԿԲ խորհրդի որոշման 38-րդ կետի 8.1 ենթակետով լրացուցիչ պարտադիր պայմաններ սահմանելու անհրաժեշտություն է նախատեսված, եթե ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը վերաբերում է լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների կատարմանը, իսկ 8.2 և 8.4 ենթակետերով նախատեսված է այլ լրացուցիչ պայմաններ սահմանելու անհրաժեշտություն, եթե պայմանագիրը վերաբերում է քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցմանը: Կարևոր առանձնահատկություն է նաև այն, որ քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի և թողարկողի (ներդրողի) միջև պայմանագիրը կնքված է համարվում թողարկողի (ներդրողի) կողմից քրաուդֆանդինգի հարթակում դրա հաստատման պահից:

Հանրողիվ, ԿԲ խորհրդի որոշման ուսումնասիրությունից կարող ենք արձանագրել, որ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի բովանդակությանը ներկայացվող պարտադիր պահանջներ նախատեսված են նաև նշված իրավական ակտի այլ կետերով: Այսպես.

• ԿԲ խորհրդի որոշման 14.8 կետի համաձայն՝ պայմանագրում պարտադիր նշվում է, որ եթե պրոֆեսիոնալ համարվող հաճախորդը կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը, պրոֆեսիոնալ հաճախորդի պարտավորությունն է դիմել ներդրումային ծառայություններ մատուցող անձին՝ իրեն որպես ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ վերաբերվելու համար, ինչը հնարավորություն կտա օգտվել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջներից,

• ԿԲ խորհրդի որոշման 14.9 կետի համաձայն՝ պրոֆեսիոնալ հաճախորդին ոչ պրոֆեսիոնալ դասակարգելիս՝ պայմանագրում հստակ ամրագրվում է, թե արդյոք հաճախորդի ոչ պրոֆեսիոնալ դասակարգումը վերաբերում է ներդրումային ծառայություններից որևէ մեկին, բոլոր ծառայություններին, որևէ գործարքին, թե արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքներին,

• ԿԲ խորհրդի որոշման 14.12 կետի համաձայն՝ պայմանագրում պարտադիր նշվում է, որ պրոֆեսիոնալ համարվող հաճախորդները պարտավոր են ներդրումային ծառայություններ մատուցող անձին տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգման վրա:

Հատկանշական է նաև այն, որ Օրենքով հստակ նախատեսվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց պարտականությունները (Օրենքի 63-րդ հոդված), հաճախորդներին

տրամադրվող տեղեկատվությանը (Օրենքի 65-րդ հոդված), ծառայությունների մատուցմանը (Օրենքի 66-րդ հոդված), հաճախորդների միջոցների հաշվառմանը և պաշտպանությանը (Օրենքի 67-րդ հոդված) ներկայացվող պահանջները:

Մեկ այլ կարևոր առանձնահատկություն է այն, որ հաճախորդը կարող է ցանկացած ժամանակ միակողմանի լուծել ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ այդ մասին մյուս կողմին 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով: Ընդ որում՝ հաճախորդի այս իրավունքը չի կարող սահմանափակվել պայմանագրով: Պայմանագիրը լուծելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, ներդրումային ծառայություններ մատուցող անձը պարտավոր է հաճախորդին կամ նրա ներկայացուցչին փոխանցել հաճախորդին պատկանող արժեթղթերն ու դրամական միջոցները (Օրենքի 64-րդ հոդվածի 4-րդ մաս):

Ամփոփելով նշենք, որ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրից բխող հարաբերությունների իրավական կարգավորման վերոգրյալ առանձնահատկությունների ամբողջությունը թույլ է տալիս մեզ արձանագրել, որ պայմանագրի այս տեսակը՝ որպես հավաքական իրավական կատեգորիա, ծառայությունների մատուցման պայմանագրերի համակարգում առանձնացվում է որպես ինքնուրույն պայմանագիր:

Առանձին տեսակի ներդրումային ծառայության մատուցման պայմանագրի կապերը ծառայությունների մատուցման այլ պայմանագրերի հետ.

Անդրադառնանք Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ներդրումային ծառայությանը՝ իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարմանը: Այս ծառայությունը համապատասխանում է «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի՝ 74-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բրոքերային գործունեությանը, որը բնութագրվում էր որպես հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրի հիման վրա այլ անձի կամ անձանց հաշվին արժեթղթերով գործարքներ կատարելու գործունեություն: Այսինքն՝ նախկին օրենքով հստակ նախատեսված էին այն քաղաքացիաիրավական պայմանագրերի տեսակները, որոնց կնքման միջոցով իրականացվում էր հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարման գործունեությունը:

Ինչպես տեսնում ենք, Օրենքը ներկայումս չի առանձնացնում որևէ տեսակի քաղաքացիաիրավական պայմանագիր, որի հիման պետք է մատուցվի քննարկվող ծառայությունը: Իսկ պրակտիկայում քննարկվող ծառայության մատուցման համար ներդրումային ծառայություններ մատուցող անձինք կնքում են, այսպես կոչված, «Բրոքերային

www.artadaratutyunjurnal.com

ծառայությունների մատուցման պայմանագիր», թեև Օրենքն իր ընդունման պահից սկսած արդեն չի օգտագործում «բրոքերային գործունեություն» կամ «բրոքերային ծառայություն» հասկացությունները: Այս հասկացությունները մենք հանդիպում ենք, օրինակ, «Արարատբանկ» ԲԲ ընկերության «Բրոքերային ծառայությունների մատուցման» ընթացակարգում¹¹, «Ֆյունչր Կապիտալ Մարկետ» ՍՊ ընկերության «Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման» կանոններում¹², «Էփրիքոթ Կապիտալ» ՓԲ ընկերության «Բրոքերային (դիլերային) գործունեության» կանոնակարգում¹³, «Արմսվիսթանկ» ՓԲ ընկերության «Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի» օրինակելի ձևում¹⁴, «Արմբրոկ» ԲԲ ընկերության «Բրոքերային (դիլերային) գործունեության» կանոններում¹⁵ և այլն: Նման պայմաններում հարցական է մնում, թե քաղաքացիաիրավական որ տեսակի պայմանագրի կանոններն են կիրառվում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքվող բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի նկատմամբ:

Այս հարցի վերաբերյալ Տ.Մ. Բորիսովան գտնում է, որ քննարկվող պայմանագիրն իր իրավական բնույթով ո՛չ կոմիսիայի, ո՛չ էլ հանձնարարության պայմանագիր է: Այն գործակալության պայմանագիր է, քանի որ ծառայություններ մատուցող անձը արժեթղթերով գործարքներ կատարելիս կարող է հանդես գալ և՛ իր, և՛ հաճախորդի անունից¹⁶:

Մենք կհաղթենք Տ.Մ. Բորիսովայի կարծիքն այս հարցի վերաբերյալ, քանի որ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ներդրումային ծառայությունը ամբողջությամբ համապատասխանում է գործակալության պայմանագրի առարկային, որով մի կողմը (գործակալը) պարտավորվում է վարձատրությամբ մյուս կողմի (պրինցիպալի) հանձնարարությամբ, իր անունից, սակայն պրինցիպալի հաշվին կամ պրինցիպալի անունից և նրա հաշվին կատարել իրավաբանական ու այլ գործողություններ: Ի տարբերություն գործակալության պայմանագրի, որտեղ գործակալը կարող է հանդես գալ ինչպես իր, այնպես էլ պրինցիպալի անունից, կոմիսիայի պայմանագրով կոմիսիոները հանդես է գալիս միայն իր անունից, իսկ հանձնարարության պայմանագրով հանձնակատարը հանդես է գալիս միայն հանձնարարողի անունից: Նման պայմաններում գործակալության պայմանագիրը ամենից համապատասխան է քննարկվող ներդրումային ծառայությանը, որի շրջանակներում ներդրումային ծառայություններ մատուցող անձը, արժեթղթերով գործարքներ կատարելիս, կարող է հանդես գալ ինչպես իր, այնպես էլ հաճախորդի անունից:

Անդրադառնալով Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված ներդրումային

ծառայությանը՝ արժեթղթերի փաթեթի կառավարմանը: Սա միակ ներդրումային ծառայությունն է, որի էությունը բացահայտված է Օրենքով, մասնավորապես՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի համաձայն՝ արժեթղթերի փաթեթի կառավարում է համարվում կառավարչի կողմից իր տիրապետմանը հանձնված հաճախորդին պատկանող և նրա օգտին կամ նրա կողմից նշված երրորդ անձանց օգտին (շահառու) կառավարչի անունից արժեթղթերի, արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների, հավատարմագրային կառավարման հետևանքով ստացված արժեթղթերի և դրամական միջոցների կառավարումը՝ հաճախորդի կողմից տրված ցուցումների համաձայն:

Քննարկվող ներդրումային ծառայությունը «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով¹⁷ կոչվում էր արժեթղթերի հավատարմագրային կառավարում, որը բնորոշվում էր որպես անձի կողմից պարզապահի դիմաց իր տիրապետմանը հանձնված այլ անձին պատկանող և նրա օգտին կամ նրա կողմից նշված երրորդ անձանց օգտին (շահառու) կառավարչի անունից արժեթղթերի, արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների, հավատարմագրային կառավարման հետևանքով ստացված արժեթղթերի և դրամական միջոցների կառավարում¹⁸: Հատկանշական է, որ նշված օրենքի 82-րդ հոդվածով առանձնացված էր պայմանագրի այն տեսակը, որը կնքվում էր արժեթղթերի հավատարմագրային կառավարման դեպքում, մասնավորապես՝ նախատեսված էր, որ նման դեպքերում կնքվում է հավատարմագրային կառավարման պայմանագիր:

Նշենք, որ արժեթղթերի փաթեթի կառավարման ներդրումային ծառայության էությունն ամբողջությամբ համապատասխանում է Օրենսգրքի 52-րդ գլխով նախատեսված գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի առարկային: Այսպես, Օրենսգրքի 954-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով մեկ կողմը (կառավարման հիմնադիրը) որոշակի ժամկետով գույք է հանձնում մյուս կողմի (հավատարմագրային կառավարչի) հավատարմագրային կառավարմանը, իսկ մյուս կողմը պարտավորվում է այդ գույքի կառավարումն իրականացնել ի շահ կառավարման հիմնադրի կամ նրա նշած անձի (շահառուի), իսկ նույն հոդվածի 3-րդ մասն էլ նախատեսում է, որ հավատարմագրային կառավարիչը հավատարմագրային կառավարման հանձնված գույքի հետ կապված գործարքները կնքում է իր անունից՝ նշելով, որ ինքը գործում է որպես նման գույքի կառավարիչ:

Հաջորդիվ, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի

30-րդ կետից հետևում է, որ արժեթղթերի փաթեթի կառավարման օբյեկտ կարող են լինել արժեթղթերը և դրամական միջոցները: Օրենսգրքի 955-րդ հոդվածի 1-ին մասն էլ նախատեսում է, որ հավատարմագրային կառավարման օբյեկտ կարող է լինել ցանկացած գույք, այդ թվում՝ գույքային իրավունք¹⁹: Ուստի կարող ենք եզրակացնել, որ արժեթղթերը և դրամական միջոցները ևս կարող են լինել հավատարմագրային կառավարման օբյեկտ, ինչից հետևում է, որ արժեթղթերի փաթեթի կառավարումը՝ որպես ներդրումային ծառայություն, ամբողջությամբ մտնում է գույքի հավատարմագրային կառավարման ինստիտուտի ներքո:

Գույքի հավատարմագրային կառավարման ինստիտուտը մոտ է անգլո-ամերիկյան իրավական համակարգում հայտնի հավատարմագրային սեփականության (տրաստի) ինստիտուտին²⁰: Ինչպես արդարացիորեն նշում է Ա. Մ. Հայկյանը, այդ ինստիտուտները տարբերվում են միմյանցից նրանով, որ հավատարմագրային սեփականության դեպքում ռեալ սեփականատերը կորցնում է գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, որն անցնում է հավատարմագրային սեփականատիրոջը, մինչդեռ գույքի հավատարմագրային կառավարման դեպքում կառավարման հիմնադիրը պահպանում է գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, իսկ հավատարմագրային կառավարիչը գույքի նկատմամբ ձեռք է բերում միայն պարտավորական իրավունք²¹:

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մնացած ներդրումային ծառայությունները (հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը, արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրումը, իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարումը, արժեթղթերի երաշխավորված կամ չերաշխավորված տեղաբաշխման իրականացումը) Օրենսգրքի 5-րդ ենթաբաժնով նախատեսված հատուկ բնույթի ծառայությունների մատուցման որևէ պայմանագրի առարկայի շրջանակներում չեն տեղավորվում, ուստի պայմանագրի միակ տեսակը, որի շրջանակներում կարող են մատուցվել նշված ծառայությունները, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրն է:

Անդրադառնալով ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի կիրառման շրջանակներին՝ Ե. Ա. Միշչենկոն գտնում է, որ ծառայությունների վճարովի մատուցման վերաբերյալ կարգավորումների մշակման հիմնական նպատակը եղել է նորմատիվաիրավական հիմքի ստեղծումը քաղաքացիական այն իրավահարաբերությունների համար, որոնք առաջանում են վճարովի ծառայությունների մատուցման ընթացքում, ինչպես նաև ապագա հնարավոր հատուկ ծառայությունների

պայմանագրերի համար²²: Իսկ Մ. Ի. Բրազինսկին նշում է, որ ծառայությունների վճարովի մատուցման գլուխը տարածվում է ծառայությունների մատուցման այն բոլոր պայմանագրերի վրա, որոնք առանձնանում են հետևյալ երեք հիմնական հատկանիշներով՝ պայմանագրի առարկան ծառայությունների մատուցումն է, ծառայությունները վարձատրվող են և մատուցվում են վճարի դիմաց, ու այդ պայմանագիրը տեղ չի գտել ծառայությունների մատուցման այլ հատուկ պայմանագրերի շարքում²³: Գ. Հ. Ղարախանյանը նշում է, որ իրական կյանքում վճարովի հիմունքներով քաղաքացիական-իրավական պայմանագրերի հիման վրա մատուցվում են ծառայություններ, որոնց իրավական կարգավորման վերաբերյալ ամբողջական իրավական ակտեր չկային, ուստի Օրենսգրքում՝ ծառայություններ մատուցելու պայմանագրերին նվիրված ենթաբաժնում, որպես ներածական գլուխ նախատեսվեց «Ծառայությունների վճարովի մատուցում» գլուխը՝ 777-781-րդ հոդվածներով²⁴:

Մենք ամբողջությամբ համաձայն ենք նշված հեղինակների հետ և գտնում ենք, որ Օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին մասով ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի առարկան այնքան լայն է ձևակերպված, որ հնարավորություն է տալիս դրանով կարգավորել ծառայությունների մատուցման հետ կապված այն բոլոր հարաբերությունները, որոնք չեն կարող կարգավորվել Օրենսգրքի 5-րդ ենթաբաժնով նախատեսված որևէ այլ պայմանագրով: Ուստի Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի առարկան միանշանակորեն տեղավորվում է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի առարկայի շրջանակներում:

Այսպիսով, Օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված յուրաքանչյուր տեսակի ներդրումային ծառայության մատուցման պայմանագիր իր առարկայով բավականին սերտորեն կապված է ծառայությունների մատուցման որևէ պայմանագրի հետ: Մասնավորապես, Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ներդրումային ծառայության պայմանագրի առարկան համապատասխանում է Օրենսգրքով նախատեսված գործակալության պայմանագրի առարկային, Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված ներդրումային ծառայության պայմանագրի առարկան՝ Օրենսգրքով նախատեսված գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի առարկային, իսկ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի առարկան՝ Օրենսգրքով նախատես-

ված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի առարկային: Այնուամենայնիվ, ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերը չեն կարող համարվել Օրենսգրքով նախատեսված վերոգրյալ պայմանագրերի ենթատեսակներ, քանի որ, ինչպես արդեն իսկ նշել ենք վերևում, դրանցով առաջացող հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունների ուժով սրանք արդեն իսկ առանձնացել են Օրենսգրքով նախատեսված ծառայությունների մատուցման այլ պայմանագրերից:

Միևնույն ժամանակ հարկ է ի նկատի ունենալ, որ առանձին տեսակի ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերը առանձնանում են Օրենսգրքով նախատեսված այլ պայմանագրերից միայն մեր կողմից վերը հիշատակված առաջին մակարդակում, այսինքն՝ այնքանով, որքանով ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրն է՝ որպես հավաքական իրավական ինստիտուտ առանձնանում, քանի որ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրից բխող հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունների գերակշիռ մեծամասնությունը վերաբերում է բոլոր տեսակի ներդրումային ծառայությունների մատուցմանը: Մինչդեռ այս հավաքական իրավական կատեգորիայի ներսում առանձին տեսակի ներդրումային ծառայության մատուցման պայմանագրից բխող հարաբերությունների իրավական կարգավորման համար նախատեսված առանձնահատկությունները բավարար չեն այս ինստիտուտի ներսում դրանց՝ որպես ինքնուրույն պայմանագիր տարանջատման համար:

Այնուամենայնիվ, կարևոր է արձանագրել, որ առանձին տեսակի ներդրումային ծառայության մատուցման պայմանագրի կապերի վերահանումը ծառայությունների մատուցման այլ պայմանագրերի հետ, բացի տեսական նշանակությունից, ունի նաև շատ կարևոր գործնական նշանակություն, քանի որ այն անմիջականորեն առնչվում է այս պայմանագրերից ծագող հարաբերությունների իրավական կարգավորման հետ: Մասնավորապես՝ առանձին տեսակի ներդրումային ծառայության պայմանագրերի սերտ իրավական կապերը ծառայությունների մատուցման այլ պայմանագրերի հետ մեզ թույլ են տալիս առաջ քաշել այն կարևոր մեկնաբանությունը, որ կոնկրետ տեսակի ներդրումային ծառայության մատուցման պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ենթակա են կիրառման այդ պայմանագրի հետ իրավական սերտ առնչություն ունեցող ծառայությունների մատուցման պայմանագրի՝ Օրենսգրքով նախատեսված կանոններն այնքանով, որքանով տվյալ տեսակի ներդրումային ծառայության մատուցման

հետ կապված հարաբերությունները կարգավորող հատուկ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ: Այսպես, Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ներդրումային ծառայության պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ենթակա են կիրառման գործակալության պայմանագրի, Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված ներդրումային ծառայության պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի, իսկ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի վերաբերյալ Օրենսգրքով նախատեսված կարգավորումներն այնքանով, որքանով տվյալ տեսակի ներդրումային ծառայության մատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող հատուկ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ:

Եզրակացություն

Կատարված հետազոտության հիման վրա կարելի է անել հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. Քաղաքացիաիրավական պայմանագրերի համակարգում ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի տեղորոշումը և ծառայությունների մատուցման մնացած պայմանագրերի հետ դրա կապերի վերահանումը պետք է կատարվի երկու մակարդակում: Առաջին մակարդակում անհրաժեշտ է պարզել ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի՝ որպես հավաքական իրավական կատեգորիայի, իսկ երկրորդ մակարդակում՝ արդեն յուրաքանչյուր տեսակի ներդրումային ծառայության մատուցման պայմանագրի կապերը ծառայությունների մատուցման այլ պայմանագրերի հետ:

2. Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրից բխող հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունների ամբողջությունը թույլ է տալիս մեզ արձանագրել, որ պայմանագրի այս տեսակը՝ որպես հավաքական իրավական կատեգորիա, ծառայությունների մատուցման պայմանագրերի համակարգում առանձնացվում է որպես ինքնուրույն պայմանագիր:

3. Առանձին տեսակի ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերը առանձնանում են Օրենսգրքով նախատեսված այլ պայմանագրերից միայն այնքանով, որքանով ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրն է՝ որպես հավաքական իրավական ինստիտուտ առանձնանում, քանի որ ներդրումային ծա-

ռաշխարհագրորդների մատուցման պայմանագրից բխող հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունների գերակշիռ մեծամասնությունը վերաբերում է բոլոր տեսակի ներդրումային ծառայությունների մատուցմանը:

4. Առանձին տեսակի ներդրումային ծառայության պայմանագրի սերտ իրավական կապերը ծառայությունների մատուցման այլ պայմանագրերի հետ մեզ թույլ են արձանագրել, որ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ներդրումային ծառայության պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ենթակա են կիրառման գործակալության պայմանագրի, Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված ներդրումային ծառայության պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ՝ գույքի հա-

վատարմագրային կառավարման պայմանագրի, իսկ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի վերաբերյալ Օրենսգրքով նախատեսված կարգավորումներն այնքանով, որքանով տվյալ տեսակի ներդրումային ծառայության մատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող հատուկ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ:

¹ Ընդունման ամսաթիվ՝ 11.10.2007թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 29.02.2008թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2007.10.31/53(577) Հոդ.1098:

² Ընդունման ամսաթիվ՝ 05.05.1998թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 01.01.1999թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

³ Տե՛ս, С. Я. Алексеевна, Существенные условия договора, Вопросы студенческой науки, Выпуск №6 (46), июнь 2020, էջ 524:

⁴ Տե՛ս, Е.Ю. Руденко, Существенные условия договора // Культура. Наука. Интеграция, 2016, № 3 (35), էջ 64:

⁵ Տե՛ս, В.В. Витрянский, Общие положения о договоре в условиях реформирования гражданского законодательства // Хозяйство и право, 2012, № 4, էջ 16:

⁶ Տե՛ս, Т. М. Борисовна, Правовое регулирование отношений сторон брокерского договора, диссертация, Владикавказ, 2012, էջ 71:

⁷ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 08.04.2008թ.-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշման 36-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ, 72-րդ, 73-րդ կետեր և այլն:

⁸ Տե՛ս, Веденин Н.Н., О дифференциации и интеграции в договорах на производственно-техническое обеспечение сельского хозяйства / Н.Н. Веденин // Гражданское право и экономика. – 2002, էջ 107:

⁹ Ընդունման ամսաթիվ՝ 08.04.2008թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 25.05.2008թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀԳՏ 2008.05.15/16(290) Հոդ.16:

¹⁰ Ընդունման ամսաթիվը՝ 06.07.2000թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 01.08.2000թ., ուժը կորցնելու ամսաթիվը՝ 29.02.2008թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2000.08.01/17(115):

¹¹ Հաստատված «Արարատբանկ» ԲԲԸ վարչության 12.03.2021թ.-ի թիվ 89/Լ որոշմամբ:

¹² Հաստատված «Ֆյուչըր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ 28.02.2019թ.-ի մասնակիցների ընդհանուր ժողովում:

¹³ Հաստատված «Էփրիքթ Կապիտալ» ՓԲԸ միակ բաժնետիրոջ 13.12.2023թ.-ի թիվ 13-12-23 որոշմամբ:

¹⁴ Հաստատված «Արմավիսբանկ» ՓԲԸ տնօրինության 21.11.2024թ. թիվ 65-Լ որոշմամբ:

¹⁵ Հաստատված «Արմբրոկ» ԲԲԸ բաժնետերերի 13.11.2017թ.-ի արտահերթ ընդհանուր ժողովում:

¹⁶ Тогузова Марина Борисовна, Правовое регулирование отношений сторон брокерского договора, диссертация, Владикавказ 2012, էջ 79:

¹⁷ Ընդունման ամսաթիվը՝ 06.07.2000թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 01.08.2000թ., ուժը կորցնելու ամսաթիվը՝ 29.02.2008թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2000.08.01/17(115):

¹⁸ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մաս:

¹⁹ Հատկանշական է, որ նախկինում Օրենսգրքի 955-րդ հոդվածի 1-ին մասով ուղղակիորեն նախատեսված էր, որ արժեթղթերը կարող են լինել հավատարմագրային կառավարման օբյեկտ, իսկ նույն հոդվածի 2-րդ մասն էլ նախատեսում էր, որ դրամը չի կարող լինել հավատարմագրային կառավարման ինքնուրույն օբյեկտ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այս ձևակերպումը փոփոխվել է 2017 թվականի մարտի 1-ին

ընդունված և 2017 թվականի ապրիլի 15-ին ուժի մեջ մտած ՀՕ-68-Ն օրենքով և նախատեսվել է, որ հավատարմագրային կառավարման օբյեկտ կարող է լինել ցանկացած գույք, այդ թվում՝ գույքային իրավունք:

²⁰ Ավելի մանրամասն տե՛ս Нарышкина Р.Л., Доверительная собственность в гражданском праве Англии и США, М., 1966:

²¹ Տե՛ս, Ս. Կ. Բարսեղյան, Գ. Հ. Ղարախանյան, «Հահաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», երկրորդ մաս, 2-րդ հրատարակություն (փոփոխություններով և լրացումներով), ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2008, էջ 463-464:

²² Տե՛ս, Мищенко Е.А. Особенности некоторых видов договоров возмездного оказания услуг // Юрист, 2008, № 6, էջ 18:

²³ Տե՛ս, Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга третья: Договоры о выполнении работ и оказании услуг, Доп., испр. изд. М.: Статут, 2002, էջ 207-244:

²⁴ Տե՛ս, Ս. Կ. Բարսեղյան, Գ. Հ. Ղարախանյան, «Հահաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», երկրորդ մաս, 2-րդ հրատարակություն (փոփոխություններով և լրացումներով), ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2008, էջ 279:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք: Ընդունման ամսաթիվ՝ 05.05.1998թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 01.01.1999թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
2. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք: Ընդունման ամսաթիվ՝ 11.10.2007թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 29.02.2008թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2007.10.31/53(577) Հոդ.1098:
3. «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենք: Ընդունման ամսաթիվը՝ 06.07.2000թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 01.08.2000թ., ուժը կորցնելու ամսաթիվը՝ 29.02.2008թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2000.08.01/17(115):
4. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 08.04.2008թ.-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշում: Ընդունման ամսաթիվ՝ 08.04.2008թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 25.05.2008թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀԳՏ 2008.05.15/16(290) Հոդ.16:
5. С. Я. Алексеевна, Существенные условия договора, Вопросы студенческой науки, Выпуск №6 (46), июнь 2020:
6. Е.Ю. Руденко, Существенные условия договора // Культура. Наука. Интеграция, 2016, № 3 (35):
7. В.В. Витрянский, Общие положения о договоре в условиях реформирования гражданского законодательства // Хозяйство и право, 2012, № 4:
8. Т. М. Борисовна, Правовое регулирование отношений сторон брокерского договора, диссертация, Владикавказ, 2012:
9. Веденин Н.Н., О дифференциации и интеграции в договорах на производственно-техническое обеспечение сельского хозяйства / Н.Н. Веденин // Гражданское право и экономика. – 2002:
10. Нарышкина Р.Л., Доверительная собственность в гражданском праве Англии и США, М., 1966:
11. Тогузова Марина Борисовна, Правовое регулирование отношений сторон брокерского договора, диссертация, Владикавказ 2012:
12. Ս. Կ. Բարսեղյան, Գ. Հ. Ղարախանյան, Հահաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, 2-րդ հրատարակություն (փոփոխություններով և լրացումներով), ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2008:
13. Мищенко Е.А. Особенности некоторых видов договоров возмездного оказания услуг // Юрист, 2008, № 6:
14. Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга третья: Договоры о выполнении работ и оказании услуг, Доп., испр. изд. М.: Статут, 2002:
15. «Արարատրանկ» ԲԲ ընկերության «Բրոքերային ծառայությունների մատուցման» ընթացակարգ՝ հաստատված «Արարատրանկ» ԲԲԸ վարչության 12.03.2021թ.-ի թիվ 89/Լ որոշմամբ:
16. «Ֆյուչըր Կապիտալ Մարկետ» ՍՊ ընկերության «Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման» կանոններ՝ հաստատված «Ֆյուչըր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ 28.02.2019թ.-ի մասնակիցների ընդհանուր ժողովում:
17. «Էփրիքթթ Կապիտալ» ՓԲ ընկերության «Բրոքերային (դիլերային) գործունեության» կանոնակարգ՝ հաստատված «Էփրիքթթ Կապիտալ» ՓԲԸ միակ բաժնետիրոջ 13.12.2023թ.-ի թիվ 13-12-23 որոշմամբ:
18. «Արմավիսթրանկ» ՓԲ ընկերության «Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի» օրինակելի ձև՝ հաստատված «Արմավիսթրանկ» ՓԲԸ տնօրինության 21.11.2024թ. թիվ 65-Լ որոշմամբ:
19. «Արմբրոկ» ԲԲ ընկերության «Բրոքերային (դիլերային) գործունեության» կանոններ՝ հաստատված «Արմբրոկ» ԲԲԸ բաժնետերերի 13.11.2017թ.-ի արտահերթ ընդհանուր ժողովում:

Արփինե Օգաննիսյան

Кандидат юридических наук, доцент
Преподаватель кафедры гражданского права юридического факультета Ереванского государственного университета

Грант Симонян

Аспирант кафедры гражданского права
Ереванского государственного университета,
Старший юриконсульт ООО «Лигал энд Такс»,

РЕЗЮМЕ

Место договора об оказании инвестиционных услуг в системе гражданско-правовых договоров

Согласно части 1 статьи 64 Закона Республики Армения “О рынке ценных бумаг”, инвестиционные услуги могут оказываться только на основании письменного договора, заключённого между лицом, оказывающим инвестиционные услуги, и клиентом, при этом несоблюдение письменной формы ведёт к его недействительности. Обязательные требования к договору об оказании инвестиционных услуг, его существенные условия, действия, подлежащие обязательному выполнению до заключения договора, и другие аспекты предусмотрены указанным законом, а также иными правовыми актами, регулирующими отношения, связанные с оказанием инвестиционных услуг.

Несмотря на то, что в законе используется понятие “договор об оказании инвестиционных услуг”, Гражданский кодекс Республики Армения не предусматривает отдельный вид договора об оказании инвестиционных услуг в ряду договоров об оказании услуг как самостоятельный гражданско-правовой институт.

В данном исследовании на основе анализа теоретических источников и законодательства, регулирующего отношения, связанные с оказанием инвестиционных и других видов услуг, было выявлено место договора об оказании инвестиционных услуг в системе гражданско-правовых договоров. Также было выяснено, имеем ли мы дело с самостоятельным видом договора на оказание услуг и подлежат ли к нему применению положения какого-либо из уже предусмотренных Гражданским кодексом Республики Армения видов договоров на оказание услуг.

Ключевые слова: договор об оказании инвестиционных услуг, договор поручения, управление пакетом ценных бумаг, договор доверительного управления имуществом, договор возмездного оказания услуг.

Arpine Hovhannisyan

Candidate of Law, Associate Professor
Lecturer, Department of Civil Law, Faculty of Law, Yerevan State University

Hrant Simonyan

Postgraduate student, Department of Civil Law, Yerevan State University,
Senior Legal Advisor, LLC “Legal & Tax”,

SUMMARY

The place of the investment services agreement within the system of civil law contracts

According to part 1 of Article 64 of the Law of the Republic of Armenia “On the Securities Market”, investment services may be provided only on the basis of a written agreement concluded between the investment service provider and the client, and failure to maintain the written form results in its invalidity. The mandatory requirements for the investment services agreement, its essential terms, actions to be performed before the conclusion of the agreement, and so on, are stipulated by the mentioned law, as well as by other legal acts regulating relations related to the provision of investment services.

Although the term “investment services agreement” is used in the law, the Civil Code of the Republic of Armenia does not provide for a separate type of contract for the provision of investment services among service contracts as an independent civil law institution.

In this study, based on the analysis of theoretical sources and legislation regulating relations related to the provision of investment and other types of services, the place of the investment services agreement within the system of civil law contracts has been identified. It has also been clarified whether we are dealing with an independent type of service agreement and whether the rules of any existing type of service contract defined by the Civil Code of the Republic of Armenia are applicable to it.

Key words: investment services agreement, agency agreement, management of a securities portfolio, trust management agreement, remunerated service provision agreement.

ՌՈՒԲԻՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության միջազգային իրավական
համագործակցության վարչության պետ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական
իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ԹՎԱՅՆԱՅՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ: ՌԻՍԿԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն հոդվածը վերլուծում է թվայնացման հնարավորությունները քրեակատարողական համակարգում՝ անդրադառնալով դրա դրական ազդեցություններին, այդ թվում՝ իրավունքների, վերասոցիալականացման, գործընթացների արդյունավետության և թափանցիկության ապահովման տեսանկյունից, միևնույն ժամանակ ներկայացնելով դրա հետ կապված հնարավոր ռիսկերը: Անդրադարձ է կատարվում ոլորտում առկա միջազգային փորձին և Հայաստանի զարգացումներին՝ արդյունքում ներկայացնելով թվայնացման ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ:

Հիմնարաներ - քրեակատարողական հիմնարկներ, թվայնացում, էլեկտրոնային համակարգ, վերասոցիալականացում:

Ներածություն

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց վերջին տարիներին թվայնացման նախաձեռնությունները տարածվում են նաև քրեակատարողական համակարգում՝ տվյալների էլեկտրոնային բազաների ներդրումից մինչև «խելացի բանտեր»: Այս համատեքստում առավել քան արդիական է քրեակատարողական համակարգի թվայնացման առնչությամբ հետազոտությունների իրականացումը՝ վեր հանելու համար դրա հետ կապված հնարավոր ռիսկերը և հնարավորությունները, ինչը կօգնի պատշաճ կառավարելու գործընթացը և առավելագույնս երաշխավորելու ազատությունից զրկված անձանց իրավունքները և քրեակատարողական հիմնարկների արդյունավետ ու թափանցիկ գործունեությունը: Սույն հոդվածը ըստ այդմ նպատակ ունի բացահայտելու թվայնացման գործընթացների հնարավոր ազդեցությունները և ներկայացնելու հնարավոր ռիսկերի չեզոքացմանն ուղղված առաջարկներ: Հոդվածը կազմված է ներածության, հետազոտության մեթոդաբանության, արդյունքների և քննարկման, եզրակացության, գրականության ցանկի բաժիններից: Հետազոտության արդյունքների և քննարկման բաժինը բաղկացած է չորս ենթաբաժիններից, որոնք համապատասխանաբար անդրադառնում են՝ քրեակատարողական համակարգի թվայնացման ընձեռած հնարավորություններին, թվայնացման առնչությամբ առկա ռիսկերին, միջազգային փորձին և Հայաստանի քրեակատարողական համակարգում թվայնացմանը:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հոդվածի շրջանակներում հետազոտությունն իրականացվել է առավելապես դոկտրինալ և համե-

մատական-իրավական մեթոդներով, ուսումնասիրվել են օրենսդրական ակտեր, գիտական գրականություն, ինչպես նաև Եվրոպական երկրների փորձի վերլուծության զեկույցներ: Գիտական գրականությունից հավաքագրված տվյալները դիտարկվել են ամբողջության մեջ, մեջբերված դատողություններն առանձին վերլուծվել են, ներկայացվել են դրանց առնչությամբ հեղինակի դիտարկումները, ամփոփվել են առաջարկների տեսքով: Հայաստանի օրենսդրական ակտերը ներկայացվել են թվայնացման գործընթացների շարժընթացը վերլուծելու համար, իսկ այլ երկրների փորձը վկայակոչվել է ոլորտային զարգացումները ցուցադրելու և համեմատական համատեքստ ապահովելու համար: Սույն հոդվածում «թվայնացում» ասելով հասկացվում է երևույթը լայն իմաստով, այսինքն՝ ներառելով ինչպես թղթային կրիչներում պարունակվող տվյալների՝ թվային տվյալների վերածումը, այնպես էլ որոշակի բիզնես գործընթացների իրականացումն ապահովելու համար էլեկտրոնային համակարգերի ներդրումն ու գործընթացների ավտոմատացումը:

Հետազոտության արդյունքներ և քննարկում Քրեակատարողական համակարգի թվայնացման ընձեռած հնարավորությունները

Քրեակատարողական համակարգում թվայնացման մասին խոսելիս հարկ է անդրադառնալ համակարգի թվայնացման նպատակներին, բացահայտել ազատությունից զրկված անձանց պահման պայմաններում էլեկտրոնային համակարգերի կամ թվայնացման այլ գործիքների հնարավորությունները:

Առաջին հերթին՝ ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորման տեսանկյուն

նից՝ նման համակարգերի ներդրումը ապահովում է սեփական անձնական գործերին և հիմնարկում առկա տարբեր ծառայությունների **հասանելիությունը**։ Ազատությունից զրկված անձն իր վերաբերյալ փաստաթղթերի կամ տվյալների ծանոթանալու համար ստիպված չի լինում դիմել վարչակազմին, սպասել թղթային նյութերի տրամադրմանը կամ իր դիմումի ընթացքի կամ տեսակցությունների հասանելի քանակի վերաբերյալ տեղեկացմանը։ Այսինքն՝ հստակ էլեկտրոնային ընթացակարգեր սահմանելով հնարավոր է ապահովել թվային միջավայրում ազատությունից զրկված անձանց իրավունքների իրականացումը՝ առանց լրացուցիչ օղակի՝ մարդկային գործունի միջամտության՝ բացառելով ըստ այդմ նաև հայեցողական հնարավոր վերաբերմունքը։ Ազատությունից զրկված անձը նաև կառավարում է իր օրակարգը։ Այն դրական ազդեցություն է ունենում նաև ազատությունից զրկված անձանց որոշակի ինքնուրույնության ապահովման տեսանկյունից։ Առհասարակ սեփական կյանքին առնչվող հարցերի կառավարումը կամ ինքնուրույնության այլ դրսևորումները (օրինակ՝ սեփական խցի բանալին ունենալը և այն ինքնուրույն բացել-փակելը) հատվում են «նորմալիզացիայի» սկզբունքին, որը ենթադրում է ազատության մեջ կյանքին հնարավորինս մոտ պայմանների ապահովում։

Էլեկտրոնային համակարգերի ներդրումը կարող է նպատակ ունենալ նաև նվազեցնելու ազատությունից զրկված անձանց շփումները աշխատակիցների հետ՝ **քափանցիկությունն ապահովելու և կռուսպցիոն ռիսկերը հնարավորինս բացառելու** համար։

Թվայնացումը կարող է առավել դյուրին դարձնել **քրեակատարողական հիմնարկների կառավարումը**։ Բացի այն, որ թվայնացումը կարող է օպտիմալացնել աշխատակիցների գործառույթները, և հետևաբար՝ նաև հիմնարկներում աշխատակիցների քանակը, էլեկտրոնային համակարգերը կարող են ներդրվել հիմնարկի տարածքում արդյունավետ վերահսկողություն իրականացնելու նպատակով։ Այսպես՝ թվային միջավայրում ունենալով քրեակատարողական հիմնարկի պատկերը, խցերի և դրանցում պահվող անձանց վերաբերյալ անհրաժեշտ տվյալները, էլեկտրոնային հսկողության սարքավորումների արձանագրումները՝ հնարավոր է հեշտությամբ կազմակերպել խցերում տեղաբաշխումը, վերահսկողությունը և խնդիրների դեպքում՝ օպերատիվ արձագանքը։ **Գերատեսչական վերահսկողության** շրջանակներում ևս էլեկտրոնային համակարգերում ամփոփ տվյալները նպաստում են աշխատանքի առավել արդյունավետ կազմակերպմանը։

Էլեկտրոնային միասնական համակարգում վիճակագրական տվյալների ամբողջականացումն

իհարկե հնարավորություն է տալիս նաև պատշաճ գնահատել իրավիճակը քրեակատարողական հիմնարկներում, իրականացնել համեմատականներ՝ համակարգի գործունեության առնչությամբ, գեներացնել և հրապարակել **ամփոփ հաշվետվություններ**, ինչն ապահովում է նաև ոլորտում հաշվետվողականությունը։

Քրեակատարողական հիմնարկներում թվային գործիքակազմերի ներդրումն անուղղակիորեն կնպաստի նաև ազատությունից զրկված անձանց շրջանում **թվային հմտությունների** նվազագույն մակարդակի ձևավորմանը, և քրեակատարողական հիմնարկից դուրս գալուց հետո նրանք իրագեկված կլինեն թվային տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններին։

Եվ վերջապես էլեկտրոնային գործիքակազմերի ներդրումը դրական ազդեցություն կարող է ունենալ **անձի վերասոցիալականացման** վրա, քանի որ, բացի ինքնուրույնության ամրապնդումից և թվային գրագիտության զարգացումից, դրանց միջոցով ազատությունից զրկված անձինք կարող են ներգրավվել կրթական ծրագրերում և այլ միջոցառումներում, կապ պահել արտաքին աշխարհի հետ, հասանելիություն ունենալ օգտակար տեղեկատվական համակարգերի, աշխատել և այլն։

Էլեկտրոնային համակարգերը կարող են պարունակել անձանց վերասոցիալականացման միջոցառումների մասնակցության վերաբերյալ համապարփակ տվյալներ, հնարավորություն տալ ազատությունից զրկված անձանց ընտրել նախընտրելի միջոցառումները։

Նման համակարգերը արդյունավետ կլինեն նաև այն դեպքերում, երբ անձը, դուրս գալով քրեակատարողական հիմնարկից, գտնվում է Պրոբացիայի ծառայության վերահսկողության ներքո, հասանելիություն է ունենում միասնական համակարգին, և ապահովվում է անձի՝ որոշակի բնույթի միջոցառումների մասնակցության շարունակականությունը։

Այս համատեքստում անհրաժեշտ է մշակել «թվային վերասոցիալականացման» հայեցակարգ, որը կապահովի ազատությունից զրկված անձանց կրթական, մասնագիտական և հոգեբանական վերականգնումը՝ օգտագործելով առցանց ուսուցում, միջոցառումներ, մասնագիտական վերապատրաստումներ և աջակցության հեռավար հարթակներ։ Այդպիսով՝ թվայնացումը պետք է դուրս գա իր «տեխնիկական» սահմաններից և դառնա քրեակատարողական քաղաքականության ամբողջական բաղադրիչ։

Քրեակատարողական համակարգի թվայնացման առնչությամբ ռիսկերը

Թվայնացման լայն հնարավորությունների հետ մեկտեղ քրեակատարողական հիմնարկներ

րում կարող են առաջանալ նման գործիքակազմերի հետ կապված մի շարք ռիսկեր:

Առաջին հերթին՝ ազատությունից զրկված ոչ բոլոր անձինք հնարավորություն կունենան օգտվելու էլեկտրոնային համակարգից և համապատասխան սարքերից՝ անգամ վերապատրաստումներ իրականացնելու դեպքում: Ըստ այդմ՝ էլեկտրոնային համակարգերի համատարած կիրառումը և ազատությունից զրկված անձանց իրավունքների իրականացման համար էլեկտրոնային հարթակի օգտագործումը կարող է ունենալ հակառակ ազդեցությունը՝ ավելի սրելով առկա անհավասարությունները և գրկելով որոշակի խմբի անձանց իրենց իրավունքների լիարժեք իրականացումից: Այստեղ կարևոր է շեշտադրել նաև օտարերկրյա քաղաքացիների իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունը՝ տարբեր լեզուներով համակարգերի հասանելիության ապահովման միջոցով:

Այդպիսով՝ անհրաժեշտ է առաջին հերթին ճշգրիտ գնահատել առկա իրավիճակը, իսկ էլեկտրոնային համակարգերի ներդրման ժամանակ՝ ապահովել այն անձանց իրավունքների հավասարապես երաշխավորումը, որոնք չեն կարողանա օգտվել համապատասխան համակարգերից և չեզոքացնել նորարարությունների կիրառման՝ նման՝ հակառակ ազդեցության հնարավորությունը:

Թեև որպես թվայնացման առավելություն նշվեց վարչակազմի հետ ազատությունից զրկված անձանց շփումները նվազեցնելու հնարավորությունը, այնուամենայնիվ մարդկային շփումներն առհասարակ բացառելը կարող է *անձանց մեկուսացվածության* պատճառ դառնալ: Այդպիսով, քրեակատարողական հիմնարկներում թվային տեխնոլոգիաների կիրառման համատեքստում առաջանում է «թվային խոցելիության» գնահատման հարցը:

Գրականության մեջ, որոշ հեղինակների կողմից ամփոփել են առկա մոտեցումները՝ նշելով, որ թվային խոցելիությունները դիտարկվում են դրպես.

- մասնակցության մարտահրավերներ,¹
- ինքնուրույնության և վերահսկողության բացակայություն,²
- պետության հետ ուժերի անհավասարակշռություն,³
- վնասի անհավասար ռիսկ,⁵
- մարդկային ներգրավվածության կորուստ,⁶
- մարդկային կապի կորուստ:

Ավստրալիայում, օրինակ՝ կատարված ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել է, որ թվային խոցելիությունն առաջանում է՝ կապված ֆիզիկական ներկայության բացակայության և մարդկային կապի վրա դրա ունեցած ազդեցության հետ:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է ունենալ հստակ ռազմավարություն՝ հավասարակշռելու

էլեկտրոնային համակարգերի կիրառումը և մարդկային շփումների ապահովումը: Ըստ այդմ՝ կարող են թվայնացվել առաջնահերթ այն գործառույթները, որոնք առավել շատ կոռուպցիոն ռիսկեր կարող են պարունակել, իսկ, օրինակ՝ հոգեբանի հետ անձի հանդիպումները կամ խմբային տարբեր աշխատանքներ կարող են իրականացվել «դեմ առ դեմ» ձևաչափով՝ ապահովելով անձի շահերը:

Կարևոր կլինի նաև ապահովել ազատությունից զրկված անձանց իրազեկվածությունը թվայնացման ամենավաղ փուլերից՝ ներկայացնելով նրանց դրա առավելություններն ու ընձեռած հնարավորությունները, ներդրվող գործիքներում հնարավոր գործառնությունները, ինչը էլեկտրոնային համակարգերի ներդրման գործընթացն առավել սահուն կդարձնի:

Ինչ վերաբերում է ազատությունից զրկված անձանց ինքնուրույնությանը, կարծիք կա, որ ազատությունից զրկված անձանց թվային սարքերով իրենց ընդունելություններն ու տեսակցությունները կառավարելու հնարավորություն տալը կարող է ունենալ երկու հետևանք՝ այն կարող է վերականգնել նրանց ինքնուրույնության որոշ մասը, որը նրանցից վերցվել է, կամ կարող է տալ *սյսերոպատոնոմ ազատություն* մի համակարգում, որը նրանց նկատմամբ որոշակի ժամանակային վերահսկողություն ունի:

Ուստի ինքնուրույնության դրսևորման հնարավորությունները պետք է լինեն իրական և իրատեսական՝ ազատությունից զրկված անձի մոտ համակարգից հիասթափությունը հնարավորինս բացառելու համար: Օրինակ՝ անձը տեսակցության համար էլեկտրոնային համակարգի միջոցով ամրագրում է թույլատրելի օր և ժամ, սակայն հիմնարկի վարչակազմը նրան հայտնում է, որ այն այդ օրը չի կազմակերպվելու, և ինքն է որոշում օրը, նման պայմաններում էլեկտրոնային համակարգը իր նպատակին չի ծառայի:

Համապատասխան սարքավորումների վնասումը և կիրեռ հարձակումները ևս ռիսկեր են, որոնք ենթակա են հասցեագրման: Այս տեսանկյունից լուրջ ռիսկ կարող են լինել *էլեկտրոնային համակարգի խափանումները*, այդ թվում՝ տվյալների հնարավոր կորստով, ինչը, հաշվի առնելով ոլորտի զգայունությունը և ազատությունից զրկված անձանց վիճակի խոցելիությունը, կարող է հանգեցնել անձանց իրավունքների խախտումների:

Իհարկե, նմանատիպ ռիսկերն ուղեկցում են թվայնացման գործընթացներին բոլոր ոլորտներում, և որևէ համակարգի թվայնացումը նախաձեռնելիս պետք է կազմել ռիսկի կառավարման հստակ պլան: Տեխնիկական խնդիրներն անխուսափելի են, անհրաժեշտ է միայն ապահովել համապատասխան պայմաններ արագ արձագանքման և խնդիրների շտկման, ինչպես նաև տվյալների

ապահով պահպանության համար: Ինչ վերաբերում է սարքավորումների վնասմանը, ապա քրեակատարողական հիմնարկների պայմաններին հնարավորինս հարմարեցված ենթակառուցվածքներ, հստակ կանոնակարգումներ և պատասխանատվության միջոցներ են անհրաժեշտ դրա կանխարգելման նպատակով:

Մյուս կողմից, քրեակատարողական հիմնարկներում և քրեակատարողական համակարգերի կենտրոնական մարմիններում առկա է մեծ էլեկտրոնային համակարգերի *պատշաճ պահպանման համար անհրաժեշտ ռեսուրսների* անբավարարության ռիսկ: Խոսքը վերաբերում է ինչպես մարդկային, այնպես էլ տեխնիկական ռեսուրսներին: Էլեկտրոնային համակարգերի պահպանությունն ու սպասարկումը առհասարակ, և քրեակատարողական հիմնարկներում՝ մասնավորապես, պահանջում են մշտական ուշադրություն և տեխնիկական կարողություններ, նաև՝ ֆինանսական միջոցներ: Բացի այդ, յուրաքանչյուր էլեկտրոնային համակարգ ունի իր կենսացիկլը, որի ավարտից հետո անհրաժեշտություն կառաջանա այն փոխարինել առավել արդիական համակարգով, ինչը ևս կպահանջի հավելյալ ռեսուրսներ: Ուստի համակարգերի պահպանման համար անհրաժեշտ պայմանների բացակայության դեպքում թվայնացումը կարող է լինել ինքնանպատակ և հանգեցնել պետության միջոցների ոչ արդյունավետ ծախսմանը:

Այս տեսանկյունից կրկին իրատեսական գնահատելով իրավիճակը՝ անհրաժեշտ է հստակ կառավարել ներքին կամ արտաքին ռեսուրսներով համակարգի պահպանման և սպասարկման, համակարգի հետագա ճակատագրի հետ կապված հարցերը, այդ թվում՝ հետագայում էլեկտրոնային թափոնների կառավարման հարցը: Բացի այդ, թվայնացման ողջ գործընթացում պետք է ներգրավել քրեակատարողական հիմնարկների աշխատակիցներին՝ ինչպես գործընթացների ճշգրիտ պատկեր ստանալու, այնպես էլ էլեկտրոնային գործիքակազմերի կիրառման համար նրանց պատշաճ պատրաստելու համար:

Տեսական գրականության մեջ քննարկվում է նաև ազատությունից զրկված անձանց կողմից թվային վերափոխման համար հատուցման հարցը՝ նշելով, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի համար միզուցե հարմար կլինի պատվիրակել թվային վերափոխման ծախսերը ազատությունից զրկված անձանց և նրանց ընտանիքներին՝ այդպիսով հիմնարկում ստեղծելով թվային անհավասարություն¹⁰:

Նման մոտեցումը չի կարող ընդունելի համարվել, քանի որ, նախ, պետությունը պարտավոր է ապահովել պատժի կատարման համար պատշաճ պայմաններ, բացի այդ, պայմանները պետք է հավասար լինեն ազատությունից զրկված անձանց

համար:

Քրեակատարողական համակարգի թվայնացման միջազգային փորձը

Չնայած ռիսկերին և դժվարություններին՝ վերջին տարիներին բազմաթիվ երկրների քրեակատարողական հիմնարկներում ակտիվորեն իրականացվում են թվայնացման նախաձեռնություններ:

Բանտերի և ուղղիչ հիմնարկների եվրոպական կազմակերպության (Եվրոպրիս) փորձագետների արված վերլուծությունների արդյունքում առանձնացվել է վերջին տասնամյակում եվրոպական քրեակատարողական հիմնարկներում տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների էվոլյուցիայի հետևյալ փուլերը.

- *փուլ առաջին* սկզբում ուշադրության կենտրոնում էին ամուր ՏՀՏ ենթակառուցվածքների կառուցումը և դատապարտյալների կառավարման համակարգերի ձևավորումը՝ տվյալների արդյունավետ հավաքագրման համար՝ տվյալներ, որոնք էական կառուցային հետագա փուլերում,

- *փուլ երկրորդ*՝ հաջորդ քայլը ներառել է հավաքագրված տվյալներն այլ առանցքային շահագրգիռ մարմինների, ներառյալ՝ ոստիկանության, դատարանների, քրեակատարողական հիմնարկների և պրոբացիայի ծառայությունների հետ կիսելը՝ զարգացնելու միջգերատեսչական համագործակցությունը,

- *փուլ երրորդ*՝ այնուհետև ուշադրությունը կենտրոնացվեց ուղղակիորեն ազատությունից զրկված անձանց համար ՏՀՏ տեխնոլոգիաների ներդրման վրա՝ նպատակ ունենալով բարելավել նրանց վերասոցիալականացումը և քրեակատարողական հիմնարկի միջավայրում առօրյա կյանքը,

- *փուլ չորրորդ*՝ ներկայիս փուլը շեշտադրում է թվային ռազմավարությունները և համապարփակ թվային վերափոխումը, ներառյալ՝ զգալի կազմակերպական փոփոխությունները, որոնք կնպաստեն առաջադեմ թվային տեխնոլոգիաների որդեգրմանը, ինչպիսիք են «խելացի» («smart») քրեակատարողական հիմնարկները, արհեստական բանականությունը և վիրտուալ իրականությունը¹¹:

Ազատությունից զրկված անձանց տվյալների էլեկտրոնային շտեմարանների ձևավորումը, հնարավոր հասանելիության ապահովումն այլ մարմիններին, իսկ հետագայում՝ առավել համապարփակ բարեփոխման իրականացման տրամաբանությունը համահունչ է նաև Հայաստանի օրինակին, որին անդրադարձ կկատարվի ստորև:

Անդրադառնալով եվրոպական երկրների կոնկրետ նախաձեռնություններին՝ հարկ է հիշատակել, օրինակ՝ Բելգիայի քրեակատարողական համակարգում ներդրված «բանտային ամպ»-ի («prison cloud») գաղափարը, որը ենթադրում է դատապարտյալի սեփական համակարգչի և հարա-

www.artadaratutyunjournal.com

կից տեխնիկայի առկայություն, ընդ որում՝ համացանցի որոշակի հասանելիություն է առկա, և օգտվողներին թույլատրվում է կառավարել իրենց կյանքի որոշ հատվածներ, ինչպիսիք են սնունդը, բժշկական ընդունելությունները, ընտանիքի հետ կապը՝ առանց հիմնարկի կողմից վերահսկողության անհրաժեշտության² :

Խորվաթիայում, օրինակ, իրական թվային վերափոխումը սկսել է 2019 թվականից. իրականացվում է համապարփակ տեղեկատվական նոր համակարգի ներդրումը, իսկ 2006 թվականից առկա է դատապարտյալների կառավարման համակարգը: Նոր համակարգը ոչ միայն գրանցում է դատապարտյալի տվյալները, այլ նաև ինտեգրում է պատժի կատարման առնչվող բոլոր գործընթացները, խթանում է ամբողջությամբ թվային գործի կառավարումը, հնարավորություն է տալիս այլ կառույցների հետ փոխանակել տվյալներ և ներառում է հաշվետվությունների ներկայացման կուռ հնարավորություններ: Եվրոպրիսի ուսումնասիրությունից նաև տեղեկանում ենք, որ Խորվաթիայի քրեակատարողական հիմնարկներում նաև տեսակապի միջոցով ապահովվում է դատապարտյալի հաղորդակցությունը ընտանիքի, դատարանի և այլ կառույցների հետ: Առկա են նաև ներխցային հեռախոսներ, տեսազանգի հանգույցներ և թվային գույմարի կառավարման համակարգեր: Ներդրվում են նաև վիրտուալ իրականության կոմպոնենտներ ներառող նախագծեր՝ աջակցելու դատապարտյալների վերակազմակերպմանը և պրոբացիոն գործառնություններին¹³ :

Ավստրիայում կրկին ներդրված են տեսակապի միջոցով հաղորդակցման հնարավորություններ, բացի այդ գործում է «e-learning» համակարգ լսարանային պայմաններում՝ ապագայում խցայինի անցնելու տեսլականով, աշխատանքներ են տարվում նաև հիմնարկների անվտանգության ապահովման բնագավառում թվայնացման գործիքակազմերի կիրառման ուղղությամբ¹⁴ :

Իսպանիայում ևս քրեակատարողական հիմնարկներում թվայնացման աշխատանքներն օրինակելի են, ներկայում այն հնարավորություն է ընձեռում ազատությունից զրկված անձին նամակներ ստանալ ընտանիքի անդամներից, առկա է հնարավորություն՝ «e-learning» համակարգի միջոցով համալսարանում դասընթացների մասնակցելու¹⁵ :

Ֆինլանդիայում կանանց համար նախատեսված Համեյնյինա քրեակատարողական հիմնարկում դեռևս 2021 թվականից կիրառվում է «խելացի բանտ» ծրագիրը, որը ժամանակի ընթացքում ներդրվում է նաև այլ քրեակատարողական հիմնարկներում: Նման քրեակատարողական հիմնարկի խցերում առկա է անձնական համակարգիչ՝ օժանդակ սարքավորումներով (այսպես կոչված «խցային տերմինալ»), որի միջոցով դատապարտ-

յալները կարող են օգտվել թվային ծառայություններից, հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ և հիմնարկի ներսում, մասնակցել հեռավար ուսուցման և այլն¹⁶ :

Համեյնյինա քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց համար նախատեսված է տեղեկատվական գրքույկ՝ անհրաժեշտ տեղեկատվությամբ, որտեղ նշվում է նաև համակարգչի միջոցով վարչակազմին հարցումներ ուղարկելու, էլեկտրոնային ուսուցման մասնակցելու, խաղեր խաղալու և այլ հնարավորությունների մասին: Համակարգչում հասանելի են նաև ազատությունից զրկմանն առնչվող իրավական ակտերի թվային տարբերակները: Միևնույն ժամանակ նշվում է, որ առանձին դիմումով հնարավոր է հասանելիություն ստանալ համացանցին, որը կարող է օգտագործվել այնպիսի նպատակներով, ինչպիսիք են, ի թիվս այլնի, սոցիալական, դատական հարցերը, աշխատանքը և այլն¹⁷ :

Նույն հիմնարկի ներքին կարգապահական կանոններով սահմանված են հստակ տուգանքներ՝ համակարգչային տեխնիկայի վնասման համար, ընդ որում՝ տեխնիկայի տեսակից (օրինակ՝ համակարգիչ կամ ականջակալ) կախված՝ տուգանքի չափը տարբեր է¹⁸ : Նման կարգավորումները և ազատությունից զրկված անձանց դրանց մասին հիմնարկ մուտք գործելու պահից իրազեկումը կարող են նաև չեզոքացնել տեխնիկայի վնասման հետ կապված ռիսկերը:

Ֆիննական քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալներին նաև հնարավոր է համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկել նամակներ, որոնք սակայն, չպետք է պարունակեն կից նյութեր (ինքնաշխատ հեռացվում է անվտանգությունից ելնելով), դրանք փոխանցվում են ազատությունից զրկված անձին հիմնարկի վարչակազմի միջոցով¹⁹ :

Թվայնացումը Հայաստանի քրեակատարողական համակարգում

Անդրադառնալով Հայաստանի քրեակատարողական համակարգին՝ հարկ է նշել, որ վերջին շրջանում առկա է միտում՝ քրեակատարողական համակարգում այս կամ այն ձևաչափով ներդնելու էլեկտրոնային համակարգեր:

Նախ, ՀՀ կառավարության որոշմամբ դեռևս 2017 թվականին ներդրվել էր որոշակի դեպքերում տեսազանգի տրամադրման հնարավորությունը²⁰ : Ըստ այդմ՝ 2018 թվականի նոյեմբերից ապահովվել էր բոլոր քրեակատարողական հիմնարկներում տեսազանգի հնարավորությունը՝ օտարերկրյա կալանավորված անձանց կամ դատապարտյալների համար, որոնց մերձավոր ազգականները չէին կարող տեսակցել նրանց, ինչպես նաև այն կալանավորված անձանց կամ դատապարտյալների,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

որոնց մերձավոր ազգականները չէին կարող օգտվել կարճատև տեսակցությունից²¹ : Տեսագանգի գործիքակազմը հետագայում կիրառվել է նաև «Քովիդ-19» համավարակի տարածման շրջանում, ինչը շատ երկրների «ստիպել էր» քրեակատարողական հիմնարկներում սկսել ներդնել տեսագանգի հնարավորություններ:

Այնուհետև՝ 2022 թվականին ընդունված քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ ՔԿՕ)²² 10-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և այլ հարակից հոդվածներով արդեն իսկ ամրագրվեց տեսագանգի տրամադրման ընդհանուր հնարավորությունը՝ հեռախոսակապից օգտվելուն զուգահեռ:

ՀՀ ՔԿՕ-ի 72-րդ հոդվածով նաև հստակ կանոնակարգման ենթարկվեց քրեակատարողական հիմնարկներում և դրանց հարող տարածքներում էլեկտրոնային հսկողության կիրառումը՝ սահմանվելով, ի թիվս այլնի, դրա կիրառման արգելքները, տեսանյութերի պահպանման ժամկետները, իրականացման նպատակը, այն է՝ դատապարտյալների կամ այլ անձանց անվտանգության ապահովման կամ այլ իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով՝ դատապարտյալների փախուստները, ինքնավնասումները, ինքնասպանությունները, պատժի կատարման սահմանված կարգի խախտումները, անկարգությունները, հանցանքները կամ այլ իրավախախտումները կանխելը կամ խափանելը: Այն սահմանում է, որ էլեկտրոնային հսկողությունը պետք է իրականացվի այնպիսի պայմաններում, որոնք չեն նվաստացնում դատապարտյալների պատիվն ու արժանապատվությունը, իսկ երկարատև տեսակցությունների համար հատկացված սենյակներում, կացարաններում և խցերում էլեկտրոնային հսկողություն չի իրականացվում, նախատեսվում են նաև տեսանյութերի պահպանման ժամկետներ:

Այդպիսով ՀՀ ՔԿՕ-ը երաշխիքներ է սահմանում՝ էլեկտրոնային հսկողության կիրառման առնչությամբ հնարավոր ռիսկերը չեզոքացնելու, այդ թվում՝ չարաշահումները և անձանց իրավունքների խախտումները բացառելու նպատակով:

Նշվածի հիման վրա՝ էլեկտրոնային հսկողություն իրականացնող անձանց ցանկը, դրա արդյունքով ստացված տվյալների օգտագործման, պահպանման և ոչնչացման պայմանները, ստացված տվյալներին ծանոթանալու իրավունք ունեցող պաշտոնատար անձանց ցանկը, տեսանկարահանող, լուսանկարահանող, տեսաձայնագրող տեխնիկական միջոցների ցանկն ու դրանց կիրառման կարգը սահմանվել է ՀՀ կառավարության որոշմամբ²³:

Նշված որոշման 4-րդ հավելվածի համաձայն՝ էլեկտրոնային հսկողության ընդհանուր համակարգն առնվազն պետք է բաղկացած լինի տեսահսկման համակարգից և ցանցային ենթակա-

ռուցվածքներից, ընդ որում՝ տեսահսկման համակարգը, ի թիվս այլնի, պետք է ներառի ծրագրային վերլուծական և տեսանյութերի մշակման փաթեթ՝ արհեստական բանականության հիման վրա «ոչ ստանդարտ (անսովոր, խանգարող) պահվածքի հայտնաբերում» տեսանյութերի վերլուծության հնարավորությամբ, պետք է անընդհատ ուսումնասիրվի վերահսկվող տարածքում տեղաշարժը, գեկուցվեն շեղումները:

Ներկայում տեսահսկման մմանատիպ համակարգ արդեն իսկ ներդրված է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում՝ մյուս քրեակատարողական հիմնարկներում ևս ներդնելու տեսլականով: Նման համակարգերի կիրառումը հնարավորություն կտա առավել արդյունավետ կառավարել քրեակատարողական հիմնարկները, այդ թվում՝ նկատել խնդրահարույց իրավիճակները և արագ արձագանքել, նվազեցնել կոռուպցիոն հնարավոր ռիսկերը և ապահովել անձանց իրավունքների պաշտպանությունը:

Ուշագրավ է նաև, որ ներդրվել է քրեակատարողական հիմնարկներում հանրային պաշտպանի և իր վստահորդի միջև առցանց հաղորդակցությունը ապահովելու հնարավորություն: Դեռևս 2023 թվականին «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պաշտոնապես բացվել էր հատուկ կահավորված սենյակ՝ նպատակ ունենալով ապահովել առցանց տեսակապի միջոցով ազատագրված անձ-հանրային պաշտպան անխոչընդոտ շփումը²⁴ : Սա ևս կարևոր քայլ է անձի իրավունքների պատշաճ երաշխավորման տեսանկյունից:

Անդրադառնալով Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում միասնական էլեկտրոնային համակարգի ներդրման հարցին՝ հարկ է նշել, որ դեռևս ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1717-Լ որոշման²⁵ 2-րդ հավելվածով նախատեսվել էր միջոցառում՝ քրեակատարողական համակարգում էլեկտրոնային կառավարման գործիքների կիրառման խթանումը:

Դրա շրջանակում նախատեսվում էր ներդնել «e-penitentiary» էլեկտրոնային համակարգը, որի ամբողջական գործարկման ժամկետ էր սահմանված 2020 թվականի սեպտեմբերի 1-ին տասնօրյակը, իսկ իրականացման ակնկալվող արդյունք՝ քրեակատարողական համակարգում փաստաթղթաշրջանառության կրճատումը, ազատությունից զրկված անձանց նկատմամբ կատարված ցանկացած գործողության թափանցիկության ապահովման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը:

Այլ խոսքով՝ շեշտը դրված էր ոչ այնքան ազատությունից զրկված անձանց որոշակի ծառայությունների հասանելիության ապահովման, նրանց վերասոցիալականացման համատեքստում էլեկտրոնային գործիքների կիրառման, այլ առաջին հերթին փաստաթղթաշրջանառությունը կրճատելու և

www.artadaradutyjournal.com

թափանցիկությունն ապահովելու վրա:

Նշված ռազմավարության կատարողականի վերաբերյալ հրապարակված հաշվետվություններից²⁶ պարզ է դառնում, որ «e-penitentiary» էլեկտրոնային կառավարման համակարգը պետք է ներառեր կալանավորված անձանց և դատապարտյալների առնչությամբ օրենսդրությամբ իրականացվող բոլոր գործառնությունների (օրինակ՝ պատժի հետագա կրումից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի կրման պայմանների փոփոխման, տեսակցությունների, ուսման, աշխատանքի և այլնի) վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը: Ավտոմատացված համալիրի առավելություններից էր լինելու նաև ցանկացած ձևաչափով հաշվետվություններ ստանալու, վերլուծական աշխատանքներ իրականացնելու, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի՝ օրենսդրությամբ նախատեսված պարտականությունների ավտոմատ իրականացումը՝ բացառելով մարդկային գործունի միջամտությունը: Ներկայացվել է, որ համակարգը անցել էր փորձարկման փուլ, դրա գործարկման համար ձեռք էր բերվել անհրաժեշտ տեխնիկա, կահավորվել էր սերվերային սենյակը, քրեակատարողական բոլոր հիմնարկների և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի միջև անցկացվել էր հատուկ արտաքին ցանց, և վերապատրաստվել էին քրեակատարողական համակարգի աշխատակիցները:

Ըստ հաշվետվությունների՝ համակարգի գործարկման ժամկետը որոշակիորեն հետաձգվել էր՝ պայմանավորված արտակարգ դրության ժամանակ վերապատրաստումների իրականացման անհնարինությանը, փոխգործելիության ապահովման խնդիրներով և այլն: Արդյունքում համակարգը 2021 թվականի օգոստոսի 1-ից ամբողջությամբ սկսել է շահագործվել բոլոր քրեակատարողական հիմնարկների և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության համապատասխան ստորաբաժանումների կողմից, իսկ համակարգի շահագործման նպատակով քրեակատարողական ծառայության պետի N 3-Լ հրամանով²⁷ սահմանված ժամանակացույցի համաձայն իրականացվել է քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց անձնական գործերի մուտքը համակարգ (դրանց թվայնացումը):

Չուզահեռաբար հաշվետվություններում համակարգը անվանվում է «Կալանավորված անձանց և դատապարտյալների տեղեկատվական ռեգիստր», ինչը ենթադրում է առավելապես տվյալների (անձնական գործերի) պահպանման հարթակ՝ քրեակատարողական ոլորտի բիզնես գործընթացների թվայնացումն ապահովող համակարգի փոխարեն:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1133-Լ որոշման²⁸ 2-րդ

հավելվածով որպես միջոցառում նախատեսվել է «e-penitentiary» էլեկտրոնային կառավարման համակարգի արդիականացումը:

Նշված միջոցառման կատարողականի վերաբերյալ հունվարի 9-ին հրապարակված հաշվետվության համաձայն՝ «Կատարվել է բիզնես գործընթացների վերլուծություն, որը ցույց է տվել, որ առկա համակարգի արդիականացումը արդյունավետ չէ, և անհրաժեշտ կլինի ներդնել նոր համակարգ: Ըստ այդմ՝ ուսումնասիրություններ են իրականացվել քրեակատարողական համակարգի հնարավորինս ամբողջական թվայնացման տեսանկյունից: Թվայնացման կոնցեպտը հաստատվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից: Վերջնականացվել է տեխնիկական առաջադրանքը, ներկայումս ամփոփվում է մրցութային փաթեթը՝ Պետական հատվածի չորրորդ ծրագրի շրջանակներում այն իրականացնելու համար:»²⁹ Այս համատեքստում Համաշխարհային բանկի կողմից ապրիլի 25-ին հայտարարվել է «e-penitentiary» համակարգի գնման մրցույթ³⁰: Մրցույթն ըստ էության չի կայացել, քանի որ սեպտեմբերի 5-ին այն նորից է հայտարարվել, և հայտերի ընդունման ժամկետ է սահմանվել հոկտեմբերի 21-ը³¹:

Վերոգրյալի համատեքստում կարող ենք նշել, որ Հայաստանի քրեակատարողական համակարգում արդեն իսկ առկա է որոշակի համակարգ, որը պարունակում է ազատությունից զրկված անձանց տվյալները, այդ թվում նրանց անձնական գործերը, փոխգործելի է որոշ համակարգերի հետ, սակայն ունի առանցքային խնդիրներ և արդիականացման ենթակա չէ: Ուստի ներկայում քրեակատարողական համակարգը գտնվում է բիզնես պրոցեսների ամբողջական թվայնացման տրամաբանությամբ համակարգ ներդնելու փուլում:

Ինչ վերաբերում է քրեակատարողական համակարգի բիզնես գործընթացներն ամբողջությամբ թվայնացնող համակարգի կիրառման համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումներին, ապա հարկ է նշել, որ համակարգի ներդրմանը զուգահեռ անհրաժեշտ կլինի իրականացնել համակարգային փոփոխություններ, քանի որ ներկայիս օրենսդրությունը կառուցված է թղթային շրջանառության և ոչ ավտոմատացված գործառնությունների իրականացման տրամաբանության վրա: Այլ խոսքով, օրինակ, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացնելու դեպքում քրեակատարողական հիմնարկի վարչակազմը նախապես պարտավոր է դատապարտյալին գրավոր ծանուցել դիմում ներկայացնելու կարգի մասին, իսկ էլեկտրոնային համակարգի ներդրման դեպքում այն կիրականացվի ինքնաշխատ՝ դատապարտյալի անձնական էջում ծանուցման ստացման ձևով: Համալիր փոփոխություններին զուգա-

հետ պետք է կարգավորվեն նաև համակարգի կիրառման անհնարինությունը դեպքում գործընթացների իրականացման հետ կապված հարցերը:

Ինչպես վերը նշվեց, թվայնացման գործընթացում պետք է ակտիվորեն ներգրավված լինեն ինչպես ազատությունից զրկված անձինք, այնպես էլ քրեակատարողական համակարգի աշխատակիցները, ի լրումն՝ գործընթացը պետք է ունենալ հստակ կառավարման պլան, ուղեկցվի զուգահեռ փորձարկումների և վերապատրաստումների իրականացմամբ:

Եզրակացություն

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց՝ քրեակատարողական համակարգերում ձևափոխվում է նաև թվայնացման տրամաբանությունը. եթե առաջին նախաձեռնություններն ուղղված էին պարզապես ազատությունից զրկված անձանց տվյալների էլեկտրոնային բազաներ ունենալուն, ապա ժամանակի ընթացքում սկսեց շեշտադրվել գործառույթների համապարփակ թվայնացումը՝ տարբեր գործառույթությունների ավտոմատացումից մինչև անձի վերասոցիալականացման ապահովումը: Ուստի քրեակատարողական համակարգի թվայնացումը պետք է դիտարկվի այլևս ոչ միայն որպես կառավարման գործիք, այլև որպես քրեակատարողական բաղադրանքների քաղաքականության բաղկացուցիչ մաս, ինստիտուտների փոխակերպման հնարավորություն:

Քրեակատարողական հիմնարկներում թվայնացումը տալիս է լայն հնարավորություններ՝ ազատությունից զրկված անձանց հասանելիությունը՝ իրենց վերաբերյալ տվյալներին, նրանց ինքնուրույնության ապահովումը, այդ թվում՝ օրակարգի կառավարման և տարբեր գործառույթությունների անմիջական էլեկտրոնային իրականացման ձևով, նրանց թվային գրագիտության խթանումը, վերասոցիալականացման գործընթացի պատշաճ ապահովումն ու կառավարումը, հիմնարկի վարչակազմի հետ կոռուպցիոն հնարավոր ռիսկեր պարունակող շփումների նվազեցումը, քրեակատարողական համակարգի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը, անվտանգության ապահովումը և արդյունավետ կառավարումը:

Միաժամանակ, քրեակատարողական հիմնարկներում թվայնացման ռիսկերի արդյունավետ նվազեցումը պահանջում է համալիր և համակարգված մոտեցում, հստակ պլանավորում, որը նախևառաջ ապահովում է անձանց իրավունքների հավասար և լիարժեք երաշխավորումը, ներառյալ նրանց, ովքեր տեխնոլոգիական համակարգերից օգտվելու սահմանափակ հնարավորություններ ունեն, որպեսզի նորարարությունների կիրառումը չունենա հակառակ ազդեցությունը:

Կարևոր է նաև ապահովել էլեկտրոնային համակարգերի և մարդկային շփումների միջև օպտիմալ հավասարակշռությունը, ինչպես նաև ստեղծել իրական և իրատեսական ինքնուրույնության դրսևորման հնարավորություններ, ինչն անհրաժեշտ է համակարգի նկատմամբ վստահության պահպանման և հիասթափության նվազեցման համար:

Թվայնացման գործընթացները պետք է հիմնված լինեն արագ արձագանքման և խնդիրների շտկման հստակ մեխանիզմների վրա, ինչպես նաև ապահովեն տվյալների երկրորդային պահպանության անվտանգության խստագույն չափանիշները: Էլեկտրոնային համակարգերի պահպանման, սպասարկման և հետագա զարգացման հարցերը պետք է կառավարվեն իրատեսական գնահատման հիման վրա՝ ներքին և արտաքին ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ: Ինչ վերաբերում է սարքավորումների վնասման ռիսկերին, ապա դրանք նվազեցնելու համար անհրաժեշտ են քրեակատարողական հիմնարկի պայմաններին համապատասխան ենթակառուցվածքներ, հստակ ներքին կանոնակարգումներ և պատասխանատվության ձևաչափեր:

Գործընթացի պլանավորման տեսակետից կարևոր է նաև ապահովել թվային վերափոխման համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց և քրեակատարողական համակարգի աշխատակիցների ներգրավվածությունը՝ բիզնես գործընթացների ճշգրիտ արտացոլման, օգտվողի փորձառության («user experience») գնահատման, համակարգին նրանց ծանոթացման և պատկանելիության («ownership») զգացումի ձևավորման համար, ինչը կերաշխավորի նաև հետագայում համակարգի արդյունավետ կիրառումը:

Հարկ է արձանագրել՝ քրեակատարողական համակարգի թվայնացումը պետք է դիտվի որպես երկարաժամկետ ռազմավարական ուղղություն, որը համադրում է նորարարական տեխնոլոգիաները, իրավական կարգավորումները և մարդու իրավունքների պաշտպանությունը՝ միաժամանակ ապահովելով վստահություն, թափանցիկություն, ռիսկերի վերահսկում և վերասոցիալականացման նպաստավոր միջավայր:

Հետագա հետազոտությունները սույն թեմայի շրջանակներում կարող են շարունակվել միջազգային փորձի զարգացումների և Հայաստանում միասնական էլեկտրոնային համակարգի ներդրման գործընթացի ուսումնասիրության ուղղությամբ:

¹ Տե՛ս, McKay, C., & Macintosh, K., Digital Vulnerability: People-in-Prison, Videoconferencing and the Digital Criminal Justice System, *Journal of Criminology* 57, no. 3, 2024, p. 327.

² Տե՛ս, նույն տեղում, որտեղ հղում է կատարվում սկզբնաղբյուրին՝ Chundur, S., Digital justice: Reflections on a community-based research project. *The Journal of Community Informatics*, 16, 2020, pp. 118–140.

³ Տե՛ս, նույն տեղում, որտեղ հղում է կատարվում սկզբնաղբյուրին՝ Betts, L. R., & Spenser, K. A., People think it’s a harmless joke: Young people’s understanding of the impact of technology, digital vulnerability and cyberbullying in the United Kingdom. *Journal of Children and Media*, 11(1), (2017), pp. 20–35.

⁴ Տե՛ս, նույն տեղում, որտեղ հղում է կատարվում սկզբնաղբյուրին՝ Peplow, D., & Phillips, J., Remote parole oral hearings: More efficient, but at what cost? *Criminology & Criminal Justice*. Advance online publication (2023).

⁵ Տե՛ս, նույն տեղում, որտեղ հղում է կատարվում սկզբնաղբյուրին՝ Vargas, R., Preito-Hodge, K., & Christofferson, J., Digital vulnerability: The unequal risk of e-contact with the criminal justice system., *RSF: The Russell Sage Foundation Journal of the Social Sciences*, 5(1), 2019, pp. 71–88.

⁶ Տե՛ս, նույն տեղում, որտեղ հղում է կատարվում սկզբնաղբյուրին՝ Murdoch, D. J., & King, L. L. “Not feeling like a caged animal”: Prisoner perceptions of a remote video visitation system. *Journal of Crime and Justice*, 43(2), (2020), pp. 212–227.

⁷ Տե՛ս, նույն տեղում, որտեղ հղում է կատարվում սկզբնաղբյուրին՝ Duwe, G., & McNeeley, S., Just as good as the real thing? The effects of prison video visitation on recidivism, *Crime & Delinquency*, 67(4), 2021, pp. 475–497.

⁸ Տե՛ս, McKay, C., & Macintosh, K., Digital Vulnerability: People-in-Prison, Videoconferencing and the Digital Criminal Justice System, *Journal of Criminology* 57, no. 3, 2024, page 327, որտեղ հղում է կատարվում սկզբնաղբյուրին՝ Duwe, G., & McNeeley, S., Just as good as the real thing? The effects of prison video visitation on recidivism. *Crime & Delinquency*, 67(4), 2021, pp. 475–497.

⁹ Տե՛ս, Hofinger H., & Pfliegerl Ph., A Reality Check on the Digitalisation of Prisons: Assessing the Opportunities and Risks of Providing Digital Technologies for Prisoners, *Punishment & Society* 26(5), 2024, p. 901.

¹⁰ Տե՛ս, Hofinger H., & Pfliegerl Ph., A Reality Check on the Digitalisation of Prisons: Assessing the Opportunities and Risks of Providing Digital Technologies for Prisoners, *Punishment & Society* 26(5), 2024, p. 901.

¹¹ Տե՛ս, Solar M. P., Unger H., Lukavecki M., Evolution of Prison Digitalisation Situation, Risks and Benefits, EuroPris ICT Expert Group, p. 6, հասանելի է՝ <https://www.europpris.org/wp-content/uploads/2025/02/Prison-Digitalisation-Situation-Risks-and-Benefits.-EuroPris-ICT-Expert-Group-2025.pdf>, հրատարակման ամսաթիվը՝ 2025 թ. փետրվարի 12, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

¹² Տե՛ս, Davies B., Debates in Digital Pedagogy within Prisons, հասանելի է՝ <https://journals.sagepub.com/doi/full/10.1177/17577438241265456#tab-contributors>, հրատարակման ամսաթիվը՝ 2024 թ. հունիսի 20, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

¹³ Տե՛ս, Solar M. P., Unger H., Lukavecki M., նույն տեղում, էջեր 8-9:

¹⁴ Տե՛ս, նույն տեղում, էջ 7:

¹⁵ Տե՛ս, նույն տեղում, էջեր 9-10:

¹⁶ Տե՛ս, “Smart prison solution adopted in two more prisons in Finland”, հասանելի է՝ <https://www.rikosseuraamus.fi/en/index/topical/pressreleasesandnews/2023/smartprisonsolutionadoptedintwomoreprisonsinfinland>.html, հրատարակման ամսաթիվը՝ 2023 թ. մայիսի 10, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

¹⁷ Տե՛ս, Information for prisoners in Hämeenlinna Prison, pp. 3, 12-13, հասանելի է՝ https://www.rikosseuraamus.fi/material/sites/rise_ja_rskk_yhteiset/dokumentit/5dka9askf/Hameenlinna_vankilan_tulo-opas_1.4.2024_FI_en-GB.pdf, հրատարակման ամսաթիվը՝ 2025 թ. մարտի 18, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

¹⁸ Տե՛ս, Правила внутреннего распорядка учреждения УИС “Хяменлинна”, стр. 8, հասանելի է՝ https://www.rikosseuraamus.fi/material/sites/rise_ja_rskk_yhteiset/dokumentit/fgur9sljf/Prison_rules_for_Hameenlinna_Prison_28.2.2025_Russian.pdf, հրատարակման ամսաթիվը՝ 2025 թ. փետրվարի 28, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

¹⁹ Տե՛ս, “Contacting a prisoner”, հասանելի է՝ <https://rikosseuraamus.fi/en/index/enforcement/forfamiliesandfriends/contactingaprisoner.html>, հրատարակման ամսաթիվը՝ 2024 թ. հուլիսի 17, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

²⁰ Տե՛ս, ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 1599-Ն որոշման 1-ին կետը, ՀՀՊՏ 2017.12.18/78(1353) Հոդ.1264:

²¹ Տե՛ս, «Քրեակատարողական հիմնարկում գտնվող անձինք արդեն իսկ կարող են օգտվել տեսազանգի հնարավորությունից», հասանելի է՝ <https://www.moj.am/article/2197>, հրատարակման ամսաթիվը՝ 2018 թ. դեկտեմբերի 6, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

²² Տե՛ս, ՀՀ քրեակատարողական օրենսգրքը՝ ընդունված 2022 թ. հունիսի 15-ին, Միասնական կայք 2022.06.27-2022.07.10 Պաշտոնական հրատարակման օրը 29.06.2022:

²³ Տե՛ս, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 16-ի N 354-Ն որոշումը, Միասնական կայք 2023.03.20-2023.04.02 Պաշտոնական հրատարակման օրը 20.03.2023:

²⁴ Տե՛ս, «Ազատագրված անձ-հանրային պաշտպան կապն անխոչընդոտ կլինի. և մեկ քայլ՝ պատժողական քաղաքականությունից վերականգնողական արդարադատության անցնելու ճանապարհին», հասանելի է՝ <https://www.moj.am/article/3624>, հրապարակման ամսաթիվը՝ 2023 թ. մայիսի 17, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

²⁵ Տե՛ս, ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1717-L որոշումը, ՀՀՊՏ 2019.12.11/88(1541).1 Հոդ. 1171.2:

²⁶ Տե՛ս, «Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քառամյա ռազմավարության 2020 թվականի տարեկան հաշվետվություն», հասանելի է՝ https://www.moj.am/storage/uploads/prob210216_Strategy_2020.pdf, հրապարակման ամսաթիվը՝ 2021 թ. փետրվարի 16, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11, և «Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քառամյա ռազմավարության 2021 թվականի տարեկան հաշվետվություն», հասանելի է՝ https://www.moj.am/storage/uploads/22._n._PEN_PROB_STRATEGY.pdf, հրապարակման տարին՝ 2022 թ., վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

²⁷ Տե՛ս, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի 2021 թվականի մայիսի 21-ի N 3-L հրամանը:

²⁸ Տե՛ս, ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1133-L որոշումը, հրապարակվել է միասնական կայքում 28.07.2022:

²⁹ Տե՛ս, Գատական և իրավական բարեփոխումների ռազմավարության կատարման մշտադիտարկման հարթակը՝ «Գործողություն 1.15 Արդիականացնել e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգը», հասանելի է՝ <https://www.datairav.am/action/422/history>, հրապարակման ամսաթիվը՝ 2025 թ. հունվարի 9, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

³⁰ Տե՛ս, մրցույթի հայտարարությունը, հասանելի է՝ <https://projects.worldbank.org/en/projects-operations/procurement-detail/OP00354130>, հրապարակման ամսաթիվը՝ 2025 թ. ապրիլի 25, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

³¹ Տե՛ս, մրցույթի հայտարարությունը, հասանելի է՝ <https://projects.worldbank.org/en/projects-operations/procurement-detail/OP00377050>, հրապարակման ամսաթիվը՝ 2025 թ. սեպտեմբերի 5, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Քրեակատարողական հիմնարկում գտնվող անձինք արդեն իսկ կարող են օգտվել տեսազանգի հնարավորությունից», հասանելի է՝ <https://www.moj.am/article/2197>, հրապարակման ամսաթիվը՝ 2018 թ. դեկտեմբերի 6, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:
2. «Ազատագրված անձ-հանրային պաշտպան կապն անխոչընդոտ կլինի. և մեկ քայլ՝ պատժողական քաղաքականությունից վերականգնողական արդարադատության անցնելու ճանապարհին», հասանելի է՝ <https://www.moj.am/article/3624>, հրապարակման ամսաթիվը՝ 2023 թ. մայիսի 17, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:
3. «Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քառամյա ռազմավարության 2020 թվականի տարեկան հաշվետվություն», հասանելի է՝ https://www.moj.am/storage/uploads/prob210216_Strategy_2020.pdf, հրապարակման ամսաթիվը՝ 2021 թ. փետրվարի 16, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:
4. «Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քառամյա ռազմավարության 2021 թվականի տարեկան հաշվետվություն», հասանելի է՝ https://www.moj.am/storage/uploads/22._n._PEN_PROB_STRATEGY.pdf, հրապարակման տարին՝ 2022 թ., վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:
5. «Գործողություն 1.15 Արդիականացնել e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգը», հասանելի է՝ <https://www.datairav.am/action/422/history>, հրապարակման ամսաթիվը՝ 2025 թ. հունվարի 9, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:
6. Правила внутреннего распорядка учреждения УИС “Хяменлинна”, հասանելի է՝ https://www.rikosseuraamus.fi/material/sites/rise_ja_rskk_yhteiset/dokumentit/fgur9sljf/Prison_rules_for_Hameenlinna_Prison_28.2.2025_Russian.pdf, հրապարակման ամսաթիվը՝ 2025 թ. փետրվարի 28, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:
7. McKay, C., & Macintosh, K., Digital Vulnerability: People-in-Prison, Videoconferencing and the Digital Criminal Justice System, Journal of Criminology 57, no. 3, 2024, pages 313-333
8. Hofinger H., & Pfliegerl Ph., A Reality Check on the Digitalisation of Prisons: Assessing the Opportunities and Risks of Providing Digital Technologies for Prisoners, Punishment & Society 26(5), 2024, page 901.
9. Solar M. P., Unger H., Lukavecki M., Evolution of Prison Digitalisation Situation, Risks and Benefits, EuroPris ICT Expert Group, հասանելի է՝ <https://www.euopris.org/wp-content/uploads/2025/02/Prison-Digitalisation-Situation-Risks-and-Benefits.-EuroPris-ICT-Expert-Group-2025.pdf>, հրապարակման ամսաթիվը՝ 2025 թ. փետրվարի 12, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:
10. Davies B., Debates in Digital Pedagogy within Prisons, հասանելի է՝ <https://journals.sagepub.com/doi/full/10.1177/17577438241265456#tab-contributors>, հրապարակման ամսաթիվը՝ 2024 թ. հունիսի 20, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:
11. “Smart prison solution adopted in two more prisons in Finland”, հասանելի է՝ <https://www.rikosseuraamus.fi/en/>

www.ardaradutyjournal.com

index/topical/pressreleasesandnews/2023/smartprisonsolutionadoptedintwomoreprisonsinfinland.html, հրատարակված ամսաթիվը՝ 2023 թ. մայիսի 10, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

12. Information for prisoners in Hämmeenlinna Prison, հասանելի է՝ https://www.rikosseuraamus.fi/material/sites/rise_ja_rskk_yhteiset/dokumentit/5dka9askf/Hameenlinnan_vankilan_tulo-opas_1.4.2024_FI_en-GB.pdf,

հրատարակված ամսաթիվը՝ 2025 թ. մարտի 18, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

13. “Contacting a prisoner”, հասանելի է՝ <https://rikosseuraamus.fi/en/index/enforcement/forfamiliesandfriends/contactingaprisoner.html>, հրատարակված ամսաթիվը՝ 2024 թ. հուլիսի 17, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

14. Specific Procurement Notice – Request for Proposals without Prequalification, հասանելի է՝ <https://projects.worldbank.org/en/projects-operations/procurement-detail/OP00354130>, հրատարակված ամսաթիվը՝ 2025 թ. ապրիլի 25, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

15. Specific Procurement Notice – Request for Proposals without Prequalification, հասանելի է՝ <https://projects.worldbank.org/en/projects-operations/procurement-detail/OP00377050>, հրատարակված ամսաթիվը՝ 2025 թ. սեպտեմբերի 5, վերջին այցելություն՝ 2025 թ. սեպտեմբերի 11:

References

1. “Persons in penitentiary institutions can already use the opportunity of video calls.” Available at: <https://www.moj.am/article/2197>, Published: December 6, 2018, Last accessed: September 11, 2025. (In Armenian)
2. “The connection between detainees and public defenders will be unhindered: another step towards transition from punitive policy to restorative justice.” Available at: <https://www.moj.am/article/3624>, Published: May 17, 2023, Last accessed: September 11, 2025. (In Armenian)
3. “Annual Report 2020 of the Four-Year Strategy in the Field of Penitentiary and Probation.” Available at: https://www.moj.am/storage/uploads/prob210216_Strategy_2020.pdf, Published: February 16, 2021, Last accessed: September 11, 2025. (In Armenian)
4. “Annual Report 2021 of the Four-Year Strategy in the Field of Penitentiary and Probation.” Available at: https://www.moj.am/storage/uploads/22._n._PEN_PROB_STRATEGY.pdf, Published: 2022, Last accessed: September 11, 2025. (In Armenian)
5. “Action 1.15 Modernize the e-penitentiary electronic management system.” Available at: <https://www.datairav.am/action/422/history>, Published: January 9, 2025, Last accessed: September 11, 2025. (In Armenian)
6. Prison Internal Rules of Procedure, Hämmeenlinna Prison, Criminal Sanctions Agency of Finland. Available at: https://www.rikosseuraamus.fi/material/sites/rise_ja_rskk_yhteiset/dokumentit/fgur9sljf/Prison_rules_for_Hameenlinna_Prison_28.2.2025_Russian.pdf, Published: February 28, 2025, Last accessed: September 11, 2025. (In Russian)
7. McKay, C., & Macintosh, K. Digital Vulnerability: People-in-Prison, Videoconferencing and the Digital Criminal Justice System. *Journal of Criminology* 57, no. 3, 2024, pp. 313–333.
8. Hofinger, H., & Pfliegerl, Ph. A Reality Check on the Digitalisation of Prisons: Assessing the Opportunities and Risks of Providing Digital Technologies for Prisoners. *Punishment & Society* 26(5), 2024, p. 901.
9. Solar, M. P., Unger, H., & Lukavecki, M. Evolution of Prison Digitalisation: Situation, Risks and Benefits. EuroPris ICT Expert Group. Available at: <https://www.europris.org/wp-content/uploads/2025/02/Prison-Digitalisation-Situation-Risks-and-Benefits.-EuroPris-ICT-Expert-Group-2025.pdf>, Published: February 12, 2025, Last accessed: September 11, 2025.
10. Davies, B. Debates in Digital Pedagogy within Prisons. Available at: <https://journals.sagepub.com/doi/full/10.1177/17577438241265456#tab-contributors>, Published: June 20, 2024, Last accessed: September 11, 2025.
11. “Smart prison solution adopted in two more prisons in Finland.” Available at: <https://www.rikosseuraamus.fi/en/index/topical/pressreleasesandnews/2023/smartprisonsolutionadoptedintwomoreprison-sinfinland.html>, Published: May 10, 2023, Last accessed: September 11, 2025.
12. “Information for Prisoners in Hämmeenlinna Prison.” Available at: https://www.rikosseuraamus.fi/material/sites/rise_ja_rskk_yhteiset/dokumentit/5dka9askf/Hameenlinnan_vankilan_tulo-opas_1.4.2024_FI_en-GB.pdf, Published: March 18, 2025, Last accessed: September 11, 2025.
13. “Contacting a Prisoner.” Available at: <https://rikosseuraamus.fi/en/index/enforcement/forfamiliesandfriends/contactingaprisoner.html>, Published: July 17, 2024, Last accessed: September 11, 2025.
14. Specific Procurement Notice – Request for Proposals without Prequalification. Available at: <https://projects.worldbank.org/en/projects-operations/procurement-detail/OP00354130>, Published: April 25, 2025, Last accessed: September 11, 2025.
15. Specific Procurement Notice – Request for Proposals without Prequalification. Available at: <https://projects.worldbank.org/en/projects-operations/procurement-detail/OP00377050>, Published: September 5, 2025, Last accessed: September 11, 2025.

Рубина Мхитарян

Начальник Управления международно-правового сотрудничества
Министерства юстиции Республики Армения,
Аспирант кафедры уголовного права юридического факультета
Ереванского государственного университета

РЕЗЮМЕ***Цифровизация в пенитенциарных учреждениях: риски и возможности***

В настоящей статье анализируются возможности цифровизации в пенитенциарной системе, рассматривая её положительное воздействие - в том числе с точки зрения обеспечения прав, ресоциализации, эффективности и прозрачности процессов, а также излагая возможные риски, связанные с данным процессом. Затрагивается международный опыт в данной сфере и развитие в Республике Армения, в результате чего представляются предложения, направленные на снижение рисков цифровизации.

Ключевые слова: *пенитенциарные учреждения, цифровизация, электронная система, ресоциализация.*

Rubina Mkhitarian

Head of the Department of International Legal Cooperation
of the Ministry of Justice of the Republic of Armenia,
Postgraduate Student, Department of Criminal Law,
Faculty of Law, Yerevan State University

SUMMARY***Digitalization in penitentiary institutions: risks and opportunities***

This article analyzes the possibilities of digitalization in the penitentiary system, addressing its positive impacts, including from the perspective of ensuring rights, resocialization, efficiency, and transparency of processes, while at the same time presenting the potential risks associated with it. Reference is made to the existing international experience in the field and to developments in Armenia, resulting in proposals aimed at reducing the risks of digitalization.

Key words: *penitentiary institutions, digitalization, electronic system, resocialization*

Բնագիրը ներկայացվել է 16.09.2025թ.

Ընդունվել է տպագրության 01.10.2025թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր, իրավաբանական
գիտությունների դոկտոր Հ. Խաչիկյանը